









ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ



# ՊԱՐՍԱՆ

## ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Գ. ԳԻՐԻՔ

ՄԻՋԻՆ ԴՍԱՐՆԹԱՅԻ Ա. Կ. Ռ. ՑԱՐԻ

Հասոյին վերջին մասին մեզ  
Նիւրիւ Բարձրագոյն Դասընթացի համար

Բ. Տպագրութիւն

Printed in France

ՓԱՐԻՉ

ԳՐԱՏՈՒՆ Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

46, Rue Richer — PARIS (9<sup>e</sup>)



2012 ✓

199-86

35

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ԱՐԱՐԱՏ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Գ. Գ Ի Ր Ք

Միջին Դասընթացք Ա. եւ Բ. Տարի  
եւ Հասարկն վերջին մասին մէջ  
նիւթեր Բարձրագոյն Դասընթացքի համար

734

A 79478



Փ Ա Ր Ի Չ

ԳՐԱՏՈՒՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ  
46, Rue Richer -- Paris (9°)

**Imp. Araxes - 46, Rue Richer, Paris.**

## ՄԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

Ահաւասիկ ընթերցանութեան դասագիրքերուն Գ. հատորը: Ան կը համապատասխանէ մեր նախակրթութեան Միջին դասընթացին: Իր վերջին էջերուն մէջ, սակայն, մեր ուսուցիչ-ուսուցչուհիները պիտի գտնեն նիւթեր, որոնք բովանդակութեամբ եւ ծաւալով կը մօտեանան Բարձրագոյն դասընթացի առաջին տարուան նիւթերուն. մօտաւորապէս:

Եւ ասիկա որոշ նպատակով մը:

Ուրիշ ստեղծ ըսած ենք արդէն: Մեր երկսեռ աշակերտները, որոնք արտասահմանի մէջ օտար վայրերու կը յաճախեն, շատ քիչ ժամանակ կրնան յատկացնել հայերէնի ուսուցման: Օտար վայրերու մէջ մեր սոդոց միտքը կ'ամբարտ արդէն ընդհանուր զարգացման յատուկ ամէն կարգի նիւթեր: Անոնք գրկուած են սակայն բոլոր այն տարրերէն որոնք մասը կը կազմեն հայ մշակոյթի պատմութեան:

Մեր պատանիներն ամէն բանի տեղեակ են: Չեզի կրնան բացատրել գրական կամ գիտական շատ մը երեւոյթներ, սակայն կ'անգիտանան ինչ որ հայկական է, ինչ որ հայրենագիտութեան կը պատկանի:

Այս տխուր երեւոյթը մասամբ դարմանելու նպատակով է որ ԱՐԱՐԱՏ Գ. ի նիւթերուն կարեւոր մէկ մասը յատկացուցած ենք հայրենագիտութեան նիւթերուն: Այս կերպով, կարելիութեան սահմաններու մէջ, հայ մշակոյթի պատմութիւնը բնտանի պիտի դառնայ մեր սոդոց: Անոնց հաշակը պիտի արթննայ եւ անոնք պիտի մղուին նանչնալու եւ խորանալու մայրենի լեզուի գաղտնիքներուն մէջ:

Անշուշտ մեր ուսուցիչներուն պարտականութիւնն է այս ուղղութեամբ օգտուիլ ամէն առիթէ, եւ յիշել աղբիւրներ ու գործեր, որպէսզի մեր տղաքը հանոյքն ունենան հայ գրականութեան, հայ պատմութեան, ուրիշ խօսքով՝ հայ մշակոյթին վերաբերեալ բոլոր ծանօթութիւնները ամբարեւու այնպէս, ինչպէս այդ կ'ընեն օտար վարժարաններու մէջ, ընդհանուր զարգացման վերաբերեալ բոլոր առարկաներուն համար :

Մեր գիտակից ուսուցիչներուն վրայ ուրիշ պարտականութիւն մըն ալ կը ծանրանայ : Այլեւ անցած է այն ժամանակը, երբ դպրոցականները ամէն բան թուրքակի պէս կրկնելու եւ գոց ընելու ստիպուած էին : Առանց մտնելու մանկավարժական եւ հոգեբանական բացատրութիւններու եւ վերլուծումներու մէջ, յայտնի նըշմարտութիւն մըն է այլեւս որ դպրոցներուն մէջ ամէն բան պէտք է յստակ ըլլայ տղոց համար եւ ծառայէ գործնական կեանքի : Փոխանակ տաւր բան թերի եւ անկատար սորվեցնելու, նախընտրելի է երկու բան սորվեցնել . բայց կատարեալ եւ հասկնալի կերպով սորվեցնել :

Հետեւաբար . պէտք է առաջին դասէն սկսեալ շա'տ դանդաղ յառաջանալ : Դժուարութիւնները հետզհետէ հարթուելէ վերջ . տղաք հանոյքով պիտի շարունակեն նոր հատուածներու ուսուցումը : Պէտք է մզել տղաքը հարցասիրութեան . բանալ անոնց մտքի հորիզոնները : Մի' մտռնաք որ յանախ իրենց տարիքը առած եւ ուսման որոշ աստիճան բոլորած , հայերէնի ուսուցման համար սկսնակներ են անոնք : Հետեւաբար , պէտք է ծիծաղիլ անոնց տգիտութեան վրայ , որքան ալ որ տարական գիտելիքներ թուին անոնք ուսուցիչներուն համար :

Պէտք է մէկէ աւելի դասեր յստկացնել քերթուած .

ներուն : Չանոնի մեկնաբանել հագածութեամբ եւ խր-  
նամբով :

Այս հատորին մէջ տուած ենք հեղինակներուն հա-  
մառօտ մէկ կենսագրականը : Տեսակ մը փորձ է այս  
մեր գրականութեան անդատանէն ներս, ուր մեր տը-  
ղաքը պիտի գտնեն իոյնիան արժանաւոր եւ քանկագին  
տաղանդներ, եւ պիտի դիմաւորեն գրական գեղեցկու-  
թիւններ :


Հարցումները սահմանափակած ենք : Ուսուցիչները  
ագատ են ընդլայնելու գանոնի, միշտ նպատակ աւնենա-  
լով աշակերտները մղելու գիւտերու եւ հայերէն կեն-  
դանի խօսակցութեան : Որովհետեւ ԱՐԱՐԱՏներուն նը-  
պատակներէն մէկն ալ Հայը հայ պահելն է :

Գոհունակութեան խօսք մըն ալ ունինք մեր ուսու-  
ցիչ-ուսուցչուհիներուն եւ կրթական մարմիններուն ուղ-  
ղուած, որոնց անվերապահ գնահատումն ու խաջայերու-  
թիւնը դիւրացուցին մեր նիգերը :

Երախտապարտ պիտի ըլլանք նաեւ բոլոր անոնց,  
որոնք իրենց փորձառութեան արդիւնքը պիտի հանին  
մեզի յայտնել : Այդ կերպով մենք ի վիճակի պիտի ըլ-  
լանք որոշ բարեփոխումներ մտցնել Ընթերցարաններու  
այս շարքին մէջ, երբ նոր տպագրութեան ձեռնարկենք :

Մ. Պ.





ՉՄՐԱՆՆ ԵՆՍԱՐԱՆ ՄԸ. — ՆԿԻՄՔ ԲԱՇԻՆԶԱՂԵԱՆՆԻ

## ԱԾՈՒԽԻ ԿՏՈՐՆԵՐԸ

Ածուխի կառք մը կեցած է զբան մը առջեւ: Կիրակի առտու մըն է: Տանակէրը, գիշերանոց եւ մուշտակ հագած՝ հաստափոր մարդ մը, զբան առջեւ կեցած, հրքամաններ կու տայ ամխափաճառին, որ պարկէրը կըսնակն առած՝ կը պարպէ տանը մթերաւնոցին մէջ:

Յուրտերը սկսած են: Աշունը լմննալու վրայ է: Ու տանակէրը գոհունակութեամբ կը զխտէ ամուխի պարկերը, սրտնք հեազհեաէ կ'երթան պարպուել մթերանոցին մէջ:

Կին մը կ'անցնի անկէ. աղայ մըն ալ քովէն կը քալէ: Կինը քիչ մը հեռուն կը կենայ ու կը սկսի զխտել ամուխի պարկերը: Աղքատիկ երեսոյթ մը ունի, մաշած սեւ զգեստներ հագած է: Աշուններուն մէջ յայտնի կը կարգացուի թէ այդ պահուն ուրիշ ըզճաւնէ շունի՝ հապա իր տկար թեւերուն մէջ վերցնել այն պարկերէն մէկը եւ տանիլ հետուն, մինչեւ իր տնակը: Բայց չէ, բան մը չի կրնար ընել: Թեւերը կախած, հետուէն կը զխտէ մ'իայն անյազ աշուններով:

Յանկարծ, իր քովը կեցող աղուն կը ծսի եւ անոր տկանջն ի վար բան մը կը փոփոսայ: Տղան՝ երթալով կը մօտենայ ամուխի կառքին, գրորանէն աղտոտ թաշկինակ մը կը հանէ, կը փոէ գայն եւ կը սկսի գեալնը թափած ամուխի ամէնէն պղտիկ կտորները ժողովել ու թաշկինակին մէջ դնել: Երբ մեծ կտորներու կը հանդիպի, կ'առնէ զանոնք եւ կառքին մէջ կը նետէ:

Թաշկինակը լեցուած է արդէն: Տղան՝ վեր կը վերցնէ գայն, չորս ծայրերէն բանելով, եւ կը սրտ-

քաստուի երթալ, երբ տանտէրը՝ որ մինչեւ այն ատեն անձայն դիտած էր տղուն շարժումները, սաստող ձայնով մը տղան քոյլը կը կանչէ .

— Հո՛ս եկուր, տղայ :

Տղան դողդղալով կը մօտենայ :

— Անպիտա՛ն, մենք այս ածուխին վրա՛մ տուեր ենք, հասկցա՞ր :

Եւ ծրարը տղուն ձեռքէն առնելով, կ'երթայ կը պարպէ օտանը մթերանոցին մէջ : Յետոյ, պարապ թաշկինակը կը բերէ եւ տղուն երեսին նետելով՝

— Շո՛ւտ, կ'ըսէ, ապտակ չկերած՝ ելի՛ր զնա ասկէ :

Տղան՝ աչուրները արցունքով լեցուն, մօրը քով կ'երթայ, եւ երկուքը մէկ իրենց ճամբան կը շարունակեն, տղան՝ սուրի կարմրած, մայրը՝ աւելի գուհատ :

## Լ. ԲԱՇԱԼԵԱՆ

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

**Մքերանոց՝** այլեւայլ նիւթեր եւ առարկաներ մթերելու, լեցնելու տեղ. քղձոնք՝ փափաք. անյազ՝ չկտացող. ստոռոզ՝ յանդիմանող. գուհատ՝ դոյնը նետած :

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

**Մայր** ու սրբի ի նչ բունի հանդիպեցան ճամբուն վրայ . — Համառօտ պատմեցէք ինչ սր կարդացիք այս հատուածին մէջ . — Եթէ դուք ըլլայիք տանտէրը, ի նչ պիտի ընէիք . — Թշուառին որեւէ ձեռով օգնել պիտի սիրէիք :

### 3. Բացատրել այս խօսքին իմաստը .

«Ամէն բան ինծի համար, ոչինչ ուրիշին համար»,  
աշա՛ այս է անձնասէրին մտածումը :

### ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ.

— Մնած է Պոլսոյ մէջ եւ մեռած Ծրանոսայի Վիշի քաղաքին մէջ: Թորքահայերու Լաւագոյն գրագէտներէն եւ հրատարակագիրներէն մէկն եղած է: Աշակերտած է Պէրպէրեան Վարժարանին: Աշխատակցած է պոլսահայ թերթերէն «Արեւելք»ի, «Մասիս»ի, «Հայրենիք»ի: Գրի առած է թաղմամբիւ նորավէպեր: Իրմէ Լոյս տեսած է հատոր մը «Նորավէպեր եւ Պատմուածքներ» անունով:



Լ. ԲԱՇԱԼԵԱՆ (1868 - 1943)

## ՀԱՆՔԱԾՈՒԽԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Կան մարդիկ, որոնք չեն դիտեր թէ մեր տեսած սեւ ու կարծր հանքածուխը բուսական մարմին մը եղած է: Ան՝ երկրի մը հարստութեան մեծագոյն աղբիւրն է: Ան է որ կու տայ լոյս, ջերմութիւն եւ շարժում: Ան երկրին կազմութիւնը բացատրող հրաշալի գիրքն է, որուն արձանագրութիւնները ո՛չ կը կեղծեն, ո՛չ կը խաբեն:

Կտոր մը հանքածուխը այսպէս խօսեցաւ:

Դարե՛ր, անհամա՛ր գարեր առաջ, ծովկերեայ անտառի մը մէջ, հսկայ ծառի մը մօտ, տունկ մըն էի

Ես : Այդ ծառը ձեր տեսած ծառերուն չէր նմաներ , ծաղիկ չունէր , աւելի բարձր էր ու աւելի ծաւալուն : Իմ ցեղէս շատ մը տունկեր կ'աճէին անոր բոլորովը . ան մեր բարերար պահապանն էր , մեզի թարմ օդ եւ արեւի առատ լոյս կը շնորհէր : Մենք շուտով պիտի մեծնայինք ու անոր պէս հսկայ ծառեր պիտի դառնայինք :

Արեւին բարերար ճառագայթները մեզի կու գային շէշտակի , անոնք կու տային մեզի անսատ ջերմութիւն , ուրախութիւն եւ կեանք :

Օր մը , սակայն , մեծ ծառը ծուլով՝ մեզի այսպէս փափսաց . «Ծովը կը մօտենայ , անոր հետ նաեւ՝ աշխարհի վախճանը» : Ծովը եկաւ արդարեւ , բայց աշխարհի վերջը չեկաւ : Այլի ջուրը աստիճանաբար քափանցեց մեր արմատներուն եւ չորցուց գանոնք : Մեծ ու պզտիկ բոլոր ծառերը գլխիվար տապալեցան եւ իրարու վրայ գիգուեցան : Ծովի աւազն ու տիղմը ծածկեցին մեզ : Մեր գլխուն վերեւ քաւալող ալիքներու ձայնը կը լսէինք , եւ արեւը անդամ մըն ալ տեսնելու յոյսը չունէինք :

Շատ դարեր անցան . ծովը կրկին հեռացաւ , սակայն վիթխարի ժայռերը մեր վրայ նստած էին ու մեզ բանտարկած : Ա՛խ , որքա՛ն ծանր էին անոնք եւ որքա՛ն ճնշող :

Դարեր կ'անցնէին , եւ օր մը արմատները մեզի նոր անոր բաներ պատմեցին : Երկրի վրայ երեւան եկած էին մարդիկ , որոնք կը կտրէին ծառերն ու անոնցմով տուներ կը շինէին , կամ գանոնք կը վառէին . թէեւ մենք կրակի մասին գաղափար չունէինք : «Կրակը արեւին պէս լոյս ու ջերմութիւն ունի» , կ'ըսէին . յետոյ՝ հասկցանք որ ծառերու ամբարած արեւի շուրթն էին , որոնք հիմա կրակի ձեւով կը յայտնուէին :

Օր մը , վերէն ուժգին ձայներ լսեցինք . արդեօք

դարձեալ ծովը պիտի դար ու նորէն պիտի ծածկէ՞ր  
անտառները. բայց այս ձայները ջուրի ձայնին չէին  
հմաներ. ժայտերու վրայ տեւական հարուածի ձայ-  
ներ էին :

Օր մըն ալ յանկարծ լոյսը տեսանք : Ի՞նչ գեղեցիկ  
էր արեւը : Իսկ ես կարծր, սեւ ու տճեւ զանգուածի մը  
վերածուած էի : Ո՞վ պիտի հասկնար թէ ես ալ ասեհօք  
կեցնայի վաքը ծառ մը եղած էի :

«Ածու՛ւր, հնչեց ձայն մը : Այլեւս հարստացանք,  
աշխարհի ամենամեծ բարիքներէն մէկը գտանք» :

Չեմ գիտեր թէ ինձի պէս կարծր, սեւ ու ալյան-  
գակ աւարկայ մը կրնա՞ր բարիք համարուիլ : Բայց  
ուրախ եմ, որովհետեւ ազատ եմ ու իմ լոյսն ու ջեր-  
մութիւնը օգտակար կը գտնան ուրիշներուն :

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲՍՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Շաւալուն՝ տարածուած. ճեղքել՝ տալ, պարգեւել.  
բախանցիլ՝ մէջը մտնել, մէջն անցնիլ. «սալալիլ՝ իյնալ,  
գւորիլ. «իզմ՝ ցելս. բաւալիլ՝ գւորիլ, փռուիլ, իյնալ.  
վիրխաւի՝ մեծկակ, հսկայ, խոշոր. «ճեւ՝ սպեղ. զանգուած՝  
մարմին. կեցնայի՝ կեանքով լեցուն :

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Տղաք, գիտէ՞ք թէ ի՞նչ է հանքածուխը.— Ի՞նչ կարե-  
ւորութիւն ունի ան երկրի մը համար.— Ի՞նչեր կը ստանանք  
մենք հանքածուխէն.— Երկրին, հողին, կամ լեռներուն  
կազմութիւնը կրնանք հասկնալ մենք հանքածուխին շնոր-  
հիւ.— Կրնա՞ք դուք ալ պատմել քանի մը բաւերով հան-  
քածուխին պատմութիւնը.— Ո՞ր աշխատաւորներն են որ  
դեանին տակէն լոյս աշխարհ կը բերեն հանքածուխը.— Ին-  
չո՞ւ համար հանքածուխ կ'ըսենք եւ ոչ թէ անուխ.— Չեք  
մէջ հանքագործ հայր ունեցող աշակերտ կայ :

### 3. Բացատրել այս խօսքին իմաստը.—

Ամէն աշխատութիւն հաւասարապէս ազնիւ է : Չկայ գէշ  
արհեստ, այլ կայ գէշ մարդ : Հետեւեալ առածն ալ կ'ըսէ.—  
«Արեհասիկ գէօր չըլլաւ, մաւրո՛ւն գէօր կ'ըլլայ» :

# ՎԱԳՐԸ ԵՒ ԿԱՏՈՒՆ

(ԱՌԱԿ)

1

Ի՞նչ ըրաւ վագրը: Լըսէ՛ դունն հիմա:

Օր մը ձանձրացած՝

Անտառին մէջէն բաց-դաշտը ելաւ.

Կատու մը տեսաւ՝ դիմացը կանգնած,

Անհուն զարմանքով՝ անոր նայեցաւ...

Եւ հարցում ըրաւ. —



— « Հէ՛յ, քարեկա՛մ,

« Իմ աղբակա՞ն:

« Դէ՛մքիդ նայի՛մ,

« Մեր ցեղէն ես.

« Մարմնիդ նայի՛մ,

« Շատ նրդնի՛մ ես:

« Ինչո՞ւ այդպէս

« Պըվտիկ-ճըստիկ

« Հասակ ունիս » :

== « Եթէ դուն ալ, մե՛ծ խընամի,

« Մարդ էակին լաճը կըրես,

« Կը կարծեմ թէ՛ ո՛չ հասակի,

« Ո՛չ ալ ուժի խօսքը կ'ընես »:

== « Ի՞նչ: Ո՞վ է այդ մարդ-էակը,

« Որ ցեղիս հետ գէշ կը վարուի:


« Բազկիս ուժը, կեցի՛ր, ցոյց տամ.

« Անոր աղուոր ես դաս մը տամ :  
« Մարդ-արարա՛ծ . . . ա՛յ անբզգամ » . . .

2

Կատուն՝ պոչին ծայրովը սուր՝  
Ցուցուց մարդը, որ անտասին  
Մէկ եղբւրքը՝ կացինն ատեր,  
Հաստիկ կռնդ մը կտորել կ'ուզէր :

Վազըը հըսարտ, լի՛ աշխոյժով  
Մարդուն դիմեց այս խօսքերով . —



— « Է՛յ, դո՛ւն, մա՛րդուկ,  
« Եկո՛ւր տեսնեմ .  
« Գեղ հետ չափուիլ՝  
« Սյսօր կ'ուզեմ :  
« Ո՞վ տուաւ քեզ այդ իրաւունք,  
« Որ իմ ցեղիս պատիւին հետ  
« Խաղաս յաւէտ . . . »

== « Եթէ օգնես ինձ մէկ վայրկեան ,  
« Քովըզ կու դամ ես անպայման » :

— « Լա՛ւ , ի՛նչ կ'ուզես որ ես ընեմ :  
« Դէ՛ , շո՛ւտ ըսէ . ի՛նչպէս օգնեմ » :

== « Խընդրեմ , քիչ մը լախցուր ճեղքը՝  
« Սա հաստ կոճղին ,  
« Որ դուրս հանեմ մէջի սեպր՝  
« Ամբողջովին » :

3

Խեղօք վազըը ուժը ժողվեց ,  
Զոյզ թաթերը իրար խառնեց  
Ու ճեղքին մէջ լաւ մը խըրեց :

Փայտահատը երբ դուրս հանեց  
Սեպ ու կացին ,  
Թաթերն վազրին սեղմընեցան  
Մէջը ճեղքին :

Հաստ ու երկար փայտ մը առած ,  
Մօտիկ եկաւ մեր զիւղացին :  
Լաւ ծեծ քաշեց մե՛ծ , քա՛ջ վազրին ,  
Հարուածներով առատ , ուժղին :

Վազըը ահէն , այրուող ցաւէն ,  
Ոսկորներու խըշըրտուքէն՝  
Ա՛խ , վա՛խ քաշեց  
Ու հառաչեց . —  
— « Ի՛նչ երանի ,  
« Ո՛չ թէ կատուի՝ այլ մուկին չափ  
« Ես մընայի :

« Միայն, միայն՝  
« Այս փորձանքէն աղատէի »:



Ինձմէ խըրատ, քաջ բարեկամ,  
Չըսարծենաս ուրիշ անդամ.  
Չես գիտեր թէ՛ մարդ-արարած  
Մեծ ուժիդ դէմ ի՛նչ է պահած:

Ս. ԹԱՓԱՌԱԿԱՆ



1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Առակ՝ գրուածք մը, որմէ բարոյսական մը կը հանուի.  
նղնիմ՝ փոքրիկ. լուծ՝ ծանրութիւն, բեռ. անզգամ՝ անա-  
մօթ, խրատէ չաղբուղ. կսնդ՝ ծառին հաստ մասը. յաւե՛՞՛  
միշտ, շարունակ. սեպ՝ սրածայր փայտ կամ երկաթ. ան՝ վախ:

2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Այս ստանաւորին մէջ ո՛ր կենդանիներուն մասին է խոս-  
քը.— Կատուն ո՛ր կենդանիին կը նմանի.— Վագրը ի՛նչ ը-  
սաւ կատուն.— Ի՛նչ սրտաքիտանեց կատուն.— Փայտահատը  
ի՛նչով զթաղած էր.— Վագրին եւ մարդուն մէջ ի՛նչ խո-  
սակցութիւն անցաւ.— Ո՛վ թակարդը ինկաւ.— Ամէնէն զօ-  
րաւոր կենդանին կրնա՞յ մարդուն դիտութեան եւ խեղճի  
ուժին հետ չափուիլ:

3. Արձակի վերածել այս ստանաւորը:

4. Բացատրել հետեւեալ խօսքին իմաստը.—


Աւխարհիս սէրեցն են աւխառանքն ու գիտութիւնը:

Ս. ԹԱՓԱՌԱԿԱՆ. — Ամերիկահայ գրող:

Handwritten text: 824524 79478

Handwritten text: 2897

Handwritten text: 2464



# ՇՈՂԻԿՆ ՈՒ ՓԱՅԼԻԿԸ

1

Ձմեռուան ցուրտ իրիկունն մըն էր: Ձիւնն կու գար եւ ճերմակ փաթիլները կ'իյնային մութ գետնին վրայ ու կը քնանային:

Ի ոլոր փաթիլները սամպերէն իջան եւ անուշ քնա-



ցան տաք գետնին վրայ. միայն երկու փաթիլ ուշացեր էին. անոնք ալ օդին մէջ սլարելով՝ ցած կու դային: Երկու քոյրեր էին. մէկուն անունը Շողիկ էր, միւսին անունը՝ Փայլիկ:

Օդին մէջ դառնալու ատեն՝ պատուհան մը տեսան որմէ սլայծառ լոյս կը ցայտէր:

— Ա՛յ, ի՛նչ լաւ լոյս է, ըսաւ Շողիկը ու թռաւ

դէպի լոյսը, դնաց թառեցաւ սլատուհանին երկաթին վրայ:

— Իրա՛ւ, ի՛նչ լաւ լոյս է, ըսաւ Փայլիկը ու ինքն ալ մօտեցաւ որ թառի երկաթին վրայ, բայց ոտքը սահեցաւ, ինկաւ ցած թաց քարի մը վրայ:

— Շողի՛կ, ինկայ, ըսաւ Փայլիկը:

— Դէ՛հ, վե՛ր բարձրացիր, ճայնեց Շողիկը վերէն: Փայլիկ նիգ ըրաւ վեր թռչելու, բայց չկրցաւ:

— Զե՛մ կընար, ըսաւ, մօ՛տս եկուր, Շողիկ:

— Հիմա կու դամ, սպասէ՛ քիչ մը, տեսնեմ ի՛նչ կ'ընեն, պատասխանեց Շողիկը, ու նայեցաւ պատուհանէն ներս:

2

Ներսը սիրուն տօնածառ մը կար, կանաչ ճիւղերը վառած մոմերով ու ֆաշխուն խաղալիքներով զարդարուած: Սենեակը մանուկներով լեցուն էր: Ամէնքը՝ ուրախ գուարթ, ծառին բոլորտիքը սլար բռնած, կը դառնային ու կ'երգէին: Երբոր իրենց ժպտուն աչքերը կը հանդիպէին ծառէն կախուած ձիերուն, դառնուկներուն, արջերուն եւ ոսկեգօծ ընկոյզներուն, ա՛լ աւելի կ'ուրախանային, ծափ կը դարնէին, կը թռչտէին:

Շողիկը շլացաւ երբոր նայեցաւ տօնածառին:

— Ի՛նչ շքեղ տօնածառ է, մրմնջեց:

— Ես ալ կ'ուզեմ տեսնել, ձայն տուաւ Փայլիկը, եւ նորէն փորձեց վեր ելլել, բայց չկրցաւ:

— Շողի՛կ, շո՛ւտ ըրէ, եկո՛ւր:

— Հի՛մա կու դամ, Փայլի՛կ, հի՛մա:

— Դէ՛, շո՛ւտ ըրէ:

— Հի՛մա, հի՛մա, կ'ըսէր Շողիկը, ու կը նայէր ներս:

Փայլիկը թաց, մութ քարին վրայ կը դողար ու կը սպասէր քրոջը:

Բայց Շողիկը այնքան տարուած էր տօնածառով, որ ա՛լ մոռցեր էր Փայլիկը: — « Ի՛նչ լաւ բան է տօնածառը », կը մտածէր ան:

3

Այդ միջոցին մանուկները երգեցին նոր տարուած երգը: Շողիկ հիացած՝ մտիկ ըրաւ:

— Շողի՛կ, դէ՛հ, շո՛ւտ ըրէ, նորէն ձայն տուաւ  
Փայլիկը վարէն, անհամբեր ու լարագին:

Բայց Շողիկը ա՛լ չէր լսեր:

Շուտով մանուկներուն միրգ բաժնեցին եւ վերջն  
ալ վիճակ ձգեցին. տօնածառին ձիերը, արջերը, գառ-  
ները, նապաստակները, շաքարներն ու սսկեղօժ ըն-  
կոյզները տուին մանուկներուն:

— Օ՛րս, օ՛րս, կը գոչէին մանուկները, եւ ուրախ  
ուրախ՝ ծափ կը զարնէին ցաթկըտելով:

Տօնածառը վերջացաւ եւ մանուկները իրենց խաղա-  
լիքներուն հետ ցրուեցան իրենց տուները: Յանկարծ  
Շողիկը յիշեց Փայլիկը:

— Փայլի՛կ, ձայն տուաւ անհանդիստ:

Բայց Փայլիկը ա՛լ չկար: Հալած ու կորսուած էր:

— Վա՛՛յ, ըրաւ Շողիկը, եւ տխրեցաւ, մնաց պա-  
տուհանի երկաթին վրայ մինակ նստած: Տխրեցաւ,  
տրտմեցաւ, վերջն ալ աչքերէն արցունք վաղեց, ու ան  
ալ հալեցաւ, ինկաւ թաց քարին վրայ եւ կորսուեցաւ:

## 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Փարիլ՝ ձիւնի հատիկ. ցայտել՝ ցաթկեցնել. բառիլ՝  
նստիլ. ճիգ ընել՝ աշխատիլ, ջանալ. ոսուածառ՝ կաղանդի  
ծառ. նաւթառն՝ գեղեցիկ, զարդարուն. ոսկեղօժ՝ սսկի թեր-  
թալ ծածկուած. հիաւնալ՝ զարմանալ, զմոյլելիլ.  
միրգ՝ չոր պտուղ:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Շողիկն ու Փայլիկը, ձիւնի երկու փաթիլներ, ո՛ւր իջան.  
— Շողիկը ո՛ւր թառեցաւ.— Փայլի՛կը ո՛ւր ինկաւ.— Շողի-  
կը ի՞նչ տեսաւ պատուհանէն ներս.— Դուք ալ տեսո՞ժ էք  
տօնածառ.— Ինչո՞ւ համար Շողիկը մոռցաւ իր քոյրը.— Պի-  
տի ուղէի՞ք ձեր փոքրիկ քոյրը կամ եղբայրը մոռնալ դուր-  
սը, երբ տօնածառի հանդէսին երթաք:




# Տ Ի Ե Ջ Ե Ր Ք

1

Մեր երկիրը կամ մեր աշխարհը տիեզերքի ամէնէն փոքր մէկ մասնիկն է : Ուրիշ անթիւ երկիրներ կամ երկնային մարմիններ կան : Շատերը մեր աշխարհէն աւելի մեծ են : Այս գեղեցիկ մարմիններուն մէկ մասը կը տեսնենք երկինքին վրայ, որոնք իրենց հեռաւորութեանը պատճառաւ մէկ մէկ լուսաւոր կէտեր կ'երեւին, եւ կը կոչուին աստղ :

Այս աստղերէն ամէնէն մեծն է արեգակը, որուն ճառագայթները երկիրս կը լուսաւորեն ու կը տաքցընեն, եւ ամէն տեղ պտղաբերութիւն ու կեանք կը սփռուի :



Առանց արեւի տաքութեան եւ լոյսին, աշխարհիս վրայ կենդանութիւն չկայ . բոյսերը, կենդանիները եւ մարդիկ անոր ջերմութեամբը կենդանի կը մնան, այլասլէս պիտի մեռնին :

Լուսինն ալ երկիրը կը լուսաւորէ, բայց անոր լոյսը արեւին լոյսին պէս փայլուն ու զօրաւոր չէ, եւ երբեք տաքութիւն չունի : Լուսինը արեւին նման սեփական լոյս եւ տաքութիւն չունի . ան իր լոյսը արեւէն կ'առնէ, ինչպէս երկիրը :

2

Մեր գլխուն վրայ տարածուած կապուտակ մեծ

կամարը, որ երկիրք կ'անուանենք, անհուն տարածու-  
թիւն մը կամ մ'իջոց մըն է, որուն մէջ կը շրջին արեւը,  
լուսինը, երկիրը եւ անթիւ, անհամար աստղեր:

Բոլոր այս մարմինները կամ աստղերը միասին ա-  
ռած, կը կոչուին տիեզերք: Արեւը, լուսինը, երկիրը  
եւ բոլոր միւս աստղերը տիեզերքի մէկ մասնիկն են:  
Ուրեմն տիեզերքին հետ բաղդատելով, ո՛րչափ փոքր է  
մեր երկիրը: Արեւը, որուն կ'ըսենք նաեւ արեգակ,  
երկրէս մէկուկէս միլիոն անգամ մեծ է: Արեգակը ոչ  
միայն մեր երկիրը կը լուսաւորէ ու կը տաքցնէ, այլ  
նաեւ՝ իր չորս կողմը դարձող բազմաթիւ երկնային  
մարմինները:

3

Մեր երկրին պէս արեւին շուրջը պտըտող երկնա-  
յին մարմինները կը կոչուին մոլորակներ, որովհետեւ  
տեղ մը հաստատուն չեն կենար, այլ մոլորածի պէս  
միշտ կը պտըտին: Այս մոլորակները մեր երկրին նման  
ըլլալուն համար, շատ հաւանակաւն է, որ անոնք ալ  
ունենան տարուան չորս եղանակները, զիչեր ու ցերեկ,  
ցամաք, ծով, եւայլն: Իսկ միւս երկնային մարմիննե-  
րը, այն է աստղերը, մէկ մէկ արեւներ են, այսինքն  
այնպիսի մարմիններ, որ արեւին պէս իրենց լոյսն ու-  
նին եւ իրենց ճառագայթներովը կը լուսաւորեն ու կը  
տաքցնեն ուրիշ երկնային մարմիններ, որոնք սեփական  
լոյս չունին, այլ կը ստանան ուրիշներէն:

1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Սփռել՝ տարածել. ջերմութիւն՝ տաքութիւն. անհուն՝  
անվերջ, ծայր չունեցող. հաւանակաւն՝ ընդունելի, համո-  
զիչ. սեփական՝ իրեն պատկանող:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Արեւը, լուսինը, երկիրը եւ բոլոր աստղերը միասին ի՞նչ կը կոչուին.— Ամէնէն մեծ աստղը ո՞րն է.— Առանց արեւուն տաքութեան եւ լոյսին աշխարհիս վրայ բոյսեր, ծառեր, կենդանիներ, մարդիկ գոյութիւն պիտի ունենայի՞ն.— Լուսինը որմէ՞ կը ստանայ իր լոյսը.— Արեւուն շուրջ դարձող երկնային մարմիններուն ի՞նչ անուն կու տանք.— Մեր երկիրն ի՞նչ է հետեւաբար.— Բանի որ բոլոր մոլորակները իրարու կը նմանին, կարելի՞ է հետեւցնել թէ անոնք ալ ունին տարուան չորս եղանակները, գիշեր, ցերեկ, ցամաք ու ծով:

3. Բացատրել հետեւեալ խօսքին իմաստը.—

Լոյսը գայ, բարին ալ հեօը:

## ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բնութեան մէջ երբե՛ք դադար, հանդիսա չկայ, աշխատա՛նքը կայ միշտ, ներդաշնակ, կենդանի, եւ տեւական աշխատանքը:

Երկիրն անշարժ կ'երեւի, սակայն անխկա մեզ կը հետեւի՝ արեւին շուրջ իր ըրած շրջանին պահուն, եւ մեր բոլորախօքը կը դառնայ, մէկ երկվայրկեանի մէջ հազար մէթրէն աւելի կտրելով:

Աստղերը հաստատուն կ'երեւին, սակայն անոնցմէ իւրաքանչիւրը կը դառնայ՝ խելքի պտոյտ պատճառող անհաւատալի արսալութեամբ մը:

Արեւը կարծես մարը կը մտնէ իր լոյսի եւ տաքութեան դոլորչիներով, սակայն անխկա կը վալլի միշտ՝ հոծ նշոյլներով պարուրուած:

Գետը հանդարտ է՝ հայելիի մը պէս, սակայն աշխիկա կը հոսի միշտ:

Գետնի դալարը կարծես անշարժ գորդ մըն է, սակայն անիկա կը բուսնի, կ'աճի եւ կը մեծնայ:

Երբ հանդիսատէսն է, կը կարծենք որ բնութիւնը կը քնանայ մեր մէջ: Մեծ սիւսլ մեր սիրտը կը պարնէ, մեր թոքերը կը գործեն, եւ մեր մարմինին մէջ չկայ կէտ մը, որ յարատեւ աշխատութեան մը կայանը չըլլայ:

★

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

**Պոլորժի՝ շոգի. հոժ՝ խիտ. ցեոյլ՝ ճաւաղապիթ, շող պարուրաւիլ՝ շրջապատուիլ. դալար՝ կանաչութիւն. կայան՝ կենալու տեղ, բնակարան:**

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Բնութեան մէջ դադար կամ հանգիստ կա՞յ.— Երկիրը անշարժ է թէ շարժուն.— Ի՞նչպէս կ'երեւին նաեւ աստղերը.— Ի՞նչ գիտէք արեւին մասին.— Հապա գիտին մասին. Ձեր տեսած կանաչութիւնը կը շարժի թէ անշարժ է.— Երբ կը քնանանք, մեր մարմինը կամ գործարանները ի՞նչ վիճակի մէջ են:

### 3. ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Ձեզմէ ամէն մէկը թող ընտրէ արհեստաւոր մը, եւ թող նկարագրէ անոր կատարած բոլոր աշխատանքները, պարզ նախադասութիւններով: Օրինակի համար, **Երկրագործ մը, դարբին մը, երկաթագործ մը, կազմարար մը, հանգագործ մը, եւ այլն:**

Նախադասութիւնները կազմելէ առաջ, ամէն մէկ արհեստին ու արհեստաւորին հետ կապուած բոլոր դադափարները կամ բառերը շարեւ թուէ թու: Օրինակ՝ առնենք **հացագործը**. Հետեւեալ բառերը մաս կը կազմեն անոր աշխատանքին. **ալիւր, ջուր, աղ, փայլ, կրակ, քի, ցաղիլ, քրիլ, յոգնիլ, քրտնիլ, ծախիլ, առնիլ, եւ այլն:**

## Լ Ե Ռ Ն Ե Ր Ը

Լեռներ, սէգ լեռներ, ես կը սիրեմ ձեզ,  
 Կը սիրեմ քուսն ու անգուսպ սիրտով,  
 Հըսարա զազաթնիդ՝ հըսկաներ կարծես՝  
 Ինձ կը ներշնչեն թարմ ուժ ու կորով:

Հող ամէն մէկ բան սըրտիս կը ժըպտի,  
 Թախիժն ու երկիւզ կը վանէ մէկդի.  
 Հող զտիլիկ հով մը դէմըս կը փութայ  
 Եւ կարծես ազատ շունչ կ'առնէ կու տայ:

Երբ անդընդախոր ձորին յատակէն  
 Գետը կը պոռքկայ խոնաւ կողերէն,  
 Սիրտս ալ դեռին պէս կը կայտուէ վէտ վէտ,  
 Ես ալ փըրփըրիլ կ'ուզեմ իրեն հետ:

Լեռներ՝, սէ՛գ լեռներ, ձեզ երգել կ'ուզեմ,  
 Ոգեւորութեան այս տեղերուս մէջ.  
 Թող ձեր ճակատը՝ միշտ բա՛ց, միշտ վըսեմ  
 Դառնայ դործերուս խոհալը անշէջ:

Լ Ե Ռ Ն Ե Ր Ը

\*

### 1. ԲՍՈՒԵՐՈՒ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆ

Սէգ՝ հպարտ. անգուսպ՝ չգսպուած. քախիժ՝ տրամուս.  
 Թիւն. անդընդախոր՝ անդունդի խորութիւն ունեցող. պոռք-  
 կալ՝ դուրս տալ, թափել. վէ՞ս վէ՞ս՝ ալիք ալիք. տեղ՝  
 ջերմ, տաքութիւն. անշէջ՝ չմարող:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հեռները ի՞նչ կը ներշնչեն բանաստեղծին.— Դուք ալ քարձրացած էք լեռան մը գագաթը.— Ի՞նչ տարբերութիւն կայ այդ քարձրութեան եւ դաշտագետինի մ'ը միջեւ.— Կը յիշէ՞ք անուըը մեր Հայրենի ամէնէն բարձր լեռան.— Ո՛ւր Տանգիպած էք անոր առաջին անգամ:



ՀԵՒՈՆ ՇԱՆԹ, բուն անունով ՀԵՒՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ.— Թրքահայ ծանօթ բանաստեղծ, վիպագիր եւ թատերագիր, ծնած է 1869ին, Բերայ Իբրեւ մանկավարժ աշխատած է հայ վարժարաններուն մէջ: Բազմաթիւ գիրքեր լոյս ընծայած է: Բերթուածները ամփոփած է «Երգեր» եւ «Լեռան աղջիկը» հատորներուն մէջ: Ծանօթ վէպերն են՝ «Երազներ», «Դուրսեցիներ», «Վերժին», «Դարձ» եւ «Դերասանուհին»: Թատերախաղերն են՝ «Եսին մարդը», «Ուրիշին համար», «Ճամբուն վրայ», «Հին Աստուածներ», «Ինչպէս բերդին իշխանուհին» «Կայսրը», «Օշին Պայլ»:



ՀԵՒՈՆ ՇԱՆԹ



4. Բացատրել հետեւեալ խօսքին իմաստը.—  
Լեռը լեռան չի հանդիպիր, մարդը մարդուն կը հանդիպի:

4. Արձակի վերածել եւ գոց արտասանել այս ոտանաւորը:



## X ԾԱՂԻԿ ԳՈՂՑՈՂՆԵՐԸ

### 1

X Պարտիզայան Յակոբ մտատանջութեան մէջ էր. չէր կրնար հասկնալ թէ ո՞վ ամէն օր իր պարտէզէն ծաղիկներ կը գողնայ:

— Ա՛խ, մէյ մը որ ձեռքս ինկաւ, — կ'ըսէր ան իր կնոջը՝ տունէն դուրս գալու ժամանակ: — Չէ՛, ի՛նչ որ ալ ըլլայ՝ այսօր պիտի բռնեմ. հոգին պիտի հանեմ: Երէկ ամենալաւ վարդերս փրցուցած, տարած էին, եւ ճիւղերն ալ կտորտած... Կոտորողին ձեռքը չորնայ:

Կինը ինքն ալ շատ անհանգիստ էր. լաւ գիտէր որ ամուսինը շատ կը սիրէ իր ծաղիկները, ինչպէս իր զաւակները, եւ կը զարմանար թէ ո՞վ կը համարձակէր պարտէզ մտնել:

— Չէ՞ որ ցանկապատը լաւ շինուած է, ուրկէ՞ կը մտնեն, — կը մտածէր կինը՝ Յակոբը ճամբու դնելէ յետոյ: Այդ օրը ամուսինը սովորականէն աւելի կանուխ ելած էր, որ պարտէզ երթայ:

### 2

X Պարտիզայան Յակոբ կամացուկ բացաւ պարտէզին դուռը, անաղմուկ ներս մտաւ, եւ զգուշութեամբ դուռը դոցեց: Ոտներուն ծայրը կոխելով, անձայն ուղղուեցաւ դէպի ծաղկանոցը:

Ծաղիկներուն անուշահոտութիւնը կը լեցնէր անոր կուրծքը աւանձին հրճուանքով մը: Բայց այն միտքը,

Թէ ս'վ զիտէ որո՞ւ անգուք ձեռքը պիտի մօտենայ այդ աննման ծաղիկներուն, պիտի կտրտէ սիրուն գլուխները եւ պիտի կտրէ ցօղունները, — կապոյտ շապիկին տակ անոր սիրտը աւելի արագ բարախել կու տար: Աչքերը աջ ու ձախ կը պտըտցնէր անդադար, ուշադրութեամբ հետեւելով կասկածելի ամէն մէկ ձայնի:

3

Յանկարծ անոր թուեցաւ թէ ցանկապատին տակը թուփերը շարժեցան եւ անսովոր խշխշաց մը լսուեցաւ այնտեղէն: Պարտիզպան Յակոբ խկոյն ծռելով պահուեցաւ մեծ ծառի մը բունին ետեւ: Ականջը սրած էր:

— Կամա'ց, կամա'ց... — կը շընջար մանկական ձայն մը, — մեզ կը նկատեն:

— Չէ', պարտիզպանը դեռ քնացած կ'ըլլայ: Մարդ չկայ հոս, — պատասխանեց ուրիշ ձայն մը:

Յակոբ տեսաւ թէ ի'նչպէս թուփերուն ճիւղերը ետ քաշուեցան եւ երկու մանկական գլուխներ երեւցան, երկչոտ աչքերով ասդին անդին նայեցան, յետոյ տղայ մը եւ աղջիկ մը կամացուկ սողալով, արահետին վրայ առաջացան:

— Ա'խ, ի'նչ լաւ է այստեղ, — բացաղանչեց աղջիկը, որ աւելի փոքր կ'երեւար: — Տե'ս, ի'նչ գեղեցիկ գորդ փոռած է այստեղ:

Ու անոնք պահ մը կեցան նոր բացուած շուշաններուն մօտ:

— Չէ', երթա'նք, այնտեղ աւելի լաւ ծաղիկներ կան, — կը շտապէր տղան, ղիմելով դէպի ծաղկանոցի խոշոր ծաղիկները:

Յակոբ ջղաձգօրէն կը շարժէր ձեռքի հաստ ձեռնափայտը եւ պատրաստ էր դուրս դալու իր քագստոցէն

ու այնպիսի հարուած մը հասցնելու փոքրիկ դողերուն , որ ա՛լ անկարող ըլլային իրենց տեղէն շարժելու . բայց ինքզինքը գտայեց , որովհետեւ ճիշդ այդ միջոցին լսեց աղջկան ձայնը .

— Սուրէ՛ն , շատ չքաղես . տես ինչպէ՛ս կը ժպտին , կը ծիծաղին ծաղիկները , տես ի՛նչպէս կը բարեւեն մեզ . . . : Այս ի՛նչ անուշ հոտ է . . . :

Ան կը խօսէր ա՛յնպիսի զմայլանքով , որ կարծես Յակոբի հարազատ սրտէն խօսած ըլլար : Պարտիզոյանը բարի զգացում մը ունեցաւ դէպի այդ փոքրիկ ոտարու պիկ էակը , որ վայրկեան մը կանգ առաւ ծաղիկներուն անուշ բուրմունքը լեցուն կուրծքով ծծելու :

— Չէ՛ , շատ չեմ քաղեր , այնքան կը քաղեմ , որքան պէտք է , — պատասխանեց տղան :



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Մասաւիօուքիւն՝ հօգ. անհանդատութիւն. ցանկ՝ փուշերէ , թփիկներէ իրարու հիւսած պատ. ցանկապատ՝ ցանկով պատած. անգուր՝ դուր, կարեկցութիւն չունեցող. ցօղուն՝ բոյսերու բունը, եղէգը. բարախիկ՝ վարնեւ. անսովոր՝ սովորականէ դուրս. խիխոց՝ ձայն, աղմուկ. բուն՝ ծառին հաստ մտօք՝ ճիւղերը չսկսած. երկչոտ՝ վախկոտ. արակեա՝ նեղ ճամբայ. զղաձգօրէն՝ ջիւերուն ձգտուած, գրգռուած վիճակը. բազանց՝ պահուելու տեղ. գտպի՝ բռնել. զմայլանք՝ հիացում :

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ինչո՞ւ համար պարտիզոյան Յակոբ մտահոգութեան մէջ էր. — Իր ծաղիկները գողցողները որո՞նք էին. — Տղան ու աղջիկը ի՞նչ խօսակցութիւն ունեցան ծաղկանոցին մէջ :



## ԾԱՂԻԿ ԳՈՂՑՈՂՆԵՐԸ

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՆԱԽՈՐԴ ԴԱՍԻՆ)

### 4

Տղան արագ մօտեցաւ սմբուլներուն եւ մէկ երկուքը  
փրցուց, յետոյ շուտ շուտ քաղեց նարդէսները:

— Բռնէ՛, Միաժա՛ն, քիչ մըն ալ այն վարդերէն  
փրցնեմ ու հերիք է: Դէ՛հ, հիմա երթա՛նք:

— Այս ո՞րտեղէն է կը մտնեն, — ինքնիրեն կը  
հարցնէր պարտիզպանը, ու սպասեց մինչեւ որ Սուրէն  
եւ Միաժան անհետանան այն թուփերուն մէջ, որտեղէն  
երեւցած էին. յետոյ ինքն ալ մօտեցաւ ցանկապատի  
այն տեղին եւ նկատեց միայն տղուն ոտքերը:

Աղջիկն արդէն դուրս սողոսկեր էր:

### 5

Անբացատրելի հետաքրքրութիւն մը կը դրդէր պար-  
տիզպան Յակոբը իմանալու, թէ այդ փոքրիկները ին-  
չո՞ւ ծաղիկներու պէտք ունէին, որ ամէն առատ, լուսարացէն առաջ, կը թողէին իրենց անկողինները եւ  
կու դային այստեղ, կու դային ո՛չ թէ ծաղիկները ոչըն-  
չացնելու, անխնայ փճացնելու կամ փունջեր կազմելու  
եւ ծախելու համար: Ան շտապեց դէպի դուռը եւ հե-  
տեւեցաւ մանուկներուն, որոնք դրեթէ վազելով կը  
շտապէին պարտէզներէն դուրս, դէպի դաշտը, ուր հե-  
ռուն կ'երեւէր եկեղեցի մը:

— Այնտեղ գերեզմանատունն է սակայն: Ո՞ւր կը

վաղեն այն կողմը, — ինքնիրեն կը հարցնէր Յակոբ, հազիւ կարողանալով հասնիլ անոնց ետեւէն հեւալով:

6

Հոն, գերեզմանատան մէջ, տղան եւ աղջիկը անցան անթիւ տաղանաքարերու եւ խաչքարերու քովէն, ու վերջապէս կանգ առին թարմ գերեզմանի մը առջեւ: Պարտիզպան Յակոբ տեսաւ թէ ինչպէս անոնք ծնրադրեցին հողակոյտի մը առջեւ, աշխատելով ամուր սեղմել իրենց կուրծքին այդ պաղ հողը, եւ ապա քանի մը անգամ համբուրեցին: Այնուհետեւ անոնք մէկիկ մէկիկ տնկեցին ծաղիկները այդ թարմ գերեզմանին շուրջը:

Պարտիզպան Յակոբ քարացած կանգնած էր հեռուն, աշխատելով ակնկառելի մնալ այնտեղ: Անոր կուրծքը ծանր կը բարձրանար, կ'իջնար, եւ բան մը կարծես կսկսուր կը խեղդէր:

Բաւական երկար մնացին տղան եւ աղջիկը այդ գերեզմանին մօտ եւ երբ վերջապէս ոտքի ելան եւ կ'ուղէին հեռանալ, պարտիզպան Յակոբ մօտեցաւ Սուրէնին ու բռնեց անոր ձեռքէն:

— Վա՛յ, — ֆչաց սարսափահար Սուրէն, ճանչնալով պարտիզպանը: — Մի՛ սպաններ մեզ...

Իսկ Ծխածան, կանչելով «Մայրի՛կ, վա՛յ մայրիկ», վաղեց ետ դէպի գերեզմանը, ինկաւ հեղակոյտին վրայ, կարծես անկէ օգնութիւն խնդրելով:

— Կեցի՛ր, տղայ, մի՛ վախնար, — կը հանդատացնէր յուզուած պարտիզպանը, — բան մը պիտի չընեն ձեզի: Ըսէ՛, այն որո՞ւմ գերեզմանն է, որ ծաղիկներով զարդարեցիք:

— Մայրիկինն է... ան նոր մեռաւ... ան այնպէ՛ս կը սիրէր ծաղիկները...

— Ինծի նայէ՛, աղա՛ս, քոյրիկիդ ալ ըսէ՛, որ ձեր մայրիկը շատ կը վշտանայ, եթէ իմանայ որ դուք զո՞ղուեթիւն կ'ընէք: Այսուհետեւ ամէն օր կու գաք մօտս, ես ինքս ձեզի ծաղիկներ կու տամ ձեր մայրիկին զերեզմանը զարդարելու համար:

Եւ պարտիզպան Յակոբ արագ հեռացաւ զերեզմանատունէն, աշխատելով որ ոչ ոք նկատէ իր աչքերուն արցունքները:



### 1. — ԲԱՌԵՐՈՒ ԲՍՅԱՏՐՈՒԹԻԻՆ

Անհեռանալ՝ կորուել. զրդել՝ թեւադրել, մղել. անխնայ՝ անխիղճ, անողորմ. հեւալ՝ յաճախ շունչ առնել. անկասելի մնալ՝ չտեսնուել. նչալ՝ պառաւ. սարսափահար՝ վախցած. վեհանալ՝ ցաւել:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Չեղմէ մէկը կը հաճի ամփոփ կերպով պատմել նախորդ դասը. — Ի՞նչ ըրին քոյր եւ եղբայր. — Պարտիզպանը կրցա՞ւ նախապէս հասկնալ թէ Սուրէն եւ Ծիածան սրտեղէն ներս մտած էին. — Ծաղիկները փրցնելէ յետոյ դէպի ո՞ւր ուղղուեցան անոնք. — Պարտիզպանը հետեւեցա՞ւ անոնց եւ ի՞նչ տեսաւ. — Գերեզմանատան մէջ այդ երկու փոքրիկները որո՞ւն հողակոյտը կը զարդարէին թարմ ծաղիկներով. — Երբ հեռանալ ուղեցին, ի՞նչ պատուիրեց պարտիզպանը եւ ի՞նչ խոստացաւ:

### 3. Բացատրել հետեւեալ խօսքին իմաստը. —

Թարեգործուրեան յիշատակին պէս քաղցր բան չկայ:



## ՍՈՒԱԿԻՆ ԵՐԳԸ

Մեր սլարտէղին մէջ, ամէն առաւօտ,  
Ծառի մը վրայ, սլատուհանիս մօտ,  
Կու դար երգելու սոխակ մը սլարտիկ.  
Իր երգն էր անուշ, ձայնը աղղեցիկ:

Բայց ես դո՛ւ չէի, կ'ուզէի որ ան,  
Վանդալի մը մէջ չքեղ աննրման,  
Սենեակս առնէի, իր երգը սիրուն՝  
Մտիկ ընէի առտու իրիկուն:

Վերջապէս օր մը ինկաւ իմ ծուղակ,  
Ու դրի զինքը ոսկեղօժ վանդակ.

Դրի անոր մօտ առատ կերակուր ,  
Պաղալիկ պէս պէս ու դաւաթով ջուր:

Կարօտ եմ հիմա ես անոր ձայնին,  
Ա՛հ, ո՛չ մէկ ատեն մէջը վանդակին՝  
Բացաւ բերանը, կերաւ ոչ մէկ բան,  
Այլ՝ միշտ լուռ ու մունջ նայեցաւ վրան՝

Յայտնի էր որ նա կ'ուզէր ազատ օդ.

Ան՝ ազատութեան էր միայն կարօտ:

Բացի վանդակը. թռա՛ւ, թառեցաւ

Նոյն ծառին վրայ , սենեակիս մօտը,

Ու կրկին երգեց իր սիրուն երգը:

★

### 1. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ


Դուք ալ լսա՛ժ էք օտարին երգը. — Ո՛ր կ'երգեն  
սոխակները. — Ի՛նչպէս է անոնց երգը. — Կրնա՞ք բտել թէ  
վանդակի մը մէջ բռնատարկութեամբ թռչունը լաւ կ'իլդէ թէ

ազատ օգի մէջ կամ ծառի մը ճիւղին վրայ թառած թռու-  
չունը. — Պիտի սիրէի ք երբ ձեզ ալ բտնտարկէին եւ արգի-  
ւէին որ եւ է շորթում, երգ. կամ խող. — Ինչո՞ւ համար  
ստիակը ազատութեան կարօտն ունէր:

2. Արձակի վերածել այս ստանաւորը, եւ յետոյ գոց  
արտասանել:

3. Բացատրել հետեւեալ խօսքին իմաստը. —

**Քնուրփանը մարդս ազատ սեպդամ է. մարդի՛կ եմ որ  
սեպդս ծ եմ գերուրփանը:**



## ՍԱՀԱԿ ԹՌԶՈՒՆԸ

Գարնան ստաջին օրէն սկսեալ, ամբողջ ամառը,  
արեւը մարը մտնելէն յետոյ, այգեստաններու հովա-  
նուտ հովտին մէջ տրամազին ձայն մը կը սկսի հնչել,  
Սահահ... Սահահ...

Ոչ մէկը կրնայ ճշգեւ թէ ուրկէ՛ կու դայ այդ ձայ-  
նը: Ամբողջ հովտին մէջ ուր որ կրթաս, ձայնը կայ  
ու կը հնչէ, բայց քոնի՛ կը կարծես թէ կը մօտենաս  
ձայնին, ա՛յնքան ձայնը կը հեռանայ քեզմէ, անդա-  
դար կրկնելով միեւնոյն մեղամաղձիկ ողբերգը, Սա-  
հահ... Սահահ... Սահահ...



Կ'ըսեն թէ այդ ձայնը յաւիտենական ողբերգն է վի-  
պական թոչունի մը, որ ժամանակով մարդկային էակ  
մըն էր:

Ատենով մայր մը կար, գորովագութ մայր մը, որ  
միակ որդի մը ունէր, Սահահ անուն, խարտիշագեղ  
պատանի մը, որուն զրայ եօգի կու տար: Ա՛յնքան

բուռն սիրով կապուած էր անոր հետ : Ու մայր ու որդի իրարմով երջանիկ էին , շա՛տ երջանիկ . . . :

Բայց այն ժամանակները սովորութիւն կար որ երբ կամուրջ մը կառուցուէր , ջուրերու ուղիները սիրաշահելու համար կը զոհէին այն առաջին անձը , որ նորաչէն կամուրջին վրայէն առաջին անգամ անցնէր : Երբ այս զոհը չըլլար , ջուրերը կը կատղէին եւ իրենց ամեհի կոհակներովը շուտով կը փլցնէին կամուրջը :

Խարտիչագեղ Սահակ , որ այս անուութ սովորութիւնը չէր գիտեր , սեւ օր մը , գիտելու գնաց այն կամուրջը որ գեռ նոր շինուած , լմնցած էր , եւ զուարթ , միամիտ , անցաւ կամուրջին վրայէն . . . :

Աւա՛ղ , սովորութիւնը անողա՛ք էր : Սահակ , դըժբախտ զոհը եղաւ այդ նորաչէն կամուրջին :

Մայրը , անգիտակ այս ահուելի դժբախտութեան , կը սպասէր որ իր որդին դայ , ու չէր ալ գիտեր թէ ո՛ւր գնացած է ան : Բայց ի դո՛ւր , խարտիչագեղ Սահակ ալ չվերադարձաւ : Ու մայրը խենթի սէս չորս կողմը ինկաւ փնտռելու իր սիրական զաւակը . . . Բայց տեղ մըն ալ չգտաւ զայն :



Ո՞վ գիտէ ուրքա՛ն ժամանակ պտըտեցաւ այդ տարաբախտ մայրը լեռներու եւ անտառներու մէջ , փնտռելով ու սղբալով իր սիրականին կորուստը : Օրին մէկն ալ , չենք գիտեր ի՛նչպէս , թեւեր առաւ եւ սլացաւ օդին մէջ :

Ու անկէ՛ ի վեր գիշերուան մթութեան մէջ ինքզինքը ծածկած՝ կ'ողբայ իր սեւ ճակատագիրը , եւ տակաւին կը փնտռէ իր սիրական զաւակը՝ անդադար կանչելով տխրագին , Սահա՛կ . . . Սահա՛կ . . . Սահա՛կ . . .

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Հովանուս՝ շուք ունեցող. մելամաղձիկ՝ տխուր եղող. գորովագուր՝ գուրգուրացող, սիրող. խարթեացեղ՝ գեղեցիկ, դեղին մազեր ունեցող. հոգի ալ՝ շատ սիրել. կառուցել՝ շինել. ամեհի՝ կատաղի, անզուսպ. անաղոֆ՝ անգութ. անգիտակ՝ չգիտցող, անտեղեակ. անուխի՝ ահաւոր:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Գարնան առաջին օրէն սկսեալ այդեստաններուն մէջ ի՞նչ ձայն կը լսուէր.— Մարդո՞ւ ձայն էր թէ թռչունի.— Ի՞նչ կը պատմուէր այդ թռչունին մասին իբրեւ աւանդութիւն.— Երբ կամուրջ մը շինուէր, մարդիկ ի՞նչ սովորութիւն կը յարգէին.— Մայրը կրցա՞ւ գտնել իր սիրելի զաւակը.— Դժբախտ մայրը շատ սպասե՞ց իր զաւակին վերադարձին.— Երկար փնտռուքներէ յետոյ ի՞նչ դարձաւ մայրը:

### 3. Բացատրել այս խօսքին իմաստը.—

**Մեծ վստեղներու պարագային է, որ կ'երեւին մեծ արիւնքիւններ:**


\*

ՅՈՎՃ. ԳԵՂԱՆՃԵԱՆ.— Ծնած է 1870ին եւ մեռած՝ 1915ին: Ծանօթ է իբրեւ բանասէր եւ լեզուաբան: Աշխատակցած է հայ թերթերու, հրատարակելով հայ լեզուի եւ գրականութեան մասին ուսումնասիրութիւններ: Հրատարակած է «Ծիածան» անունով ընթերցանութեան եւ «Նոր Քերականութիւն Արդի Հայերէն Լեզուի» դասագիրքերու շարքերը:



## Չ Ա Լ Օ

Կէս օր է: Արեւէն ու հացէն յետոյ այս անգամ ամբողջ փողոցը մանուկներու ձայնով բռնուած էր: Մանուկները դպրոցէն կ'ելլէին: Չալօն արտոքախփով փողոց կ'ելլէր, զըլարթ հաջիւն մը ձգելով: Մանուկներուն հետ կը խառնուէր, դունչը անոնց ձեռքերուն, փէշերուն, երեսներուն կը քսէր: Մանուկները ա-



նոր հետ կը խօսէին այնպէս, ինչպէս իրարու հետ, եւ չէին ուղեր հաւատալ, թէ Չալօն իրենց խօսածներէն շատ բան չէր հասկնար: Մինչեւ դպրոցին բակը կ'ընկերանար մանուկներուն, անոնց հետ վազվզելով:

Չալօն քանի մը անգամ փորձած էր մանուկներուն հետ եկեղեցի մտնել. սակայն դարմացած էր, թէ ինչո՞ւ ներս չէին թողեր:

Ժապաւէն կասող ու իրենց տէրերուն հետ տօնավաճառի դացող քաղքենի շուներուն պէս, Չալօն հնարաւիտ ձեւեր չունէր, սակայն մանուկները զայն շատ կը սիրէին:

Չալօին ընտանի ձայնը, մտերիմ դիմադիծը, մանաւանդ չարածճի կատակներու դիմացսղ բնաւորութիւնը բաւական էր, որ մանուկները իրենց հաց ու սլանիրին կէսը անոր հետ բաժնէին ու փողոցին վրայ անոր հետ ճաշի նստէին:

Մանուկները կը հեծնէին անոր վրայ, պոչն ու ա-  
կանջները կը քաշէին. բայց երբ հեռուէն շուներու դըզ-  
ուըտուքի մը ձայնը կը լսուէր, Չալօն յանկարծ վար կը  
թափէր իր վրայ հեծած մանուկները, եւ կը փութար  
կռուի վայրը. կը սլատահէր որ այդ պահուն մանուկի  
մը գլուխը դետնին վարնուէր, եւ լալէն մօրը քով դան-  
դատի երթար:

« Ո՞վ դարկաւ, գաւակս »:

« Չալօն », — կը սատասխանէր փոքրիկը, եւ միտ-  
քը կը դնէր այլեւս Չալօին հետ չխօսիլ, քէն պանել:

Չալօն, պատերուն տակէն քսուելով, խնդումերես,  
կը մօտենար մանուկներուն ու անոնց քով կը նստէր:  
Սրգօն կը հանէր իր գլխարկը ու Չալօին գլուխը կը դը-  
նէր. անոր ուսերէն կողմնակի կը կախէր նաեւ քերա-  
կանին պայուսակը ու յետոյ, քերականն անոր քթին  
դէմ բռնելով, կ'ըսէր. —

« Կարգա՛, Չալօ՛, Ա, Բ, Գ »:

« Ա, Բ, Գ », — կը կրկնէին միւսները:

Չալօն՝ լեզուն դուրս ձգած՝ հեւալով անոնց երե-  
սին կը նայէր, աշակերտի մը նայուածքով, — անորոշ  
ու բթամիտ: Սրգօն կը նեղանար. կը հանէր գլխարկն  
ու պայուսակը. Չալօին երեսին ապտակ մը կ'իջեցնէր  
այնպէս, ինչպէս վարժապետը յաճախ իջեցուցած էր ի-  
րենց երեսին: Ու անգամ մըն ալ բոլորը մէկ կը վա-  
զէին դպրոց: Չալօն ալ անոնց հետ մինչեւ դպրոցին  
դուռը կը վազէր ու յետոյ՝ մոռութքը կախ՝ կը վերա-  
դառնար, երբ դպրոցին դուռը կը գոցէին իր դէմ:

ՀԱՄԱՍՏԵՂ

## 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Արտուանք՝ աճապարանք. հնարամիտ՝ ճար, միջոց գըտ-

նող. Բէճ պահել՝ ոխ պահել. բքամիս՝ թանձրամիտ, սպուշ. մուսք՝ վարի շրթունք:

## 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Երբ մանուկները փողոց կ'երլլէին, որս՛ւ է կը հանդիպէին. — Շունը բան մը կը հասկնա՛ր անոնց խօսուածքէն. — Ի՛նչ խաղեր կ'ընէին անոր հետ. — Չալօն ալ կարդալ գիտէ՛ր. — Զեզմէ՛ն ո՛վ կրնայ պատմել իր ունեցած շունին մասին:

### ՀԱՄԱՍՏԵՂ.

— Բուն անու-  
նով՝ Համբար-  
ձում Կէլէնեան  
Ծնած է Խար-  
բերդի գաւա-  
ռին Փէրչէնճ  
գիւղը 1895ին:  
Մանկուլթիւնն  
ու պատանեկու-  
թիւնը անցու-  
ցած է գիւղին  
մէջ: Իր գրակա-  
նութեան նիւթն  
ալ քաղած է  
այդ միջավայ-  
րէն: Յաճախած  
է Մէզրէի Կեդ-  
րոնական Վար-  
ժարանը: 1914  
տարուան սկիզ-  
բը մեկնած է  
Հիւսիսային Ա-  
մերիկա: 1915  
ընծայած է  
«Գիւղը», «Ան-  
ձրեւը» եւ «Սպի-  
տակ Զիաւորը» հատորները. այս վերջինը ընդարձակ վէպ մը:



ՀԱՄԱՍՏԵՂ

## Ի Ղ Ձ Ե Ր

Տէրն էր որ ըսաւ. «Մի՛ հողաք երբեք  
Թէ այսօր կամ վաղն ի՞նչ պիտի ուտէք-  
նայեցէ՛ք երկնի սա թռչուններուն՝  
նր կը քեւածիմ ձեր մօտն ու հեռուն.  
Ո՛չ արտեր ունին, եւ ոչ վարուցան,  
Ո՛չ սերմ, ո՛չ հանքեր եւ ոչ ալ հնձան.  
Եւ ապագայի տաղտուկ հողերով,  
Չեն մաշեր իրենց աւիւնն ու կորով.  
Եւ սակայն Աստուած կը ջամբէ հերիք  
Այդ փոքրիկներուն ումպ ու կերակրիք.  
Ու կը սահայանէ դանոնք ամէնքն ալ  
Իրենց բոյնին մէջ՝ ուր կ'երթան տաքնալ  
Անո՛ւչ մրափներով՝ դպուանքներով լի՛.  
Դուք անոնցմէ չէ՞ք արժեր աւելի,  
— Բայց ի՞նչպէս, ո՛վ Տէր, կրնային մարդիկ  
Թռչունի մը չափ ըլլալ երջանիկ:

ԵՂԻՇԷ ԱՐԳ. ԴՈՒՐԵԱՆ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Իդ՛՝ փափաք. քեւածիլ՝ թռչիւ. օտդուկ՝ ձանձրաւի,  
անհամոյ. աւիւն՝ եռանդ, դրդում. ջամբել՝ կերակրել,  
խմցնել. մրափ՝ թեթեւ քուն:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Ո՛վ կը հողայ ձեր բոլոր պէտքերը.— Կրնա՞ք պատմել  
Ինչ որ կը կատարեն ձեր մայրերն ու հայրերը ձեր պաշտպա-  
նութեան համար.— Ո՛վ կը հողայ սակայն երկնքի թռչուն-

ները.— Ի՞նչպէս կը ճարեն անոնք իրենց կերն ու հատիկները.  
— Ուրիշին վրայ յոյս դնելէ աւելի, որո՞նք  
պէտք է վստահինք:

3. Արձակի վերածել այս ոտանաւորը եւ յետոյ  
գոյ արտատանել:



ԵՂՆԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ  
(1860 - 1930)

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ.— Ծնած է 1860ին եւ վախճանած՝ 1930ին: Եղբայրն է վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրեանի: Եղիշէ Արքեպ. Դուրեան հայ եկեղեցականութեան մօէնէն հմուտ անգամն է, բանասէր եւ զգայուն բանաստեղծ: Հրատարակած է նաեւ բանասիրական աշխատութիւններ: Իր բանաստեղծութիւններէն մաս մը ամփոփած է «Հովուական Սրինգ» անունով հատորի մը մէջ: Յարգարեալ եղած է փոստ-վաճառչայր Արմաշի դպրեվանքին, Առաջնորդ Իզմիրի, Պատրիարք Պուսոյ եւ Երուսաղէմի:

## ԽՕՍՈՂ ԶՈՒԿԸ

(ՀԵՔԵԱԹ)

1

Կար ու չկար, աղքատ մարդ մը կար: Այս աղքատ մարդը դնաց եւ ձկնորսի մը բեռնակիրը դարձաւ: Իբր օրաւարձ՝ կը ստանար քանի մը ձուկ եւ տուն կը բերէր: Այդ ձուկերով կ'ապրէին ինքն ու կինը:

Անգամ մը ձկնորսը սիրուն ձուկ մը բռնեց, տուաւ իր բեռնակիրին որ պահէ. ինքն ալ ջուրը մտաւ: Գետին եղերքը նստած՝ բեռնակիրը կը նայէր ու կը նայէր սիրուն ձուկին եւ ինքն իրեն կը մտածէր. —

«Տէ՛ր Աստուած, այս ձուկը որ մեզի պէս շունչ-կենդանի է, Դո՛ւն ըսէ, աս ալ մեզի պէս ծնող եւ ընկեր ունի՞, աշխարհէն բան կը հասկնա՞յ, ուրախութիւն կամ ցաւ կը զգա՞յ թէ ոչ...» :

Ճիշդ այդ մտածումի միջոցին՝ ձուկը խօսիլ կը սկսի ու կ'ըսէ. — «Մտի՛կ ըրէ, Եղբա՛յր մարդ: Ես ընկերներուս հետ կը խաղայի դետի ալիքներուն մէջ: Ուրախութենէս մոռցայ ինքզինքս, անպլոյշ եղայ ու

ինկայ ձկնորսին ուռկանը: Հիմա, ո՛վ գիտէ, ծնողներս  
զիս կը փնտռեն եւ կու լան, իսկ ընկերներս տխրեր են  
արդէն: Կը տեսնես թէ ես ալ ի՛նչպէս կը տանջուիմ,  
ջուրէն դուրս շունչս կը կտրի: Կ՛ուզեմ նորէն ետ եր-  
թալ, ապրիլ եւ խաղալ պաղ ու վճիտ ջուրերուն մէջ:  
Եկո՛ւր, խղճա՛ ինծի, ազատէ՛, ձգէ՛ որ երթամ... » :

2

Այսպէս կը խօսի ձուկը ցած, շա՛տ ցած ձայնով,  
ցամքած բերանը բանալ-դոցելով:

Աղքատ բեռնակիրը կը դարձանայ. կը մեղքնայ,  
կ'առնէ ձուկը եւ դետը կը նետէ՝ ըսելով. — «Գնա՛,  
սիրուն ձկնիկ, քու ծնողներդ թո՛ղ չլան, ընկերներդ  
թո՛ղ չտխրին: Գնա՛, ապրէ՛ ու խաղա՛ ջուրերուն մէջ,  
ընկերներուդ հետ»:

Ձկնորսը սաստիկ կը բարկանայ բեռնակիրին վրայ,  
կը պողայ երեսին թէ՛ «Յիմա՛ր, ես այս ջուրերուն մէջ  
կը տանջուիմ, ձուկ կը բռնեմ, որպէսզի դուն աշխա-  
տանքիս արդիւնքը նորէն ջո՛ւրը նետես...: Է՛, կոր-  
սուէ՛, դնա՛, ա՛լ աչքիս չերեւիս: Ա՛լ իմ բեռնակիրս  
չես: Գնա՛ եւ անօթի մեռի՛ր»:

Ձեռքի տոպրակն ալ կը խլէ ու կը ճամբէ:

«Հիմա ես ո՞ւր երթամ, ի՞նչ ընեմ, ի՞նչպէս ապ-  
րիմ...»: Այսպէս մտածելով, յուսահատած, պարապ  
ձեռքերով, աղքատը տան ճամբան կը բռնէ:

Իր այս մտածկոտ վիճակին մէջ՝ անոր դէմը կ'ելլէ  
Վիշապ մը, առջեւը ձգած սիրուն կով մը:

«Բարի՛ օր, եղբա՛յր: Ինչո՞ւ կը շտապես, ի՞նչ կը  
մտածես», — կը հարցնէ Վիշապը:

3

Աղքատը կը պատմէ իր դուռխին եկածը եւ կ'աւել-

ցնէ թէ՛ հիմա մնացեր է անդործ ու աննար. չի գիտեր թէ ի՛նչպէս պիտի ապրին ինքն ու կիները :

«Մտի՛կ ըրէ, բարեկա՛մ, — կ'ըսէ Վիշապը, — այս կաթնտու կովը երեք տարուան համար կու տամ քեզի եւ կնոջդ: Ան ամէն օր ա՛յնքան կաթ կու տայ որ՝ ո՛րքան ալ ուտէք, կէսն ալ կ'աւելնայ: Տա՛ր, կթեցէ՛ք, կերէ՛ք ու ապրեցէ՛ք: Երեք տարին լրանայ թէ չէ, առաջին զիշերն իսկ կու դամ եւ ձեզի հարցումներ կ'ուղղեմ: Եթէ հարցումներուս պատասխանէք, կովը ձեզի կը մնայ, հալառակ պարագային, երկուքդ ալ կը լա՛փեմ: Համաձա՞յն ես»:

«Բան մը որ առանց այս կովին՝ սովահար պիտի ըլլանք», — կը մտածէ աղքատը: «Կովը կը տանիմ, երեք տարի կ'ապրինք, մինչեւ այդ երեք տարուան լմրննալը, Աստուած ողորմած է, տեղէ մը հարկաւ դուռ մը կը բացուի: Կա՛մ, ո՛վ գիտէ, կարելի է Վիշապին հարցումներուն կրնանք պատասխանել...»:

«Համաձայն եմ», — կ'ըսէ աղքատը, կովը կը ձգէ առջեւը եւ տուն կը տանի:

Երեք տարի, առտու իրիկուն կը կթեն, լիուլի կ'ուտեն, կ'ապրին: Չեն ալ հասկնար թէ ի՛նչպէս անցաւ երեք տարին: Եւ ահա՛ կը հասնի նշանակուած օրը, երբ Վիշապը պիտի դայ:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ



### 1.— ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Վիճապ՝ մեծ օձ, Ծովային հսկայ կենդանի. աննար՝ միւշոցէ զուրկ. սովահար՝ անօթութեմէ մեռնիլ:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Այս պատմութեանը մէջ որո՛ւ մասին կը խօսուի.— Ձըկ-

նորսը ի՞նչ տեսակ մարդ էր.— Իսկ աղքատը.— Ձուկը որ  
խօսել սկսաւ, ի՞նչ խնդրեց.— Ձկնորսը քովը պահեց նորէն  
աղքատ մարդը.— Վիշապը ի՞նչպէս վարձատրեց աղքատը  
եւ ի՞նչ պայման դրաւ:

## ԽՕՍՈՂ ԶՈՒԿԸ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՆԱԽՈՐԴ ԴԱՍԻՆ)

(ՀԷՔԵԱԹ)

4


Այր ու կին, վերջալոյսի շողերուն տակ կը նստին  
զրան առջեւը ու կը մտածեն թէ՛ ՚ ի՞նչ պատասխան  
պիտի տան Վիշապին, ի՞նչ կը հարցնէ արդեօք. ո՞վ  
կրնայ գիտնալ Վիշապին միտքը...:

«Ա՛յ թէ ի՞նչ կ'ըլլայ վիճակը, երբ մարդ Վիշապի  
հետ գործի նստի... Վիշապի հետ հաշիւ ունենայ...  
Վիշապէն լաւութիւն տեսնէ»... — հառաչելով զըզ-  
ջում կը յայտնեն այր ու կին: Բայց եղածն եղեր է. ա՛լ  
հնար չկայ, որովհետեւ զարհուրելի գիշերուան մութը  
կը կոխէ արդէն:

Այդ միջոցին անոնց կը մօտենայ անծանօթ երի-  
տասարդ մը:

— Բարի երեկոյ, — կ'ըսէ երիտասարդը: — Ճամ-  
բորդ եմ: Մութը կը կոխէ. իսկ ես յողնած եմ: Այս գի-  
շեր հիւր չէ՞ք ընդունիր ձեր տունը:

— Ինչո՞ւ չէ, ճամբորդ. եղբայր, հիւրը Աստուծոյ  
մարդն է: Բայց մեր տունը վտանգաւոր օքեւան է այս  
գիշեր: Մենք Վիշապէն կով մըն ենք առեր այն պայ-



մանով որ՝ երեք տարի կթենք եւ կաթով կերակրուինք :  
Երեք տարի յետոյ Վիշապը դայ ու մեզի հարցումներ  
տայ : Եթէ պատասխանենք, կովը մեզի կ'ըլլայ : Հակա-  
ռակ պարագային, Վիշապը մեզի ուտէ : Հիմա երեք տա-  
րին լրացեր է : Այս գիշեր Վիշապը պիտի դայ ու մենք  
չենք գիտեր թէ ի՛նչ պատասխան տանք : Եթէ մեզ ու-  
տէ, յանցանքը մերն է : Բայց վա՛յ թէ քեզ ալ ուտէ մե-  
զի հետ . . . :

5

— Հող չէ . ուր սր դուք, այնտեղ ալ ես, — կը  
պատասխանէ հիւրը : Եւ եթէ չէք գիտեր թէ ի՛նչ պա-  
տասխան պիտի տաք, Վիշապը որ՝ դայ, ձկեցէ՛ք որ ես  
պատասխանեմ :

— Կը համաձայնին եւ հիւրը կը մնայ :

Կէս գիշերին Վիշապը կու դայ եւ դուռը կը գարնէ :

... Եկե՛ր եմ :

— Ե՛ս ալ եմ եկեր, — կը պատասխանէ հիւրը  
ներսէն :

... Ո՞ւրկէ եկար :

— Ծովի միւս եզերքէն :

... Ինչո՞վ եկար :

— Կաղ մթեղը թամբեցի, վրան հեծայ ու եկայ :

... Ուրեմն ծովը պզտիկ է եղեր :

— Ի՛նչ պզտիկ . արծիւը չի կրնար մէկ աիէն միւ-  
սը թռիլ :

... Արծիւը ճուտիկ է եղեր :

— Ի՛նչ ճուտիկ . թեւերուն շուքը քաղաք կը  
ծածկէ :

... Կարելի է քաղաքը շատ փոքր է :

— Ի՞նչ փոքրիկ. նապաստակը մէկ ծայրէն միւսը  
չի կրնար հասնիլ :

... Կարելի է նապաստակը ձաղուկ է :

— Ի՞նչ ձաղուկ. անոր մորթէն մարդու մը մուշ-  
տակ կը շինուի, գլխարկն ու տրիխներն ալ աւելի :

... Մարդ ըսելով դուցէ քգուկ կը հասկնաս :

— Ի՞նչ թղուկ. ծունկին թառած աքաղաղը որ  
կու-կու-լի-կո՛ւ կանչէ, ձայնը մարդուն ախանջին չի  
հասնիր :

... Ըսել է որ մարդը խուլ է :

— Ի՞նչ խուլ. լերան վրայ որ մանկադով խոտ  
կտրես, անոր ախանջը կը լսէ :

Վիշապը կը սլարտուի : Կը շուարի եւ ըսելիքը չի  
դիտնար : Գլուխը կ'առնէ եւ կը կորսուի :

Երիտասարդ հիւրն ալ կ'ելլէ որ երթայ : Այր ու  
կին կը կտրեն անոր փամբան :

== Ո՞վ ես դուն, անձանձ'թ բարերար : Ըսէ՛ անունդ,  
որպէսզի եթէ ազէ կութիւնդ. չկարենանք փոխարինել,  
դոնէ գիտնանք թէ դո՛ւ պիտի օրհնենք, — կը սաղա-  
տի աղքատը :

— Աղէկութի՛ւն ըրէ եւ կ'ուզես ջուրը ձկէ, երբե՛ք  
չի կորսուիր, — կը սլատասխանէ հիւրը : Ես այն ձուկն  
եմ, որուն կեանքը դուն փրկեցիր, եւ ատոր համար ալ  
զրկուեցար ապրուստէդ... :

Հազիւ արտասանած վերջին խօսքերը, երիտասար-  
դը կ'անհետանայ իր հիւրընկալներուն աչքերուն առ-  
ջեւէն :

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆ

Ջառհուրեղի՝ սոսկալի, վախնալիք, օրբւաճ՝ պանդոկ, իջեւան, արեխ՝ կաշիէ շինուած պարզ կօշիկ, քզուկ՝ շատ կարծ հասակով մարդ:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Մէկը թող պատմէ այս պատմութեան առաջին մասը.— Անծանօթ երիտասարդը ինչ կը խնդրէր.— Երբ Վիշապը կու գայ, ինչ իտակցութիւն կ'ունենայ երիտասարդին հետ.— Ի՞նչ ըսեւ է կորել մէկուսն նամբուն.— Երբ մէկուն բարիք ընէք, կը կորսուի՞.— Ո՞վ էր այդ անծանօթ երիտասարդը:



## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

1923 Մարտ23ին, Մոսկուայի մէջ, հետու իր սիրած հայրենի երկրէն, յաւիտենականօրէն փակեց իր աչքերը մեր դրականութեան տաղանդաւոր զաւակներէն մէկը՝ Յովհաննէս Թումանեան, որ եղած է Արեւելահայութեան ամէնէն ինքնատիպ դէմքերէն մէկը:



ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ստեղծագործութիւնները գունագեղ են եւ ունին բարձր արժանիքներ:

Յովհ. Թումանեան ծնած է 1869 թուին, Լոռիի Դսեղ դիւղին մէջ: Իր մանկութեան օրերէն լսած է Ձորադետի հսկաներու մասին պատմուած առասպելները եւ հայ մեծ մայրերու հէքեաթները:

Բանաստեղծ Աւետիք Իսահակեան զինքը բնորոշած է հետեւեալ բառերով. — «Հեղեղի պէս լիջաւ նա առասպելական Լոռիի վայրենի լեռներէն, իր հետ բերելով ամբողջ բնութիւն մը՝ յուռթի եւ բազմաառար, ամբողջ հինաւուրց ժողովուրդ մը, իր տռիմիկ երգով, խօսքով եւ երեւակայութեամբ: Եւ ինչպէս ստեղծող մեծ բնութիւնը՝ փռեց նա մեր հոգու առջեւ իսկական, անկեղծ բանաստեղծութիւնը...»:

Ժամանակը կ'անցնի ու մեր հին դրական դէմքերը կը տանի իր հետ: Մեր նոր սերունդը պէտք է շարունակէ հիներու գործը:

Յովհ. Թումանեան վայելած է ամենուն սէրը: Իր հոգիի եւ ստեղծագործութիւններու պարզութեամբ, ան հրապուրած է նաեւ նոր սերունդը: Թիֆլիսի մէջ հրատարակուող Հասկեր մանկական ամսագրին մէջ Թումանեան գրած է մասնիկ մը իր հոգիէն իր սիրելի հայ մանուկներուն համար:

Շունն ու Կատուն, Անբախտ Վահագնականներ, Պօղոս-Պետրոս, Սաաւնցի Դաւիթ, Անիծած Հարսը, Փարւանա, Թմբկաբերդի Առումը, Լուսաւորչի Կանթեղը, Անուշ, Մի Կաթիլ Մեղր եւ ուրիշ գրուածքներու նիւթերը Թումանեան ստած է մեր ժողովրդական կեանքէն, անոնց տալով ինքնատիպ արտայայտութիւն:

Օտար հեղինակներու գործերէն ըրած է բազմաթիւ յաջող թարգմանութիւններ:

Երկար տարիներ Թումանեան եղած է Կովկասի Հայ Գրողներու Միութեան նախագահ:

Բնաներկու տարիներ առաջ Թումանեան հեռացաւ

մեղմէ, բայց ան կ'ապրի մեր հողիներուն մէջ, որքան  
ատեն որ իր գործերը կը խօսին մեր մտքին ու սրտին:

Իր խկ խօսքերով՝

«Կու գան ու կ'անցնին նորն ու եինը,

Գեղեցկութիւն, գանձ ու գահ.

Մահը մերն է, մեմք մահինը.

Մարդու գործերն են անմահ...»:

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ինքնաթիւ՝ ինքնուրոյն, իրեն յատուկ. ստեղծագործու-  
թիւն՝ դրած գործերը. գունազեղ՝ գեղեցիկ գոյնով. առաս-  
պել՝ զրոյց. պատմութիւն. բնօրոշել՝ սրտշեւ, ճշգեւ. յուռ-  
թի՝ առատ. բազմասարք՝ ղանազան նիւթերէ շինուած.  
Եինաւուրց՝ հին օրերէն մնացած. տնամիկ՝ ազգային:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Ո՛վ էր Յովհ. Թումանեան. — Ո՛ւր ծնած էր. — Իր նիւ-  
թերը ուրկէ՝ առած էր ժողովրդական այս բանաստեղծը. —  
Կրնա՞ք յիշեւ իր դրուածքներէն մէկ քանին:

## ՔԱՋ ՆԱՊԱՍՏԱԿԸ

1

Անտառին մէջ՝ ծառերով խիտ,  
Նապաստակ մը՝ փոքր ու վըտիտ,  
Ականջները վեր-վեր տընկած,  
Ինքզինք ժողված,  
Աչքն էր բացեր ու կը նայէր,  
Ու ի՞նչ տեսնէր...

Կանաչագարդ շատ բըլուրներ,  
Դաշտեր զըւարթ, բարձրը սարեր:  
Ինքզինք ըզպաց ազատ ու տէր,

Արտասանեց հըսարտ խօսքեր . —

« Իմ անունըս՝

« Քաջ նապաստակ .

« Ականջներըս

« Երկար , շխտակ .

« Իսկ աչքերըս՝

« Շանթ ու կայծակ :

« Լերան լանջեր ,

« Խոր-խոր ձորեր ,

« Կըտրեր , անցեր ,

« Ժուռ եմ եկեր :

« Ծըղրիթ , մարախ , թիթեռ ու բոռ ,

« Մեղու , ճընճղուկ , հաւ թէ աքլոր ,

« Ինձ սիրեցին , շատ յարգեցին ,

« Ամէն քայլիս պատիւ արւին :

« Օրին մէկը քովըս եկան ,

« Աղաչեցին , ոտքերս ինկան ,

« Որ ես ըլլամ իրենց մեծը ,

« Ճարպիկ ու քաջ առաջնորդը :

« Ու ստիկէ վերջ ,

« Որպէս ճարպիկ , արադաւադ ,

« Ձիւ լաւ ճանչցան՝ խող ու վարադ .

« Գայլ , բորենի , արջ ու աղուէս

« Ինձմէ վախցան անուժ շան պէս :

« Քա՛ջ եմ , այո՛ , այդ լաւ տեսան ,

« Ձիւ կանչեցին անյաղթ իշխան» :

2

Ճիշդ այդ պահուն , մէկ ալ յանկարծ ,  
Թռախերուն մէջ բան մը խըչաց :

Հովը քըչեց

Չորրօրս, դեղնած շիւղ ու տերեւ,  
Եւ ամպածածկ եղաւ արեւ:

Մէկէն մըթնեց...:

Երբոր տեսաւ քաջ նստատակ  
Որչոցով լի անտառն համակ,

Իրար անցած,

Ձայնեց յանկարծ. —

« Ի՞նչ բան է սա...:

« Է՛, ես ո՞ւր եմ...

« Իմ անձիս դէմ,

« Հովի փըչոց,

« Որչոց-մըչոց,

« Չոր տերեւներ

« Դաւադիրնե՞ր...»:

Ու այլայլած,

Շունչը բըռնած,

Գըլուխն առաւ,

Ձըգեց փախաւ...



Ու այն օրէն մինչեւ օրս ալ,

Տեղ մը կըրնա՞յ հանդիստ մընալ:

Երբոր լրսէ շրշուկ կամ ձայն,

Կը վաղէ ան.

Սըրտատըրոփ, լեղապատառ

Փախուստ կու տայ մեր քաջ հըսկան:

Ս. Թ.

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Վ. Թ. նիհար, պզտիկ. ժուռ գալ՝ պտըտիլ. բոռ՝ վայրի  
մեղու, մեծ ճանճի տեսակ մը. հարպիկ՝ յաջողակ, ճարտար.

ամպածածկ՝ ամպով ծածկուած. համակ՝ ամբողջ, բովան-  
դակ. այլայլած՝ իրար անցած, փոխուած, վախցած. օճուկ՝  
ձայն. սրտատրոփ՝ սիրտը թունդ ելած. լեզուսպատառ՝  
լեզին պատուած, սաստիկ վախցած:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Նապաստակը ո՞ր կ'ապրէր.— Ինքզինքն աղատ զգալով,  
ինչե՞ր խօսեցաւ.— Երբ մեծ մեծ կը խօսէր, թուփերուն մէ-  
ջէն ի՞նչ լսեց.— Այն օրէն ի վեր ի՞նչ տեսակ կեանք մը  
կ'ապրի.— Ինչո՞ւ համար նապաստակը վախկոտ կենդանի  
մը ճանչցուած է:

3. Արձակի վերածել այս ոտանաւորը եւ յետոյ գոց ար-  
տասանել: Ուղղագրել վերջին վեց տողերը:



## ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Մատթէոս Մամուրեան ծնած է Իզմիր 1837ին: Իր  
ուսման ընթացքը փարիզի Մուրատեան Վարժարանին  
մէջ աւարտելէ վերջ, դարձած է Իզմիր, ուր իր դոր-  
ծունէութեան ասպարէզը սկսած է ուսուցչութեամբ:  
Ապա Պոլիս եկած, վարժարաններ վարած, եւ եօթը  
տարի ալ Պատրիարքարանի դիւանապետութիւն ըրած է:

1868ին դարձած է Իզմիր, եւ այդ ատենէն սկսեալ  
երկար տարիներ տնօրէն եւ ուսուցիչ եղած է Իզմիրի  
ազգային վարժարաններուն մէջ:

Մամուրեան մեր Պոլսոյ եւ Իզմիրի դրօշներու  
խումբին մէջ առաջին տեղերէն մէկը դրաւած է:

Այս նշանաւոր դրագէտը կէս դարու դործունէու-  
թիւն ունեցած է մեր դրական կեանքին մէջ, միշտ պահ-  
պանելով իր երիտասարդական կորովը:

Իր թարգմանութիւնները հատորներու դէպ մը կը  
կազմեն:

Իբր հեղինակ, ձգած է յիշատակելի երկասիրու-

թիւններ. դրած է վէպ, կատակերգութիւն, քրոնիկ, եւ ամէն զրական սեռի մէջ կը փայլին իր նուրբ ճաշակը, վառվռուն երեւակայութիւնը եւ կռու ոճը:

Ուշագրաւ գործունէութիւն ունեցած է նաեւ իբր հրապարակագիր: Երեսուներեք տարի խմբագրած է Իզմիրի Արեւելեան Մամուլ հանդէսը, զոր յետոյ շարունակած է իր որդին Հրանդ Մամուրեան:

Մատթէոս Մամուրեանի երկասիրութիւններն են՝ Սեւ լեռին մարդը (վէպ), Հայկական եւ Անգլիական ցամականիներ առանձին հատորներով, Վրոյր ծածկանունով լոյս ընծայած:

Այս անխոնջ գրագէտ-հրապարակադիրը մեռած է 1901ին:

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Դիւանապետութիւն՝ քարտուղարութիւն, գրագրութիւն, քրոնիկ՝ Լրագրի յօդուած, որ կը պարունակէ օրուան նորութիւններու վրայ խորհրդածութիւններ. կռու՝ Լեցուն. հրապարակագիր՝ Լրագրի մէջ յօդուած գրող. աճխոնջ՝ չյոգնող:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ՝ գրական հանդէս մը, որ Իզմիրի մէջ լոյս տեսնել սկսած է 1871ին եւ դադարած 1908ին:

## ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Մանկութեան յիշատակներուն դառնալը որքա՞ն կը յուզէ մարդս: Անմեղութեան, միամիտ վստահութեան, անխէթ խղճի, անխառն հաւատքի այդ մատաղ օրերէն զով շունչ մը կը փչէ մեր քիչ թէ շատ թոռմած սրտին վրայ, եւ անոնց յիշատակը կենդանանալով կարօտ մը կը գոյացնէ հոգւոյն մէջ:

Մանկութեան օրերու այս յիշատակը անվրիպելի ու զօրաւոր կերպով կը գոյանայ եկեղեցիին մէջ, եւ մեր

կորսնցուցած սիրելիներուն նկատմամբ:

Այս մասին, իմ կրած տպաւորութիւնս, կը յուսամ թէ ինծի յատուկ բան մը չէ: Եկեղեցիին երգերէն խորապէս յուզուած եմ յաճախ: Երբեմն մանուկներու հըրեշտակային ձայներն են որ կ'երգեն զանոնք, — որոնց նման իմս ալ ատեն մը կը բարձրանար դէպի տաճարին դմբէթը, — եւ երբեմն ալ քահանաներու լուրջ ու բամբ ձայները: Երբ այդ մեղեդիները կը լսեմ, ինծի անանկ կու գայ թէ ամբողջ մանկութիւնս է որ կը կենդանանայ, անուշ ու սաշտելի ձայներու եւ դէմքերու երաւ մը որ կարծես ծածկուած բոյնէ մը դուրս կ'իյնայ, թռիչ կ'առնէ, կը քեւածէ տաճարին մէջ, խառնուելով սրբադան երգերուն եւ պատկերներուն:

Այս տեսակ միջավայրի մը մէջ, ժամերով ինքզինքս մոռցած՝ մնացած եմ շղթայուած, կնոջ մը պէս լալով: Յետոյ երբ դուրս ելած եմ եկեղեցիէն, զգացած եմ որ հողիս աւելի թեթեւցած է ու միշտ կը թեթեւնայ աղնիւ զգացումներու տակ:

Ամենուն կամ դոնէ շատերուն համար այսպէս չէ՞ արդէն: Այս տպաւորութիւնը չե՞ն ունենար անոնք՝ որ քիչ կամ շատ բարեպաշտ մանկութիւն մը ունեցած են:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Անխէք՝ առանց խայթի. անվրիպելի՝ անսխալ, ստոյգ. մեղեդի՝ եկեղեցական երգ. երամ՝ իսկապէս. քեւածիլ՝ թուրք. թեւերը շարժել. բարեպաշտ՝ աստուածավախ, առաքինի:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Չեզմէ ամէն մէկը մանկական սրիւնէ յիշատակ կըրնայ յիշել.— Ամէնէն աւելի ուր է որ կը զգանք մենք մանկական յիշատակներ.— Դուք ալ հետեւած էք եկեղեցական երգերուն եւ արարողութիւններուն:



## ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻ ԱՌԱԻՕՏԸ

Առաւօտ էր. Արարատեան դաշտի լուսապայծառ առաւօտներէն մէկը :

Արեւուն առաջին ճառագայթներուն տակ Մասիսի սպիտակափառ դաղաթը կը փայլէր վարդապոյն շողերով, որ աչք կը շլացնէր : Արագածի սլակաձև դաղաթը չէր երևեր : Ան տակաւին ծածկուած էր ձիւնի պէս ճերմակ մշուշով, իբրև ամօթխած հարսիկ մը, որ իր դէմքը կը ծածկէր անթափանցիկ շղարշով : Կանաչազարդ դաշտավայրը, ցօղուած առտուան մարդարիտներով, կը փայլէր ծիածանի ամենանուրբ դոյներով : Մեղմ հովիկը կը փչէր, ծաղիկները կը ժպտէին, դալար խոտարոյսերը կը ծիծիփային ու կը ծածանուէին եւ դաշտի խաղաղ տարածութիւնը կ'օրօրուէր սքանչելի ալեկոծութեամբ :

Գեղեցի՛կ էր այդ առաւօտը : Թռչունները ուրախ ուրախ կը ճախրէին մէկ թուփէն միւսը : Գոյնդոյն թիթեռնիկները ծաղիկներու նման ցանուած էին օդին մէջ : Սպիտակ արագիլը, կարմիր ոտքերը հորիզոնական դիրքի մէջ, լայն թևերով կը թափահարէր շտապելով



դէպի Արաքսի մօրուտները: Եղջերուները, վիթերն ու  
այծեամբ դուրս եկած էին արքայական անտառներէն  
եւ ազատ, համարձակ կը վազվզէին շրջակայ մարդե-  
րուն վրայ:

Ամէն առաւօտ թռչունը կը կարդար իր նախարչա-  
լոյսեան մեղեգին եւ անոր հետ լսելի կ'ըլլար ժրաջան  
ժշակին երգը՝ կը փայլէր մանդաղը, կ'եռար դործը եւ  
ոսկեղէն հունձքը՝ իր լիառատ բեղմնաւորութեամբ՝ կը  
վարձատրէր վատտակարեկ շինականի աշխատանքը:  
Իսկ այս անաւօտ չկար հնձուորը, չկար եւ հերկավարը:

Ամէն առաւօտ սուրբ տաճարի կոչնակի առաջին  
հնչումին հետ կ'արթննար հովիւը: Ոչխարներուն անուշ  
բառաչը, արջառներուն ուրախ ձայները կը կենդանա-  
ցնէին խոտաւէտ հովիտները խլիտ ախորժելի աղմուշ  
կով: Իսկ այս առաւօտ չէին երեւեր ոչ հովիւր եւ ոչ  
ալ անոր հօտերը: Յիրուցան դառնողիները կը թափա-  
ռէին սար ու ձոր եւ հայրակորոյս որբիկներու նման,  
կարծես, կը փնտոէին հովիւը:

Արեւը բարձրացաւ, եւ որքան կը բարձրանար, այն-  
քան Արարատեան ընդարձակ դաշտավայրը, հսկայ բուր-  
վառի մը պէս, կը խնկարկէր իր անուշահոտութիւնը:

Ամբողջ հովիտը կը ծխար, կը դռլորչիանար: Յօղա-  
գարդ բուսականութիւնը երկինքին կը վերադարձնէր  
իր մարդարիտէ կաթիլները:

Կը ծխային դաշտավայրին վրայ փռուած բոլոր  
գիւղերը: Բայց այդ ծուխը չէր նմաներ այն խաղաղ,  
կապտագոյն ծուխին, որ ամէն առաւօտ օձապտոյտ սիւ-  
ներով վեր կը բարձրանայ խրճիթներուն զմբէթաձեւ  
քրդիփներէն: Այդ ծուխը սեւ մառսխուղի նման ծած-  
կած էր գիւղերը եւ մերթ ընդ մերթ անոր մթին թան-  
ճրութեան մէջէն կը փայլատակէին հրայիմ կայծեր...:

ՐԱՅՖԻ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ամօթխած՝ ամչկոտ, պարկեշտ. դալար՝ կանաչ. մօռու՝  
սաստիկ ցեխոտ տեղ. վաստակարեկ՝ աշխատանքէն յոգնած,  
Յռած. հայրակոռոյս՝ հայրը կորսնցուցած. ցօղազարդ՝ ցօ-  
ղով զարդարուած. Երդիփ՝ ասնիք. Երայիմ՝ կրակէ:

### 1. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Այս հատուածը որո՞նք կողմէ գրուած է.— Ի՞նչ կը նկա-  
րագրէ.— Կրնա՞ք քանի մը բառերով ներագրել առաւօտ  
մը.— Գիւղացիներուն համար օրուան ո՞ր պահը ամէնէն  
յարմարն է աշխատանքի համար.— Ինչո՞ւ համար վաստա-  
կարեկ ածականը կու տանք անոնց.— Մշուշով ծածկուած լե-  
րան գագաթը ինչո՞ւ համար ամօթխած հարսի մը կը նման-  
ցընէ.— Առանց հովիւի թափառող գառնուկները ի՞նչ բանի  
նմանցուցած է.— Ձեզմէ ո՞վ կրնայ յիշել որքի մը պատ-  
մութիւնը, զոր կարգացիք Արարա՞ս ընթերցարանի

Բ. Գրքին մէջ:

### 3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏ՝ որ ամէնէն ընդարձակ դաշտա-

վայրն է, ծովու մակերեսէն հազար մէթր բարձրութեան վը-  
րայ կը գտնուի, տարածուելով Աբարստի եւ Արագածի միջեւ:


**ԱՐԱՐԱՏ ԿԱՄՍՍԻՍ** երկու գագաթով, մէկը Մեծ,  
միւսը Փոքր. Արագս գետի աջ եզերքին վրայ:

**ԱՐԱԳԱՄ** չորս գագաթ ունի եւ հարուստ է բուսականու-  
թեամբ եւ առատ ջուրով:

**ԱՐԱՔՍ** կամ **ԵՐԱՍԽ** ժողովրդական լեզուով՝ **Արաղ**,  
Հայաստանի մայր գետը կը նկատուի եւ սնոր համար «Մայր  
Արագս» անունը տուած են: Կը յիշէք անշուշտ **Արաֆսի ար-  
ճաստուէր** վերնագրով շա՛տ ծանօթ երգը, որուն առաջին  
տունն է՝

**Մայր-Արաֆսի արիերով  
Քայլամար գնում եմ,  
Հի՛ն հի՛ն դարուց յիսառակ  
Ալիսաց մէջը պարում եմ:**

Այս երգին հեղինակն է ծանօթ բանաստեղծ՝ **Գամառ  
Քաթիպա:**




## Ր Ա Ֆ Ֆ Ի

**Յակոբ Մելիք** - Յակոբեանց, դրական ծածկանու-  
նով **Րաֆֆի**, ծնած է 1835ին Պարսկաստանի Սալմաստ  
գաւառի Փայաջուկ գիւղը:

Րաֆֆիի հայրը շատ համակրելի, գեղեցիկ ձիրքե-  
րով օժտուած, նահապետական անձնաւորութիւն մըն  
էր: Հակառակ իր ունեցած մտաւորական համեստ սլա-  
շարին, կը սիրէր ուսումն ու կրթութիւնը: Ինչ որ տես-  
նէր Թիֆլիսի մէջ, իր ճամբորդութիւններու ընթացքին,  
Սալմաստ վերադարձին, նոյնը կը պործազրէր Սալմաս-  
տի մէջ:

**Մելիք Միրզա** - բէկ շատ հիւրասէր էր: Անոր տու-  
նը բաց էր ամենուն առջեւ: Երբ Խրիմեան Հայրիկ



ՐԱՖԳԻ (1835 - 1888)

1861ին Ատրպատական այցելեց եւ հասաւ Սալմաստ, ա-  
նոր տան մէջ հիւրասիրուեցաւ: Ունէր բազմաթիւ  
կաթնտու կենդանիներ, եւ ձիեր: Կը մշակէր իր արտե-  
րը, պարտէզները եւ կը բանեցնէր իր ջրաղացները:  
Թէ՛ պարզ գիւղացի մըն էր, արօրն ու մաճը գործածող,  
եւ թէ վաճառական: Անոր տունը հաշտարար դատա-  
րան էր, ուր կը լուծուէին գիւղական վէճերը:

Բաֆֆի մայրը հայ կնոջ բարեպաշտ մէկ տիպարն էր: Շնորհիւ անոր հողածութեան, խնամքին ու հեռատեսութեան, ընտանեկան օճախը առատ բարիքներ կը վայելէր: Բացի ծանօթներու հիւրասիրութենէն, թըշուառներ եւ չքաւորներ կերակրել շատ կը սիրէր:

Բաֆֆի իր նախնական ուսումը կը ստանայ դիւզի գարոցին մէջ Վանեցի հայ ուսուցիչէ մը: Կը կարդայ Սաղմոս, Աւետարան ու Նարեկ: Մանկական այդ յիշատակներու պերճախօս մէկ նկարագրութիւնը կը դըրտնենք Կայծերու սկիզբը, ուր կը նկարագրուի դասական դարձած Տէր - Թողիկի գարոցը հետեւեալ տողերով. — «Մեր գարոցը Տէր Թողիկի աւելորդ սենեակներէն մէկն էր, առասուկներու ախտոյն շատ մօտ եւ զրեթէ միացած անոր հետ: Այն նեղ եւ խեղդուած սենեակներուն մէջ լեցուած էին թուով մինչեւ քառասուն աշակերտներ. բացի աշակերտներէն, այնտեղ կապած էին տէր հօր նորածին հորթերուն երեքը: Չմեռը շատ լաւ էր այնտեղ. թէեւ վատելիք չունէինք, բայց ախտոյն պատուհանները կը բանայինք, եւ ջերմ գոլը մառախուղի պէս ներս կու գար եւ մեր դասատուներ կը տաքնար: Որքան կ'ուրախանայինք մենք...»:

Այդ մթնոլորտին մէջ է, որ առաջին անգամ կը բանայ ան իր աչքերը, իր միտքն ու հոգին, ընդունելու համար արտաքին ամէն երեւոյթ եւ ազդեցութիւն: Սրամիտ, ընթերցասէր եւ յանդուգն, գարոցին պակասը կ'ամբողջացնէր ինքնաշխատութեամբ: Մանուկ հասակէն իսկ երեւակայութեամբ կը տարուէր: Շատ կը սիրէր մեծ մօրը եւ մօրը՝ ձմրան երկար գիշերներուն պատմած գրոյցներն ու հէքեաթները: Արդէն պատանի՝ կը սիրէր նկարել, հրացան դործածել եւ ձի հեծնել:

1841ին, Թիֆլիս երթալուն՝ հայրը Բաֆֆին հետը կը տանի եւ կը դնէ Բէլախանի գարոցը, որ քաղաքին

մէջ լաւ համբաւ ունէր: Քանի մը տարի հոն սորվելէ յետոյ, 1852ին կը մտնէ արքունի միջնակարգ վարժարանը երբ 18 - 19 տարեկան պատանի մըն էր: Գիտութիւններու նախնական պաշար մը կ'ամբարէ հոն: 1856ին կը դառնայ իր ծննդավայրը, Սալմաստ, որովհետեւ հայրը ծեր եւ եղբայրներն ալ չափահաս ըլլալուն հետեւանքով, իրենց առեւտրական գործերը վարիչի մը կը կարօտէին:

Այդ թուականին, հօրը ստիսման տակ, առանց աւարտելու միջնակարգ վարժարանը, կը հեռանայ, ու գործել կը սկսի թէ՛ իբրեւ առեւտրական եւ թէ՛ իբրեւ թղթակից, գրելով հայ թերթերու, եւ հաւաքելով բազմաթիւ նիւթեր ապագայ երկասիրութիւններուն համար: Կը կազմէ ճոխ գրադարան մը:

Իր վէպերէն մեծագոյն մասը, ինչպէս «Ունիթը», «Կայծեր»ը, կը նկարագրեն թրքահայ ժամանակակից կեանքը, իր բոլոր տատաղակն դրուադներով: Բաֆֆի բոլոր գրոյներուն մէջ ամէնէն ժողովրդականը եղած է թէ՛ Արեւելահայերուն եւ թէ՛ Արեւմտահայերուն մէջ: Գրած է նաեւ պատմական գործեր ինչպէս «Սամուէլ», «Դաւիթ Բէդ», «Սամսայի Մելիքութիւնները» եւ ուրիշ բազմաթիւ գործեր: Երկարատեւ աշխատակցած է Թիֆլիսի «Մշակ» օրաթերթին: Թարգմանած է երկու գործեր՝ «Կայէնի Կտակը» եւ «Ղարարաղի Աստղագէտը»: Իր երկերէն մէկ քանին թարգմանուած են եւրոպական լեզուներու: Բաֆֆի կը մեռնի 1888 Սպրիլ 25ին Թիֆլիսի մէջ, եւ աննախընթաց թաղում մը կ'ունենայ:

Բաֆֆի անունը նուիրական անուն մը դարձած է ամբողջ հայութեան համար: Լեզուի եւ գրականութեան մէջ նոր ակօսներ բացաւ, եւ նոր հոսանք մտցուց:

## 1. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Կարգացիք «Արարատեան դաշտին առաւօտը», կրնա՞ք ըսել թէ ո՞վ է անոր հեղինակը.— Նկարագրի ի՞նչ գիծեր ունէին անոր հայրն ու մայրը.— Յիշեցէք անոր վէպերէն մէկը քանին.— Չեղմէ որո՞ւն ծնողքը Րաֆֆիէն սրեւէ վէպ կարդացած է.— Ինչո՞ւ համար հայ ժողովուրդը կը սիրէ ու կը կարգայ այս հայրենասէր մեծ վիպագիրին գործերը:

## ԳԱՐՆԱՆ ՆՇԱՆՆԵՐ

### 1

Հայրիկը նամակ էր ստացեր իր եղբորմէն, որ կը գրէր. «Կ'ուզեմ որ այս կիրակի աղաքը դիւզ բերես, որպէս զի տեսնեն դարունը: Անոնց համար շատ անակընկալներ ունինք հոս»:

Սուբէն եւ ժիրայր շատ ուրախացան, իսկ իրենց քոյրիկը՝ Զարուհի հարցուց մայրիկին. «Ո՞վ է գարունը»:

«Կը տեսնես, կը ծանօթանաս», — ըսին բոլորը: Փոքրիկ Զարուհի գոհացաւ այդքանով եւ ինքն ալ սկըսաւ ցաթկուտել ուրախութենէն:

Այրիլի գեղեցիկ առաւօտ մըն էր: Կանուխ արթընցան բոլորը եւ դացին երկաթուղիի կայարանը: Երկու ժամ տեսող ճամբորդութենէ մը յետոյ՝ հասան հօրեղբոր գիւղը:

Բլուրներով շրջապատուած դաշտի մը վրայ շինուած էր գիւղը, ուր կը բնակէին հօրեղբայրն ու իր կիինը: Ասոնք ունէին ազարակ մը՝ ընդարձակ պարտէզներով:

Գէորգ Հօրեղբայրը ամէն ամառ շաբաթներով կը հիւրասիրէր իր եղբոր ընտանիքը, բայց այս առաջին անգամն էր որ տարուան այս եղանակին ըրած էր իր հրակէրը:

Օգը բաւական պաղ էր: Հօրեղբոր կինը հիւրերը



տարաւ խոհանոց, որ տան միակ տաք տեղն էր: Վառարանին վրայ, խոշոր կաթսայի մը մէջ, պատրաստ կէցեր էր թանապուրը:

Անօթի էին քուրն ալ ու քիչ մը մսած. ախորժակով կերան տաքուկ, համով ապուրը:

«Գարունը ո՞ւր է», — հարցուց փոքրիկ Չարուհի, երբ լաւ մը տաքցաւ ու կշտացաւ :

Տղաքը շատ ուրախացան, երբ հօրեղբայրը ըսաւ. «Հադէք ձեր վերարկուները եւ ետեւէս եկէք» : Քիչ ետքը բոլորն ալ դուրսն էին :

## 2

«Այս ի՞նչ ձայն է, — հարցուց Ժիրայր՝ իր սուր ականջները տնկելով :

«Չե՞ս յիշեր մեր զիւզի առուակը, որ հիմա խենթեցեր է եւ աշխարհը կը լեցնէ իր աղմուկով», — պատասխանեց հօրեղբոր կինը :

Տղաքը չկրցին հաւատալ իրենց աչքերուն : Այն փոքրիկ, հանդարտ հոսող առուակը, որուն մօտիկը յաճախ կը խաղային ամառները, հիմա դարձեր էր մեծ գետ մը ու կը վազէր աղմկելով :

«Գարուն է, դարձ'ւն», — ըսաւ հայրիկը, եւ տղաքը նոյնը կրկնեցին :

«Սա թուփերուն նայեցէք», — կանչեց միւս կողմէն մայրիկը, ցոյց տալով ուռած կոկոնները :

«Տե՛ս, ես ինչ ունիմ այստեղ», — ըսաւ հօրեղբոր կինը փոքրիկ Չարուհիին, երբ մօտեցան անտառին եզերքը :

Համար-հազար բացդոյն մանիչակներ դուրս էին հաներ իրենց զլուխները :

«Այստեղ ալ դարուն է», — պտուղ հօրեղբոր կինը, եւ իր մօտ կանչեց միւսները :

«Ապրիլը տարուան ամէնէն գեղեցիկ ամիսն է», — կ'ըսէր հօրեղբայրը : «Բոյսերը եւ կենդանիները մարդոցմէ շատ առաջ կը դզան դարնան դալը եւ ծնելու, ապրելու իրենց փափաքը կը յայտնեն» :

Մօտեցեր էին դամին :

«Տղա՛ք, եկէ՛ք այստեղ, որպէս զի ձեզի ցոյց տամ նոր անակնկալներ», — ըսաւ հօրեղբայրը :

Վառեակներու ճիւճիւրը, ուլիկներու, դառնուկներու, հորթուկներու մայիւնը շատ հաճելի եկան փոքրերու ականջին :

Սուրէն եւ Ժիրայր հիացումով կը դիտէին բոլոր նորածինները, բայց մասնաւորաբար սիրահարած կ'երեւէին Երկու փոքրիկ հորթուկներու, որոնք մէկ շաբաթ առաջ ծնած էին :

Կէս օրը կ'անցնէր : Բոլորը տուն դարձան եւ ախորժակով կերան տանտիկինին պատրաստած կերակուրները :

Ճաշէն վերջ շարունակուեցաւ պտոյտը : Տղաքը զարնան նոր նշաններ տեսան :

Միջամները դուրս էին ելեր իրենց բոյներէն : Բաց-գոյն թիթեռնիկները օդը լեցուցեր էին իրենց բզղիւնով : Թռչունները կը ճուռոյգէին՝ ծառերուն մէկ ոստէն միւսը ցաթկելով :

Մէկէն մթնեց կարծես : Բոլորը վեր նայեցան, խորհելով որ ամպ մը ծածկեց արեւը :

«Թռչուններ են», — պտոյտց փոքրիկ Զարուհի :

«Կռուկներ են, որոնք աշնան տաք երկիրներ կ'երթան եւ դարնան նորէն մեզի կու գան», — ըսաւ հօրեղբայրը :

«Մեր ուսուցիչը մեզի պատմած է կռուկներու մասին : Ըսած է որ անոնք բնաւ չեն խաբուիր : Երբ այս թռչունները կ'երեւին մեր կողմերը, այդ ըսել է որ վառունք իրաւ եկած է» :

Պօտոր Սուրէնն էր :

«Այո, այո, դարունը եկած է», — պոռացին մէկէն փոքրերը եւ նոր եռանդով սկսան վազվզել:


★

## 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Անակնկալ՝ յոյս չունեցող, անսպասելի հիացում՝  
վարմանք:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հօրեղբայրը ի՞նչ գրեր էր նամակին մէջ.— Ո՛ւր հաս-  
տատուած էր գիւղը.— Որո՞նք էին գարնան նշանները.—  
Ո՞վ կրնայ գարունը նկարագրել:



## ԿՈՅՐ ԹՌՉՆԻԿԸ

(ԱՆՏԱՌԻ ՀԵՔԵԱԹ)

Ծիրանի կուրծքով փոքրիկ թռչուն մը, օր մը, ծա-  
ռերու շուքին տակ լացաւ իր սիրահանին կորուստը:

Արցունքն անոր աչքերուն լոյսը մարեց ու բիրե-  
րուն տեղ թողուց զոյգ մը մուկ խոռոչներ սրտնք վիշտին  
դուռներն եղան ու ա՛լ փակ մնացին կնքուած գերեզմա-  
նի մը պէս:

×

Պառաւ աչունն էր եկեր դուրսը եւ իր քայլերուն  
տակ ամէն ինչ աւերեր էր, բայց անտառի այս անկիւնը  
չէր հասեր տակաւին, ուր վայրի խոտեր դարունէն կը  
մնային նոյն թարմութեամբ ու կենդանի կանաչով:

Փոքրիկ թռչունը հոն գացեր էր իր մանուկ օրերուն եւ հոն մեծցեր էր, բոլոր ծառերուն վրայ թառեր, մըտերմուլթիւն հաստատեր էր անոնց հետ :

Իր գլխուն ոսկին՝ այդ տեղի արեւն էր տուեր, կուրծքի ծիրանին առեր էր Ապրիլի առաւօտներուն ժպտուն ծիածանէն, վայրի ծաղիկներն ալ մէյմէկ կուկոն դրեր էին անոր փետուրներուն վրայ: Իր երգը բոլորովին նման էր հովերու գուարթ շունչին, երբ առտուան դէմ կ'անցնին տերեւներու խնդազին ծափերուն մէջէն:



Առաւօտ մը, անտառի մոռցուած այդ անկիւնին մէջ ծիրանի կուրծքով փոքրիկ թռչունը գտաւ իր սիրականը:

Ճառագայթ մըն էր այդ սիրականը, որ արեւէն վար եկած էր ու այնքան սիրեր էր աշխարհի այս անկիւնը, որ ալ չէր վերադարձեր արեգակին. փոքրիկ թեւաւոր մըն էր հիմա, ոսկի գլուխով տիեզերքի մը սիրտը:

Խաղաղ ու գեղեցիկ այդ անկիւնին մէջ անոնք սիրեցին զիրար: Ոսկի գլուխ ու ծիրանի կուրծք ունէին անոնք. իրենց տունը շինեցին երեք ճիւղերու միացած կէտին վրայ ոսկի շիւղերով, ոսկի երազներով: Փոքրիկ աղբիւրներու նման՝ անոնց կտուցներէն երգ ու համբոյր հոսեցաւ, որոնց համար հով ու տերեւ լռեցին եւ ճիւղէ ճիւղ ու ծառէ ծառ տարին անոնց հովուերգութիւնը:

Մշտահոս նուազն էին անոնք այդ աղուոր անկիւնին մէջ: Ծառերը հողի առին եւ փշոտ խոտերը աննման ծաղիկներով բացուեցան:



Օր մը, դեռ ձմեռ չեկած, արիւնտոտ կտուցով սւրաւը մը անցաւ անտառին վրայէն: Անոր թեւերը դիչերի մը պէս ցուրտ շուք մը տարածեցին հոն: Սարսափ մը ինկաւ վերէն:

Ուրուրը սիրել չէր գիտեր: Անոր կտուցը համբոյրի համար չէր: Ասոր համար անոր չար հողին սեւ ճակատագրի մը պէս իջաւ վար, քանդեց բոյնը ծիրանի կուրծքով երկու թռչուններուն եւ անոնցմէ մէկը բզիկ բզիկ ըրաւ իր ճանկերուն մէջ:

Սիրահանը խելայեղ՝ իջաւ գետին, թափած փետուրները հաւաքեց, ճիւղէ ճիւղ թռաւ, վաղեց անոնց վրայէն խելագար աղջնակի մը պէս, բոլոր էակներուն եւ տարբերուն աղաչանք ուղղեց: Անոնք մուժով եւ կսկիծով լեցուեցան եւ բան չպատասխանեցին:

Ու փոքրիկ թռչունը լացաւ ամհուռն դիչեր մը, գիչեր մը ամբողջ:



Առաւօտուն երբ արեւը դժուար վերելքէ մը ետք հորիզոնին վրայ դրաւ իր գլուխը, ծիրանի կուրծքով թռչունը կտրանցուցեր էր իր աչքերը: Կուրցեր էին անոնք ու մուժ մուժ խոտոչներ դարձեր:



Այդ օրէն ի վեր, կը պատմէր անտառներուն բարի մամիկը, թռչունը կ'ապրի, որովհետեւ անոր վիշտը մահ չունի:

Անիկա կ'ապրի բոլս'ր սիրաւերուն մէջ որոնք ճանչ-

ցեր են վիշտը: Անիկա կ'ապրի բոլոր արարածներուն հետ, որոնք աշխարհն են կորսնցուցեր սիրականի մը ետեւէն...:

ՎԱՀԷ ՀԱՅԿ

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Խոռոջ՝ փոս. խնդագիծ՝ ուրախ, զուարթ. հովուերգութիւն՝ դաշտային եւ հովիւներու յատուկ, անոնց ապրելու եւ զանակը երգող բանաստեղծութիւն. ուրուր՝ արծիւ. բզիկ բզիկ՝ կտոր կտոր. խելայել՝ խենթեցած. խելագար՝ խելքը վլասուած անձ, խենթ. տարր՝ բնութեան մէջ գոյութիւն ունեցող ամէն նիւթ կամ առարկայ: Հիմնական տարրերն են՝ հողը, ջուրը, օդն ու կրակը. կսկիծ՝ ցաւ. անհուճ՝ ծայր չունեցող, անսահման:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Այս հէքեթին մէջ որո՞ւ մասին կը խօսուի.— Թռչունն ո՞ւր շիներ էր իր բոյնը.— Մինա՞կ էր թէ ընկեր մըն ալ ունէր.— Ի՞նչ ալ հանդիպած էք անտառներուն կամ պարտէզներուն մէջ երգեցիկ եւ սիրուն թռչուններու.— Ի՞նչ դժբախտութիւն պատահեցաւ օր մը այդ թռչուններէն մէկուն.— Իր անհուն ցաւէն ազդուեցա՞ւ միւս թռչունը եւ ի՞նչ եղաւ.— Ի՞նչ ըսել է թռչունին վիշտը մահ չունի.—

Սիրելիի մը կորուստը կարելի՞ է մոռնալ:

### 3. ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերը նկատի ունենալով, խմբագրել փոքրիկ շարադրութիւն մը. վերնագիր դնելով՝ Թռչունին բոյնը անտառին մէջ.— Թռչուն, բոյն, փետուր, յարդ, հասկ, բամպակ, ծառ, ճիւղ, անտառ, ժայռ, կտոր, ձու, անկ, օինել, նորոգել, երգեցիկ, երգել, ձագ:

ՎԱՀԷ ԶԱՅԿ.

— Բուն անունով  
Վահէ Տինճեան,  
Ծնած է Խար-  
բերդ. ուսումն ա-  
ռած է Եփրատ  
Գուլէճին մէջ:  
Անցնելով Ամե-  
րիկա, հետեւած է  
Պոսթընի հա-  
մալսարանական  
երկու տարուան  
դասընթացքին:  
Աշխատակցած է  
քաղմաթիւ թեր-  
թերու եւ հան-  
դէսներու: Հրա-  
տարակած է «Հայ-  
քենի Միան» ա-  
նունով գաւառա-  
շունչ արձակնե-  
րու եւ պատմը-  
ւածքներու հաւա-  
քածոյ մը:

\*



ՎԱՀԷ ԶԱՅԿ



## ՈՒՐՈՒՐՆ ՈՒ ՀԱԻԸ

1

Ուրիշ՝ ուր այդպէս, ե՛ս ալ չեմ զխտեր,  
Ուրաւրն ու Հաւը դըրացի եղան:  
Խըստասիրտ մարդ մը զանոնք փակեր էր  
Վանդակի մը մէջ՝ շատ յամուր, դաժան:

Ուրուրը տրբաում, նըստած գրլխահակ,  
Կը գխաէր հետուն, երկինքը կապոյտ,  
Ազաւնի, ճընճդուկ, արտուտիկ, տատրակ,  
Արեւէն դիւքուած՝ կ'երգէին անփոյթ...:



Վարը շատ բազեր, հաւե՛ր անհամար,  
Մոխիրներու մէջ թէ ազրակոյտի  
Կընուն կ'ընէին, կ'երթային վեր-վար  
Ու կը հանէին ազմուկ անհարկի:

2

— « Ուրո՛ւր, ի՛մ ընկեր, եկո՛ւր, աշխատի՛նք,  
Կոտրենք վանդակը մեր երկաթալուռ,  
Այս անշուք բանտէն ելլենք, ազատի՛նք,  
Տե՛ս, հոն ետուղեո... մեր սիրտը մըրմուռ»...:

— « Այդ շատ լաւ ըսիր, իմ Հա՛ւ աննըման,  
Եկո՛ւր, միասին ջարդենք ու փախչինք:  
Այս վանդակը նեղ, աշխարհը շա՛տ լայն,  
Հո՛ն կը թըռչկոտինք, ազատ կը շարժինք » ։

3

Անոնք ըսկըսան մեծ աշխատանքի, —  
կըտցահարեցին, կըտցահարեցին:  
Օրեր սահեցան ցաւի, տանջանքի,  
Մինչեւ երկաթէ ձող մը հանէնքին:  
Լեզու եւ կըտուց թէեւ արիւնած,  
Իրենք ալ յոգնած, բայց եւ յաջողած:

Նեղլիկ բացուածքէն, մեր Հաւը պըզտիկ  
Անցաւ վերջապէս մեծ չարչարանքով:  
Աղբակոյտ վաղեց, զըտաւ բող, հաւիկ,  
Ու կըճուծ կ'ընէր սիրտով հանդարտիկ.  
Իսկ Ուրուրն անդին, իր բանտին մէջէն  
Կը դիտէր Հաւը յուսահատօրէն:

4

== « Ազատէ՛ ինձ ալ, բարեկամ իմ Հաւ,  
Չէ՞ որ խոստացար որ ինձի օգնես »:

— « Ես անուժ, վըտիտ ու փոքրիկ մէկ հաւ »  
Կարո՞ղ եմ երկաթ փըրցնել քեզ պէս,  
Որ ազատ լինիս, թըտիս վեր ու վար,  
Սաւառնիս վերը կամ ճախրես դէպ վար » :

Այս որ լըսեցին հաւերը շուրջի,  
Ամէնքը մէկէն աղաղակեցին. —  
... « Զըլլա՛յ թէ երթաս, ողնես Ուրուրին,  
Թէ չէ՛ զոհ կ'երթանք անոր կըտուցին,  
նաեւ ճիրանին » :

5

Հուր ատելութեամբ լեցուած Հաւին դէմ,  
Ուրուրն սպասեց հատուցման ժամին :

Օր մը երբ մարդը վանդակը բացած՝  
Կը մաքրէր փոշին եւ աղբը լեցուն,  
Ուրուրը մէկէն սըլացաւ յանկարծ  
Ու հասաւ չա՛տ վեր, կապոյտին անհուն... :

Ահա այդ օրէն՝ բարկացած, կատղած,  
Կը թըռի լարձրէն՝ քէն ու ոխ սլահած :  
Ու երբ կը տեսնէ վարը հաւի ձագ,  
Հաճոյքը մոռցած՝ կը սուրայ արագ .  
Կը հասնի ձագին, կը յափըշտակէ,  
Միրտը զովացած՝ կըրկին վեր կ'ելլէ :  
Ու հոն կը սպասէ յարմար մէկ ժամի,  
Որ դայ ու տանի ձագերը հաւի,  
Ձագերը բոլոր՝ դաւաճան Հաւի :

Ս. Թ.



1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻԻՆ

Ուրուր՝ արծիւ. յափշտակող թռչուն. գլխահակ, գլուխը  
ճռած. դիւրուած՝ հրապուրուած, գրաւուած. կնուն բնի՝

քրքրել, փնտռել. երկարակուռ՝ երկաթով շինած, կռած-  
կօցահարել՝ կտուցով զարնել. վախ՝ նիհար, պղտիկ. հուր  
կրակ. հաճուցման ժամ՝ վրէժի, պատիժի ժամ. դաւանան՝  
չարիք նիւթող, մտածող:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ուրուրն ու հաւը ինչպէս դրացի եղան իրարու.— Վան-  
դակին մէջ ուրուրը ինչո՞ւ համար նախանձով կը դիտէր ու-  
րիչ թուչունները.— Ի՞նչ ըստ հաւը իր դրացիին.— Ի՞նչ  
պատասխանեց ուրուրը.— Դիւրի՞ն էր վանդակէն երկաթէ ձող  
մը հանել.— Անոնցմէ ո՞վ ազատեցաւ առաջին անգամ.—  
Հաւը կրնա՞ր ազատել ուրուրը.— Ինչո՞ւ համար հաւերն ու  
վառեակները կը վախնան ուրուրէն.— Եւ երբ այս վերջինը  
օր մը վանդակէն սլացաւ, ի՞նչ դրաւ միտքը:

## 3. Արձակի վերածել այս ոտանաւորը:

4. Գրի առէք այս ոտանաւորին մէջ յիշուած թուչուն-  
ներուն անունները, եւ անոնցմով կազմեցէք մէկ մէկ նա-  
խադասութիւն: Օրինակ՝ Հաւը հաւկիթ կ'սծէ եւ վառեակ-  
ներ կ'ունենայ:

## 5. Բացատրել հետեւեալ խօսքին իմաստը.—

Երբ բարեկամդ խարէ քեզ մէ՛կ անգամ, բարկացի՛ր  
անոր դէմ, իսկ երբ երկու անգամ՝ բարկացի՛ր դուն  
քեզի դէմ:

## ՌԷԹԵՈՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ապրիլ 21ին կը լրանայ մահուան տարեդարձը ան-  
ձի մը, որ հայ կրթական ասպարէզին մէջ աչքառու  
դիրք զրաւած եւ արդիւնաւէտ դործունէութիւն ունե-  
ցած է:

Ռէթէոս Պէրպէրեան ծնած է 1851ին Պոլսոյ թաղե-  
րէն Խասդիւղի մէջ: Եղած է համեստ ընտանիքի մը զա-

ւակը: Իր նախնական կրթութիւնը առած է նոյն գիւղի  
Ներսէսեան վարժարանին մէջ:

16-17 տարեկան հասակին, Պէրպէրեան ուսուցչա-  
կան ասպարէզ մտած է: Կարճ ատեն մը էտիրնէի, ապա  
տասը տարի Պոլսոյ Թաղային դպրոցներուն մէջ պաշ-  
տօնավարելէ յետոյ, 1876ին հիմնած է Պէրպէրեան վար-  
ժարանը:

Աւելի քան երեսուն տարի վարելով այս հաստա-  
տութիւնը, Պէրպէրեան հասցուցած է սերունդներ, ո-  
րոնք հայ մշակութային կեանքին մէջ կարեւոր դեր մը  
կատարած են իրրեւ կրթական եւ դրական մշակիներ: Իր  
դպրոցը տուած է նաեւ կրթուած առեւտրականներ, ո-  
րոնք այս ասպարէզին հին մեթոտները փոփոխութեան  
ենթարկած եւ ժամանակակից պահանջներուն համաձայն  
ձգտած են փոխել դործնական կեանքին պատկերը:

Ինքնաշխատութիւնը եղած է իր համալսարանը:  
Շնորհիւ իր բնատուր խելքին եւ յարատեւ աշխատան-  
քին, ինչպէս նաեւ Զուլիցերիայի մէջ անցուցած քանի  
մը տարիներուն, Պէրպէրեան մտքի պաշար հաւաքած է,  
այդ կերպով աւելի օգտակար ըլլալու համար իր աշա-  
կերտներուն:

Պէրպէրեան վարժարանի հիմնարկութեան քսան  
եւ հինգամեակի տօնակատարութեան ատեն, 1901ին,  
Պոլսոյ Կեդրոնական Ուսումնական Խորհուրդը իրեն  
տուած է Ուսուցչապետ տիտղոսը:

Իր դպրոցի նեղ շրջանակէն դուրս ալ, Պէրպէրեան  
իր կնիքը դրած է հայ կրթական կեանքին վրայ: Պոլ-  
սոյ Պատրիարքութեան ենթակայ շրջաններու դպրոց-  
ներուն համար պատրաստուած Կրթական Ծրագիրը եւ  
Դպրոցական Կանոնակիրը մշակուած են իր կողմէ:

Երկար տարիներ եղած է Կեդրոնական Ուսումնա-

կան Խորհուրդի անդամ, ինչպէս նաև Ազգային Երեսփոխան :

Ազգային եւ կրթական գործունէութեան զուգրնքաց, ունեցած է կարգ մը գրական աշխատութիւններ, ինքնուրոյն եւ թարգմանածոյ :

Իր գրուածքներէն աչքի զարնողներն են՝ Մարդիկ եւ իրք, Դաստիարակի մը խօսքերը, Խոհք եւ Յուշք, Դպրոց եւ Դպրութիւն, իսկ թարգմանութիւններէն՝ Կէօթէի Հերման եւ Դորոքէան :

Ռէթէոս Պէրպէրեան մեռած է 1907ին : Տուած է 222 շրջանաւարտներ, որոնցմէ կենդանի մնացողները, մասնաւորաբար այժմ Պոլիս գտնուողները, մահարձան մը կօնգնած են վաստակաւոր դաստիարակին հողաթումբին վրայ :

\*

### 1. — ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

**Աջառու՝** աչքի զարնող, նշանաւոր. **համալսարան՝** բարձրագոյն կրթական հաստատութիւն, ուր ուսանողներու բազմութիւն մը կը հետեւի ուսուցչապիսիներու դասախօսութիւններուն. **ընտուր՝** բնածին, բնութեանէն տրուած. **զուգրնքաց՝** միասին քալող, վաղող. **ինքնուրոյն՝** առանձին, մասնաւոր. **վասակաւոր՝** աշխատանք, արդիւնք ունեցող. **շատ յոգնած :**

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Կրնա՞ք քանի մը նախադասութիւններով պատմել Ռէթէոս Պէրպէրեանի կենսագրութիւնը.— Ո՞րն է եղած անոր ամէնէն աչքի զարնող գործը.— Բացի ուսուցչական տապաւրէզէն, ուրիշ ի՞նչ հանրային գործունէութիւն ունեցած է Պէրպէրեան.— Կրնա՞ք յիշել իր կարեւոր երկերէն մէկ քանին :

3. Բացատրել հետեւեալ խօսքերուն իմաստը.—

**Իր անձին համար միայն օգտակար ըլլալը մեծ արծէկ մը չի ներկայացներ :**

**Բոլոր լծակներէն կարեւորագոյնն է կամբը :**



## Ե Ր Գ Ի Չ Ը

Այլ ինձի յիշատակի պէս բան մըն է եղած այդ մարդը. եւ ա՛յն ատեն միտքս կու գայ անվրէպ՝ երբ իրեն քախտակից մը, մեռած աչքերով, պատէ պատ շօշափելով, կ'անցնի դողդոջուն: Միտքս կու գայ ամբողջութեամբ ու կը սրբէ ամէն աղետաւոր պատկեր:

Զինքն առաջին անգամ տեսած էի Գատը-Գիւղի մէջ ձիւնարեր օր մը, եւ ամէն շարթու որոշուած օր մը՝ որոշ ժամուն՝ կը սպասէինք իրեն:

Ո՛րչափ հրապոյր ունէր այդ հէք արարածը: Զիւնէ կամ անձրեւէ թաթխուած, մեր փողոցը կը մտնէր, եւ ինք երեւնալէ առաջ, իր ձայնը՝ հովին վրայ նետուած՝ կու գար կը դտնէր մեզ զոց պատուհաններու ետեւ: Ուշագիւր եղած էի որ այդ ժամուն դաշնակները կը լռէին յանկարծ, եւ վարադոյրներու տակէն թարմ գըլխիկներ, սիրուն ու հմայիչ, ապակիներուն կը կրթնէին, եւ զուարթ աչքեր՝ յանկարծական տիրութեամբ մը ծածկուած՝ կարեկից կը դառնային այդ մարդուն վրայ: Իր երզը արուեստ չունի. աւմանակն ու ելեւէջները իր շնչառութեան եւ սրտի յուզումներուն վրայ չափուած էին: Այո, ինչ որ կ'երգէր իբրեւ երգ, ինչ որ կ'եղանակէր ձիւնին ու անձրեւին տակ, ձայնազրել կարելի չէր, արուեստէ վեր արուեստ մը կար անոնց մէջ, — սրտի արուեստ: Անուշ էր ձայնը, անուշ. երգին ամէն տունը բարձրէն կը սկսէր եւ յետոյ աստիճանաբար վար կ'իջնէր մեղմով, յուշիկ անուշիկ, կ'իջնէր, բայց ո՞ւր. մինչեւ սալայատակը, կը մարէր ոգեսպառ հովին պէս՝ որ ամէն փողոցի բերնէն ուժգին մտնելով կը դառնար ոլորուն եւ ցրուելով, զարնուելով պատե-

րուն, նուազկոտ կ'իյնար: Եւ սակայն ճիշդ այդ նուազումն էր որ աւելի ուժգին կը ցնցէր մեզ. եւ մենք, սրահի մը մէջ նստած, կը սկսէինք իրարու երես նայիլ վայրկեան մը, դրեթէ սառած նայուածքներով, լըռին ըսելու համար թէ բնութիւնը ի՞նչ ձայն, ի՞նչ եղանակ դրած է կոյր երգիչին մէջ:

Իրեն տեսակ մը մտերիմներ դարձանք, եւ կու տայինք քիչ շատ. բայց ոչ իբրեւ սղորմութիւն Աւետարանէն հրամայուած եւ արքայութեան խայծով. այլ վարձատրութեան պէս բան մը կար մեր տուրքին մէջ:

ՀՐԱՆԴ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

**Անվրէպ՝ անսխալ, ստոյգ. աղետաւոր՝ թշուառ, դժգոհախտ. հմայիչ՝ հրապուրիչ. կարեկից՝ մեղքոտ. ամանակ ժամանակ. յուշիկ՝ կամացուկ, մեղմ. ոգեսպառ՝ շունչը կտրած. խայծ՝ կտոր, նշան, մաս:**

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Որո՞ւն մասին կը խօսուի այս դրուածքին մէջ.— Դուք ալ տեսած եւ լսած էք երգիչ մը փողոցի կամ որեւէ բակի մէջ.— Ի՞նչ կը ղգաք երբ այդ երգիչը կոյր է մանաւանդ.— Վարպետ երաժիշտ մը կրնա՞յ ձայնագրել երգուած երգ մը:

### 3. Բացատրել հետեւեալ խօսքին իմաստը.—

**Ուրիժին աչքը քեզի լոյս չի սար:**





ՀՐԱՆԴ  
(1859 - 1915)

ՀՐԱՆԴ.— Բու՛ն անու՛նով Մե՛լ-  
քո՛ն Կիւրճե՛ան, ծնած է Բալուի  
Հաւաւ գիւղը 1859ին: Ուսման  
մեծ փափոք մը ունենալուն հա-  
մար, տասնեւմէկ տարեկան հա-  
սակին մէջ կը ճամբորդէ դէպի  
Պոլիս: Կը յաճախէ Սկիւտարի  
Ղեմարանը: Կը հետեւի ուսուցչա-  
կան ասպարէզին, դասախօսելով  
գրաքար եւ աշխարհաբար:

Հրանդ ունեցած է թափառա-  
կան կեանք մը եւ բանտը մնա-  
ցած է երկար տարիներ: Աշխա-  
տակցած է զանազան թերթերու:  
Ծանօթ է մասնաւորաբար «Պան-  
դուխտի Կեանքէն Նամակներ»ով:  
Իրմէ լոյս տեսած են նաեւ «Գը-  
րաբար Հեզու» դասագիրքը, «Մես-  
րոպ եւ Սահակ» հայ գիրերու  
պատմութիւնը, եւ թարգմանած  
է Ռընանի «Յիսուսի Կեանքը»:

\*

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

### ԱՐԵՒԵԼԵԱՆ

Կողմն հայրենի՝ հերոսները միակամ՝  
Հողին, հանքին, դործատան,  
Բոլոր անոնք որ քրտինքին կը փութան,  
Հըզո՛ր ըլլան յաւիտեան:

### ԱՐԵՒՄՏԵԱՆ

Կողմն հայրենի՝ ճամբաները ծխածան,  
Արտը խունկի պէս բուրեան,

Եւ կալերը Մասիսէն իսկ յաղթական,  
Բարձրը ըլլան յաւիտեան :

### ՀԱՐԱԻԱՅԻՆ

Կողմն հայրենի՝ աղբիւրները մեղրահամ,  
Ծառն ու ծղօտն արփական,  
Թըռչունները մանուկ սըրտի մը նըման,  
Զըւա՛րթ ըլլան յաւիտեան :

### ՀԻԻՍԻՍԱՅԻՆ

Կողմն հայրենի՝ այգիները սիրական,  
Սեղանները ամէն տան,  
Գինիի պէս ուրախ՝ հարսը եւ փեսան  
Գըրգա՛նք ըլլան յաւիտեան :

### ԼՈՒԹՅԻ ՄԻՆԱՍ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Միակամ՝ մէկ սիրտ մէկ հոգի, մէկ կամքով. հօր՝  
զօրաւոր, կարող, ուժով. բուրեան՝ հոտաւէտ. արփական՝ ա-  
րեւու մօտ, լուսաւոր. գրգանք՝ փափկուլթիւն, հեշտուլթիւն:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Երկիրը քանի՜ կողմ ունի եւ սրո՞նք են այդ կողմերը.—  
Աւաջին օրհնութիւնը սրո՞նց ուղղուած է.— Հողին, հանքին  
եւ գործատան մէջ բոլոր աշխատողները ինչո՞ւ համար հե-  
րոս կ'անուանուին.— Երկրորդ օրհնութիւնը՝ սրո՞նց համար է.  
— Դուք ալ տեսա՞՞ք էք հասուն արտ.— Կը յիշէ՞ք ստանաւոր  
մը ձեր նախորդ դիրքին մէջ, նուիրուած հասուն արտին.—  
Աղբիւրները, ծառն ու թռչունները ո՞ր կողմը կը գտնուին  
այս ստանաւորին մէջ.— Իսկ հայրենի այգիներ՞ը.— Ի՞նչ ը-  
սել է հարս ու փեսայ դինիի պէս ուրախ թող ըլլան:

3. Արձակի վերածելէ յետոյ, դոց արտասանել այս  
քերթուածը:

ՀՈՒԹՅԻ ՄԻՆԱՍ.— Ամերիկահայ գրող, որ գրած է  
մասնաւորաբար բանաստեղծութիւններ:

## ԺԱՅՌ - ԿԱԹՍԱՆ

(ԱՒԱՆԴԱՎԷՊ)

1

Հին բան է պատմածս:

Լեւրան կատարին, կանաչ արօտներուն մէջ տուն մը  
կար: Փոքրիկ ընտանիք մը կ'ապրէր հոն, — հայր մը,  
մայր մը եւ չորս զաւակներ:

Ասոնք ունէին ոչխարներ, կովեր, ձիեր: Կենդանի-  
ներու կաթն ու միսը կը գործածէին իրր սնունդ, ոչ  
խարներու բուրդէն հագուստ կը շինէին, եւ կովերու  
կաշիէն ալ կոշիկ: Որ եւ է բանի կարօտ չէին:

Երբ դարունը կու գար՝ իր հետ բերելով ծաղիկ,  
թռչունի երգ եւ ուրախութիւն, անոնք իրենց օրուան  
մեծ մասը կ'անցընէին գուրսը: Տղաքը կենդանիները  
կ'արածէին, մայրը զանոնք կը կթէր եւ հայրն ալ կը  
հսկէր դաշտի ու տան միւս գործերուն: Իսկ ձմեռը  
թռնիրը կամ կրակարանը վառ էր միշտ եւ Աստուծոյ  
բարիքն անպակաս տունէն:

Բայց անոնք ունէին մեծ պակաս մը: Օր մը օրանց  
խեղճ մը չէին ուրախացուցած: Կ'ապրէին մարդէ ու  
բարեկամէ հեռու, իրենք իրենց մէջ ամփոփուած, ան-  
սէր ու անժպիտ:

Լեռներու մէջ բնակող ուրիշ խաշնարածներ չէին

մօտենար իրենց՝ հովիւի տղաք չէին խաղար այս տան  
պղտիկներուն հետ :

Շատ անգամ, յողնած ճարտղներ, մուրացիկներ  
կանդ կ'առնէին այդ տան դրան առջեւ ու կը խնդրէին .

— Քրիստոսի՛ սիրուն, քնանայու տեղ մը, պատառ  
մը հաց . . .

— Հեռացէ՛ք, կ'ըսէր տանտիկինը . մենք ո՛չ տեղ,  
ո՛չ ալ հաց կրնանք տալ ձեզի :

Այսպէս, բաղմամբիւ յողնած ճամբորդներ զարկին  
այդ տան դուռը, բայց հանդիստ չգտան :

Շատ մը աղքատներ եկան, ողորմութիւն խնդրե-  
ցին Քրիստոսի անունով եւ անօթի հեռացան :

2

Աշուն էր : Լեռներուն վրայ ծառերը կը մերկանա-  
յին իրենց հազուատներէն : Կանաչ արօտները մահամերձ  
հիւանդներու պէս դեղնած էին : Գետինին վրայ հոգիամը  
ձերմակ ձիւնի պէս կը նստէր ամէն առտու : Կենդանի-  
ները շուտ կը վերադառնային իրենց դոմերը :

Մութ իրիկուն մըն էր : Դուրսը անձրեւ կար եւ  
փոթորիկ : Հովը՝ որբի մը պէս՝ պատուհաններուն առ-  
ջեւ կու լար, կը հեծեծէր : Երկինքը կ'որոտար երբեմն  
եւ լուսամուտները կը փայլէին կայծակին անցքէն :

Ներսը տաք էր սակայն : Տղաքը հաւաքուած էին  
վառարանին շուրջ, որուն վրայ մայրը մեծ կաթսայ  
մը կաթ կը տաքցնէր :

Յանկարծ դուռը դարնուեցաւ :

— Հայրիկն ըլլալու է, ըսին պղտիկները, եւ շտա-  
պեցին բանալ դուռը :

Սեմին վրայ երեւցաւ օտարական մը, յողնած ու

հիւանդոտ երեւոյթով: Առանց հրաւերի սպասելու, ան ներս մտաւ ու կեցաւ պատին տակ:

Տղաքը զարմացած անոր կը նայէին:

Բարձր ու նիհար մարդ մըն էր: Հազած էր պատառ-պատառ եղած պատմաւան մը, որուն վրայէն անձրե-ւը կը կաթէր: Մտքերը մերկ էին: Խառնիխուռն, անխը-նամ մազերը թափած էին ուսերուն: Երկար ու սեւ մօ-րուքը կ'իջնէր կուրծքին վրայ: Դէմքն ու աչքերը այն-պէ՛ս բարի, այնպէ՛ս քաղցր ու նաեւ այնպէս տխո՛ւր էին:

— Քրիստոսի՛ սիրուն, քոյրիկ... .

== Կորսուէ՛, կանչեց կիներ դէպի դուռը դառնալով:

— Քրիստոսի՛ սիրուն, զաւաթ մը տաք կաթ... , կրկնեց դարձեալ անծանօթը՝ խոր ու պաղատալի մայ-նով մը:

== Հեռացի՛ր կ'ըսեմ. շա՛տ լսեցինք այդ խօսքերը: Ամէն եկող՝ Քրիստոսի սիրուն կ'ըսէ ու կը կենայ: Թո՛ղ Քրիստոս տայ ուղածդ, հեռացի՛ր:

— Քրիստոսի՛ սիրուն, ո՛վ կին, զաւաթ մը կաթ եւ գլուխս դնելու տեղ մը... .

Իր ձայնը այնպէս տխո՛ւր, այնպէս աղաչական էր, դէմքն ու ականարկը այնպէս բարի՛, որ սղտիկները ար-ցունքոտ աչքերով աղաչեցին .

— Մայրի՛կ, մայրի՛կ, մե՛ղք է, մե՛ղք... .

== Լսեցէ՛ք, ըսաւ անդուժ մայրը, բռնեց օտարա-կանին թեւէն, դուրս հանեց եւ դուռը դոցեց:

Դուրսը սաստիկ մուժ էր, հովը պատուհաններուն տակ կը հեծեծէր, անձրեւը կը տեղար, երկինքը կ'ո-րոտար եւ շանթը կը փայլատակէր:

րեւէր հոն, ո՛չ ալ շունչ-կենդանի: Միայն, ճիշդ տան տեղը, լերան կատարին կը կենար քարացած հսկայ կաթսայ մը, ու մօտը քարացած կին մը:

Որովհետեւ այն գիշեր Քրիստոսս վարկած էր այդ տան դուռը եւ վռնտուած:

Մինչեւ այսօր ալ այդ լերան վաղաթիւն կը կենայ ժայռաձեւ կաթսան, քովը անդուլ կնոջ արձանով:

Իսկ ի՞նչ եղան պղտիկները:

Աւանդութիւնը կ'ըսէ թէ՛ անոնք ալ գարձան ճերմակ աղաւնիներ եւ իրենց բայները շինեցին այդ ժայռ-կաթսայի խորշերուն մէջ:

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲՍՑԱՏՐՈՒԹԻՒՆ

**Արօճ**՝ մարդագետին, արածեւու տեղ. **քոնիք**՝ կուէ շինուած վառարան, կաթսայի նման. **զոր կը թալերն հողին մէջ եւ որուն վրայ հաց եւ կերակուր կ'եփեն.** խաւճարած՝ ոչխարներ արածող. **եղիամ**՝ շաղ կամ ցօլ. **եծեծել**՝ հառաչել, ախու վախ ընել. **պատմունան**՝ երկայն եւ լայն դգետ. **պաղաւտգին**՝ աղաչանքով, խնդրանքով. **աւանդութիւն**՝ պատմական դէպքերու բերնէ բերան անցնիւը. **խորհ**՝ անկիւն:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Լերան գագաթին վրայ սպրող ընտանիքը ի՞նչ տեսակ կեանք կ'ապրէր.— Որեւէ յարաբերութիւն ունէ՞ր ուրիշ ընտանիքներու հետ.— Որեւէ մէկուն օգտակար եղած էր.— Ո՞վ ներկայացաւ որ մը եւ ի՞նչ խնդրեց.— Պղտիկներուն արցունքը անդուլ մօրը վրայ աղբեցութիւն ըրա՞ւ.— Աւանդութիւնը ի՞նչ կը պատմէ իբրեւ հեռեւանք այս դէպքին.— Եթէ դուք ըլլայիք, պիտի օգնէի՞ք օտարականին:



## ԳԻՒՂԻ ԶԱՅՆԵՐ

### 1

Գիշեր է դեռ. ամառ գիշեր: Ծղրիթները կ'երգեն, գորտերը կը կռկռան մէկ բերնով, մէկ եղանակով: Եւ գիւղը իր հողէ տանիքներուն վրայ՝ լուսնկային պաղած աչքին տակ՝ անուշ անուշ կը քնանայ:

Դէմ-լուսուն՝ աքաղաղին կանչն է որ սուր դանակի մը պէս գիշերին կողը կը պատուէ յանկարծ: Մութը կամաց կամաց իր սեւ թեւերը կը վերցնէ գետնին երեսէն: Ծղրիթները կը լռեն մեքենաբար, գորտերը կը պապանձին:

Աքլորը կը կանչէ նորէն, այս անգամ աւելի ուժով, աւելի երկար ու գալարուն ձայնով մը:

Ի՞նչ հրաշք է արդեօք, որ աքլորին լեզուն հեռուոր արեւին հետ կը կապէ:

— Կու գա՛մ, կը փսփսայ արեգակը:

— Հրամմեցէ՛ք, կը պատասխանէ աքաղաղը:

— Բարի լո՛յս, կը մրմնջեն դեղջուկ բերաններ:

### 2

Չարթուցիչ ժամացոյցը նոր հնչեր է: Ժամկոչը ընդոստ ոտքի վրայ է: Աչքերը կը շիտ, կը յօրանջէ, եւ «Հայր մեր»ին փշուրները որոճալով՝ ժամուն սանդուխներէն վեր կը մագլցի: Գմբէթը նուր խաւարին մէջ կը լողայ, ու խաչին թեւերը հաղիւ կը նշմարուին: Հեռուն, Սուրբ Սարգիսի լերան ետեւէն լուսուն Աստղը իր արծաթ երեսը կը ցուցնէ: Ժամկոչը կը խաչակնքէ եւ մուրճերը ձևք կ'առնէ: Կոչնակը լեզու կ'ելլէ, եւ իր

մտերիմ կանչը կը ցանկ գիւղին վրայ: Մայրեր իրենց քնացող զաւակները կ'արթնցնեն.

— Տղա՛ս, ելի՛ր, ժա՛մ դնա:

Ժամուն ստուերոտ կամարներուն տակ տէր պապային սրտաբուխ աղօթքը կը սաւառնի. «Տէ՛ր, եթէ չրթունքներս բանաս, բերանս քու օրհնութիւններդ պիտի երգէ»:

3

Վարժատան չորս բոլորը, ժամուն դրան առջեւ ու պատերուն տակ, մըջիւնի պէս հաւաքուած կը խաղան գիւղին տղաքը: Կը պսոան, կը վիճին ու այնչափ ուժով կը կանչեն որ դրացիներուն ականջը կը տանին:

Դպրոցին պատուհաններէն մէկը կը բացուի յանկարծ եւ տղու ձեռք մը, պղտիկ, փայլուն զանգակ մը բռնած, դուրս կը ցցուի: Ձեռքը օդին մէջ ելեւէջներ կ'ընէ, բոլորակներ կը գծէ, ու զանգակը կը ճչայ, կը կանչէ: Տղաքը շարք շարք դպրոցին սանդուխներէն վեր կը սողան: Ու կը լսուի դպրոցին աղօթքը բարձրաձայն.

«Տէ՛ր, կեցո Դու զՀայս:»

4

Դաչտն եմ: Կոնակս թթենիի մը ծեր կոճղին տըւած՝ խոտերուն վրայ, առուն մօտ նստած՝ «Հեթանոս Երգեր»ը կը կարգամ: Գրքին ամէն մէկ տողը նուազով կը թրթռայ:

Նուազ կայ նաեւ ծեր թթենիին վրայ, որ մեծ հօր մը դուրգուրանքովը իր ոստուտ թեւերը կը տարածէ զլիսուս վերեւ: Ձոյք մը թռչուն հոն թառած կ'երգեն փոխն ի փոխ: Տերեւները կը փսփսան: Թեթեւ հով մը

անտեսանելի լարերու հետ կը խաղայ՝ անանուն երաժշտութիւն մը յօրինելով: Ասուին յատակը սեւ ու ճերմակ խիւներու շարժուն ստեղծաշար մը կայ, որուն վերայէն խորհրդաւոր մատներ կը սահին: Դաշտի խոտեր ու ծաղիկներ իրենց զլուխը ծոած, կ'ըմբռնէին ջուրին մշտնջենական երգը:

Անդիէն մշակ մը կ'անցնի, առջեւը զոյգ մը եղ ձրգած, եւ ետեւը՝ զեղջուկ եղանակի մը տարածուն ալիքները: Ահանջիս տակ միջատ մը կը բզբզայ ու զլխուս մէջ նոր մտածում մը կը խլրտայ:

Վարպե՛տ մը կայ, բարի եւ իմաստուն վարպետ մը անպատճառ, որ միեւնոյն շնորհը բաշխեր է անխոր՛ր՝ բանաստեղծին, թռչունին, հովին, տերեւին, վաղող ջուրին, երգող մշակին ու միջատին, եւ զանոնք լուսեղէն ցանցով մը իրարու կապեր է միեւնոյն արեւն ու միեւնոյն երգիքին տակ:

Շնորհքդ անսպա՛ս, բարի Վարպետ . . . :

## ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Պապագնձի՛ լեզուն կապուել, բռնուել. գալարուն՝ ուղեբաժ. զարբօցի՛ջ՝ արթնցնող. բնդոս՝ տեղէն ցաթկող. նօս բարակ, ցանցառ. նուագ՝ երգ, եղանակ. ոսթուս՝ ոստ, ճիւղ ունեցող. խին՝ մանր քար. ստեղծաբար՝ կը գործածուի դաշնակի ստեղծաշար, հոս՝ շարք, ճիւղ իմաստով. բմբոխնի՛ վայելել. մօսնջենական՝ յաւիտենական, չանցնող.

խլրթի՛ մեղմ շարժիւ:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Գիւղին մէջ ի՛նչ ձայներ կը լսուին.— Դուք ալ ապրա՞ծ էք ագարակի մը կամ գիւղի մը մէջ.— Ինչե՞ր կը յեշտէ այդ կեանքէն.— Չեղմէ մէկը թող պատմէ գիւղական վար-



**ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆ.**— Ծնած է Խարբերդի Հիւսեանիկ դուզը: Տեղական վարժարաններէն յետոյ, երեք տարի կ'աշակերտէ թւկատինցիին, որուն 1913ի շրջանաւարտներէն է:

Ամերիկա մեկնած է 1913ի վերջերը: Մըտած է Նիւ Եորքի Գոլտուպիտ Համալսարանը:

Աշխատակցած է ամերիկահայ թերթերու: Հիմնադիրն է «Նոր Գիր» ամսաթերթին: 1937ին հրատարակած է «Այդեկութք» անունով պատմուածքներու հաւաքածոյ մը:



### ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆ

Ժարանի մը ներքին կեանքը.— Կը յիշէ՞ք «Տէ՛ր, կեցո՛ Դուզ Հայս» երգը.— Կը սիրէ՞ք դաշտային աշխատանքները.— Որուն համար Վարպետ կ'ըսէ այս հատուածը:

**Տէ՛ր, կեցո՛ Դուզ ԶՀԱՅՄ** ազգային երգ մը, որուն հեղինակն է Ն. Դ. Թաղիարեանց. երաժշտութիւն՝ Մ. Եկմալեանի:

**ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ**՝ ախղոսն է քերթուածներու հատորի մը, որուն հեղինակը ծանօթ բանաստեղծ Դանիէլ Վարուժանն է եւ որուն կենսագրութիւնը դուք պիտի կարդաք յանի մը դասէ վերջ:

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԷՆ** կը խնդրուի բացատրել հետեւեալ  
գաղափարները, նախ փոխաբերական իմաստով այնպէս ինչ-  
պէս հեղինակը ուզեր է գործածել, եւ երկրորդ՝ պարզ ի-  
մաստով, օրինակ մը. **Կոչնակը լեզու կ'ելլէ** — մանուկը  
լեզու կ'ելլէ:

Այսպէս նաեւ հետեւեալները. —

- 1.— Աքաղաղին կանչը գիշերին կողը կը պատռէ.
- 2.— Կոչնակը իր մտերիմ կանչը կը ցանէ գիւղին վրայ.
- 3.— Աղօթքը կը սաւառնի.
- 4.— Տղաքը գրողներուն ահանջը կը տանին.
- 5.— Տերեւները կը փոփսան:



## ԳԱՂՏՆԻ ԶԱՅՆԵՐ

**Բնութեան ձայնը խրատատու, շեշտով անուշ գարավի**  
**Ամեմուրեֆ կը լսուի:**

**Խորը կապոյտ երկինքին փայլող աստղիկը ժըպտուն**  
**Կ'ըսէ՝ Մաքուր եղի՛ր դուն:**

**Արծիւն, որ կը սաւառնի, ամպերուն վրայ ցանուցի**  
**Կ'ըսէ՝ Միշտ վեր բարձրացի՛ր:**

**Մեղուն, որ կը մըթերէ մեղրով փեթակն իր յարդէ**  
**Կ'ըսէ՝ Անդուլ աշխատէ՛:**

**Ծառն, որ կու տայ պլտուղներ ամենուն, ամէն տարի,**  
**Կ'ըսէ՝ Եղի՛ր միշտ բարի:**

**Հովերուն տակ սանձագիւղ, ծառատունկն հէֆ ու տըկար**  
**Կ'ըսէ՝ Եղի՛ր միշտ արդար:**

**Ծաղիկն օդին բացուելով ու խընկելով զայն առտուն**  
**Կ'ըսէ՝ Սիրել զխոցի՛ր դուն:**

**Եւ աստղ, արծիւ, մեղու, ծառ, սիրուն ծաղիկ անխըտիր**  
**Կը խըրատեն՝ Մա՛րդ եղի՛ր:**


1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆ

Գորով՝ գուլթ, սէր. ամենուրեք՝ ամէն տեղ. մրերիլ՝  
ամբարեւ. հաւաքել. սանձազերծ՝ ուռանց սանձի, ազատ.  
հէք՝ խեղճ, տկար. անխօիր՝ ամենուն հաւասար:

2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Կրնա՞ք ըսել թէ բնութեան մէջ որո՞նց ձայնը կը լսուի.  
— Սուանձին առանձին առնելով ի՞նչ խորատ կու տան մեղքի  
ուստղը, արծիւը, մեղուն. ծառն ու ծաղիկը:

3. Արձակի վերածել այս ստանաւորը:



*Handwritten signature*

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Խրիմեան ծնած է 1820 թուի Ապրիլ 4ին, Վանի մէջ:  
Իր ընդունակութեան շնորհիւ՝ տեղական վարժարանէն  
ելլելէ յետոյ, ինքնաշխատութեամբ յառաջգիմած ու  
կեանքի պայքարին մէջ քրժուած դործիչ մը դարձած է:

Երիտասարդ տարիքին կորսնցնելով իր կինը, Խը-  
րիմեան Մկրտիչ ձեռնադրուած է վարդապետ, եւ նը-  
շանաւոր դարձած է Վանի մօտ գտնուող, Վարազայ  
վանքի վանահայրութեան եւ Տարօնի առաջնորդութեան  
օրերուն: Վարազի շրջանի առաջին օրերէն իսկ ցոյց  
տուած է ժողովրդանուէր հանրային դործիչի մը գլխա-  
ւոր յատկութիւնները:

Հայրենի բնագաւառին մէջ կատարած ճամբորդու-  
թիւնները պատճառ եղած են, որ Խրիմեան մօտէն ճանչ-  
նայ հայ ժողովուրդը եւ անոր կարիքները:

1850 - 1870 թուականներուն Վանի եւ Մուշի գըւղ-  
րոցներուն թիւը շատ քիչ էր: Ժողովուրդը, մանաւանդ  
գիւղական շրջաններու բնակչութիւնը տղէտ էր մնա-  
ցած: Գրեւ-կարգալ գիտցողները մատի վրայ կը համ-

րուէին: Հայերու մեծ մասը կը խորհէր որ իր դրացիները ստեղծուած են ճշելու, հարստահարելու, իսկ Հայերը՝ տառապելու համար:

Խրիմեան վարդապետ սկսաւ պայքարիլ այս մտայնութեան դէմ: Եւ ամէնէն առաջ կենդանի խօսքով: Եկեղեցիներու բեմերէն լսուող անոր քարոզները ունկընդիրներու միաքերուն մէջ կը ցածնէին ըմբոստութեան սերմերը: Իր խօսքը կենդանի էր եւ ազդեցիկ, շատ անգամ համեմուած ժողովրդական առակներով եւ պատմութիւններով:

Իր բնատուր ընդունակութեամբ Խրիմեան շուտով տեսաւ որ իր գործունէութեան վաշտը շատ փոքր է: Յաջողեցաւ վարազի մէջ հաստատել Հայաստանի առաջին տպարանը, ուր սկսաւ հրատարակել Արծուի վաստարականի թերթը, որուն կ'օժանդակէր մասնաւորաբար վարժարանի աշակերտներէն Գարեգին Սըրուանձտեանց:

Այսպէս ուրեմն, քարոզ, գրոյց, զպրոց եւ զրականութիւն դարձան Խրիմեանի գլխաւոր միջոցները, որոնք կատարեցին մեծ գեր: Իր մշակած զրականութիւնը մատչելի էր լայն զանդուածներուն, նուիրուած ըլլալով կրօնաքարոյական նիւթերու եւ ընտանեկան կեանքին: Շատ սիրուած են իր Սիրաք եւ Սամուէլ, Պապիկ ու Թոռնիկ հատորները: Իր բոլոր գրուածքներուն մէջ տիրապետող է հայրենասիրական շունչը: Հայ ընտանիքը հիմնաքարն է հայ ժողովուրդին եւ այդպէս կը մնայ, եթէ ան շարունակէ պահել իր նախնիքներուն առաքինութիւնները:

Իր ժողովրդանուէր գործունէութեան համար ստացաւ Հայրիկ պատուանունը:

1869ին Խրիմեան Հայրիկ ընտրուեցաւ Պոլսոյ Պատրիարք, մինչեւ 1873:

1878ին Պերլինի վեհաժողովին ներկայացող Հայ Պատուիրակութեան պետն էր Խրիմեան: Պերլինէն դառնալէ յետոյ, նորէն դաւառ դնաց, բայց չկրցաւ միշտ մնալ իր սիրած ժողովուրդին մէջ: Իր ներկայութիւնը վտանգաւոր երեւցաւ օրուան իշխանութեան:

Խրիմեան աքսորուեցաւ Երուսաղէմ, ուր մնաց մինչեւ 1891 թուականը, երբ ընտրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս, եւ մեկնեցաւ էջմիածին:

Իբրեւ Կաթողիկոս ալ ապրեցաւ պարզ եւ խոնարհ: Մնաց նոյն հայրենաշունչ գրողը եւ ժողովրդասէր քարոզիչը: Իր պարքեւ հասակը, գորովոտ ժպիտը եւ խորաքափանց աչքճրը օրինակելի անձնաւորութիւն մը դարձուցեր էին զինքը: Իր միակ փառասիրութիւնն էր կոչել ինքզինքը Հայոց Հայրիկ:



1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ


Թրժուած՝ եփուած, փորձառու. բնագաւառ՝ հայրենիք. կարիք՝ պէտք. կարգահարել՝ նեղել, ճնշել, կեղեքել. ունկնդիր՝ մտիկ ընող. ըմբոսուրիւն՝ անհնազանդութիւն. առակ՝ վէպ, ուրկէ բարոյական մը կը հանուի. բնաօուր՝ բնութեան տրուած. մահչելի՝ մօտիկ. պարքեւ՝ բարձր, մեծ, հսկայ. խորաքափանց՝ սրամիտ, խորը թափանցող:

2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ո՞վ է Խրիմեան Հայրիկ.— Ո՞ւր ծնած է.— Հայերու մեծ մասը իրենց դրացիներուն մասին ի՞նչ կը մտածէին.— Ի՞նչ եղաւ Խրիմեան Հայրիկի դերը հայ ժողովուրդին մէջ.— Ի՞նչ ըսել է ժողովրդական դէմք մը դառնալ.— Հայաստանի մէջ առաջին տարան բացողն ո՞վ եղաւ.— Ի՞նչպէս կը կոչուէր Խրիմեանի թերթը.— Խրիմեանի գործերէն ուրո՞նք շատ սիրուած են.— Ինչո՞ւ համար ժողովուրդը Հայրիկ պատուանունը տուաւ անոր.— Ուրիշ ի՞նչ բարձր պաշտօններով պատուեց զինքը հայ ժողովուրդը.— Աքսորէն յետոյ իբրեւ ի՞նչ ընտրուեցաւ եւ ո՞ւր մեկնեցաւ:

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հայերու հին եկեղեցիները, անոնք մանաւանդ որ շինուած են Ժ. եւ ԺԱ. դարերուն մէջ, հոյակապ շէնքեր էին: Այդ եկեղեցիները սովորաբար շինուած են տեղական քարերով: Ներքին կողմէն կ'երևայ, շէնքին մէջտեղն իսկ,



ՍԲ. ՀՈՒՓՍԻՄԷ ԵԿԵՂԵՑԻՆ  
ՅԱՏԱԿԱԳԻԾԸ

զմբէթ մը որուն շուրջը կամարները կը հանդէին սիւներու վըրայ. այդ զմբէթը սըրածայր է, ձագառածել, երբեմն ութանկիւն, և աւելի յաճախ բաղմանկիւն:

Հայ եկեղեցիներու յատկագրիժին ձևը նեղ է եւ երկար. մէջտեղը, զմբէթին տակ, երկու կողմէ յաւելուածներ կան, որով յատկապիժը կը

ստանայ հայ խաչի ձևը, որուն վերին եւ վարին մասերն երկար են, իսկ թեւերը կարճ:

Եկեղեցիներու զուռները ցած կը շինուէին, մերթքառակուսի եւ մերթ կամարածել գլուխով:

Շէնքերուն մէջ ուշադրաւ են արտաքին քանդակները. անոնք մտացածին են դրեթէ միշտ. երբեք չէք հանդիպիր անասունի կամ մարդու պատկերի, եւ շատ

քիչ անդամ ծաղիկի կամ տերեւի: Հայ հին եկեղեցիներու քանդակներուն զլիաւոր հիմը կը կազմեն Ժապաւինաձեւ դարձերը. անոնք կը սողակլին կամարներուն, գուռներուն, պատուհաններուն վերեւ, ու կը հիւսեն խաչեր եւ նշխարքի ձեւով դարձեր:

Այս ոճով շինուած եկեղեցիներուն մէջ ամէնէն նըշանաւորն է Ս. Հովիտիմէի տաճարը, որ կը գտնուի Էջմիածնայ մօտ եւ կը յիշուի իբր տիպար հայ ճարտարապետութեան:



ՍԲ. ՀՈՒՓՍԻՄԷ ԵԿԵՂԵՑԻՆ ՃԱԿԱՏԸ

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Հոյակապ՝ փառաւոր, շքեղ. ձագառաձեւ՝ ձագարի ձեւով. յասակագիծ՝ շէնքի մը յատակին երկրաչափական պատկերը. մօացածից՝ երեւակայական. սողոսկիլ՝ հոս կը նշանակէ պտուտքիւ. թիպար՝ առաջին օրինակ:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հայ եկեղեցիները սովորաբար ինչ տեսակ քարերով շինուած են.— Ինչպէս է անոնց յատակագծին ձեւը.— Արտաքին քանդակներ կամ զարդեր կան անոնց վրայ.— Այս ոճով շինուած եկեղեցիներուն մէջ ո՞րն է ամէնէն նշանաւորը եւ ո՞ր կը գտնուի ան:

## Մ Ո Մ Ը

Տիրամօր անուշ ու շքնորհալի  
Ներսդ նայուածքով պատկերին առջեւ,  
Նիհար, անարիւն մոմը կը հալի,  
Իր լոյսէ հոգին սպառի մինչեւ:

Այդ վըտիտ մոմի վառող լեղուակէն  
Գոհ է Յիսուսի մայրիկն երկնային,  
Ու տեսէ՛ք, սեփ սեւ յաչակին տակէն  
Իր մեղր աչուկներն ազուր կը նային:

Մոմը կը հալի, ու կը սպառի ալ,  
Հո՛ն է իր հաճոյքն ու իր արժանիք.  
— Պաշտամունքի մէջ լուռ ոչընչանալ  
Հատնումով արբշիտ, անով երջանիկ:

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Վաթա՞ նիհար. լաչակ՞ գլխու ծածկոց. արբոխ՞ գինով:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Տեսա՞՞ք էք դուք ալ Տիրամօր պատկերը, ո՞ւր.— Մեր եկեղեցիներուն մէջ գործածուող մոմը ինչս՞ վ. շինուած է.— Դուք ալ մոմ վառած էք եկեղեցիին մէջ.— Հին ատենները, երբ ելեք տրականութիւն եւ քարիւղ չկար, ինչս՞ վ կը լուսուարէինք մեր սենեակները:

### 3. Արձակի վերածելէ յետոյ դոց արտատանել այս ոտանաւորը:

#### ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒ-

ԹԻՒՆԵԱՆ.— Ծնած է 1873 Հոկտ. 3ին: Նա հասակուած՝ 1915ին, մեծ տարագրութեան օրերուն: Ծանօթ է իբրեւ բանաստեղծ եւ քննադատ: Մեր արեւմըտաճայ գրականութեան լաւագոյն արձակագիրներէն մէկն է: Ինքնօգնութեամբ հասած է զարգացման աստիճանի մը որ հաղուադէպ է մեր մէջ: Լոյս ընծայած է «Լքուած քնար», «Երկունք» եւ «Նոր քնար» անունով բանաստեղծութիւններու հատորները: Հայ Գրագիտներու Բարեկամներ մատենաշարին տասներորդ հատորը նուիրուած է անոր անտիպ արձակներուն եւ ընտրուած քերթուածներուն:



Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (1873 - 1915)

★

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Աշխարհի ամենահին քրիստոնեայ ժողովուրդներէն մէկն է հայ ժողովուրդը: Աւանդութիւնը կ'ըսէ թէ Քրիստոսի Աւետարանը Հայաստանի մէջ քարոզուեցաւ Թադէոս եւ Բարթողիմէոս ասաքեալներուն ձեռքով:

Ինչ որ կրնայ մեզ հպարտ ընել՝ այն պարագան է որ Հայաստան եզաւ աշխարհի բոլոր ժողովուրդներէն առաջինը որ որդեկրեց քրիստոնէութիւնը իր բերկրին պաշտօնական կրօնը:

Արդարեւ, մենք քրիստոնեայ դարձանք 300 - 301ին երբ Հայաստանի դահին վրայ կը գտնուէր Տրդատ Թաւաւորը: Տրդատ նախապէս կը հաշածէր քրիստոնեաները, եւ նոյնիսկ չարչարեց ու Աշտիշատի խոր վիրապը, այսինքն մահապարտներու փոսը նետել տուաւ իր հօր սպանիչ Անակին դաւակը Գրիգորը, իմանալով որ քրիստոնեայ է ան: Յետոյ երբ անբուժելի հիւանդութեան մը բռնուեցաւ, Գրիգորն էր որ բժշկեց զինքը խոր վիրապէն հանելէ վերջ: Տրդատ դարձի եկաւ, եւ Գրիգորի հետ ձեռք ձեռքի տուած, քրիստոնեայ դարձուցին Հայաստանը: Գրիգոր կոչուեցաւ հայ ժողովուրդի Լուսաւորիչը, եւ հայ եկեղեցին դայն դասեց սուրբերու կարգը:

Էջմիածինը, ուր հիմա կը նստի Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հիմնուած է Լուսաւորչի ձեռքով 303 թուականին, թէեւ յետոյ վերաշինուած ու նորոգուած է քանի մը անգամ:

Հայ եկեղեցին եղած է հայ ժողովուրդի պահպանման ամէնէն ուժեղ ազդակներէն մէկը: Մանաւանդ մեր անկախութիւնը կորսնցուցած դարերուն՝ ան է որ անվթար պահած է մեր ինքնութիւնը:

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒ ԹԻՒՆ

**Վիրապ՝** հոր՝ առանց ջուրի. մահապարտ՝ մահուան դատապարտուած. ազդակ՝ միջոց. անվրաս՝ անվրաս, անարատ. **ինքնուրիւն՝** իր անձը, իսկութ իւն:

#### 1. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Աւանդութիւնը ի՞նչ կ'ըսէ Հայաստանի քրիստոնեայ դաւանաւուն մասին. — Ո՞ր երկու առաքեալները քարոզած են մեր մէջ. — Ի՞նչ կը նշանակէ սրգեգրիւ քրիստոնէութիւնը իբր երկրին պաշտօնական կրօնը. — Ո՞ր թուականին քրիստոնեայ դարձան Հայերը. — Ո՞ր թագաւորին օրով. — Տրդատ ի՞նչպէս պատժեց Անակին զաւակը՝ Գրիգորը. — Երբ Տրդատ թագաւորը անբուժելի հիւանդութեան մը բռնուեցաւ, ի՞նչ մտածեց եւ ի՞նչ ըրաւ. — Ի՞նչ ո՞ւ համար Գրիգոր Լուսաւորիչ անուանուեցաւ. — Ո՞վ հիմեց Էջմիածինը. — Ո՞ր թուականին. Ո՞վ կը նստի հոն. — Մեր անկախութեան կարտուած դարեւրուն Հայ Եկեղեցին ի՞նչ օգտակարութիւն ունեցաւ:

#### 2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

**ԹԱԴԷՈՍ ԵՒ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ՝** Յիսուսի երկու առաքեալները, որոնք աւանդութեան համաձայն, Աւետարանի քարոզութիւնն ըրած են առաջին անգամ Հայաստանի մէջ:

**ՏՐԴԱՏ՝** Հայոց թագաւորական դաջը բարձրացաւ 287ին: Նախապէս հաւածեց քրիստոնեաները, եւ յետոյ ինքն ալ դարձի դաւով, քրիստոնէութիւնը ընդունեց եւ երկրին պաշտօնական կրօնը յայտարարեց:

**ԱՇՏԻՇԱՏ՝** հեթանոսական կեդրոն Քարքէ Լերան ստորուտը, Արածանիի վրայ: Այդ դիւղին մէջ երեք մեծ եւ շատ հարուստ մեհեմաններ կային. 1. Վաչէ-Վաչեան, նուիրուած Վահագնի պաշտամունքին. 2. Ոսկեմայր, Ոսկեծին, Ոսկեհատ Անահիտի մեհեմանը, եւ 3. Աստղիկ աստուածուհիին մեհեմանը: Քրիստոնէութիւնը մեծ ընդհարում ունեցաւ հոն հեթանոսութեան հետ, եւ վայն քրիստոնէական սրբավայր դարձուց: Սահակ Պարթեւ թաղուած է Աշտիշատի մէջ:

**ԱՆԱԿ՝** Ս. Գրիգոր Լուսաւորիչին հայրը, որ սպաննել տուաւ Տրդատին հայրը, Խոսրով:

ԷՋՄԻԱՄԻՆ՝ ուր հիմնուած է առաջին Հայ Եկեղեցին,  
եւ ուր հաստատուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը,  
դարերէ ի վեր:

## ԵՐԿՈՒ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

### 1

#### ԵՐՁԱՆԿՈՒՅԻՒՆ

Ես այսօր  
Ճատաղայթ մ'եմ բոսոր...  
Աչքերուս հեշտօրօր,  
Ա'յնքան լոյս ունիմ որ  
Կը ժրպարիմ՝  
Մըտերիմ՝  
Արեւին...

Ու վարդե՛ր կ'երեւին  
Արեւին  
Ոսկեղէն  
Հողիէն...

Ես այսօր, ես այսօր  
Արեգակ մ'եմ բոսոր...

### 2

#### ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ...

Այս աշխարհին մէջ ի՞նչ ըրի ես, ի՞նչ,  
Դեռ սըրտիս վըրայ վարդ մը չեմ սեղմեր,

Ու ահա շուրջըս են ազուաւի տարմեր :  
Պիտի թողո՞ւա, Տէ՛ր, որ աչքերս ջինջ  
Ըլլան անոնց կեր :  
Դեռ չեմ ողջունած աստղը վարդերանդ ,

Որուն ըղձանքէն ըրիր զիս դեզին :  
Մե՛ղք է, Տէ՛ր Աստուած, որ նետես հողին  
Այսքան կայծ ու խունկ, կեանք ու երազանք :  
Մե՛ղք է քու վառքին :

ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ

★

**ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ.**— Ծնած է Պոլիս, Կէտիկ Փաշա թաղը 1894 Յունուար 4ին: Ազգային վարժարանը յաճախելէ վերջ, Պէրպէրեան կը մտնէ, որուն փայլուն ընթացաւարտներէն մէկը կը գառնայ 1913ին: Զգայուն բանաստեղծ մըն էր Զարիֆեան որ կանխազատ մահ մը կ'ունենայ:

Իրմէն ունինք երկու հատոր, «Տրտմունքեան եւ խաղաղութեան երգեր» (1921) եւ «Կեանքի եւ մահունան երգեր» (1922):



\*

ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ (1894-1922)

1. — ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Բոսոր՝ կարմրագոյն, վառ կարմիր. հեցօրօր՝ մեղմօրօր, հաճոյալի. օսում՝ խուժք. ըղձանք՝ բաղձանք:

2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Բանաստեղծը ի՞նչ բանի կը նմանցնէ ինքզինքը.— Ի՞նչ ունի ան իր աչքերուն մէջ.— Ի՞նչ բանէն կը ստանայ ան իր հոգիին ուրախութիւնը.— Ի՞նչ ըսել է ես այսօր արեգակ մըն եմ.— Ի՞նչ ըսել է վարդ մը չեմ սեղմած սրտիս վրայ:

3. Արձակի վերածել այս երկու ոտանաւորները եւ մատնանշել տարբերութիւնը որ կայ անոնց մէջ.— առաջինը՝ զուարթ, երկրորդը՝ տխուր:

Թ Ի Թ Ե Ռ Ն Ի Կ Ը

1

Թիթևանիկը շատ սիրուն, նրբակազմ միջառ մըն է: Տեսէ՛ք, ի՞նչ գեղեցիկ է, երբ ծաղիկի մը վրայ իջնելով ան կը բանայ իր զարդարուն թևերը: Ոչ միայն



սիրուն եւ նրբակազմ, այլ եւ անվնաս է: Կծելու համար ան չունի սուր ակոսներ, չունի թունաւոր խայթոցներ, ոչ ալ տհաճ բաղէս գուրկ է ան լի հոտ: Ընդհան-

րինքնապաշտպանութեան բոլոր միջոցներէն, որոնցմէ կ'օգտուին միւս միջատները:

Բայց նախ քան իր զարդարուն հազուստները հազնիլը, նախ քան իր վերջնական կերպարանք ստանալը, թիթեռնիկը կ'ունենայ շարք մը հրաշալի կերպարանափոխութիւններ: Ահա՛ թէ ի'նչպէս:

Թիթեռնիկը կ'ածէ շատ մանր ձուկներ, այդ ձուկներէն արեւին շոյող ճառագայթներուն ազդեցութեան տակ դուրս կու գան սլտիկ, շատ սլտիկ թըրթուրներ:

Քանի մը տեսակ թրթուրներ իրենց մանկութենէն իսկ աղուոր մուշտակ մը հագած են: Միւսներն ունին սուր-սուր փուշեր: Այդպիսի թրթուրներ ընդհանրապէս կ'ապրին թռնաւոր աղուամագ ունեցող բոյսերու վրայ (եղիւն) եւ իրենց փուշերով կը պաշտպանուին անոնց խայթոցներէն: Թրթուրները մեծ մասով շատ քնքուշ են եւ այդ պատճառով իսկ բոլորովին անպաշտպան:

## 2

Թրթուրները շատ արագ կ'ածին: Կը բաւէ ուր սլտփտիկ թրթուրները լաւ մը ուտեն, ու անոնք կը մեծնան ու կը դիրնան: Յետոյ անոնք հանդիստ կ'առնեն ծառի մը ճիւղին վրայ ու կը սկսին դռնատիլ ու հիւանդի մը նման դալկանալ: Այդ ատեն անոնց գլխի մորթը կը պայթի ու թրթուրը կը սկսի թաւալիլ, աշխատելով դուրս գալ իր նեղ զգեստէն: Երկար ջանքերէ ետքը, վերջապէս թրթուրը ազատ է, թէեւ չափազանց յուշած իր ուժերէն վեր այդ աշխատանքէն: Նոր մորթն ալ շատ քնքուշ է եւ զգայուն դէպի ցուրտն ու խոնաւութիւնը: Եթէ մորթ փոխելու ժամանակ խոնաւ կամ ցուրտ եղանակ ընէ, թրթուրները մեծ մասով կ'ոչնչանան:

Մորթ փոխելէ վերջ, թրթուրները նորէն կը սկսին

իրենց աշխատանքը: Աստուընէ մինչեւ իրիկուն՝ իրենց ամուր ծնօտներով կը կրծեն կանաչ տերեւները ու կ'ուտեն: Զորսէն հինգ անգամ կը կրկնուի մորթափոխութիւնը, մինչեւ որ թրթուրը բոլորովին չափահաս դառնայ: Ապա անոնք կը սկսին հարսնեակ դառնալու պատրաստութիւններ տեսնել: Բարակ մետաքս թել մը կը շինեն ու իրենք զիրենք ճիւղի մը կը կապեն: Ուրիշ թելով մըն ալ կը փաթթուին, որ վար չիյնան ու կը սկսին պղտիկնալ: Անգամ մըն ալ մորթ կը փոխեն, բայց այս անգամ մորթին հետ միասին թրթուրը կը կորսնցնէ իր աչքերը, ծնօտներն ու ոտքերը: Նոր մորթը այլեւս նախորդներուն պէս քնքուշ չէ: Ան կարծր է ու ամուր: Ահա հարսնեակը պատրաստ է: Հարսնեակը կերածէն կրցեր է իր մէջ հարուստ պաշար մը հաւաքել եւ այդպէս հարսնեակը կը պատրաստէ թեթեւաթեւ թիթեռնիկը:

## 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Աղուամազ՝ բարակ մազ. դալկալուալ՝ գեղնիւ՝

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Տեսած էք թիթեռնիկ.— Կրնա՞ք նկարագրել ձեր տեսած թիթեռնիկին արտաքին գեղեցկութիւնը.— Ուրիշ միջատներու պէս ան ալ ունի՞ ինքնապաշտպանութեան միջոցներ.— Ի՞նչ կը հասկնանք ինքնապաշտպանութեան միջոցները սեւով.— (Ուսուցիչներէն կը ինդրուի թռչուններուն եւ կենդանիներուն կիանքէն տալ մէկէ աւելի օրինակներ).— Կրնա՞ք քանի մը բառերով նկարագրել թիթեռնիկներուն կերպարանափոխութիւնը:



## Թ Ի Թ Ե Ռ Ն Ի Կ Ը

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՆԱԽՈՐԴ ԴԱՍԻՆ)

### 3

Շատ մը Թրթուրներ, մանաւանդ իրիկնային ու դիւ-  
շերային Թիթեռնիկներու Թրթուրները չեն գոհանար  
պարզ Թելով մը հարսնեակը պաշտպանել: Անոնք կը  
պատրաստեն հաստ ու ամուր զդեստ մը՝ բոժոժը, որ  
հարսնեակը կը պաշտպանէ ցուրտէ եւ խոնաւութենէ:  
Ոմանք ալ կանոնաւոր տուն մը կը շինեն ցեխէ, փայ-  
տի կտորներէ եւ տերեւներէ: Այդպիսի Թրթուրներ  
միաժամանակ ջուլհակներ են եւ որմնադիրներ:

Չկարծէք որ բոժոժ պատրաստելը դիւրին գործ  
մըն է: Թրթուրը բոժոժի Թելերը աշխլէս մը իրար կը  
փակցնէ, որ ան փայլուն կաշիի մը կը նմանի: Թրթուր-  
ներէն ոմանք մէկ ամառուան ընթացքին չեն կրնար  
պատրաստել իրենց բոժոժը: Ահա թէ ինչո՛ւ անոնք  
աչնան ատեն պէտք է յարմար տեղ մը գտնեն, ցուրտ-  
ձմեռը անցընելու համար: Ատոր համար անոնք կը պահ-  
ուին մամուռի, Թափած տերեւներու տակ, կամ կը  
մտնեն հողի մէջ, իրենք զիրենք կը շրջապատեն աւա-  
զով կամ փայտի կտորներով ու այդպիսի խրճիթի մը  
մէջ կծկտած, խոր քուն մը կը մտնեն: Գարունը դա-  
լուն պէս Թրթուրները կ'արթնան ու նոր եռանդով կը  
վերսկսին իրենց ընդհատած գործը, մինչեւ որ բոժոժը  
բոլորովին պատրաստուի:

### 4

Յետոյ տեղի կ'ունենայ ամենահրաշալի կերպարա-

նափոխութիւնը: Հարսնեակը սիրուն թիթեռ մը կը դառնայ:

Թիթեռնիկի թեւերուն դոյնը կախում ունի այն փոշիէն, որով ծածկուած են անոնք: Եթէ մաքրենք այդ փոշին, թեւերը թափանցիկ կը դառնան: Եթէ թիթեռնիկի մը թեւերը դիտէք լաւ խոշորացոյցով մը, շատ պիտի զարմանաք անոնց շինուածքին վրայ: Բարակ ու թափանցիկ թեւերու երկու կողմերը տանիքի կըզմինտրներու նման ծածկուած են մանր դունաւոր քեփուկներով: Ամէն մէկ թեփուկ իր կարդին պզտիկ ցօղունի մը միջոցաւ ամրացած է թեւերուն: Շատ մը թիթեռնիկներու թեփուկներուն մէկ կամ միւս կողմը տարբեր դոյն մը ունի: Այդ պատճառով ալ թեւին վերի եւ վարի երեսները տարբեր դոյն ու տեսք ունին:

Թիթեռնիկին աչքերն ալ զարմանալի կազմուածք մը ունին: Անոնք բաղկացած են բազմաթիւ մանր աչուկներէ:

Ծաղկազարդ մարդադետնի վրայ կը թռչտին բազմաթիւ զարդարուն թիթեռնիկներ: Անոնց նայելով, ակամայ, բանաստեղծին խօսքերը կը յիշես.

« Մեր աշխարհի մէջ բնակող բոլոր միջատներէն, սողացող, ցաթկող, թռչող բոլոր արարածներէն ամէնէն լաւը, ամէնէն նուրբը թիթեռնիկն է »:

Եւ իսկապէ՛ս այդպէ՛ս է:



## 2. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻԻՆ

Բոժոժ՝ պզտիկ զանգակ, որուն մէջ կը պաշտպանուի հարսնեակը. քեփուկ՝ փոքրիկ թեփ, կեղեւ. ակամայ՝ չուզելով:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հաճեցէք կրկնել քանի մը բառերով նախորդ դասը, ո-

գուն շարունակութիւնն է այս հասուածը.— Դիւրի՛ն գործ է  
քոժոժ մը պատրաստելը.— Թրթուրները ձմրան ո՛ւր եւ ի՞նչ-  
պէս կ'անցընեն. Իսկ գարնա՞ն.— Երբ հարսնեակէն թիթեռ-  
նիկը երեւան կու գայ, ի՞նչպէս է տուաջին անգամ.— Ի՞նչ-  
պէս է անոր աչքերուն կազմութիւնը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ

Լիբանանի սա հեռաւոր լեռներէն՝  
Ողջո՛յն ձեզի, Հայաստանի բանուորներ.  
Դուք դեռ հազիւ անցած արեան ծովերէն՝  
Նոր ձեւ ու կեանք կու տաք Երկրին մեր աւեր:

Դո՛ւք էք յամառ ժառանգորդներն այն աղւիւն,  
Որ ստեղծեց հիմքը ոճին գոթական,  
Որ շինեց մի՛շտ, երբ մէկ կողմէն թշնամին  
Իր աչքին տակ կը քանդէր տունն հարեւան...

Երնէ՛կ ձեզի, ձեր ոտքերուն տակ գոնէ  
Աի մը հող կայ դեռ մեր հողէն հնամեայ,  
Որուն աւիշն արդ ձեր հողին կը վառէ  
Եւ ջուրն հօր ձեր արեան մէջ կը թնդայ:

Ամէն մէկ տուն, որ կը կանգնէք դուք հիմակ  
Եւ հայ մանկան ճոռոզիւնով կը լեցուի՝  
Ե՛րբ է սլայծառ, մէյ-մէկ ահեղ յաղթանակ՝  
Նետուած խղճին դէմ աշխարհին վայրենի:

Ամէն մէկ տուն՝ ձեր քրտինքով ուռնացած՝  
Քա՛ր մըն է նոր, որ անասան կ'աւելնայ

Անվերջ շինուող ու դարերով սկսած  
Հայուն լուսեղ, մեծ Երազին ապագայ...

Լիբանանի սա հեռաւոր լեռներէն՝  
Ես կը լեւմ երզը ձեր յաղթ մուրճերուն,  
Եւ կ'արտասուէ հոս իմ հոգիս դառնօրէն՝  
Այսպէս օտար, այսպէս անմասն ու հեռուն:

Մ. ԻՇԽԱՆ



Մ. ԻՇԽԱՆ. —  
Բուն անունով Մուշեղ Քէնտէրէճեան, ծնած է 1913ին Անգարանահանգի Սիզիսար քաղաքը, Տարրական կրթութիւնը կ'աւնէ Դամասկոսի Կաթաղըթարանին մէջ: Մէկուկէս տարի կ'աշակերտէ Մելգոնեան Կրթական Հաստատութեան, յետոյ կը մտնէ Պէյրութի Հայ Ճեմարանը, զոր կ'աւարտէ 1935ին:

Հրատարակած է քերթուածներու երկու հատոր՝ «Տուներուն Երգը» 1937ին եւ «Կրակը» 1938ին:

Մ. ԻՇԽԱՆ

★



նէքի ժամանակ, 1022 տարուան յունուար 6ին, դետինն ընթացքը ետ դարձուց, ըստ աւանդութեան:

Նոյեան տապանէն մասնիկ մը, զոր՝ զարձեալ աւանդութեան համաձայն, հրեշտակի ձեռքով ստացաւ Ս. Յակոբ Մծրնայ Հայրապետը Մասիա լերան վրայ:

Բաղմաթիւ մասունքներ արծաթ եւ ոսկի տուրիւրու, աջերու եւ խաչերու, թանկագին քարերով դարդարուած:

Ապակիէ դարաններու մէջ շարուած են ուրիշ զանազան հնութիւններ, հին զգեստներ, եկեղեցական դարդեր, հին թանկագին սկիհներ, եպիսկոպոսական թաղեր եւ դաւադաններ, գոհարակաւ մատանիներ եւայլն: Զդեստեղէններուն մէջ ուշադրութիւն կը դրուէ նուրբ ասեղնադործութեամբ եւ խորհրդաւոր նկարներով դարդարուած շուրջառ մը՝ Հնդկաստանի մէջ գործուած:

Հոպելոյս Գեորգ Դ. Կաթողիկոսն էր որ կառուցած է Էջմիածնի տաճարին կից թանկագին այս շէնքը, ուր իր խնամքով հաւաքուած են յիշուած եկեղեցական առարկաներէն շատերը, որոնք մեծ մասամբ անգին ու պատուական հնութիւններ են:



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

**Կաթողիկէ՝** մայր եկեղեցի. **քանգարան՝** արժէքաւոր աւարկաներ պահելիք տեղ. **աւանդատուն՝** եկեղեցիի պահարան. **գնդարդ՝** տէգ, երկար կտրով եւ որածայր երկաթով զէնք. **ֆերիջ՝** քերելու եւ տանջելու գործիք մը. **գսհարակուռ՝** թանկագին քարերով շինուած:

### 2. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՆԵՐ

Խօսքի մը մէջ բայն ունի իրեն յատուկ բառ մը որ կը

կոչուի եւր բայի կամ եմբակայ: Սոխակը կ'երգէ, ծաղիկը  
թողմեցաւ. ո՞վ կ'երգէ՝ սոխակը, ի՞նչ բան թողմեցաւ՝  
ծաղիկը: Երկուքն ալ ենթակայ են:

3. Գտնել հինգական նախադասութիւն՝ զատելով ենթա-  
կաներն ու բայերը:



## ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

(Ա.Ի.Ա.Ն.Դ.ՈՒԹ.Ի.Ի.Ն.)

Կէս զիշերին կանթեղը վառ

Կախուած է վար երկինքէն .

Լուսաւորչի կանթեղն անմար

Հայոց մըթնած երկինքէն :

Վար է կախուած ջահն անպարան,

Արագածի կատարին ,

Ու սեղանէն հըսկայական

Լոյս կը սըփոէ աշխարհին :

Լոյս կը սըփոէ երկա՛ր դարեր ,

Ու կը վառին միշտ անշէջ

Սուրբին մաքուր արցունքները

Իւզի փոխան անոր մէջ :

Ոչ մարդկային ձեռք կը հասնի,

Այն ահաւոր բարձունքին ,

Եւ ոչ քամին կը հանգցընէ՝

Վիշապ-քամին ահագին :

Երբ կը պատէ մութ խաւարը

Զընաշխարհիկ մեր երկրին ,

Երբ կը տիրէ ահն ու վախը .

Թոյլ , կասկածոտ սըրտերին ,

Ո՛վ անմեղ է, լի է սիրով  
 Ու հաւատով անսասան,  
 Ո՛վ կը նայի վառ յոյսերով  
 Դէպի Հայոց ապագան, —

Ան կը տեսնէ նոյն մըշտավառ  
 Ջահը կախուած երկինքէն.  
 Ըսես՝ Աստծոյ աչքը պայծառ  
 Կը հըսկէ վար երկինքէն:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ



1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Անցեջ՝ միշտ վառող, մշտավառ. փոխան՝ փոխանակ,  
 տեղը. հանգցնել՝ մարել. չնաօխարհիկ՝ աշխարհի մէջ չը-  
 գտնուած. ան՝ վախ. անսասան՝ հասսատուն. մեծավառ՝  
 միշտ վառող:

2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Այս ոտանաւորին վերջին երկու տուները անգամ մըն ալ  
 կարդացէք, եթէ կը հաճիք.— Ուրեմն ո՛վ կրնայ տեսնել Ա-  
 ռադածի կատարին կախուած կանթեղը.— Իսկապէս գոյու-  
 թիւն ունի՞ այդպիսի կանթեղ մը.— Ի՞նչ ըսել կ'ուզէ «Վառ  
 յոյսերով նայիլ ապագային»:

3. Արձակի վերածել այս ոտանաւորը եւ յետոյ գոց ար-  
 տասանել: Ուղղադրել առաջին երեք տուները:

4. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Էական կը կոչուի եւ՛ բայը իր բուր ձեւերով, եւ այս-  
 պէս կը խոնարհի.—

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ	Անկասօր	Կասարեայ	Ապառնի
Եմ	էի	Եղայ	Պիտի ըլլամ
Ես	էիր	Եղար	Պիտի ըլլաս
Է	էր	Եղաւ	Պիտի ըլլայ
Եմք	էինք	Եղանք	Պիտի ըլլանք
Էք	էիք	Եղաք	Պիտի ըլլաք
Են	էին	Եղան	Պիտի ըլլան

## ԿԱՂԱՆԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

### 1

Կազանդ...: Աչքս զոց կը նայիմ...: Ո՞րն է այս երկիրը. երբեք եղած չեմ հոս. բայց անձանօթ չէ ան ինձի: Տեսնելուս՝ կը ճանչնամ զայն իսկոյն. սիրտս անոր կ'երթայ մէկէն. ընտանի, սերտ, ներքին բան մը կայ անոր ու իմ միջև: Ես հոս մազլցած չեմ անոր լեռներն ի վեր, աղբիւրին մէջ չեմ լողցած, եկեղեցիին բակը իմ խաղերս չէ տեսած, դաշտերուն մէջ ծաղիկ չեմ քաղած, ու այդ տանիքները իմ խոնջ մարմինս չեն պատսպարած: Բայց լերան բոլոր ծերպերը կազանիք չունին ինձի համար. աղբիւրին ջրին կարկաջը ականջներուս մէջ կը կլկլայ, եկեղեցիին դանդաղատան բարեկամ բարեւ մը կու տամ, ծաղիկներու հոտ մը ուղեղիս կ'ազդէ ընդփոյթ, ու երգիքին տակ ծիծեանակի հին բոյն մը կը փնտռեմ:

Իրա՛ւ, երբեք եղած չե՞մ հոս: Ուրիշներու մէջ, իմ արիւնս կրող մարդերու մէջ ապրած եմ սյասեղ, ու անոնցմէ ինձի ա՛յնքան խորապէս անցած է իրենց կրած ուղղակի տալաւորութիւնը այս երկրէն սր, անկից հեռու թէեւ, հոն եղած եմ միշտ, երազական կրկին կեանքով մը:

Մասնաւոր անուն մը չունի տեղը որ աչքիս դիմացն է: Քաղաք մը չէ ան, ո՛չ աւան մը կամ գիւղ մը: Ընդարձակ ու քիւրակիտրայ տարածութիւն մըն է: Գիծով մը ու սահմանով չորոչուիր: Լեռներ ու դաշտեր, ու նորէն լեռներ ու տափարակներ՝ ջրի ընթացքներով ժապաւինուած, բլուրներ ու ծործորներ, քաղքի փողոցներ ու զեղի ճամբաներ պարտէզներու մէջէն, քարէ տուներ ու

յարդածածուկ խրճիթներ: Անուններ դնել կ'աշխատիմ  
իւրաքանչիւր կէտին, զանազանել այս համախոնոււմը.  
Մշոյ դաշտ, Շատախ, Կարին, Հաւաւ, Բասեն, Սիփան,  
Կամրկապ, Հայոց Ձոր, Լուսոնք, Արածանի, Արտա-  
մէտ, Գրգուռ, Մօրենիկ, Վարդենիս, Բիւրակն, Տալ-  
ւորիկ... Բայց կը շիտթուին, իրար կը խառնուին, ի-  
րարու մէջ կ'ընդելուզուին, ու քիչ քիչ մեծ անուն մը  
միայն կը մնայ ամէնուն վրայ թեւատարած. — Հա-  
յաստան:

2

Ձիւն կայ ամէն կողմ, յորդ, թաւ ու կակուղ, ա-  
նադարս բաներու սրբութեամբ մը փալիլոյ: Լեռ ու  
դաշտ ծածկած է ան հողածու տարփանքով, քաղաք ու  
գիւղ թաղուած են անոր մէջ մսկոտ հաճութեամբ մը:  
Բուխերիկներ միայն կը ծածկեն զայն դէսադէն օդին  
մէջ զրկելով մուխի զուարթ յորձանքներ: Ու գուրտ չէ  
այս ձիւնը, տաքցնող բան մը կ'ելլէ անկէ, եւ մտերմու-  
թեան, գուրդուրանքի եւ խրախնանութեան հրաւէր մը  
կը յածի անոր վրայ:

Ցնծութիւն մը կը խաղայ այս ամբողջ տարածու-  
թեան վերեւ: Ու մարդիկը որ կը տեսնեմ դիմացս՝ կը  
խնդան, ու կինները կը ժպտին, ու պղտիկները՝ իրենց  
թեւերը վեր՝ կը պարեն: Լոյս, աղմուկ, ողելորու-  
թիւն ամէն կողմ:

Կէս գիշերուան զանգակները կը հնչեն աւետաւոր,  
Նոր Տարիի գալուստը իմացնելով. կը հնչեն հրճուալիր,  
իրարու զրկելով՝ մօտէ մօտ իրենց գանգիւնները. ու  
բերկրութեան երգի մը, դոհաբանութեան ալէլուիայի  
մը պէս կը տարածուի, կը բարձրանայ, կը սաւառնի ա-  
սիկա:

Ու սեղաններ կը տեսնեմ, սեղաններ ամէն կողմ, ու անոնց չորս կողմը շարուած են պառաւներ ու ծերունիներ իրենց դաւակներով, հարսներով ու թոռներով: Ու առատութիւնը յղիանքով մը կը գեղաւ այդ սեղաններուն վրայ. ճոխ ու բարի բնութեան մը պարզեւած բոլոր բարիքները կուտակուած են հոս ժիր ու չարքաչ մարդերու ձեռքով:

Ահա ոտքի կ'ելլէ պառաւը որ սեղանին դուրսը բազմած է. գինիի կուռիկը (աման) ձեռքը կ'առնէ, անոր մէջ կը ձգէ իր ճակտին պսպղուն ոսկիներէն հատ մը, ու դողդոջուն ձեռքով կը բարձրացնէ բաժակը. ձայնը ամուր է սակայն, ու օրհնարեր խօսքերը իր շրթունքներէն կ'ելլեն յոյսերով լեցուն. « Ձեզ ողջութիւն, շնորհաւոր տարի ու բարի կազանդ. ամէն տարի բարով հասնինք ուրախ սրտով: Դառնիկ դատինք, քաղցրիկ ուտենք: Աստուծոյ օրհնէնքը ամէնուս վրայ: Ամէնքս հասնինք մեր մուրատին»: Ու կաթիլ մը կը խմէ գինիէն, յետոյ ամէնուն կը խմցնէ պուտ պուտ, ու ամէնքը կ'արդաւ կը համբուրեն իր ձեռքը, մինչ ան կը շարունակէ իր մաղթանքները, լաւապէս օրերու վստահութեամբ մը, որ իր նիհար կուրծքը կ'ուռեցնէ: Կոճղն է ան՝ տարիներէն դարնուած, բայց միշտ ամուր ու տեւական, հողին մէջ տարածած իր կեցնալիք արմատները, որոնք իր դործը պիտի վերսկսին. վերանորոգման, շարունակութեան աւիշը կը բարձրանայ իր կանաչ ճիւղերն ի վեր, սրոնք գէպ ի վեր կը խոյանան յոյսի թռիչներով:

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Սերս՝ սրտակից, մտերիմ, հարազատ. խօնջ՝ յոգնած. ծերայ՝ ճեղք, բացուածք. ընդփոյր՝ անմիջապէս. բիւրակերպ՝ շատ, բազմազան ձեւով. ծործոր՝ լեռներու մէջտեղուանք, ուրիշ բառով՝ ձորձոր. համախառնում՝ իրարու վրայ դիզուած, խռնուած. ընդելուզութի՝ հիւտուիլ. խառնուիլ. յորդ՝ առատ. անադարս՝ պակասութիւն չունեցող. դէս դէն՝ հոս ու հոն. յորձանք՝ ջուրի հոսանք, առատութիւն. խրախնանութիւն՝ ուրախութիւն, խնճոյք. յածիլ՝ շրջիլ. պտըտիլ. ցնծութիւն՝ ուրախութիւն. ասեաբեր՝ աւետիս տուող. գանգիւն՝ արձադանգ. բերկրութիւն՝ ուրախութիւն. յղփանք՝ շատ կուշտ. կուռկութիւլ՝ դիզուիլ. կուռիկ՝ գինիի աման. պսպղուն՝ փայլուն. դառնիկ դասիւն՝ դժուարութեամբ, դառնութեամբ աշխատինք. մուրա՝ փափաք. կենսալիբ կեանքով լեցուն. աւիօ՝ հիւթ. խոյանալ՝ նետուիլ, յարձակիլ:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Այս դրութիւնը երկու մասէ կը բաղկանայ, ինչպէս որ տեսանք: Կաղանդի բուն նկարագրութիւնը որ մասին մէջն է.— Առաջին մասին մէջ գրողը ո՞ր կը փոխադրուի երեւակայութեամբ.— Անիկա տեսած է Կաղանդի սրելէ տօնակատարութիւն Հայաստանի մէջ.— Տարուան ո՞ր ամսուն կը գուգարիսի Կաղանդը.— Բնութիւնը ինչո՞վ ծածկուած կ'ըլլայ.— Սեղանին գլուխը բազմած պառաւը ի՞նչպէս կ'օրհնէ սեղանը եւ ի՞նչ կ'ընէ.— Չեր տուներուն մէջն ալ պահուած է հայկական այս սովորութիւնը.— Դուք ի՞նչպէս կը տօնէք տարուան վերջին օրը:

3. Լեւոն Բաշուլեանի կենսագրական տողերը տեսել էջ 11ի վրայ:



## ՀԻՆ ՕՐԵՐՈՒ ՔԱՂՅՐՈՒԹԻՒՆ

Երբ մայրս հաց կ'եփէր, այդ օրը պզտիկներուն համար տօնի եւ ուրախութեան օր էր: Նախորդ իրիկ-ուրնէ մեր սովորութիւններուն մէջ պզտիկ փոփոխութիւն մը կը մտնէր: Այդ իրիկուն բացառաբար կանուխ կը պառկէինք, կանուխ ելլելու համար:

Մայրս մութին կ'ելլէր հաց եփելու համար. դիշերէն կը դողնար այդ ժամանակը, իր օրուան հաշիւը պահելու համար: Այն ատեն, հակառակ այսօրուան մարդոց, դիշերներն ալ կ'ապրէին մարդիկ, անշուշտ դործելու համար:

Մայրս, առտուն, կէս դիշերէն անմիջապէս վերջ, ոտքի վրայ էր: Ալիւր կը տանէր փուռը, կը լեցնէր փուռին մեծ տաշտին մէջ: Ջուր կը բերէր աղբիւրէն: Կը լեցնէր կաթսան: Թեթեւ կրակ մը կը վառէր անոր տակը, խմորին ջուրը տաքցնելու համար, եւ դուրսին ճերմակ լաթ մը կապած, բաղուկները կը հանգրիմէր մինչեւ արմուկները, եւ մխացող ճրագի մը լոյսով, ալիւրը կը մաղէր շարմաղով, եւ տաշտին մէկ կողմը կը բարձրանար ալիւրի դէզը, աւազի ժամացոյցի մը պէս:

Մինչ մայրս ալիւրը կը դողացնէր շարմաղին մէջ, իրեն յատուկ ճարտարութեամբ մը, ես կրակին դիմացը նստած, կէս քուն, կէս արթուն, կը սիրէի դիտել բոցերուն խաղը: Փայտերը կը ճարճատէին, կը շաչէին, յանկարծօրէն մութի բուռն շունչեր փչելով ամէն ուղղութեամբ:

Ալիւրը հիմա մաղուած ու մաքրուած էր: Մօրս երեսները ալիւրի նուրբ փոշիով մը օծուած կը տեսնէի

ճրագին լոյսով: Այդ պահերուն ես կը դիտէի մօրս բազուկներուն շարժումները: Կը դիտէի զինքը իր աշխատանքին մէջ: Իր բազուկներուն սեղմ պրկումէն եւ վերջապէս ճակատին վրայ քրտինքներու շողացումէն, կը դգայի թէ ծանր բան մը կը թաւալէր մօրս ստեղծագործող բազուկներուն տակ: Բռունցքները դոցած, կը չարչարէր այդ խմորը: Մայրս կատաղի ոգորումներով կը գօտեմարտէր անոր հետ: Մայրս խմորը տաշտին մէկ կողմէն միւսը կը դարձնէր: Եւ չպաղեցնելու համար, դորսովի հողածուլթեամբ մը, բուրդէ վերմակով մը կը ծածկէր զայն:

Ինչ մը վերջ մայրս կը նայէր խմորին, որ ուռած կ'ըլլար, շատցած, կարծես տաշտէն դուրս ելլել կ'ողէր: Ու կը սկսէր հաց եփելու արարողութիւնը, երբ հացադործը կը յայտնուէր դրան առջեւ: Երկայն ու լայն թիին վրայ հացերը կը մտնէին փուռին մէջ, քիչ յետոյ դուրս դալու համար, ոսկեգօծ ու անուշահամ:

Մայրս ամէնուն կու տար իրենց բաժինը. դրացիները ախորժակով կ'ուտէին այդ թարմ հացերը:

Այս բոլորը յուզումով կը յիշեմ, հին օրերու քաղցրութեամբ, օրեր, որոնք անպարճ կերպով կորսուած են այլեւս մեզի համար :

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Հանգրիհել՝ ամփոփել, հաւաքել. ցարմաղ՝ բարակ մաղ. բաւալի՝ գւորիլ. ոգորում՝ կռիւ, պայքար. գօտեմարտիլ՝ կռուիլ:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Դիտած էք հաց եփելու գործողութիւնը.— Ձեր մայրերը հացը իրենք կը պատրաստեն, թէ պատրաստ վիճակի մէջ

դուրսէն կը գնեն.— Կրնա՞ք ամփոփ կերպով նկարագրել Հաց՝ պատրաստելու աշխատութիւնը.— Սլիւր ունենալու համար, կրնա՞ք թուել բոլոր աշխատաւորները, երկրագործէն սկսեալ.— Չեզմէ ո՞վ կը յիշէ դրացիներուն թարմ հաց բաժնեւոր սովորութիւնը.— Մեծ քաղաքներուն մէջ գոյութիւն ունի՞ն նման սովորութիւններ:

### 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Արդի հայերէնին մէջ բայերը երեք ձեւ վերջաւորութիւն ունին, եւ որ կը կոչուին լծուչութիւն: Այդ երեք վերջաւորութիւններն են՝ ել, իլ, ալ. դրեւ. խօսիլ. կարդալ: Ահաւասիկ անոնց խոնարհումը.—

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ

Կը գրեմ	Կը խօսիմ	Կը կարդամ
Կը գրես	Կը խօսիս	Կը կարդաս
Կը գրէ	Կը խօսի	Կը կարդայ
Կը գրեմք	Կը խօսինք	Կը կարդանք
Կը գրէք	Կը խօսիք	Կը կարդաք
Կը գրեն	Կը խօսին	Կը կարդան

(Ուրիշ օրինակներ սուսեւ կարգացուած հատուածներէն)


Կազմեցէ՛ք հիմնական նախադասութիւն սահմանական եղանակ ներկայ ժամանակի բոլոր դէմքերով, գործածելով *դրեւ*, *խօսիլ* եւ *կարդալ* բայերը:


Օրինակ՝ Հայերէն դասս կը դրեմ:

Ընկերոջս հետ կը խօսիմ:

Լրագրին մէջ յօդուած մը կը կարդամ:

Կրնա՞ք ընտրել, եթէ կ'ուզէք, ուրիշ բայեր, երեք վերջաւորութիւններով:





## Ա Ր Ա Գ Ա Մ

Մեր առջևն է Շիրակի այեծածան հարթութիւնը եւ լայնանիստ Արազածը, որ մօր մը պէս բազմեր է շրջակայքի բլուրներուն մէջ: Ան ոչ Մասիսի երկնասլաք ու խրոխտ վահութիւնն ունի եւ ոչ ալ անոր խիստ տեսքը: Արարատեան աշխարհի երկու հսկաները ոչ մէկ բանով իրարու կը նմանին: Մինչդեռ մէկը վիրաւորուած դաժան ծեր իշխանի կը նմանի եւ սակայն չուզեր գլուխ ծռել բախտին առջեւ եւ իր բարկութեան մէջ աշխարհը կ'ստէ, կ'ապրի հոյակապ մեհուքեան մէջ ու ժլատ է բարիքով, միւսը՝ Արազածը անյիշաչար մայր մըն է, բարի ու գթոտ, որուն ձեռքերը բաց են բարիքի համար, որուն ճակատի խորշումները միշտ ժպիտ ունին իր ստուերներուն տակ կծկոտած բլուրներուն, իր կուրծքին թառած գիւղերուն համար:



Անո՛ւշ Արագած . . .

Ամէն ինչ մեղմ է անոր արտաքինին մէջ. թէ՛ կատարները, որոնք անոր շուրջ բոլորուած են եւ անոր դիտուն թափ կաղմած. թէ՛ ձորերը, ուր վայրէջքները զգուշութեամբ կախուած են, որպէսզի վերեւը անկարելի չդառնայ. թէ՛ ժայռերը, որոնք ամուր հստած են անոր կուրծքին, որպէսզի վար չիյնան:

Արագածը հովիտներ ունի, ջրաշատ ու հարուստ, սիրուն դարաւանդներ, կանաչ պուրակներ, փապարներ, խոխոջուն ջրեր, որոնք քարերուն տակէն կաթի պէս կը հոսին եւ կը թրջեն անոր դեղեցիկ կուրծքը:

Շինարար եւ աշխատաւոր հայ գիւղացին դժգոհ չէ Արագածէն: Ան կը վարէ ու կը ցտնէ, իր հողին կը խառնէ անոր հողիին եւ կը պաշտէ իր լեռը, հարազատ մօր մը պէս:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ



ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՆԵԱՆ

Ա. ԱՀԱՐՈՆՆԵԱՆ. — Ռուսահայ շաշմանաւոր գրադէտ: Ծնած է 1866ին Իգդիրի մէջ: Թիֆլիսի «Մշակ» օրաթերթին մէջ սկսած է գրել Կովկաս գաղթող Հայերու կեանքէն յուզիչ պատկերներ: Աշխատակցած է բազմաթիւ թերթերու: Ժամանակ մը Եւրոպայ մնացած է եւ իր ուսումը կատարելագործած: Ունի բազմաթիւ հատորներ՝ «Ազատութեան ճանապարհին», «Արազը», «Մրրիկի սուրբը», «Լուս-

թիւնը». «Արցունքի հովիտը» թատերախաղ, «Բաւարացիներ», «Կարօտ Հայրենի» եւ «Իմ գիրքը» երկու հատոր ինքնակենսագրութիւն:

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ


Այնքանով, ալիքներու պէս ծածանող, շարժող. լայնամիտ տարածուած. Երկնայաց գէպի երկինք սւայող, բարձրացող. խոյս՝ անվախ, համարձակ, յանդուգն. դաժան խիտ. մեծութիւն՝ միակուլիւն, առանձնութիւն. ժլատ կծծի, խնայող. խորում՝ ծաւր, փոթ. դարաւանդ՝ Լերան կողին գուրս երկարած հարթութիւն. պուրակ՝ փոքր անտառ. փայլար՝ խորշ, ճեղքուածք:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Այս հատուածին մէջ Հայաստանի ո՞ր լիբան մասին է  
խօսքը.— Արագածը ի՞նչ տարբերութիւն ունի Արարատէն.—  
Հայ գիւղացին ինչո՞ւ համար Արագածը հարազատ մտյր  
մը կը նկատէ:

### ԱՌԻԻԾՆ ՈՒ ԱՐՋՈՒԿԸ

Առիւծն արքայ, վերին պետ էր.  
Չէր աշխատեր, միայն կ'ուտէր:  
Սնասուններն անոր համար  
Կը բերէին որսեր յարմար:  
Պետն եղած էր պարարտ ու դէր,  
Սնտանելի մի շատակեր:



Միշտ աւելին կը պահանջէր,  
Քիչ բերողին շատ կը տանջէր:  
Ժողովի մէջ, մի օր, ըսաւ.  
— « Ձեր հանդիստի ժամը հասաւ,

Հըպատակներս, վեց ամիսէն

Հըրաժարիմ պիտի միսէն :

Պիտի ոչինչ լափեմ, ծամեմ :

Տասը տարի պիտի ծումեմ :

Պիտի տամ ձեզ բաժինս արդար...»

Արջուկ մ'ըսաւ . — «Ատ ըսածիդ չեմ հաւատար :»

Շարունակեց արքան իր ճառ .

— « Կ'ընեմ ըսածս ես անպատճառ :

Ձեր փորն պիտի ըլլայ միշտ լիք .

Պիտ' ունենաք շատ սւտելիք :

Օրն երեք հեղ առատ սեղան ,

Որսերն անուշ՝ պիտի տեղա՛ն...

Պիտի որսամ ես անդադար :»

Արջուկն ըսաւ . — «Ատ ըսածիդ չեմ հաւատար :»

Շարունակեց արքան իր ճառ .



— « Վըկայ ըլլայ թող այս կանառ ,

Պիտի ընեմ ձեր կեանքն ուրախ ,

Ամէն գիշեր խընջո՛յք , խըրախ...

Պիտի ճաշէք անյագարար .

Պիտի դառնաք մեծ խըմբապար :

Կր խոստանամ երբ ու կիթառ :»

Արջուկն ըսաւ . — «Ատ ըսածիդ չեմ հաւատար :»

Արքան Եղած էր հոետար .

— « Ձեզ մեկեմաւ կ'ըլլամ , մեհտո՛ր... :

Կան որ կ'ընեն լայն, լայն խոստում,  
 Վերջն ալ լայնքէն կ'ընեն ոստում:  
 Թէ կը սըտեմ, բիւր մեղք կըրեմ...  
 Խօսքս արիւնով կը ստորապրեմ՝  
 Բարիքս յիշուի թող դարէ դար:»

Արջուկն ըսաւ. — «Ատ ըսած իդ չեմ հաւատար:»

Առիւծն ըսաւ այդ արջուկին.

— « Թէ ընդմիջես ճառքս կըրկին,  
 Քու արիւնըդ կը դատարկեմ,  
 Քեզ վեց տարի կը բանտարկեմ,  
 Օրը վեց ժամ քեզ կը տանջեմ,  
 Լեզուդ, աչքերդ ալ կը ջընջեմ...»

Դեռ պատիժներ չատ գէչ կու տամ...:»

Արջուկն ըսաւ. — «Ատ ըսած իդ կը հաւատամ:»

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Պարտա՞ գիրցած, գիրուկ. ծովնլ՝ ծամ պահել, չուտել.  
 Կանառ՝ ատեան, Ժողով, բազմութիւն. խրախ՝ կերուխում,  
 ուրախութիւն, անյազարտ՝ աւանց կշտանալու. հաճօր՝ լաւ  
 խօսող. մեճօր՝ առաջնորդ. ընդմիջել՝ ընդհատել, կէս ձը-  
 դել, խօսքը կտրել:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Ի՞նչ տեսակ կենդանի է առիւծը.— Ո՛ւր կը բնակի.—  
 Ի՞նչ՞ համար կենդանիներուն թագաւորը կոչած են առիւծը.  
 — Ի՞նչ ըսաւ ան օր մը իր հպատակներուն.— Արջուկն ի՞նչ  
 կը պատասխանէր ամէն անգամ որ կը խօսէր առիւծը.—  
 Ըի՛շդ էր արջուկին վերջին պատասխանը:

### 3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

ՄԵԿԵՆԱՄ.— Այս բառն առնուած է Հռոմայեցի աղ-  
 նուականի մը, ասպետ Չիլնիոս Մեչեհնասի անունէն: Այս

ագնուականը նիւթապէս ու բարոյապէս կը պաշտպանէր ժամանակակից մտաւորականները: Իրմէ վերջ՝ «Մեկենաս» կոչուած են բոլոր անոնք, որոնք պաշտպանած էին գրականութիւնն ու գեղարուեստները եւ օգնած են անոնց զարգացման:



ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿ-  
ԹԱՇԼԵԱՆ.— Ծը-  
նած է Բերա 1898ին:  
Յաճախած է Բերա-  
յի նախակրթարանը:  
Սկսած է գրել 10-  
12 տարեկանին, նախ  
երգիծաբանական եւ  
յետոյ տուած է բա-  
նաստեղծութիւն-  
ներ: Աւելի վերջը  
նուիրուած է արձա-  
կին: Հրատարակած է  
«Սիդոննա», «Ռապ-  
պի», «Երգիծական»,  
«Հիւանդութիւն»,  
«Ծաղրանկարներ»,  
«Հայ Աղբրտիք»,  
«Լուլուտի», «Ծի-  
րանի գօտի», «Եր-  
գիծավէպեր» եւ  
«Ընկեր Շահազար»  
հատորները:



# Մ Ա Յ Ր Ս

## 1

Մինչդեռ մանուկ էի, հայրս մեռաւ, որը մնացի, բայց որբութիւնը չճանչցայ, այնչա՛ր սէր եւ անձնուիրութիւն ցոյց կու տար մայրս. անիկա իր գաւաղներուն համար կ'աղբէր, որովհետեւ ո՛չ հաճոյք եւ ոչ բաղձանք ունէր իր անձին համար: Կեանքս հանդարտօրէն կը սահէր ընտանեկան ակոյորբաւէտ յարկին եւ մայրենի սիրոյն հովանիին տակ:

— Մայր, կ'ըսէի, ս՛րչափ քաղցր է քեզի պէս երգական ծնողք մը ունենալը:

— Զաւաղս, կը պատասխանէր համեստութեամբ, ամէն մայր ինձի պէս է:

Եւ ես անհամբերութեամբ կը յարէի.

— Եթէ տեսածիս ու դատածիս վրայ պիտի հիմնեմ կարծիքս՝ ըսածդ տարակուսելի է: Արդարեւ մայրութիւնը սիրոյ եւ անձնուիրութեան հանք մըն է, բայց աւելի նուազ կամ ընտիր տեսակէ չի՞ կրնար դոյսանալ այդ հանքը:

Երբեմն ան՝ իր մահուան ակնարկութիւն կ'ընէր. ես սոսկալով թող չէի տար որ խօսքը առաջ տանի:

— Ի՛նչ, կ'ըսէր զարիուրելով, կ'ուզե՛ս որ ես դատապարտուիմ վրադ լալու, աղջիկս, մտածէ անդամ մը թէ որչափ անդուծ է քու բաղձանքդ: Աստուած լաւ կարգադրութիւն մը ըրած է, աշխարհէս դուրս ճամբորդելու առաջնութիւնը ծնողքներուն սահմանելով:

Եւ ես նեղանալով, իր խօսքը կ'ընդհատէի, չուզելով

անսալ այդ խորհրդածութիւններուն, որոնք ծանր հարուած մը կու տային սրտիս :

2

Մինչդեռ տարիներու հետքերը կը դիզուէին մօրս սպիտակ գլխուն վրայ, անոնց ծանրութիւնը հոգիս կը ճնշէր եւ ամէն անգամ որ տարի մըն ալ անցնէր, կ'ըսէի ինքնիրենս . « Աստուած այս տարի ալ մայրս ինծի պարզեւեց, երանի՛ յաջորդ տարի ալ կարենայի նոյնը ըսել » :

Երբ մարդ կեանքի դազաթին կը մօտենայ, ալ ամէն մէկ քայլ վտանգաւոր կը դառնայ, որովհետեւ ան կորսնցուցած է իր անձնական ուժը, եւ սխալ կամ տրկար քայլ մը դիւրաւ կրնայ դայն կեանքի վիհին մէջ գլորել :

Վախնալով կը նայէի այդ դազաթին, ու կը մտածէի թէ արդեօք մայրս պիտի կրնամ՞ հասնիլ անոր :

Իայց մինչդեռ մայրս իր ճամբան կը շարունակէր, յանկարծ քայլերը դեղեւեցան : Մեծ եղաւ անոր կրած ցնցումը, սարսափելի եղաւ հետեւանքը մեզի համար :

Ո՛հ, մօրս կեանքը յատակ եւ դեղեցիկ լիճ մըն էր, որուն հանդարտ եւ շողշողուն ջուրերը կը նսեմանային յաճախ մահուան քուլս պատկերներով :

Հիմա ի գո՛ւր շուրջս կը նայիմ, մա՛յր, ի գո՛ւր գրեց կը փնտտեմ, եւ երբ կը մտածեմ թէ ալ պիտի չըտեսնեմ գրեց՝ կարծես թէ միտքս կը ցնորի :

Ամիս մը անցաւ այն դարհուրելի օրէն ի վեր, ուր բերանս մայր անունը հնչելէ դադրեցաւ : Եւ սակայն ո՞րչափ քաղցր կը հնչէ այդ անունը :

ՍՐԹՈՒՀԻ ՏԻՒՍԱԲ

1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Բաղձանք՝ փափաք, իղձ, կարօտ. անդորուէ՞՝ խաղաղ. եզական՝ մէկ հասակ. յարեյ՝ միացնել, Տոս՝ խօսիլ. Կարա- կուսելի՝ կասկածելի. զարհուրիլ՝ խիտ վախնալ, սարսափել. անալ՝ մտիկ ընել, հնազանդել. վիհ՝ անդունդ, խորունկ փոս. դեղելի՝ ասդին անդին շարժիլ, երերալ. Կսեմանալ՝ մթըննալ. բուխ՝ սեւ, մուկ գոյն. Ի զուր՝ պարագ սեղ. ցնարիլ՝ շուարիլ. իրմէ դուրս ելլել:


2 . ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Դուք ալ կը սիրէք ձեր մայրը, ինչպէս սիրած է այս գրուածքին հեղինակը իր մայրը.— Մայրութիւնը ինչ սե- սակ հանքի նմանցուած է հոս.— Ի՞նչ ըսել է «տարիներուն հետքերը կը դիզուին մօրս սփիտակ գլխուն վրայ».— Երջա- նի՞կ էք ձեր մօրը դուրգուրանքին աւարկայ դառնալով.— Ատոր փոխարէն ի՞նչ կը սպասէ ան իր գաւակներէն:

3. Բացատրել հետեւեալ խօսքին խմատը.—


Ռոյտ երջանկուրիւններուն մէջէն ամէնէն յիպարն է րնաանկան երջանկուրիւնը:

ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒՍԱԲ.— Ծնած է 1842ին Պոլիս: Մեր մէջ առաջին կին դրողն եղած է: Դրած է երեք վէպեր՝ «Մայտա», «Սիրանոյշ» եւ «Արաքսի», որոնք բոլորն ալ նուիրուած են կիներու ազատագրութեան դատին: Սրբուհի Տիւսաք մեծ ջանք տարած է նսեւ աղջկանց կրթութեան:



ՀԱՅՈՑ ԱՐԵՒԻՆ

Ո՛վ Հայաստանի վաղեմի արեւ,  
Շողա՛ հայրենի գաշտերուն վերեւ.  
Ահա՛ կը հասնի կենտարեր գարուն.  
Կապուտակ երկնի հըմայքին մէջջէն



ՀԱՅ ՀՈՂԱԳՈՐԾԸ

Ուր զըւարթ ցոլքեր միշտ կը դողդոջեն,  
Տո'ւր տաքուկ ողջոյնդ հայ մշակներուն:  
Ո'վ Հայաստանի վաղեմի արեւ,  
Շողա՛ հայրենի դաշտերուն վերեւ:

Անյագ կարօտով փառքիդ երկնատուր,  
Քե՛ղ կը սպասէ հոն գեղջուկին կըտուր,  
Ուր գեռ կը յաւէ սոսկումը ձմրան.  
Ոչխարն անհովիւ, դառնուկն անփարախ  
Աղապատանքովդ ըրէ՛ դուն ուրախ,  
Որ կայտուն դալար մարգերուն վըրան:  
Անյագ կարօտով փառքիդ երկնատուր  
Քեղ կը սպասէ հոն գեղջուկին կըտուր:

Ո'վ Հայաստանի վաղեմի արեւ,  
Շողա՛ հայրենի դաշտերուն վերեւ.  
Ճաճանչներդ անդուլ ցօղէ՛ ժպտաբին,  
Թո՛ղ երգեր լըսուին սարէն ու ձորէն,  
Հասնին, բողբոջեն խաղողն ու ցորեն,  
Հադուին սարտէղներն, արտերն և այգին:  
Ո'վ Հայաստանի վաղեմի արեւ,  
Շողա՛ հայրենի դաշտերուն վերեւ:

Հայ ճակատներուն վրայ ալ, անխրտիր,  
Անուշիկ արեւ, ճառագայթ մը դիր,  
Ճառագայթ մը սուրբ Յոյսի, Հաւատքի,  
Խորհուրդներուն մէջ քախծոտ ու մըռայլ,  
Սրսկէ՛ լուսագեղ կայծեր ու շառայլ,  
Որ հոն գիտակից խա՛նդ մը բորբոքի,  
Հայ ճակատներուն ալ, անխրտիր,  
Անուշիկ արեւ, ճառագայթ մը դի՛ր:

Հերի՛ք քաղցր աչքերն Հայոց մայրերուն  
Թափեցին առատ արցունք եւ արիւն ,  
Յամքեցուր զանոնք ուր ժպտին յաւէտ .  
Ջինջ աղբիւրներու , թուփերու մօտիկ  
Պար բռնեն մահչեր , կոյսեր խարտիկ ,  
Սիրոյ երգերով հեշտին , արփաւէ՛տ . . .  
Հերի՛ք քաղցր աչքերն Հայոց մայրերուն  
Թափեցին առատ արցունք եւ արիւն :

Ո՛վ Հայաստանի արեղակ , անշէջ ,  
Կորով դիր ամէն հայ սիրտերու մէջ  
Եւ՝ հըսարտ , խըրոխտ , անկըւան հողի՛  
Որ հայրենիքին , հողի՛ն անձնըւէր՝  
Հայն ապրի ազատ , մի՛շտ զըլուխը վե՛ր ,  
Ըստրուկ , լուռ գերի չըլլայ ս՛չ սքի . . .  
Ով Հայաստանի արեղակ , անշէջ  
Կորով դիր ամէն հայ սիրտերու մէջ :

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ



### 1. ԲՍՈՒԵՐՈՒ ԲՍՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Վաղեմի՛ հին, հնուց. Խմայի՛ հրապոյր, շնորհ, յամեյ՛  
ուշանաւ. ատեն անցընել. աղապաւսնի՛ գուրգուրանք, սէր,  
կարեկցութիւն. անդուլ՛ անդադար. անխափ՛ առանց խտրու-  
թեան, առանց տարբերութեան, ամէնը մէկ. քախձո՞ս՝ տըր-  
տում, ախուր. մռայլ՛ մուրթ. լուսագեղ՛ լոյսով ողողուած,  
լեցուած. ճառայլ՛ ժառագայթ. յաւէ՞ս՝ միշտ. խորոհիկ՛  
զարդարուն, գեղեցիկ. արփաւէ՞ս՝ արեւոտ. անեւջ՛ անմար.  
խոթիս՞ յանդուգն. համարձակ. աննուան՛ անյաղթելի:

2. Արձակի վերածելէ յետոյ դոց արտասանել այս  
ստանաւորը:

### 3. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Որո՞ւն ուղղուած է այս ստանաւորը.— Արեւին իմաստը տուող ուրիշ բառ մը ունի՞նք մեր լեզուին մէջ.— Ձեզմէ ո՞վ կը յիշէ կրօնաշունչ գեղեցիկ այն բանաստեղծութիւնը, որ ուղղուած է Արեգակին, առտուան լոյսին, եւ որ կ'երգուի մեր եկեղեցիներուն մէջ.— Կրնա՞ք քանի մը բառերով բացատրել թէ ի՞նչ կը սպասենք մենք արեւէն, եւ ի՞նչ կը սպասեն մեր հայրենի դաշտերը, սարաէզներն ու այգիները:

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ.— Գրական ծածկանունով Ալփաստան, ծնած է 1858ին: Շատ կանուխէն սկսած է աշխատակցիլ «Բուրասան Մանկանց» շաբաթաթերթին: Ծանօթ էր իբրեւ բանաստեղծ եւ ստանաւորի լաւագոյն թարգմանիչն էր: Լայս ընծայած է «Շողեր ու Յօղեր» եւ «Ազատ Բնար» քերթուածներու հատորները: Մտանաւորաբար մշակած է երգիծական ստանաւորի սեռը:

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ - ՎԻՃԱԿ

### 1

Հայ ժողովուրդի սիրած սովորութիւններէն մէկն է Համբարձման տօնին վիճակ հանելու արարողութիւնը, որ տեղի կ'ունենայ մասնաւոր հանդիսաւորութեամբ:

Վիճակ հանել կամ վիճակ ձգել կը նշանակէ դուշակել, կարգալ մէկու մը ճակատողիրը, բախտը:

Համբարձման տօնին հետ կապուած այս սովորութեամբ՝ հայ երիտասարդն ու երիտասարդուհին ո՛չ միայն կ'ունենան հաճելի ժամանց մը, այլ եւ կը հիւսեն լաւագոյն ապագայի իրենց երազները:

Վիճակ հանելու սովորութիւնը անմիջական կապ չունի Համաստձման քրիստոնէական տօնին հետ: Հաւա-

նօրէն առաջինը կու գայ շատ հին դարերէն, հեթանոսական շրջանէն: Ինչպէս ժողովրդական բազմաթիւ ուրիշ սովորութիւններ՝ քրիստոնէութեան Հայաստան մուտք գործելէն յետոյ կապուեր են եկեղեցական տօներու, այնպէս ալ վիճակը կապուեր է Համբարձման տօնին:

Վիճակի սովորութիւնը բնութեան, մասնաւորաբար ծաղիկներու պաշտամունքին մէկ արտայայտութիւնն է: Հեթանոսութեան շրջանին՝ բնութեան ամէն մէկ երեւոյթ, աւելի կամ նուազ չափով, պաշտամունքի առարկայ էր եւ ունէր իր յատուկ աստուածը: Շատ բնական է որ բնութեան եւ մասնաւորաբար ծաղիկներու տօնը կատարուէր գարնան: Եւ որովհետեւ Համբարձման տօնն ալ միշտ կը գուգադիպի այդ եղանակին, ժողովուրդը վիճակի սովորութիւնը կապեր է այդ տօնին եւ մեր Հայրապետներն ալ ատոր մէջ որեւէ անպատեհութիւն չեն տեսեր:

Վիճակը շատ ընդհանրացած տօնակատարութիւն մըն է հայ ժողովրդական խաւերուն համար, ըլլան անոնք քաղաքներու թէ գիւղերու մէջ բնակող: Այս տօնակատարութիւնը տեղի կ'ունենայ սովորաբար բնութեան ծոցը, բաց դաշտի մը մէկ ծառաստանին կամ պուրակին մէջ: Քաղաքներու բնակիչները, եթէ յարմարութիւն չունին երթալու նման վայր մը, կ'ընտրեն պարտէզ մը: Վանքերու բակերը եւ այլ սրբատեղիներու մօտիկ ինկած յարմար վայրերն ալ ուխտաւորներու կողմէ կը յատկացուին նոյն նպատակին:

Համբարձման հինգշաբթիին նախորդ օրը, չորեքշաբթի, երիտասարդներն ու երիտասարդուհիները պարտէզներէն ու դաշտերէն կը հաւաքեն եօթը տեսակ ծաղիկներ, կը կադմեն եօթը փունջեր եւ կը դնեն վիճակի համար որոշուած ամանին մէջ:

Նոյն օրը, եօթը տարրեր պարբերէ կամ առուէ ջուր կը բերեն ու կը լեցնեն նոյն ամանին մէջ: Կը խառնեն նաև փոքրիկ քարեր, խիճեր:

Այդ ամանը գիշերը կը դրուի բաց երկինքի տակ, որպէսզի աստղերէն ստանայ Հրաշքի Գիշերուան բարիքներն ու օրհնութիւնները, դիւթական զօրութիւն մը՝ բախտեր կարդալու եւ շնորհներ բաշխելու:

Եւ այդ գիշերը իրենց կատարումին կը հասնին բոլոր իպճերը:

Հինգշաբթի առտու վիճակ կազմակերպողները կը պտըտին տունները, օրհնեալ ամանէն կը բաժնեն ջուր, խիճ, ծաղիկ, փոխարէնը իրենց խնճոյքին համար ստանալով կարագ, հաւկիթ, ալիւր կամ սպտրաստ խմորեղէն, ինչպէս նաև զանազան առարկաներ (մատանի, զմեղի, մատնոց, եւայլն), մասնաւորաբար երկսեռ երիտասարդներէն:

Նոյն օրը, եկեղեցական արարողութիւններէն յետոյ, բոլորը կը հաւաքուին նախապէս որոշուած վայրը ու շրջանակաձև կը նստին գետինը՝ ձեծերն ու փոքրերը:

Հետուէն կը լսուի վիճակ կազմակերպողներու երգին ձայնը: Քիչ յետոյ կը նշմարուի նաև թափօրը, որ կ'առաջնորդուի Վիճակ-Հարսին կողմէ:

Վերջինը փոքրիկ ազջիկ մըն է, հարսի մը պէս հագուած եւ երեսը քօղով ծածկած: Անոր ետեւէն մեծ ազջիկ մը կը բերէ վիճակին ամանը:

Երբ թափօրը կը հասնի որոշուած վայրը, Վիճակ-Հարսը կը նստի բազմութեան կազմած շրջանակին մէջտեղը: Անոր առջեւ կը դրուի վիճակի ամանը: Թափօրին մաս կազմողները կը շարուին անոր շուրջը, սովո-

բարար բաժնուած երկու խումբի, երիտասարդուհիներ  
եւ երիտասարդներ, որոնք փոխնիփոխը կը հնչեցնեն  
վիճակի յատուկ եղանակը:

Ամէն մէկ քառեակի աւարտումէն յետոյ, վիճակ -  
Հարսը ամանին մէջէն կը հանէ ասարկայ մը, որուն  
տիրոջը կ'երթայ ատկէ առաջ երգուած քառեակին բո-  
վանդակութիւնը:

Արարողութիւնը կը շարունակուի այսպէս, մինչեւ  
որ համանին վիճակի ամանին մէջ զրուած ասարկաները  
եւ անոնց տէրերը լսեն իրենց բախտը զուչակող քառ-  
եակը:

Յետոյ կը սկսին ընդհանուր զուարճութիւնները՝  
զաչտապնացութեան մը յատուկ արտայայտութիւննե-  
րով, — կերուխում, երգ ու պար:

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Արարողութիւն՝ բան մը ընելը. հերանոսական՝ հե-  
թանոսի յատուկ, կուսպաշտական, պագսամունք՝ կրօնական  
արարողութիւն. Հայրապետ՝ հայ եկեղեցիին գերագոյն պե-  
տը. սերիշ բառով՝ կտթող իկոս. անպագեհուրիւն՝ անպատշա-  
ճութիւն. պուրակ՝ փոքրիկ անաս. դիւրական՝ սքանչելի,  
հրաշալի, կախարդական. բախիւն՝ բաժնել. իդձ՝ փախաք.  
փոխնիփոխ՝ կարգով. քառեակ՝ չորս տողով տաղաչափուած  
քերթուած:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ի՞նչ կը նշանակէ վիճակ հանել.— Համբարձման տօնին  
վիճակ հանելու սովորութիւնը ս'ը պարիքն մնացեր է մեր  
մէջ.— Ո՛ւր անդի կ'անհնայ այս սովորութիւնը.— Կրնա՞ք  
քանի մը բառերով պատճել վիճակի արարողութիւնը:

\*

3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՍԱՀՄԱՆՍԱԿԱՆ ԵՂԱՆՍԱԿ

Անկասար

Կը գրէի	Կը խօսէի	Կը կարդայի
Կը գրէիր	Կը խօսէիր	Կը կարդայիր
Կը գրէր	Կը խօսէր	Կը կարդար
Կը գրէինք	Կը խօսէինք	Կը կարդայինք
Կը գրէիք	Կը խօսէիք	Կը կարդայիք
Կը գրէին	Կը խօսէին	Կը կարդային

ԳԻՒՂԻ ԿԱՐՕՏ

Չորակի մը մէջ, գի՛րկը լեռներուն,  
 Կամ հարթ ու կանաչ գառաի մը վըրան,  
 Այս ալեկոծ ծով քաղաքէն հետուն,  
 Գիւղի մը կեանքին սրտ'ը ու նուիրական,  
 Ես կարօ՛ւն ունիմ, խորունկ, անսոհման :

Ողջո՛յն գիւղական ջինջ արչււյսին,  
 Մըշակին խոնարհ եւ իր եղներուն,  
 Անշըպար, կայտառ, ամօթիսած կոյսին,  
 Շաղտա կանաչին՝ բի՛ւր ծաղիկներուն,  
 Հօտին, հօտաղին՝ ողջո՛յն ամէնուն :

Ողջո՛յն միտյարկ, ցա՛ծ տանիքներուն,  
 Փըսիաք ին նըստած, մանուղ մամիկին,  
 Բուխերիկներու ծուխին սյուրուն,  
 Ծատերու պըտղին, վըճիտ աղբիւրին,  
 Յըմծուն պարերուն, սըրինդի երգին :

Կը լըսե՛մ, կարծէք, դողանջը գանդին,  
 Ու կը տեսնե՛մ ես ժամւորներ փութիկառ,

Որոնք կ'երթան լուռ, ծունդ մը աղօթքին,  
Փողոցներէն նեղ, խաղաղ, ըստուերոտ,  
Վերջալուսային պահուն խընկահոտ:

Զորակի մը մէջ, զի՛րկը լեռներուն,  
Կամ հարթ ու կանաչ դաշտի մը վըրան,  
Այս ալեկոծ ծո՛վ քաղաքէն հեռուն,  
Գիւղի մը կեանքին պարզ ու նախնական,  
Ես կարօ՛տն ունիմ՝ խորունկ, անսահման:

### Օ. ԶԱՐՄՈՒՆԻ

★



Օ. ԶԱՐՄՈՒՆԻ.—  
Ծնած է Մալկարա,  
1905ին: Բուն անունն է  
Օննիկ Արամայիս Բա-  
նիկեան: Նախնական ու-  
սումն առած է Ծննդա-  
վայրի եւ երկու տարի  
ալ Ռոտտոթոյի ազգա-  
յին վարժարաններուն  
մէջ:

1929էն ի վեր ուսու-  
ցիչ է:

Հրատարակած է բա-  
նաստեղծութեան չորս  
հատորներ «Ծաղիկ կը  
փետտեմ», «Գորշ եր-  
կընքի տակ», «Երգ յա-  
ւերժական» եւ «Ածու»:

\*

Օ. ԶԱՐՄՈՒՆԻ

1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Այլեկո՞ժ՝ ալիքներով ծեփուած. ջիւն՞ յստակ, մաքուր,  
պայծառ. անօպար՝ առանց ծեփի, պարզ. բիւր՝ անթիւ.  
անհամար, շատ (ունի նաեւ տասը հազարի իմաստ). փք-  
օքաք՝ յարդէ ջինուած փռոյ. ցնծուն՝ սրախ. դօղանց՝  
զանգակին ձայնը:

2. Արձակի վերածել այս ոտոնաւորը եւ յետոյ սեղազբել:

3. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Կառարեալ անցեալ

Գրեցի	Խօսեցայ	Կարդացի
Գրեցիր	Խօսեցար	Կարդացիր
Գրաց	Խօսեցաւ	Կարդաց
Գրեցինք	Խօսեցանք	Կարդացինք
Գրեցիք	Խօսեցաք	Կարդացիք
Գրեցին	Խօսեցան	Կարդացին



ՍՈՒՐԲ ՇՈՒՐՋԱՌԸ

Աւանդութիւնը կը պատմէ թէ Եօթը քայրեր էին ա-  
նոնք, Եօթը ծաղկատի աղջիկներ, որ թեւթեւի, հնար-  
ժէք դօտի մը կը ձեւացնէին: Եւ անոնք հիւսեցին սըր-  
բաղան շուրջաւոր:

Աւանդութիւնն է սա՛ զեղակերտ, թանկազին շուր-  
ջառի մը, որ Եօթը Հնդկահայտուհիներու  
կողմէ հիւսուած ու նուիրուած է Ակնայ  
Ապուշէիս զիւղին եկեղեցիին: Այժմ Գուս-  
Գաիուի Մայր Եկեղեցիին մէջ պահուած  
է, եւ անով կը զգեստաւորուի պատարապ-  
ւոր Պատրիարքը զատկական տօներուն:



Ինչպէս հիւսեցին, ոչ ոք դիտէ : Ծարիր ու հիմայ, գառիկ ու ոսկի, ապրշում ու ծամթել ունէին անոնք իրենց ձեռքը, եւ ուրիշ ոչինչ: Սակայն, Հայաստանի քարկ սիրովը լցուած, անոնց սիրոյն մէջ ծորեցաւ կենդանի պայծառութիւնը, զոր սրակեցին շուրջաւին վրայ, եւ անոնց հոգիին մէջ բխեցաւ կախարդական դողը, զոր առին սրբազան պապստառին :

Ահա թէ ինչո՛ւ մեհեմակաւ այդ պատմուհաւը սիրելի է Հայոց :

Եօթը քոյրեր էին անոնք, Եօթը դեղանի աղջիկներ, որոնք այսպէս կը կոչուէին. — Անահիտ, Կիւլնար, Շահսէնէ, Սաթենիկ, Լուսնազան, Սուլթանիկ ու Տենջալի :



Հայաստանի արեւալիառ այգիներէն կթուած ողկոյցն է ան, Յուլիսի մեր անձրեւները միւսո՞ն են լեցուցեր վրան, ո՞վ է յօրիներ այդ սղկոյղն աստղատառ, նարդոսեղէն իւզերու թափանցկոտութեամբը, կոյսերու աչքին ողջութեամբը, կրակներու շարժուն փայլերովը, կանաչ նայուածքով շուրջաւին վրայ, որ նման է մեր լա՛յն լա՛յն այգիներուն : — Տէ՛ր, Ես այդ Հայրենի այգիներուն մէջ գինովցող գաւա՛կն եմ, ահա թէ ինչո՛ւ, կը դողա՛մ :

Ու վերէն, լոյսի աղբիւր մը բարակ ծամերու խուրձ մը կը նետէ վար, եւ կը դդուէ սղկոյղին պատկերը՝ ծունկի մը կլորութեամբը, որ Անահիտինն է :

Երկինքը, քնացող աղջկան՝ Կիւլնարի երեսին նման, հաճելի ու խաղաղ : Այգին կապոյտ է Շահսէնէի աչքերուն պէս, եւ խո՛ր, եւ խո՛ր : Ողկո՛յղը, մարմար լոյսերուն պէս մոմին՝ խիտ ստեղծերով աշտանակի մը վը-

րայ, նման Լուսնադանին: Սաթենիկ կը քլօքայ սակիին  
ու շողերուն մէջէն, Սաթենիկ կ'ըջի քեզի, ու կը կա-  
խարդէ քեզ:

Հեթանո՛ս պատմուճանը կանաչ ջուրերու նման կը  
զողայ, ծուփ ու զող կ'առնէ, եւ քաղցր, յաւիտենա-  
կան, անկորնչելի բոյր մը շունչի նման կ'եւլէ, քեզ կը  
զինովցնէ, կ'ուժարալիէ, եւ զուն ազօթողի պէս,  
տկա՛ր ու լալկան, ծունկի կու զաս, աչքերդ կը վեր-  
ցնես երկրիդ կարօտներուդ դէմ, որովհետեւ երկրիդ  
մէկ պղտիկ յիշատակը աւելի հզօր է քան մարդոց բոլոր  
ըմբռնումները, հեթանոս եւ քրիստոնեայ: Եւ Տենջա-  
լի շուրջառին է տուեր իր հեռաւոր երկրին քաղցր մէկ  
ծաղկին խաղաղարար շունչը, որ անոր վրայ կը ծփայ  
յաւէտ, ինչպէս Եհովայի հողին կը շրջէր նորաստեղծ  
իր աշխարհին վրայ: ՇԱԽԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ճայկասի՛ ծաղիկ, երիտասարդ տարիք ունեցող. **Գեղա-**  
**կերս՝** դեղեցիկ շինուած. **ձաբիբ՝** աչքերուն քսուելիք դեղ-  
**հիմայ՝** կարմիր հող մը, որով արեւելքի մէջ իրենց մաղերն  
ու եղունգները կը ներկեն. **գառիկ՝** թուղթէն աւելի բարակ  
ոսկիէ կամ արծաթէ նիւթ մը. **ապրեում՝** մեծ սո. **ձորիլ՝** հո  
սիւ. **վազել. արսկիլ՝** ցանեւ. **ցողեւ. պասառ՝** կառ. **գործուածք.**  
**մեհեմական՝** մեհեմանի վերաբերեալ, նուիրական. **պամու-**  
**նան՝** վրայի երկար եւ լայն դգեստ. **յսասու** արեւելքցիներու.  
**արեւափառ՝** արեւի նման լուսաւոր. **նարդա՝** անուշաճատ ար-  
մատ. **բեջայ՝** խնդալ. **կախարդիլ՝** հրապուրեւ. **ուժարալիլ՝**  
ուժէ իյնալ. **տկարանալ. խաղաւարար՝** խաղաղութիւն բերող:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Ասորդութիւնը ինչ կը պատմէ նուիրական շուրջառին  
մասին. — Որո՛նց աշխատութեան արդիւնքն է այդ գործուած-  
քը. — Ի՛նչ բաներ գործածեցին. — Ո՛ւր կը գործածուի շուր-

ջառը եւ ս'վ կը կրէ իր վրան.— Դուք ալ տեսա՞՞ք էք շուրջառ :

3. Ուսուցիչներէն կը խնդրուի այս առթիւ բացատրել բարդ բառերու կազմութեան կանոնը, տալով մէկէ աւելի օրինակներ: Փնտրել եւ գտնել այս հատուածին բոլոր բարդ բառերը օրինակ՝ Ծաղկաթի (ծաղիկ եւ փի), հնարձէք (հին եւ արժէք), օտրջառ (շուրջ եւ առ, առնել բային արմատը) եւն:



**ՇԱԻԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ.**— Բուն աւուսնով Ասքանազ Այվազեան, ծնած է Արմաշ 1898ին: Յաճախած է գիւղին նուրիկեան վարժարանը: Կ'աւարտէնտել Փարիզի բժշկական համալսարանը: Լոյս ընծայած է « Հէքեաթներու Աւպոմ », « Մեղեդիներ », « Մեղեդիներ », « Երուսաղէմ », « Բաներ », Բաներ, ինչ բաներ », « Ծաղկամատեան » եւ « Նարգեան Շիթեր, Կանանչ Բաժակով », բուն ալ գրեթէ հէքեաթ եւ արձակ բանաստեղծութիւն, բացի « Նարգեան Շիթեր, Կանանչ Բաժակով » քն. որ կը պատկանի « Հայ Բոյժ » բժշկական ամսագիրը:

**ՇԱԻԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ**

բունակէ քննադատական ուսումնասիրութիւններ: Խմբագրած է նաեւ « Հայ Բոյժ » բժշկական ամսագիրը:



## ԻՆՉ ԲԱՆԻ ՄԷՋ Է ՍՓՈՓԱՆՔԸ



(ԶՐՈՅՑ)

Նշաւ որ այրի կնոջ մը մէկ հատիկ սրղին մեռաւ թողնելով իր մայրը, կինը եւ զաւակները մեծ սուգի եւ աղքատութեան մէջ:

Վշտահար մայրը սեւեր հազաւ, զնաց նստաւ զաւկին թարմ գերեզմանին վրայ, եւ լացաւ անմխիթար ու արիւն-արցունքով:

Առաւօտէն մինչև երեկոյ, երեկոյէն մինչև ուշ գիշեր, անօթի ծարաւ կը նստէր ան ծանր վիշտի տակ քարացած. միայն երբեմն երբեմն տեղէն վեր կ'ելլէր անքեղը նորողելու, որմէ ծուխը սլո՛ր սլո՛ր, հիւսուելով անոր հեծեծանքներուն հետ՝ վեր կը բարձրանար, կը ցրուէր գիւղին վրայ եւ կը մտնէր խրճիթներէն ներս...: Խեղճ կին, կ'ըսէին գիւղացիները իրարու, ի՛նչ կսկիծի հանդիպեցաւ...

Գիւղին փորձառու ծերունիները հաւաքուեցան գնացին գերեզմանատուն, վշտաբեկ մօր մօտ եւ ըսին անոր.

— Բաւական է լաս, ա՛յ խեղճ կին. լացով կորուսող չի վերադառնար. աշխարհիս օրէնքն է — ծնած ենք, պիտի մեռնինք. ով որ ողջ մնայ թող ան պարծենայ. մենք մահլինն ենք, մահը՝ մերը. պէտք է հաշտուինք աշխարհիս կամքին. տուն դարձի՛ր, սրբուկներդ ձեռքերդ կը նային. զնա՛, խնամէ՛ դանոնք, պարտքդ կատարէ՛. թող հանդուցեալը հանդիստ քնանայ, եւ երանի անոր, որ շուտ կ'ազատուի այս դտոն աշխարհէն:

Այսպիսի խելօք խօսքեր ըսին ծերունիները՝ սառն ու կնճռոտ ճակատներով. բայց սղաւոր մայրը գլուխը վեր չառաւ եւ աւելի դառն ու անախով լացաւ...

Հաւաքուեցան գիւղին հարուստները, դացին յուսահատ մօր մօտ եւ ըսին անոր.

— Բաւական է լաս. մեռնողը մեռաւ, ապրողը պիտի ապրի. որբուկներդ ապրիլ կ'ուզեն. տուն դարձի՛ր. վառէ՛ սճախդ, հաւաքէ՛ շուրջդ որբուկներդ, պահէ՛, մեծցու՛ր, եւ անոնք իրենց հօրը տեղը պիտի բռնեն ժամանակի ընթացքին. մենք ալ քու դուռ ու դրացիդ ենք, օտար չենք. քու որբերդ ալ մերն են. գիւղին առջև կ'երգնուենք, որ մեր որդիներուն պէս պիտի նայինք անոնց, մարդ պիտի դարձնենք... մխիթարուէ՛, տուն դարձի՛ր:

Բայց սղաւոր մայրը մտիկ չըրաւ անոնց խօսքին. գլուխը վեր չառաւ եւ կրկին աւելի անյոյս ու սրտամորմոք կուլար ու կուլար:

Այդ միջոցին ճամբորդ մը կ'անցնէր գիւղին մէջէն. լսեց սրտաբաւ լացը, սիրտը վիշտով լեցուեցաւ, եւ մօտեցաւ գիւղացիներուն, որոնք հաւաքուած էին թըշուառ մօրը շուրջը: Ծամբորդը գլուխը խոնարհեցուց, գրկեց սղաւոր մօր ստքերը, գլուխը դրաւ անոր ծունկերուն վրայ ու դառն ու խորունկ լացաւ:

Այդ ժամանակ որդեկորոյս մայրը գլուխը բարձրացուց, սրբեց արիւնալառ աչքերը, եւ սիրովանքի շող մը փայլեցաւ անոր գունատ ճակատին վրայ:

Ոտքի կանգնեցաւ եւ յուսադրուած քալեց դէպի իր հանգաժ օճախը...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



**ԱԻԵՏԻՔ Ի. ՍԱՀԱԿԵԱՆ.** — Արեւելահայ աշխարհի բանաստեղծ. սր ծնած է 1875ին. Ա. Ղեքսանդրոսյուլ: Մշակած է նաեւ արձակ բանաստեղծութիւնը արուեստագէտի խառնըլած քով:



Աշխատակցած է ռուսահայ եւ արտասահմանեան հայ թերթերու: Լոյս ընծայած է «Երգեր ու վէրքեր» խորագրով հատոր մը 1898ին, ինչպէս նաեւ «Աբու Լալա Մահարի», «Աշնան

**ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ**

Ծաղիկներ»՝ 1922ին, «Աղա Նաղար», «Հէքեաթը», «Հայրենի Աղբիւրից», «Սասմայ Մհերը» եւ ուրիշ բազմաթիւ քերթուածներ ու արձակներ, որոնք հատարներու մէջ չեն ամփոփուած: Արձակներէն յայտնի է «Ուստայ Կարօ» ընդարձակ վէպը:

**1. ԲՍԱԹԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ**

Սփոփանք՝ մխիթարութիւն. անրեղ՝ տաք մոխիր. վրասարեկ՝ վիշտէն տառապած, կտորած. անսփոփ՝ անմխիթար. սրհամուրմոք՝ սրտէն այրած, ցաւած. սրհամ՝ սրտէն քամուած, սպառած. կանգամ՝ մարած:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Վշտահար մօր սուգը մխիթարելու համար ի՞նչ ըսին  
 գիւղին փորձաւու ծերունիները եւ հարուստները.— Անոնք  
 կրցի՞ն մխիթարել որդեկորոյս մայրը.— Ճամբորդն ալ մը-  
 խիթարութեան նոյն խօսքերո՞վ ուզեց սփոփել մայրը.— Մը-  
 խիթարութեան կարօտ անձ մը խօսքէն աւելի ի՞նչ  
 բանի պէտք ունի:

ԶՐՈՅՑ. — Ժողովուրդին մէջ բերնէ բերան ըսուած  
 պատմութիւն, որուն մէջ երեւակայութիւնը եւ երբեմն հրա-  
 շալին մեծ դեր կը խաղան:

## ԿԱՔԱԻՆ ԶՐՈՅՑԸ

(ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ)

Չեմ գիտեր, արդեօք երա՞զըս տեսայ,  
 Ճամբորդ մը պատմեց ինձ պատահական,  
 Ճըջմարտութի՞ւն մը, թէ հէքեաթ է սա,  
 Զուրերու մըբմո՞ւնջ, ցրնո՞րք դիւրակամ:

Ա.

Ասկէ շատ ու շատ տարիներ առաջ,  
 Նայիրի դիւթիչ աշխարհին մէջ հին,  
 Ժողովուրդն արդար՝ Աստուծոյ առաջ,  
 Եւ Աստուած լսող՝ մարդոց խնդրանքին...  
 Նայիրի երկրէն մէջ պապենական,  
 Համեստ, գիւղական ընտանիք մը կար.  
 Ազատ լիսներու հովիւն էր տըղան,  
 Ու մտայն ալ տընպահ, պառաւած, տըկա՛ր:  
 Օր մը հովիւը երբ դաշտէն եկաւ,

Մայրը խօսեցաւ տըղուն չտիահասս .

— «Ձաւա՛կս, ահա իմ ժամը հասաւ,

«Պէտք է քեզ կարգեմ՝, տուն բերեմ մէկ հարս :

«Տես, ծերացեր եմ . ալ չեմ կըրնար ես

«Ոչ խըմօր քըլսել, ոչ թոնիր վառել .

«Կար ու կարկըտան աս ծեր օրերուս,

«Ալ շա՛տ դըժւար է, չե՛մ կըրնար ընել» :

Տըռան մօր կամքին հակառակ չեւաւ .

— «Ինչ որ դուն կ'ուզես, ա՛յդ ըրէ, մայրի՛կ» :

Նորէն իր հօտը լեռները տարաւ,

Սըրինդը շաւրթին՝ նուազով մեղմիկ :

Հովիւին մայրը եօթը դիւզ անցաւ,

Աղջիկ մը դըտաւ, հարս բերաւ իր տուն .

Եւ տըղան կարգեց ու երջանեկացաւ,

Գոհութիւն տարով դըթառաւ Աստծուն . . . :

Բ .

Օր մը կեսուրը շատ կանուխ ելաւ,

Ու հարսին ըսաւ . — «Ելի՛ր, շո՛ւտ ըրէ,

«Լեռներու ծայրէն արեւը իջաւ,

«Հաց չունինք տունը, խըմօրըդ թըրէ՛ :

«Ես ժամ պիտ' երթամ՝ հաղորդ աննելու,

«Երէկ Տէր-Հօրմէն խընդրեցի ես դա .

«Դուն ալ վարժըէ խըմօր թըրելու,

«Կեսուրըդ այսօր ե՛ւ կայ ե՛ւ չըկայ :

«Ուշագի՛ր եղիր, հարսի՛կ սիրահան,

«Նայէ՛, խըմօրըդ կակուղ չը ձըզե՛ս .

«Այիւրը քիչ է, դուռ ու հարեան,

«Սմէնքն այ աղքատ ու խըղճուկ մեզ պէս» :

Կարմիր կօշիկներ հագած ոտքերը,

Կարմիր քըքկալը իր քիթին կապած

Ի՛նչ ալիւր որ կար տոպրակին մէջը,  
Ան տաշտը լեցուց, թեւերը սաքտած:

Եւ առատօրէն

Ջուրին հետ խառնեց,

Ու խրմոր քըրեց:

Հարսը անփորձ էր, չափը չէր գիտեր,

Եւ կակուղ ինկաւ խրմորը անոր.

Տոպրակին մէջի ալիւրն էր հատեր,

Դուռ ու դրացի՝ ամէնքն ալ չըբուր:

Հարսը մըտաղբաղ, ահ ու սարսափով,

Ճար մը կը խորհէր՝ խրմորին յարմար.

Ու թոնիր մըտաւ հարսն այդ խորհուրդով,

Դիպուած մոխիրը մաքրելու համար:

Կը խորհէր հարսը, տըխո՛ւր, վարսնո՛տ,

Դիպուած մոխիրի փոշին հանելով.

Հապուտ, զարդարանք, ամէն ինչ մոխրոտ,

Ու սիրտն ալ փըշո՛ւր, ծըփծըփուն մէկ ծով...:

— «Ի՛նչ ընեմ, Աստուա՛ծ, կակուղ է, կակուղ

«Այս իմ խրմորըս. ալ ալիւր չըկա՛յ:

«Ո՛ւր տեղ պահեմ ես լամ այս սեւ դըլուխ:

«Ի՞նչ ընեմ, ո՛վ Տէր, կեսուրը՞ որ դայ:

«Ան ինձ պատուիրեց, որ ըղգոյշ ըլլամ,

«Խրմորըս, Աստուա՛ծ, կակո՛ւղ է, կակո՛ւղ:

«Ես հիմա անոր ի՞նչ պատասխան տամ.

«Ուր որ է կու դայ. խրմորս է կակուղ:

«Ինձի թեւեր տուր, թըռչիմ, հեռանամ,

«Կեսուրըս չեկած՝ լեռները իյնամ»:

Գ.

Այն հին օրերուն՝ ժողովուրդն արդար,

Ու Աստուած՝ լսող մարդոց խընդրանքին.

Զոյգ թեւեր զըրկեց հէ՛ք հարսին համար :  
Կարմիր կօշիկով՝ քըթկալը քիթին,  
Մոխրոտ հագուստով՝ խեղճ հարսը թըռաւ  
Սարերը ինկաւ . . . :

Դ .

Ու այն օրուընէ Հայ Աշխարհին մէջ,  
Կաքաւիկ դարձաւ մեր հարսը սիրուն :  
Նայիրի չըքնաղ արօտներուն մէջ,  
Սիս ու Մասիսի հըսարտ լանջերուն,  
Մի՛շտ կը ցաթկըռտէ, վարանո՛տ, տըրտո՛ւմ,  
Կաքաւիկ դարձած հարսը մեր սիրուն :

Ու արտերուն մէջ՝ մեր պապենական,  
Կը շըրջի անվերջ, երկչոտ, երազո՛ւն .

Որսորդի ձեռքէն մի՛շտ հալածական,

Կաքաւի երգը իր հէք շուրթերուն :

Ու երբ միտքը դայ խըմորը կակուղ,  
Ան սըրտի ցաւէն վեր-վար կը ցաթկէ,  
Կ'աւաղէ, կ'երգէ տըխո՛ւր, սրտաբո՛ւխ,  
Կաքաւի երգը՝ վիշտը անսպատում :

— «Կա՛յ-կա՛յ, կա՛յ, կա՛յ,

«Կակուղ ա, կակո՛ւղ,

«Կակո՛ւղ ա, կայ-կա՛յ» . . .

×

Եւ կ'ուզէ ըսել հարսը մեր անրախո՛տ

Կաքաւիկ դարձած ու հալածական .

— «Թըրած խըմորըս կակո՛ւղ է, կակո՛ւղ . . . :

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Յնոր՜ երազ, անիրական մտածմունք. դիւրական՜ սքան-  
 չեւի, հրաշաւի. բխել՜ թոնիրի մէջ հաց եփել. կարգել՜ ա-  
 մուսնացնել. ժամ՜ եկեղեցի. քրկայ՜ քիթի կապ. սարսել՜  
 ժողվել, ամփոփել. քրել՜ շաղել. չփաւոր՜ խեղճ, աղքատ-  
 վարանո՞ տարակուսող, անստոյգ. հէ՜ խեղճ. չֆնաղ՜ գե-  
 ղեցիկ. լաճջ՜ կուրծք. ցրջի՜ պտըտիւ. հրկչո՞ վախկոտ. ա-  
 լաղել՜ փսոսաւ. խղճաւ, լաւ. սրտարուխ՜ սրտէն բխած.  
 անպատում՜ չպատմուելիք:

### 2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Աւանդութիւն՜ պատմական դէպքերու բերնէ բերան  
 անցնիլը, աւանդուելը:

Նայիրի՜ հին ժամանակ Նայիրի կը կոչուէր Վանայ Հի-  
 ճին աւազանը, արեւելքէն հասնելով Ուրմիոյ Հիճին, իսկ  
 արեւմուտքէն Նփրատ գետի վերի հովիտին: Հայաստանի  
 նախկին անունը:

### 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

##### Բացարձակ Ապառնի

Պիտի գրեմ	Պիտի խօսիմ	Պիտի կարդամ
Պիտի գրես	Պիտի խօսիս	Պիտի կարդաս
Պիտի գրէ	Պիտի խօսի	Պիտի կարդայ
Պիտի գրեմք	Պիտի խօսիմք	Պիտի կարդանք
Պիտի գրէք	Պիտի խօսիք	Պիտի կարդաք
Պիտի գրեն	Պիտի խօսին	Պիտի կարդան



## ՄԵԾ ԱՂԲԻՒՐԸ

Մեծ Աղբիւրը մեր թաղին աղբիւրն էր : Անոր ճամբան ճիւղերը սորվեցուցին ինձի, այն ատեն երբ ճիւղուկունակին վրայ հեծած կը պալտէի :

Համեստ տան մը կունակին տուած էր ինքզինքը, կիրի ճերմակով մը չըջապատուած : Մէջտեղէն սեւ ու ժանդոտած երկաթէ խողովակ մը կ'երկարէր, իր շերտնէն հոսեցնելով վճիտ, անմահական սառ ջուր մը, որ ամբան մէջ ջուրի դաւաթները ամպի ծուկններով կը դրուագէր :

Նուիրական ջուր մըն էր ան : Սուրբ Մինասի բարձունքէն կու դար, գահալէժ վաղքով մը, ծեծելով եւ խորացնելով հողէ ազուգաները, որոնց մէջէն կը վազէր, յաւիտենական նուազ մը երկարելով իր ճամբուն վրայ :

Գիշեր ու ցերեկ կը վազէր անընդհատ : Քարէ խոշոր դուռին մէջ, ջրվէժի մը պէս կը փոթորկէր անոր երեսը եւ մաքուր ալիքներէն ու ճերմակ փրփուրներէն շինուած պատկերներ կը ստեղծէր շարունակ :

Գիւղին ամէնէն սառ ջուրն էր հաւաքուաւոր այդ աղբիւրը : Անտառներու ստուերներուն զովուժիւնը եւ հողին ընդերքներուն բիւրեղ մաքրութիւնն ունէր իր ծոցին մէջ : Անսպառ ջուր մըն էր ան :

Կ'ապրէր ան, իր նուազը խառնելով թաղի տղոց երգերուն : Գիշերը մինակը կ'երգէր, օրօր մը շինելով, մինչ թաղին բոլոր տղաքները, իրենց բերանները կը գոցէին, քունի երախուրեանն անջ լսեցնելով իրենց երգերը :

Կը խմէինք այդ սառ ու վճիտ ջուրը : Մեր թարմ

տարիքի ներքին հրդեհը կը զովայնէինք: Այդ ջուրը անջրպետութեամբ սաս մաքրութիւններէն բաներ կը զնէր մեր սիրտը: Օրուան որեւէ պահուն, մեր ափերը լայն բացած, կը մօտենայինք անոր բերանին:

Մենք չէինք զգար այն ատեն այդ ջուրին խորունկ նշանակութիւնը: Երբ ամառը զար եւ փոսերուն մէջ ջուրերը եւ հոսանքները լսէին, երբ ծարաւահիւժ հողը, հազար բերաններ բանար ու պապակէր, երբ նիհար ու բարակ աղբիւրները արեւին տակ շողիանային, մենք կարօտը կը քաջէինք մեծ աղբիւրին, որ կ'արհամարհէր ամառը, արեւին տաքութիւնը, եւ ձմեռուան զովութիւնը կը պահէր իր մաքուր երակներուն մէջ:

Մեր մանկութիւնը հացէն աւելի այդ ջուրով սնած էր: Մեզի համար ուրիշ ջուրեր չունէին անոր համն ու անուշութիւնը, եւ ամէն անգամ անուշ բարեկամի մը կարօտով մեր շրթունքները կը մօտեցնէինք անոր շրթունքներուն:

Սրբազայր մըն էր այն, ամենօրեայ ուխտադնացութեան մը առարկայ: Եւ որովհետեւ կ'ընենք ու աղջիկներն են որ կը գրահեն ամէնէն աւելի հնագոյն սրբութիւնները, անոնք հաւատաւորի ջերմեռանդութեամբ կը շրջապատէին զայն: Աստղերը զեռ կը վառէին իրենց գլուխներուն վերեւ, կրակներ կը թափէին ջուրերուն մէջ, մինչեւ այն պահը, երբ լոյսերը կը մարէին տուներուն մէջ եւ խաղաղութիւնն ու խորունկ լուծիւնը կը տիրէին գիւղին մէջ:

ԳՐ . ՄԵԱԿԵԱՆ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲՍՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Դժուագիլ՝ շրջապատել զարդով. գահավէժ՝ բարձրէն զար վազով. ազնւոյն՝ կամարակապ ջուրի ճամբայ, ջրմուղ.

համբաւաւօր՝ նշանաւոր, հաշակաւոր, քնդեբ՝ փորոտիք-  
մէջք. խորութիւն. անսպառ՝ անհասնում. երանայիւն՝ եր-  
ջանկութիւն. անօրպեճ՝ միջոց, հեռաւորութիւն. ծարաւա-  
հիւծ՝ ծարաւէն հիւծիւ. մաշիւ. հատնիւ:

2. **ՀԱՐՑՈՒՄՆԵՐ**

Չեր տեսած որեւէ մէկ աղբիւրը կը նմանի՞ հոս նկարա-  
գրուած աղբիւրին.— Ինչու համար անոր ջուրը նուիրական  
էր կ'ըսուի.— Ո՞րտեղէն կու գար ան.— Ի՞նչ ըսել է «աղ-  
բիւրը իր նուագը կը խառնէր թաղի աղոց երգերուն».—

Կրնա՞ք բացատրել ջուրին կարեւորութիւնը:

3. **Բացատրել հետեւեալ իօսքին իմաստը.—**

**Պզօիկ առուններ կը կազմեն մեծ գետեր:**

4. **ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Բառերն իրենց նշանակութեան նախիւսդ տեսակ տեսակ  
են, ինչպէս հոմանիօ, հականիօ եւ քազմանիօ:

**Հոմանիօ** կը կոչուին այն բառերը որոնք միեւնոյն նշա-  
նակութիւնը կու տան, իմաստի պլատիկ տարբերութիւնով.

**օրինակ՝ ուրախ-զուարթ, սպիտակ-նեմակ:**

(Տաւ ուրիշ օրինակներ):



**ԳՐ. ՄԻԱԼԵԱՆ.**— Գաւառացի ծանօթ ուսուցիչ եւ հը-  
րապարակագիր: Գրած է «Ժողովրդի վաւկի մը յիշատակ-  
ները» անունով գիրք մը, որ տեսակ մը ինքնակենսագրու-  
թիւն է:



## ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Գարունը իր զմայլելի գեղեցկութիւնները բերելը թափեր է Ակնայ հովտին մէջ: Ջուրերուն ու երգերուն քաղաքը լի է կենդանութեամբ: Յորդած է Մեծ Ձորը: Հետաքրքիր խումբեր կու պան անոր վաղքը գիտելու: Բարձր է իր ակունքը: Քարերուն մէջ փորուած աւազան մը՝ ուր ջուրը կ'նռնփի, կը փրփրի, յետոյ կը նետուի դարվար, վերածուած մանիչակադոյն հեղեղի մը: Շուրջի տունները կը դողան հիմէն: Բայց ի՛նչ քաղցրահամ ջուր: Քաղքին ամբողջ անկէ կ'ըմպէ, գովացնելով իր սիրտը, մանաւանդ դատած պահուն: Տասնեակ ջրաղացներ օրն ի բուն կը բանին իր եղերքներուն վրայ:

Անմահութեան Աղբիւրէն քիչ վարով, Փոքր Ձորի ու մերձակայ վտակներուն ջուրերն ալ կու դան կը միանան անոր: Գահավիժումը կը կասի վայրկեան մը. յետոյ աւելի ուժգին, մեծ, լուսաւոր սիւնի մը պէս կ'իջնէ, կը փոթորկէ Եփրատի ջուրերը:

Սուրբ Կողմոսի ծառաստաններուն ուղղութեամբ կ'իյնար մեր այգին: Ի՛նչ յուշեր կապուած են անոր ամէն մէկ քարին, հողին ու թուփին, ծառին ու ծաղիկին հետ: Դեռ պատանի, առաջին այցելութիւնս կու տամ դարնանամուտին: Հրճուանքներուն ամէնէն անուշը կը բռնկի իմ ներսս:

Կամարածեւ աղբիւր մը կ'երդէ հնձանին առջեւ, մեծ ընկուղինիին ստուերին մէջ: Գետնաբուխ աղբիւր մըն ալ, մարմարեայ աւազանիկով, կը պսպղայ աւելի վարը, թթենիներու հովանիին ներքեւ: Անոնց լոյսը ուժ՛պ ուժ՛պ, հուր կու տայ դէմքիս, շրթներուս:

Կը մտնեմ հնձանը: Ձիւնն ու անձրեւը քրքրած են

ցուիքները: Կը բարձրանամ սենեակները, ուր անձրե-  
ւին շիթերը փոսիկներ պատրաստած են, կուտ խաղալու  
համար անոնց մէջ: Նախշուն գնդակս կը զարնեմ հողէ  
յատակին ու փոշիի ամպ մը շալկած, կը նետուիմ  
դուրս: Ծառուղիներու երկայնքին ցանազիներ երանգ  
երանգ խոյս կու տան առջեւէս: Անհամար պողպղղի-  
ներ, վարդի թուփեր իրենց վրայ կը կրեն սիրուն սիրուն  
թռչնիկներ, կաքուկներու երամներ:

Թ. ԱԶԱՏԵԱՆ

\*

Թ. ԱԶԱՏԵԱՆ. — Ծը-  
նած է Ակնայ Ապշուղա  
գիւղը: Ուսումը ստացած է  
Ժննդավայրի, Ակնայ Նու-  
թեկեան եւ Չմշկածագի  
Միացեալ Վարժարաննե-  
րուն մէջ: Աշխատակցած է  
զանազան թերթերու: Լոյս  
ընծայած է քերթուածնե-  
րու երեք հատորներ, «Աղ-  
բիւր Անմահութեան» անու-  
նով: «Բառասանակ» եւ «Զըմ-  
րուխտէ Պատմութեանը» գա-  
ւառական կեանքէ աւան-  
դութիւններ եւ պատկերներ:



Թ. ԱԶԱՏԵԱՆ

★

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Հովիտ՝ բլրակի կողին մարգագետին, ուրկէ կը հոսին  
ջուրեր. յորդիլ՝ ջուրի առատութեն վազեւը. ակունք՝ ջուրի  
ակ, բխած տեղը. ըմպելի՝ խմել. յառած՝ սշխտած. օրն ի  
բուն՝ ամբողջ օրը. մեծակայ՝ մօտակայ. զսկալիծում՝

դարվար հոսում. կասիլ՝ կենալ. գեճնաբուխ՝ գետնէն բխող. Երբ՝ կաթիլ. նանագի՝ երկար պոչով ու թեւով միջատ մը. երանգ երանգ՝ գոյնզգոյն:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ո՞ր քաղաքին Գարնանային գեղեցկութիւններուն մասին կը խօսի այս հատուածը.— Քաղաքը կը բնակիք թէ գիւղի մը կամ արուարձանի մը մէջ.— Կրնա՞ք քանի մը բառերով նկարագրել ձեզի ծանօթ վայրի մը մէկ գարնանամուտը.— Քոհ կ'ըլլա՞ք, երբ ձեր ծնողները իրենց ծննդավայրին յիշատակները պատմեն ձեզի.— Ի՞նչ կը նշանակէ աղբիւրք կ'երգէ:

### 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հակամիջ կը կոչուին այն բառերը որոնք իրարու հակառակ նշանակութիւն ունին.— ծուռ-Եթակ, քաց-չար, լին-կղզի (տալ հինգական օրինակ):



## ՄԻԻԹԱՐ ՍԵՖԱՍՏԱՑԻ

Ուսանելի է Միւիթարի կեանքը, որ իւրեւ ներշնչարան սլէտք է ծառայէ բոլոր անոնց, որոնք կը ձգտին զթուարին գործեր գլուխ բերել նիւթական անհնարին սլայմաններու մէջ, մաքառելով անկարելի արդեւքներու դէմ:

Եւ երբ շնորհիւ իր կամքին եւ իր աննկուն հաւատքին Միւիթար կը դնէ վերջապէս իր գործը հաստատուն հիմունքներու վրայ, այդ գործը կը դառնայ հսկայական նշանակութիւն ունեցող գործ մը հայ մշակոյթի պահպանման եւ վերածնունդին համար:

Նախ Հայ դասական լեզուն կը վերամշակուի եւ կը բիրեղացուի հոն: Հայ Մատենագրութիւնը կը դտնէ

ապաստարան մը: Հայ Պատմութիւնը, Հայ Գրականութիւնը, Հայ Բանաստեղծութիւնն ու Բանասիրութիւնը կը վերընծիւղին եւ կը սարածեն իրենց ճիւղերը եւ հն-վանին հայութեան վրայ: Չամչեաններ, Բաղրատունի-ներ, Հիւրմիւզներ, Աւերեաններ եւ սփանչելի Ալիշան կը վերադարձեցնեն Հայ հոգիները եւ հայ ստեղծա-դործութիւնը:

Մխիթարեան Հիմնարկութիւնը կը դառնայ միջնորդը Արեւմուտքի եւ Հայութեան միջեւ եւ հայ մշակութային վերածնունդին հետ կը վերածնցնէ նաեւ Հայ Անկախութեան դազափարը, հայ հայրենիքի վերակենդանացման խոչալը, ու կը դառնայ հայ ազատագրական պայքարի նախակարապետը, հոգեւոր հայրը:



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ուսանելի՝ սորվելիք. ներգնահարան՝ խորհուրդ տուող, ազդող. գլուխ բերել՝ յաջողիւ. անհնարին՝ անկարելի, ինտա սաստիկ. մաքառիլ՝ պոքքարիւ, կռուիւ. անկողն՝ անյաղ-թելի, անպարտելի. բիւրեղանալ՝ յստականալ, աղնիւ քարի պէս փայլիւ. ապաստան՝ պատսպարուելու տեղ, տպաւէն. վերընծիւղիլ՝ ածիւ. բռնիւ. հովանի՝ շուք, պաշտպանու-թիւն. վերագարեցնել՝ վերստին արթնցնել. սփանչելի՝ դար-մանալի, հրաջալի. նախակարապետ՝ առաջին ճամբայ բացող:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Մխիթարեան Միաբանութեան Հիմնադիրն ո՞վ է.— Ո՞ւր հիմնուած է այդ Միաբանութիւնը.— Ի՞նչ օգտակարութիւն ունեցած է ան մեր լեզուին ու մտտեհնագրութեան համար.— Մխիթարեան Միաբանութիւնը միջնորդի դեր կը կատարէ ըստ իր ունիւնքի կը հասկնանք:

### 3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԼԵՉՈՒ.— Գրաբարը, որով գրուած է

ոսկեդարեան մատենագրութիւնը: Գրաբարը այսօր կը գործածուի Հայ եկեղեցիներուն մէջ միայն:

**ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ.**— Այսինքն Հայ գրականութիւն. ամբողջութիւնը լոյս տեսած բոլոր գիրքերուն: Ոսկեդարու մատենագրութիւն, այն որ կը պատկանի Հինգերորդ դարու գրականութեան: Միջնադարեան գրականութիւն՝ միջին դարուն պատկանող: Այսպէս, կ'ըսենք նաեւ նոր մատենագրութիւն, նոր գրականութիւն: **Չամչեան, Բագրատունի, Հիւսիւզ, Աւգրեան, Ալիւան,** — բոլորն ալ Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան վաստակաւոր դէմքեր, որոնց կը պարտինք մեր մատենագրութեան անմահ եւ սքանչելի գործերէն մէկ քանին:

**ՄՇԱԿՈՅԹ.**— Ինչ բան որ կը պատկանի Հայ լեզուին, Հայ գրականութեան, Հայ արուեստներուն, մասը կը կազմէ Հայ մշակոյթին: Կրնանք ըսել նաեւ Հայ քաղաքակրթութիւն, աւելի լայն իմաստով:

Է. Բացասուիլ Հետեւեալ խօսքին իմաստը.—

Լաւագոյն դպրոցներ ունեցող ժողովուրդ մը առաւելի առաջնակարգ ժողովուրդն է. երէ այսօր չէ՛ վաղը պիտի ըլլայ:

---

## ՅՈԳՆՈՒԹԵԱՆ ՀՈՎԱՆԻ

Յիշատակներ'ը փոքր ու մեծ, մըտերիմներ'ը հին ու նոր,  
Զեղմով եմ միշտ երջանիկ, ձեզմով դժբախտ ամէն օր.  
Իմ տրամութեանը՝ դինի, ու դինիս մէջ էք թոյն.  
Դուք զիս կ'ընէք մերթ մանուկ ու մերթ պարման մը  
տըժդոյն:

Դուք՝ սուտերուն մէջ իրա՛ւ, անցաւորին մէջ անա՛նց,  
Տարիներուս արկըղին խորը պահուած անգիւտ դանձ...  
Լուանակ մը՝ լոյսն սպառած, այլ մերթ աստղեր էք  
պայծառ,

Ժամանակի հովին դէմ լացող մոմեր մը շտապաւոր:

Հունտեր՝ կեանքի պաղտնիքով, նետուած հողի մէջ  
 րէրրի ,  
 Կը բողբոջիք, կը մեծնաք, մերթ դառնահամ, մերթ բարի  
 Պըտուղներով բեռնաւոր, կ'ըլլաք ծառեր նորանոր :

Կը գուրգուրամ մանաւանդ այդ ծառերէն ես անո՛ր,  
 Որ պիտ' ըլլայ լալիսթիւ, նրման ծառին ծիրանի,  
 Եւ յողնուլթեան օրերուս՝ բանայ վրբաս հովանի :

ՎԱՀԷ-ՎԱՀԵԱՆ



ՎԱՀԷ-ՎԱՀԷ  
 ԵԱՆ.— Բուն ա.  
 նունով Սարգիս  
 Ապտաւեան, ծը-  
 նած է Կիւրինի  
 մէջ 1907-ին :  
 1918ին կը յա-  
 ճախէ Այնթապի  
 Վարդանեան  
 Վարժարանը : Իսկ  
 1925ին կը մտնէ  
 Պէյրուսթի Ամե-  
 րիկեան Համալ-  
 սարանը : Իրեն  
 համար ասպարէզ  
 կ'ընարէ ուսուց-  
 չուլթիւնը :

Առանձին լոյս  
 ընծայած է քեր-  
 թուածներու հա-  
 տոր մը, «Արեւ  
 Անձրեւ» 1933ին :



ՎԱՀԷ ՎԱՀԵԱՆ

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

**Մեր՝ երբեմն. պարման՝ երիտասարդ. բերրի՝ բարեբեր,**  
արգուանդ:

2. Արձակի վերածել այս ոտանաւորը:

### 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

**Բազմանիւ** կը կոչուին այն բառերը որոնք մէկէ աւելի նշանակութիւն ունին. ինչպէս՝ **կուօ** կը նշանակէ կող եւ յագեցած. **դար** կը նշանակէ վառիվայր եւ հարիւր տարի:

---

## ԲԱՐԵՐԱՐԸ

Երբոր մինչեւ վերջին վայրկեանը լաւ մը կըտացաւ ու յղիացաւ այս հարստութեամբը ու ինքնիրենը ստուգեց, թէ ունէ վայելք չէր մոռցած իր ծեր անառակի կեանքին մէջ, այս առթիւ ոսկիները ինչ ընկիւղին վրայ խորհեցաւ:

Ու ճիգ մը ըրաւ, հնազանդութեան դերադոյն փորձ մը ուղելու համար անոնցմէ, եւ իր պլալացող մտքին տալտամ՝ լոյսովը՝ փնտուց հաճելի բանը, վերջինը զոր կրնար ակնկալել դեռ այս հարստութեան օգնութենէն, հրաժեշտի անուշ խօսքը զոր պաշտեցեալ կնոջ մը շրթունքէն կը պահանջէ:

Այն ատեն տարօրինակը, անհաւատալին պատահեցաւ. այս հնարամիտ ու զենցաղասէր մարդը, սր ամէն բանէ օլուտ մը հանելու մէջ իր նմանը չէր ունեցած այսքան տարի, շուարած մնաց, ապիկար ու անկարող դառաւ ինքզինքը հաճոյք մը ձեռք ձգելու՝ իր ձեռքին տակ եղած ահազին դրամներէն:

Իր հինցած, փճացած ստամոքսը որեւէ համադամ

չէր կրնար մարսել. իր պարտասունն եւ թուլցած ջիւղերը հիմա օրհասական ժամին պրկումովը կը գալարուէին, նուազարանի մը մաշած թելին պէս :

Այս անկարողութեան խոտտովանութիւնը խելքը գլխէն տարաւ. քովի սենեակին պատէն նախ փափսուք մը, յետոյ աղմուկ մը կը թափանցէր, կու դար ներս եւ վերահաս մահուան երկիւղէն սթափած լսողութիւնը՝ այդ աղմուկին մէջ իր ժառանգորդներուն ձայնը ճանչցաւ :

Ու յանկարծ լոյս մը ծագեցաւ մահուան արհաւիրքով գրաւուած այս մտքին խորը. վերջին աւազակութեան, կողոպուտի մը խորհուրդը իր նեխած ու ոչորմելի մարմինը զղրդեց սաքէն մինչեւ գլուխը. ուրախութեան սարսուռ մը վազեց իր մորթին վրայ, խորշակին պէս որ գորշ ու անշարժ լիճի մը մակերեսոյթին վրայ կը թռչտի :

Նայիսկոպոս, քահանայ ու թաղական ուղեց իր քովը, սրտնք փութացին եկան. այն ատեն հանգիստուոր ու սրտառուչ ձայնով մը, զոր Արքայանը վերջէն իր դամբանականին մէջ յիշեցուց, կտակ մը քրտու ու բոլոր հարստութիւնը, որ ալ իրը չէր, եկեղեցիին ձղեց :

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ



1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Յովիանայ՝ կշտանաւ, Լեցուիլ. «արեամ՝ անորոշ. ապիկար՝ մտքով տկար. համալսամ՝ համեղ կիրակուր. պարեասուն՝ յոգնած. օրհասական՝ մահուան օրը մօտեցած. պրկումովը գալարուելի՝ Լարուածութենէն սիրտը ճմլուել. արհաւիրք՝ սաստիկ վախ, զարհուրանք. նեխած՝ փստած. խորեակ՝ սաստիկ տաք, հարուստի ջրամի. դամբանական՝ մեռեալի մը դադողին վրայ իօտուած ճառ :

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Կեանքը ամէն կերպով վայելող մը, երբ կը զգայ թէ մահուան օրերը կը մօտենան, ի՞նչ կը խորհի ընել փրկելու համար իր հարստութիւնը.— Ծերուկեան օրերուն կրնա՞յ ոեւէ անհատ օգտուիլ իր հարստութենէն.— Ե՞րբ պէտք է բարեգործութիւն ընել:

**ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ.**— Փաստաբան, դրագէտ, հրապարակագիր եւ քաղաքական գործիչ, ծնած է 1860ին, Պոլիս: Ուսումը ստացած է Խասգիւղի Շահնազարեան Վարժարանը, յետոյ Կալաթա Սէրայի Լիսէն: Արեւմտահայերու լաւագոյն արձակագիրներէն եւ ամէնէն ջլուտ ու յանդուգն հրապարակագիրներէն մէկն էր: Խմբագրապետ եղած է երկու տարի «Մասիս» շաբաթաթերթին (1892-93): Իր նորավէպերէն մեծ մասը ամփոփուած են երեք հատորներու մէջ. «Խղճմտանքի ձայներ», «Կեանքը ինչպէս որ է» եւ «Լուռ ցաւեր»: Զոհուած է 1915ի տարագրութեան օրերուն:

3. Բայտերէլ հետեւեալ խօսքին իմաստը.—

**Ամենամեծ յիմարուքիւնն է աղիւս աղբիլ, հառուս մեռնելու համար:**



## ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

Ո՛չ նկար, ո՛չ լուսանկար, ո՛չ սևսու մնասիրութիւն, ո՛չ ալ դիմաւատուեր մինչև իսկ:

Յուշ մը միայն. մշուշի հատած գծերով. այսինքն՝ այնպէս ինչպէս մնացեր է, դրոշմուեր է մտքիս մէջ, տարիներէ ի վեր: Ու պահելու համար յուշը՝ յուշ, անաղտրտ, կը մերժեմ վերստին կարգալու սրևէ փորձ, առնուած տպաւորութիւնը թարմացնելու սրևէ հակում: Այսպէս կ'ուզեմ պատմել Զօհրապը, իր կեանքը, դորժը, քանի մը բառով, առանց յաւակնութեան, բայց վստահօրէն ինձ համար, եւ թերեւս մէկ քանիներու հա-

մար, անոնց՝ որ ըմբռնելէ առաջ կը զզան, տեսնելէ աւելի կ'ընդհնջմարեն :

Իրեն նման, վերջին կէս դարու ընթացքին, Դուրեհանը ունինք միայն . Սրբազան Եղիշէն, որուն դրահանութիւնը, ինչպէս կրօնաւորի աստիճանները եւ պատրիարքական ակօսողները, Պոլիս եւ Երուսաղէմ, ի վերջոյ, մասնակի զարգարանքներ եղան իր էութեան, իր անձին համար, որոնք աւելի զարգարուեցան իր անձովը, քան զարգարեցին զայն :

Ճիշդ Դուրեհանին նման Ջօհրա'տն ալ, ուրիշ կեանքով ու կոչումով, աւելի աշխարհիկ դրոշմով ու փութորկոտ ասպարէզով . որուն դրահանութիւնը եղաւ զարդերէն հայ դրահանութեան, առանց սակայն իր անձին միակ ու մեծաշուք զարդն ըլլալու :

Իր դրահանութիւնը, ուրեմն . — ժայթքում մըն է ան իր էութենէն . փախած, արձակուած ճառագայթ մը, որուն մէջ կարելի է հաստատել կեանքի բոլոր դոյները : Երկրաչափ, փաստարան, դրապէտ, հրապարակազիր, քեմբասաց, ազգային զործիչ, հմուտ ազգային ու պետական զործերու, հաճոյասէր ու աշխարհիկ — Բաւական չէ՞ իր դրահանութեան հորիզոնը շափելու համար :

Ջօհրայ կեանքը տուաւ իր դրահանութեամբ . բեկոր մը, հասուած մը միայն անկէ, — խոնարհ մարդերը, հարուստը, մեծատունը, սպասուհին . եւ դեռ՝ խարոզն ու խարուողը . սոլսեցին եւ Պոլիս եկած զաւառացին . ու պատմեց անոնց ցաւն ու վիշտը, հոգն ու հոգին, սէրն ու սիրտը : Տուաւ թաղականը, ազան, էֆէնտին, կրօնաւորը . այսինքն՝ ինչ որ հայ կեանքը ունէր Պոլսոյ մէջ : Բայց այս բոլորին հետ ու այս բոլորէն վեր՝ տուաւ կինը, առօրեայ ու յաւիտենական կինը :

Հանդարտ ու խիտ, անիկա դիտէ արագօրէն կա-

առւջանել իր նորավէպերը: Իր պատմութեան պէս՝ կարծ է խօսքն ալ: Քանի մը խօսք ու արդէն կեանքը հրապարակ կը դրուի. քանի մը դիժ՝ դէմքը կը պատկերանայ եւ քանի մը երանդ, աղնարկ, հատուած, սրտերուն վրայ, պրպտում՝ կեանքէ մը եւ սրտէ մը ներս, ու ահա ողբերգութիւնը, կարօտը, սէրը, տագնապը եւ կործանումը:

Դիտող, խորագէտ արուեստագէտի գերազանց այս խառնուածքին ի նպաստ յիշե՞նք նաեւ իր տուած դիմաստուերները:

Ու իր ոճը. բազմակողմանի եւ զուենդ, իրեն, մարդուն նման. կոկիկ, կտրուկ, արագ, պոլսեւլարի երբեմն. եւ հաճելի ու համով՝ իր անփութութեամբը: Առանց խաղի, առանց մեծ թռիչքներու, բայց անոյշ ու հմայիչ:

Երբ ողջ էր, չէր մտածեր մահուան վրայ, այնքան կը տիրէր կեանքին. այնպէս կը թուէր՝ թէ յաւիտեանական էր ինք, կեանքին անբաժան մասը. ու հիմա որ մեռած է՝ կ'իշխէ կեանքին իր եղերական վախճանէն, անյայտ ու անչիրիմ գերեզմանէն:

ԳՈՒՐԳԷՆ ՄԵԻԹԱՐԵԱՆ

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Դիմաստուեր՝ մարդու մը կամ դրագէտի մը արտաքին եւ ներքին ամփոփ մէկ նկարագիրը, ստուերագիծը. յաւակնութիւն՝ յանդգնութիւն, նշանաւոր երեւնալու փառասիրութիւն. աւխարհիկ՝ աշխարհական, կեանքին պատկանող. բեմբասաց՝ բեմէն խոսող, քարոզող. բեկոր՝ կտոր. տոգնապ՝ դող, վրդովում, խռովք. խորագէտ՝ խոր մտածող, գիտուն. եղերական՝ ողբալի, ողբերգական:

## 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Գրագէտ Զօհրապէն հատուած մը կարգացիք, այս գըր-  
ուածքին մէջ իր ո՞ր յատկանիշներուն մասին կը խօսուի.—  
Իր բազմակողմանի կարողութիւններուն համար որո՞նք կը  
նմանցուի.— Իր նորավէպերուն մէջ որո՞նք մասին խօսած է  
Զօհրապ.— Ի՞նչպէս է իր ոճը.— Ի՞նչ ըսել է եղերական  
վախճան ունենալ:

**ԳՈՒՐԳԷՆ ՄՐ-  
ԽԻԹԱՐԵԱՆ.** —  
Ծնած է Շապին-  
Գարահիսար, 1890-  
ին: Նախնական կըր-  
թութիւնը աւած է  
տեղւոյն վարժարա-  
նին մէջ եւ աւար-  
տած է Պոլսոյ Կեր-  
րոնականը 1913ին:

Բանի մը տարի  
ուսուցչութիւն ընե-  
լէ վերջ, հրապարտ-  
կագրութիւնն ընտ-  
րած է իբրեւ սու-  
պարէզ: Խմբագրած  
է զանազան թեր-  
թեր, աշխատակցե-  
լով նաեւ ուրիշնե-  
րու: Խմբագրած է  
«Նոր Շարժում» գը-  
րական շաբաթա-  
թերթը:

Գրած է մասնա-  
ւորաբար թատերական եւ քննադատական ուսումնասիրութիւն-  
ներ, եւ կատարած թարգմանութիւններ:



Գ. ՄԽԻԹԱՐԵԱՆ



## ՏԱՂ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՆ

Քեզ, Հայ Լեզու՛, կը սիրեմ մրգաստանի մը նըման.  
 Մեր անցեալին թանձրախիտ ստուերներուն մէջ՝ կարծես  
 Մէյ մէկ պըտուղ՝ քու բոլոր բառերդ ինծի կ'երեւան,  
 Որոնց մէջ ես կը քալեմ ու կը քաղե՛մ զանոնք ես...

Մրգաստանի մը նըման կը սիրեմ քեզ, Հայ Լեզու.  
 Մեր հայրենի պալատէն, պարտէզներէն մընացորդ՝  
 Դալարազեղ դուն պուրակ, որ դիմացար դարերու  
 Ու կը մընաս մի՛շտ առոյգ, մի՛շտ աւիշով կեմսայարդ...

Ծառերուդ մէջ հովանուտ կ'երթամ խինդով  
մ'անսահման՝

Արմատներուդ, ճիւղերուդ վրայ նայելով հիացիկ,  
 Զարմանալով թէ ինչպէս դուն մընացիր՝ երբ սաստիկ  
 Քամին քու շուրջդ փըշեց ու տապալե՛ց ամէն բան...:

Մէյ մէկ պըտուղ զոյնըլզոյն՝ ամբողջ բառերդ ահա,  
 Հիւթե՛ղ բառեր, զոր ո՛րքան հասունցուցին արեւներ,  
 Բառե՛րդ որոնք այս պահուս ունիմ շըրթանցըս վըրայ,  
 Բառե՛րդ որ քիմքըս կ'օծեն, որ զիս են մի՛շտ սընուցեր:

Վ. ԹԵՒԷՅԵԱՆ



### 1. — ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Տաղ՝ քերթուած. ստանաւոր. մրգաստան՝ պողատու ծառեր անկուած տեղ. աւիգ՝ հիւթ. կեմսայարդ՝ կեանքով լեցուն. հովանուտ՝ ստուերոտ. խինդ՝ ուրախութիւն.

հիացիկ՝ զարմանքով:

## 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Բանաստեղծը ի՞նչ բանի կը նմանցնէ Հայ Լեզուն.—  
Եւ ի՞նչ բանի՝ անոր բուռերը.— Երբ քամին դարեր առաջ  
մեր հայրենիքին մէջ ամէն բան տապալելու կը ջանար,  
ինչպէս մեր մայրենի լեզուն կրցաւ պահել իր գոյութիւնը:

3. Արձակի վերածել այս քերթուածը եւ արտասանել:



### Վ.Ա.ՂԱՆ ԹԷՔԷՆԱՆ.

— Արեւմտահայ ծանօթ  
բանաստեղծ, հրապարակագիր եւ ազգային գործիչ:  
Ծնած է 1878ին, Օրթագիւղի մէջ: Նախնական ուսումը ստացած է  
Պէրպէրեան Վարժարանը, ուրկէ վերջ աշակերտած է  
Ղալաթիոյ Կեդրոնական Վարժարանին: Աշխատակցած է արտասահմանի կարեւոր  
թերթերուն:

Իրմէն լոյս տեսած են քերթուածներու հետեւեալ հատորները. —  
«Հոգեր», «Հրաշալի յարութիւն», «Կէս դիշերէն մինչեւ արշալոյս», «Սէլ», «Տաղարան» եւ «Հայերգութիւն»:



Վ. ԹԷՔԷՆԱՆ  
(1878 - 1945)

Ս.և.ած է Գահիրէի մէջ, 1945ին:





ՏԵՍԱՆՍԻՆ ԶԱՅԻՆԻ ԿԳՆՈՅՈՒՄԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԴՆԵՍԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼԻՄԱՆ, ԲՈՅՍԵՐԸ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԵՒ ՀԱՆՔԵՐԸ

### 1

Հայաստան ունի ցամաքային կլիմայ՝ մը, այսինքն ամառը տաք, ձմեռը ցուրտ կ'ընէ : Երևանի մէջ տաքը ամառ ատեն կը հասնի մինչեւ 35 աստիճան շուքի մէջ : Իսկ ձմեռը 0էն մինչեւ 20 աստիճան վար ցուրտ կ'ընէ : Լեռնային վայրերու մէջ, ինչպէս Սեւանի շուրջը, ցուրտն աւելի սաստիկ է : Երևան ծախու մակերեսէն 994 մէթր բարձր է :

Հայաստան հակառակ իր բազդատարար փոքր տարածութեան, զանազան կլիմաներ ունի, սրոնք կը համապատասխանեն թէ՛ տաք եւ թէ՛ ցուրտ երկիրներու կլիմաներուն : Արարատի դաշտը տաք է եւ բամպակ կը հասցնէ . իսկ երկրին հիւսիսային եւ արեւելեան մասը լեռնային ըլլալով, ունի բարեխառն եւ ցուրտ երկիրներու յատուկ կլիմայ :

Արարատի դաշտին մէջ ամառ ատեն կը փչէ տաք քամի մը, որ փոշիի հոծ ամպ մը կը բարձրացնէ շուրտեղերու մէջ :

Հայաստան ունի օդաւուռ վայրեր, ուր երկրին բընակչութիւնը կ'երթայ ամառ ատեն, ինչպէս Դիլիճանը եւ Ծաղկաձորը, ուր հաստատուած են հանգստեան տուներ եւ ապափինարաններ :

Հայաստանի բուսականութիւնը բազմազան է երկրին կլիմային նման : Հոն կ'աճին թէ՛ բարեխառն, թէ՛ ցուրտ եւ թէ՛ մօտաւորապէս արեւադարձային դօտիններու բոյսեր :

Գլխաւոր բոյսերն են. — Հացարոյսեր, ինչպէս ցորեն, գարի, հաճար: Դաշտային վայրերու մէջ կլիման տաք ըլլալով՝ հացարոյսերը արագ կ'աճին. ցորենը տեղ տեղ կը հասուննայ երկու ամսուան ընթացքին, իսկ գարին՝ աւելի շուտ: Յորենի մշակութեան յարմար է մասնաւորօրէն Շիրակի դաշտը, որ հին ատեն Հայաստանի շտեմարանը եղած է, սակայն յետոյ այս դաշտը վերածուած է անապատի, զոր այժմ սկսած են քողոզել եւ դարձեալ բարեբեր դաշտի վերածել:

Բրինձը կը մշակուի ցած դաշտավայրերուն վըրայ: Մշակուող ընդեղէններն են լուբիան, սիսեռը, ոսպը եւ բակլան: Բանջարեղէններն են սոխը, բողկը, գետնախնձորը, կաղամբն ու ճակնդեղը: Բամպակը կը բուսնի Արարատեան դաշտին մէջ եւ ծխախոտը՝ Իջեւանի շրջանը, որ կը գտնուի Հայաստանի հիւսիս-արեւելքը:

2

Մեր հայրենիքը հարուստ է նաեւ վայրի եւ սլաղաատու ծառերով: Վայրի ծառերն են հաճարի, կաղինի, շաղանակի, կղեւինի, դիհի, մայրիի եւ ուրիշ ծառեր: Զրառատ վայրերու մէջ կը բուսնին բարտի, կաղամբի եւ ուռենի: Հայաստան հարուստ չէ անտառներով:

Պաղատու ծառերն են, դեղձին, ծիրանին, խնձորենին, տանձենին եւ ընկուզենին: Դեղձերը նշանաւոր են: Ունի նաեւ առատ եւ բազմատեսակ խաղող եւ ընտիր սեր:

Հայաստանի լեռները ծածկուած են մարդադէտիններով: Այս պատճառով անասնաբուծութիւնը վարդացած է: Ամառ ատեն լեռներուն վրայ կը բարձրանան դաշտային վայրերուն եւ դրացի երկիրներուն հօտերը, արածելու համար: Ասոնք «բոջւոր» կը կոչուին:

Հայաստանի անտառապատ վայրերուն եւ լեռներուն մէջ կան վայրի կենդանիներու տեսակներ, արջ, գայլ, բորենի, սամոյր: Անտառներու եւ տափաստաններու մէջ կարելի է հանդիպիլ նաեւ այծեամի, եղնիկի եւ եղջերուի:

Եղեգնաւտները լեցուն են բազմաթիւ թռչուններով, վայրի սառ, բառ, արազիլ, եւ կռունկ: Լիճերն ու գետերը լեցուն են ընտիր ձուկերով, ինչպէս Իշխանը եւ Գեղարքունին՝ Սեւանի մէջ, Ճանառը՝ Արաքսի մէջ: Լոռիի եւ Դարալագեաղի շրջանին մէջ կայ մեղու, իսկ այն վայրերուն մէջ ուր յատկապէս կը մշակուի թթենին, կը գտնուի շերամի որդը: Ընտանի կենդանիներն են ոչխար, այծ, եղ, կով, գոմէշ, ձի, էջ, ջորի եւ ուղտ:

Հայաստան նախապէս ծածկուած է եղեր ջուրով, որ կը միացնէր Սեւ եւ Կասպից ծովերը: Այդ պատճառով հողը կրային է: Նախիջեան եւ Կաղզուան ունին աղահանքեր:

Թանկադին մետաղն է պղինձը, որ կը գտնուի պլաւորրապէս Լոռիի եւ Զանգեզուրի մէջ: Հայաստան իր հրաբխային լեռներուն պատճառով հարուստ է տուֆ քարով եւ չեչաքարով, ստանաւորապէս Արաղածի շրջանին մէջ: Ունի ճերմակ եւ գունաւոր մարմար, քիչ քանակութեամբ հանքածուխ, քրոմ, քիչ կաւ Դե գունաւոր հող: Հարուստ է հանքային ջուրերով, որոնցմէ ամէնէն նշանաւորն է Արզնին, Երեւանի եւ Սեւանի լըճին միջեւ:

★

## 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Օրասուն՝ օգտւէտ. սպաֆինաւրան՝ այն տեղը, ուր մարդ կ'առողջ սնայ. Ետեմաւրան՝ ամբարանոց, մտուան. ուռզել՝

ըրեւ. սափասացան՝ անմշակ տեղ. եղեգնուա՝ եղեգներով  
ծածկուած տեղ:

## 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Հայաստանի կլիման ի՞նչպէս է. — Ո՞ր մասերը տաք են  
եւ ո՞ր մասերը ցուրտ. — Ի՞նչ տեսակ բոյսեր ունի մեր հայ-  
րենիքը. — Ո՞ր դաշտը Հայաստանի ցորենի ամբարանոցը ե-  
ղած է հին ատեն. — Որո՞նք են նշանաւոր պտուղները. — Ի՞նչ  
տեսակ կենդանիներ կան հոն. — Ի՞նչ հանքեր. — Ո՞րն է Հա-  
յաստանի նշանաւոր հանքային ջուրը:



## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Հայկական բարձրաւանդակը եղած է մարդկային  
ցեղի ամենահին բնակավայրերէն մէկը: Մինչեւ հիմա  
վտնուած դրաւոր յիշատակարաններու համաձայն, այդ  
ժողովուրդներու մասին մեր ծանօթութիւնը Քրիստոսէ  
առաջ մինչեւ 3000 տարի կ'երթայ: Այդ թուականնե-  
րուն հայկական բարձրաւանդակին վրայ ապրող ժողո-  
վուրդները ծանօթ էին հողամշակութեան եւ ունէին ի-  
րենց յատուկ քաղաքակրթութիւն եւ զիր, որ սեսպա-  
ձեւ էր: Կը պաշտէին Սալդի անունով աստուածը, եւ  
այդ պատճառով կը կոչուէին Սալդիներ: Սալդի բառէն  
առաջ եկած ըլլալ կը թուի Հայ բառն ալ: Վանի բար-  
բառով հայը կը հնչուի խայ:

Նոյն թուականներուն երկու մեծ դետերու, Նեղոսի  
եւ Տիգրիսի ափերուն վրայ կը ծաղկէին երկու մեծ եր-  
կիրներ, — Եդիպտոս եւ Ասորեստան: Ասորեստանի  
թագաւորները իրենց իշխանութիւնը տարածելու հա-

մար դէպի հիւսիս, սլատերազմի մտան հայկական բարձրաւանդակի ժողովուրդներուն հետ :

Ասորական հին արձանագրութիւններուն մէջ առաջին անգամ ըլլալով կը յիշուի Նայիրի իբրեւ Հայաստանի անունը, «երկիր մը, խիտ անտառներով ծածկուած» :

Նայիրի, որ ասորերէն լեզուով կը նշանակէ դեռութիւն երկիր, կը բաղկանար բազմաթիւ թաղաւորութիւններէ, որոնց մէջ կրնանք յիշել մասնաւորաբար Ուրարտաւ, որ կը տարածուէր Արարատի շուրջը : Արարատն ալ, որ կը նշանակէ նաև բարձր լեռ, Ուրարտու բառին հետ կապ ունի :

Այս թաղաւորութիւնն էր, որ հետզհետէ ուժով ցաւ եւ տիրեց ամբողջ Նայիրիի, Քրիստոսէ ինը դար առաջ : Վան եղաւ Ուրարտուի միացեալ թաղաւորութեան մայրաքաղաքը, ուր կը գտնուէր Խալտի նուիրուած մեծ տաճարը :

Վանի բերդին վրայ, սեպագիր արձանագրութիւններով, Ուրարտուի թաղաւորներուն սլատմութիւնն արձանագրուած է :

Ուրարտուցիները շինարար ժողովուրդ մըն էին . կը զբաղէին երկրագործութեամբ, այգեգործութեամբ, անասնապահութեամբ, արհեստներով եւ առևտուրով : Եփրատ եւ Տիգրիս գետերուն վրայ նաւարկելով, իրենց ապրանքները, գինի, մորթ, եւայլն, կը տանէին մինչև Նինուէ եւ Բաբելոն :

Ուրարտուցիները նաև լաւ ճարտարապետներ էին : Շինեցին բազմաթիւ քաղաքներ, կամուրջներ, ջրանցքներ եւ ճամբաներ, որոնց հետքերը կը մնան մինչև այսօր :

### 1. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ի՞նչ գիտենք հայկական բարձրաւանդակին մասին. —  
Հոն ապրող ժողովուրդներուն մասին ինչ գիտենք. — Երկու  
մեծ գետերուն վրայ ո՞ր երկու երկիրները կը գտնուէին. —  
Ե՞րբ կը յիշուի առաջին անգամ Հայաստանի անունը. — Եւ  
ի՞նչ անունով. — Վանի բերդին վրայի սեպագիր արձանա-  
գրութիւնները ի՞նչ կը ներկայացնէին. — Նախահայերը ին-  
չս'վ կը զբաղէին:



### ՆԵՐԳԱՂԹ

Քեզի՛ վաղող դաւակներուդ կարաւանին  
Աւանդ կու տամ բանաստեղծի սիրտըս խոնարհ,  
Քու նարապեղ ջրբանցքներուդ սլաղո՛ր ջուրին  
Հողի՛ս երզը խոսնելու Հայո՛ց Աշխարհ:

Քու հողերուդ մէջ աշխատիլ, քեզի համար  
Մերթ տառապիլ բայց երջանիկ ըզդալ ինքզինք  
Լաւ օրերու հեռանկարովը խանդավառ,  
Կանա՛չ դաշտեր, ոսկի՛ արտեր, կապո՛յտ երկինք...:

Քու վերելքի ճամբուդ վրբայ, խիզախ ու վէս,  
Մի՛ մոռնար մեզ եւ ըրէ՛ որ մենք ալ յետոյ  
Կատարուած մե՛ծ դործին դիմաց երջանի՛կ, դո՛հ,

Խորհինք թէ մենք ալ մաս ունինք այն քրտինքէն՝  
Որ հոսեցա՛ւ ռոճգելու խանձած հողերդ,  
Այն արցունքէն՝ որ ծիլերուդ սնունդ ջամբեց:

**Ա. ՍԵՄԱ.—**

Բուն անունով  
Գեղամ Աթմա-  
ճեան ծնած է  
1908ին Պաֆրա:  
Նախնական կըր-  
թութիւնն աւած  
է ծննդավայրի  
Աղդ. վարժարա-  
նին մէջ:



(1908 — 1940)

**Ա. ՍԵՄԱ.**

«Մշակոյթ» պարբերականը: Ինկած է պատերազմի դաշտին  
վրայ, 1940ին:

★

**1. — ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ**

**Ներգաղթ**՝ հայրենիք վերադառնալ. **նորասեր**՝ նոր պեղ-  
նած, փորուած. **խիզախ**՝ վստահ, անվտիւ. **համարձեւ**. **վե-**  
**հալարտ**, **ինքնազլուելու**. **ուռզեղ**՝ ջրել. **ջամբեղ**. **սալ**, **սնու-**  
**ցանել**, **խմցնել**:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Իբրեւ աւանդ բանաստեղծը ի՞նչ կու տայ դէպի հայրենիք ներգաղթողներուն.— Իր հոգիին երգը ի՞նչ բանին խառնեւ կու գէ.— Հայրենիքի հողերուն վրայ տառապիլն ու աշխատիլը ինչո՞ւ համար խանդավառ կ'ընէ մեզմէ ամէն մէկը.— Հայրենիքի մը վերսշինութեան մեծ գործին պէ՞տք է որ ամէն մարդ. քերէ իր մասնակցութիւնը.— Պիտի փափաքէի՞ք դուրս ալ ձեր աշխատանքին քրտինքովը եւ տառապանքին արցունքովը սուսգեւ մեր հայրենի դաշտերը:

3. Արձակի վերածել այս ստանաւորը



## ՀԱՅ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

1

Մեր նախնիքներու ընտանեկան բարքերուն վրայ դռնէ աղօտ զաղափար մը կաղմելու համար ստիպուած ենք դիմել օտար աղբիւրներու, մասնաւորապէս, այն չրջանի ժամանակակից յոյն եւ ուրիշ աղբերու սլտոմադիրներուն, որոնք սակայն սակաւաթիւ եղած են:

Քսենոփոն քանի մը շահեկան տեղեկութիւններ կու տայ Պարսկաստանէն վերադարձի միջոցին, Հայաստանէն անցած ըլլալով:

Ժողովուրդը, կը գրէր Քսենոփոն, իր «Բիւրուց նահանջ» անուեով շատ հետաքրքրական նկարագրութեան մը մէջ, վաղեմի նահապետական օրէնքներով կը կտտավարուէր: Ամէն մէկ գիւղ կամ աւան ունէր իր առանձին աւատապետը: Գետնափոր բնակարաններ ունէին, դռները նեղ ու խոր, ջրհորի բերնի նման, իսկ ներսի դիմ ընդարձակ: Միայն կենդանիներուն համար

կը բացուէին դռները, իսկ մարդիկ սանդուխներէն կ'ելլէին ու կ'իջնէին:

Տուներուն մէկ կողմը, ախոսներուն մէջ փակուած, այժ, սշխար, կով, հաւ, միտափն կը կերակրուէին: Իսկ միւս կողմը, շտեմարաններ շինուած էին, ցորենով, դարբիով, զանազան արմախքներով ու բանջարեղէններով լեցուն, նոյնպէս զարիէն հանուած տեսակ մը բարկ ըմպելիով, որ շատ ախորժահամ կը թուէր խմողներուն: Կարասներու մէջ կը պահուէր այս զինին, եւ տնեցիները, ամէն անգամ որ ծարաւ զլային, եղէց մը կ'երկնցնէին ու ծծելով կը խմէին:

Նոյնպէս, քանի մը զիւզերու մէջ, հին զինիներ կը զանուէին եւ տեսակ տեսակ անուշահոտ իւղեր, սրտնցմով հայ զիւղացիները կը քսուէին, յունական սովորութեան համաձայն:

Այս տեղեկութիւնները տալէ յետոյ, Քսենոփան կը պատմէ թէ ի՞նչ ազնիւ հիւրասիրութիւն մը ցոյց տուին հայ զիւղացիները Յոյներուն: Անգամին վրայ բերին, կը գրէ, ամէն տեսակ մսեղէն կերակուրներ, գառ, ուլ, հորթ, խոզենի ու հաւ, ցորենի ու դարբի հաց, նաեւ զինի եւայլն:

Ուրիշ օտար ազրիւրներուն տուած տեղեկութիւններուն համաձայն, մեր նախնիքները, բոլոր նախնական ժողովուրդներուն ու ցեղերուն պէս, հովիւ, անդէորդ, երկրագործ թէ պատերազմիկներ, միակ պետի մը հրնագանդոց ընտանիքներէ կազմուած, հասարակութիւններու համախմբում մըն էին: Ամբողջ ընտանիքը, մէջը հաշուելով զաւակները, թոսներն ու անոնց կիները, միեւնոյն բնակարանին մէջ կ'ապրէին, ընտանիքին հօրը խնամակալութեան տակ, որուն իշխանութեան կը հպատակէին այդ ընտանիքի բոլոր անդամները, մանաւանդ տղաքներն ու կիները: Կինը, գրեթէ բոլոր գաստ-

կարգերուն մէջ ալ հասարակ աղախին մը կը նկատուէր, զերի մը, որ ամուսնութեան առիթովը, երբեք օտիտ չէր բերեր իրեն հետ, այլ կը զնուէր, եթէ բռնի չէր առեւանդուած:



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆ

**Աղօս՝** քիչ պայծառ, նուազ յստակ. աւառապետ՝ այն մարդը, իբրեւ հողատէր կամ տանուէր, որ իր հողը ուրիշներուն կու տայ մշակելու համար. **դի՝** կողմ. **անդէրդ՝** նախիր արածող:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ


Մեր նախնիքներուն մասին որ պատմիչը վկայութիւններ ունի.— Այդ դարերուն մեր հայրենիքը ինչպէս կը կառավարուէր.— Ինչպէս էին բնակարանները.— Ուրիշ ինչ տեղեկութիւններ գրի առած է յոյն պատմիչը, Քսենոփոն.— Ինչպէս էր ընտանեկան կեանքը.— Հիմա՞ ինչպէս կ'ապրին հայ ընտանիքները:

### 3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

**ՔՍԵՆՈՓՈՆ.**— Յոյն պատմիչ, որ ծնած է Քրիստոսէ առաջ, 430էն 425 թուականներուն: Նշանաւոր է իր **Բիւրուց Նահանջ**, ուրիշ խօսքով **ճար հազարներու նահանջ** անուանով գիրքը: Անցած է Հայաստանէն, եւ իր այս գիրքին մէջ մենք կը գտնենք շատ թանկագին վկայութիւններ Հայաստանի բնակիչներու նիստ ու կացին մասին:

### 4. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Մեր լեզուին մէջ ունինք նաեւ **նմանաձայն** եւ **բնաձայն** բառեր: Նմանաձայն կը կոչուին այն բառերը որ թէեւ հնչումով իրարու կը նմանին, բայց թէ՛ նշանակութեամբ, թէ՛ ուղղագրութեամբ տարբեր են. օրինակ՝ **զուր** եւ **հող**, **դել** եւ **բել**:



## ՀԱՅ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻԻՆ ՆԱԽՈՐԴ ԴԱՍԻՆ)

### 2

Նահապետին կինը սակայն բացառութիւն մը կը կազմէր: Իբրեւ ընտանիքին տիրուհին եւ զաւակներուն մայրը, ընտանիքի բոլոր անդամներուն կողմէն բացառիկ պատիւներ ու յարգանքներ կը վայելէր: Նահապետին բացակայութեանը, յաճախ ինք կը վարէր անոր իշխանութիւնը, իր անդրանիկ տղուն հետ:

Բնակարանին կառոյքը շատ պարզ էր, անզարդ ու համեստ: Քանի մը գորգեր, վախաթներ, խոհանոցի հողէ կամ պղինձէ անօթներ ու գործիքներ, տիկեր ու կարասներ, ուր ըմպելիները կը պահուէին: Յորենը ձեռնադագճով կ'աղային, ալիւր կը շինէին եւ անխմոր հաց կ'ուտէին, զոր կը պատրաստէին տան կրակարանին մէջ:

Գեղջուկներուն կեանքի պայմաններն ասոնք էին: Թագաւորներուն, հողաւէրներուն եւ ցեղախումբի պետերուն ընտանեկան բարքերը բոլորովին տարբեր էին: Խաղաղութեան ժամանակ, գլխաւորաբար որսորդութեամբ կը պարապէին: Պարսիկներու տարադներով կը հագուէին ընդհանրապէս, խոյր կամ վարսակալ կը կըրէին, երկայն քղանցքով շրջադեպտներ կը հագնէին, մաքեակներ, գինդեր, օղեր եւ ասպարանջաններ կը կը դնէին:

Արեւելքի ժողովուրդներու բազմախմուտ պատմա-գիրը Մասքէրօ, հետեւեալ տողերը նուիրած է նախահայերու ճարտարապետութեան. —

Հայերուն քաղաքները փոքր էին: Անոնք, սուլորաբար քառակուսի երկարութեամբ մը կ'երեւէին: Պարիսպները, կոշտ կաուուցուածքով մը, քառակուսի քարէ դանդուածներով եւ կարգ կարգ խաւերով իրարու վրայ նստած, ո՛չ շաղախ ունէին, ո՛չ ալ ուրիշ կապ: Պարիսպներուն կատարները ասամնաձեւ էին, որոնց եզերքը կը բարձրանային, տեղ տեղ, քառակուսի աշտարակներ: Նեղ ու վտանգաւոր ճամբաներ կ'առաջնորդէին դէպի դուռը: Անհատներու կամ հասարակաց զուաներուն յօրինուածքը բաւական պարզ էր. քարէ կամ աղիւսէ ուղղանկիւնի տուփեր, դուրսէն մերկ դուռներով ձեղքրտուած, բայց, սմանք, իրենց վերեւ ունէին նեւեղիւիքներ:

Իշխանական պալատները մասնաւորներու բնակարաններէն կը զանազանուէին այլեւայլ մասերու ծաւալովը, կազմուած՝ աւելի մանրակրկիտ խնամքով: Այսպէս, վանայ հսկայ բերդը, այսօ՛ր խի հիացում կ'ազդէ ո՛չ միայն իր բնական հրաշակերտութեան, այլ եւ յօրինուածքի ամբուլթեան ու մեծութեան տեսակէտով:



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ .

Կահոյճ՝ կահարասի. անօր՝ սման. ձեռնադաց՝ աղացող գործիք. խոյր՝ թագ. գլխանոց. վարճակալ՝ ծամակալ հին իշխաններու. մանեակ՝. թանկագին քարերու կէտր շքեթալ, որ օղակի ձեւով կը կապուի վզին շուրջ. կ'ըսուի նաեւ քառամանեակ. զինդ՝ օղ. բազմահմուտ՝ շատ ծանօթ, զարգացած. օտդախ՝ ցեխ, շաղած հող եւ կիր. յօրինուածք՝ շինուածք. նեւեղիւիք՝ քալեւու տեղ. մանրակրկիտ՝ մանրաւ մասն. հրաւակերտութիւն՝ սքանչեւի գործ:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Կը հաճի՞ք կրկնել նախորդ դասին մէջ ձեր կարգացա-

ծը.— Մեր նախահայրերը ինչպէս կը կահաւորէին իրենց բնակարանները.— Գիւղացիներուն եւ իշխաններուն սպրեւակներպին մէջ որեւէ տարբերութիւն կա՞ր.— Ուրիշ ինչե՞ր կը պատմուի Հայերու բնակարաններուն մասին:

3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

ՄԱՍԲԻՐՕ.— Ծոնոսայի եգիպտաբան գիտուն մը, որ Եգիպտոսի մէջ կարեւոր պեղումներ կատարած է: Մանօթ է արեւելեան ժողովուրդներու նուիրած իր պատմութեամբ:

4. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Քննադպի կը կոչուին այն բառերը, որ բնութեան ձայներ կը ներկայացնեն. օրինակ՝ բզլիւն, ճռինչ, թնդիւն:



Ց Ա Ն

Սերմանողն է: — Յաղթահասակ կը կանդնի  
Մայրամուտին շողերուն մէջ ոսկեքոյր:  
Ոտքին առջեւ անդաստաններն հայրենի  
Կը տարածեն մերկութիւններն անպարոյր:

Լի է ամբողջ ցորեններով աստղահատ  
Խորունկ գոգնոցն: Հերկերն հերուան՝ ծարաւի՝  
Կը սպասեն իր լայնշի բուռին, եւ բունն այդ  
Արտերուն վրայ՝ գերք արշալոյս՝ կը բացուի:

Մըշա՛կ, ցանէ՛. — յանուն տանըդ սեղանին,  
Թեւիդ շարժումն անպարագիծ թող ըլլայ.  
Վազը՝ նետած ցորեններդ այդ կը թափին  
Օրհնութեան պէս թոռնիկներուդ գլխուն վրայ:

Մըշա՛կ, ցանէ՛. — յանուն լիօթի թըշուտին  
Թող գոգնոցէդ կէս չելլէ ամբողջ բընաւ:

Աղքատ մ'այսօր ճըրադին մէջ տաճարին  
Վաղուան հունձքիդ համար վերջին ձէթը դրաւ :

Մըշա'կ, ցանէ' . — յանուն Տիրոջ նըշխարին  
Թող մատերէդ յորդին սերմեր լուսեղէն .  
Վաղը ամէն մէկ հասկի մէջ կաթնային  
Պիտ' հասուննայ մաս մ'Յիսուսի մարմինէն :

Ցանէ' , ցանէ' . — նոյն իսկ հեռու սահմանէն ,  
Աստղերու պէս , ալիքներու պէս ցանէ' :  
Ծիտերն ի'նչ փոյթ թէ հատիկներդ կ'աւարեն . —  
Տեղը Աստուած պիտի մարդրիտ սերմանէ :

Լեցո'ւր ահօսն , յորդէ' հերկերը բերրի ,  
Հողին ծոցէն ոսկի լոյսեր թող հօսին :  
Օրը ահա կ'իրիկնանայ ու կ'երկարի  
Շուքը թեւիդ հորիզոննէ' ըն աստղային :

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ



### 1. ԲՍՈՒԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Յաղթահասակ՝ բարձրահասակ, խոշոր, մեծ. Ոսկերոյ՝  
ոսկեգոյն. անդաստան՝ արտեր. անպստոյ՝ չբովանդակուող,  
անսահման. տաղաւիտ՝ աստղի նմանող հատիկներով. հեռու՝  
անցեալ տարի. լայնի՝ լայնկեկ. վերք՝ նման, պէս. ան-  
պարագիծ՝ անսահման, անչափ, անբովանդակելի. նօթի՝ ա-  
նօթի. նեխտ՝ մաս, կտոր, մնացորդ, օրհնուած հաց. յորդի՝  
առատ վազել. աւարել՝ յափշտակել. բերրի՝ բարեբեր, ար-  
գաւանդ. իրիկնանալ՝ իրիկուն ըլլալ :

2. Արձակի վերածեղէ վերջ, արտասանել այս քերթուածը :

3. Այս ստանաւորին մէջէն զատեցէք բոլոր այն բա-  
ռերը, որոնք նոյն ընտանիքին կը պատկանին, ինչպէս. ցան,  
սերմանող, անդաստան, ցորեն, հերկ, արօ, մեակ, հունձք,

ճշար, սերմ, հասկ, հասուննայ, ցանկ, հափկ, սերմա.

Եկ եւ անոնցմով կազմեցէք նախադասութիւններ:

4. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐ

Ածանցեալ կը կոչուին այն բառերը որ պարզ բառի մը միացած մէկ կամ աւելի մասնիկով կազմուած են. օրինակ՝

անխելք, վայլուն, դժբախտութիւն:

(Կտնել ուրիշ օրինակներ):



Դ. ՎԱՐՈՒԺԱՆ (1884 - 1915)

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ.— Բուն անունով Դանիէլ Զիպուքքեարեան, ծնած է Սվազի Բրզնիք գիւղը, 1884ին: Յաճախած է Պոլսոյ Վենետիկի Մխիթարեան վարժարանը: Յետոյ Վենետիկ երթալով Մուրատ Ռափայէլեանի շրջանը կը բուրդէ: Անկէ կը մեկնի Պելճիքա՝ Կանտի համալսարանը: Ուսանողութեան օրերուն կաշխատակցի արտասահմանի հայ պարբերականներուն: 1909-1912 տարիներուն կը նուիրուի ուսուցչութեան Պոլիս եւ Սվազ: Կոյս ընծայած է «Մարտուններ», «Զարդը», «Տրտունջ Ե. Տէմիրճիպաշեանի», «Յեղին Սիրտը», «Հեթանոս Երգեր» եւ «Հացին Երգը», բուրդն ալ քերթուածներ: Հայ գրականութեան անդուգական երգիչը կը մնայ Դ. Վարուժան, որ զոհուեցաւ իր բազմաթիւ ընկերներուն հետ 1915ի մեծ տարագրութեան միջոցին:

## ՀԱՅՐԵՆԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին դարերուն ամէն ժողովուրդ կ'ապրէր ինք իր մէջ, կտրուած սերիչ ցեղերէ : Ամէն մէկն ունէր իր յատուկ տօները եւ սովորութիւնները :

Կամաց կամաց ժողովուրդները սկսան յարաբերութիւն մշակել եւ ծանօթանալ իրարու հետ : Անոնք իրարմէ փոխ ասին զանազան սովորութիւններ, եւ ժամանակի ընթացքին սկսան աւելի նմանիլ իրարու :

Այսպէս է որ բոլոր քաղաքակիրթ ազգերը նոյն օրը եւ գրեթէ միեւնոյն ձեւով կը տօնեն Նոր Տարին :

Հին դարերուն ամէն ժողովուրդ ունէր իր նոր տարին : Հայերն ալ ունէին իրենցը, որ ամառը կու գար, մօտաւորապէս Օգոստոս ամսուն, եւ կը կոչուէր Նաւասարդի տօն :

Իր հայրենի հողին վրայ ապրող մեր ժողովուրդը կը շարունակէ դիմաւորել Նոր Տարին իր պայմաններուն համապատասխան ձեւով : Նոյնը կ'ընէինք մենք ալ, երբ կը գտնուէինք մեր հայրենի երկիրը :

Մենք չունէինք Կաղանդի ծառ : Այս սովորութիւնը առած ենք Եւրոպացիներէն :

Դեկտեմբեր 31ը, ինչպէս նաեւ Յունուար 1ը կ'իյնան Մնունդի պահքի շարժուան մէջ : Ծիչդ է որ վերջին տառնամեակներուն հայ գիւղացին անպամ շատ սօլեռանդօրէն չէր բռներ ամէն պահք, բայց Մնունդին նախորդող շրաթը գրեթէ բոլորը կը հրաժարին միսէ, հաւկիթէ, ձուկէ, կաթէ եւ կարագէ : Առանց ասոնց ապրիլը դժուար չէր, որովհետեւ չոր միւրգերը շատ առատ կ'ըլլային ամէն տան մէջ :

Դեկտեմբեր 31ի երեկոյեան համար հայ տանտի-

կինը կը պատրաստէր պահքի կերակուրներ եւ զանազան տեսակի անուշեղէններ : Այս վերջիններէն ամէնէն աւելի սիրուածն ու ընդհանրացածն էր անուշ աղուրը :

Երեկոյեան ճաշէն երկու երեք ժամ վերջ, կը զրուէր Կաղանդի սեղանը, որ կը զարդարուէր մեծ մասով շոր, նաեւ թարմ պտուղներով :

Սեղան նստելէ անմիջապէս ատաջ կը վատուէին ամէն մէկի համար մոմեր :

Երբ ընտանիքին բոլոր անդամները կը շարուէին Կաղանդի սեղանին շուրջը, մեծերը ամէն մէկ պղտիկի կու տային խնձոր մը, որուն վրայ քանի մը պղինձ կամ արծաթ գրամ շարուած կ'ըլլար : Արծաթ գրամ շարելը հարուստներու սովորութիւնն էր :

Պղտիկները կարգով կը համբուրէին մեծերուն ձեռքերը, անոնց օրհնութեան հետ կ'աննէին իրենց նուէր խնձորը եւ կը նստէին իրենց տեղը :

Այդ վայրկեանին կը սկսէր Կաղանդի կերուխումը : Մաղքաճիւղներն իրարու կը յաջորդէին :

Երբ օդը նպաստաւոր ըլլար, տուներու ծխնկայուներէն կողմներով վար կը կախուէին տղոց նուէրները : Փոքրերն այնպէս կը հաւատաւային թէ այդ կողովը վար կը կախէ Կաղանդ Պապան, որ տանիքէ տանիք կ'անցնի եւ նուէրներ կը բաժնէ բարի տղոց միայն :

Երբ մոմերը հատնելու ատիճանին կը մօտենային, կը վերջանար Կաղանդի տօնակատարութիւնը : Ամէն մարդ կը պատրաստուէր քնանալու : Արդէն փողոց ելլել անկարելի էր : Յուրտը սաստիկ կ'ըլլար, փողոցներն ալ մութ :

Առտուն կանուխ կ'ելլէին մեծերը եւ եկեղեցի կ'երթային :

Նոր Տարուան օրը ամէն մարդ կը հապնէր իր նոր զգեստները : Մասնաւորաբար փոքրերը եւ պատանինե-

ըը այս առիթով կը ստանային նոր հաղուստներ, որ-  
պէսզի ամբողջ տարին մաքուր հաղուին:

Տարուան առաջին օրը բոլորն ուրախ տրամադրու-  
թեան մէջ պէտք է ըլլային: Ասիկա կը նկատուէր շատ  
կարեւոր պայման մը, որպէսզի ամբողջ տարին զուար-  
թութիւն բերէր:

Մօտիկ ազգականներ ու բարեկամներ իրարու կ'այ-  
ցելէին եւ կը շնորհաւորէին նոր Տարին:

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

**Մոլեռանդօրէն՝ չտիազանց եռանդով բանի մը յարող-  
մադրանք՝ շնորհաւորութիւն. «տրամադրուիւն՝ վիճակ,  
սպաւորութիւն:**

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Հին դարերուն մէջ ի՞նչպէս կ'ապրէին մարդիկ — Հա-  
յերուն նոր տարին ե՛րբ կու գար. — Կաղանդի ծառի սովոր-  
ութիւնն ունի՞նք մենք. — Կաղանդի սեղանը ի՞նչպէս կը  
պատրաստուի ձեր տան մէջ. — Ի՞նչ սեսակ սովորութիւններ  
վերապահուած էին այդ օրուան համար. — Օտար այս մեծ  
քաղաքներուն մէջ ալ կը տօնե՞նք մեր Կաղանդը հին  
օրերուն պէս:

### 3. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐ

Շատ մը բաւեր երկու նշանակութեամբ կը գործածուին,  
յառուկ եւ փոխաբերական: Յատուկ նշանակութիւնն այն  
է, որուն համար իսկ ստեղծուած է. օրինակ՝ ջուրի աղբիւր,  
սուր դանակ: Բաւ մը փոխաբերական նշանակութիւն ու-  
նի երբ իր նախնական նշանակութեան մօտ տարբեր առու-  
մով կը գործածուի. օրինակ՝ չարիքի աղբիւր, սուր միտք:



## ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

Մօտաւորապէս իննսուըն տարի առաջ, Թրիֆլիսի Արամէլիք քահանան՝ այնտեղ հաստատուած Վանեցիի մը, Սարգիս սղայի այցելութիւնը կ'ընդունի:

— Տէր Հայր, կ'ուզեմ որ դաւակն կարգացնես:

Տէր Արամէլիք կ'օրհնէ սղտիկը, իր քով կ'առնէ եւ պատուական հօր մը պէս գրեւ կարդալ կը սորվեցնէ անոր: Արդէն ինքն ալ այլքան բան միայն գիտէր, բայց կը ներշնչէ անոր ուսման սէրը:

— Կը սորվիս, միտքդ կը բացուի, մեծ մարդոց գիրքեր կը կարդաս, ինքդ ալ մեծ մարդ կ'ըլլաս, յիշատակդ կ'օրհնեն:

Քանի մը տարի յետոյ երբ Ներսէսեան վարժարանը կը բացուի, առաջին արձանագրութիւններէն մէկը կ'ըլլայ այդ տղան: Մկրտիչ կը լքէ յետոյ Ներսէսեան վարժարանը եւ կ'որոշէ Վենետիկ երթալ, բայց բախտը իր ճամբան կը կտրէ եւ զինքը կը նետէ տարրեր ասպարէզի մէջ: Ան կը բարձրանայ օր-օրի, տէրութեան պատուանշաններով կը զարդարուի, կը ստանայ աստիճաններ եւ վերջապէս արժանի կը նկատուի հանդստեան թոշակի:

Բախտը տարօրինակ խաղեր ունի յաճախ: Ինքն ալ կը մտածէ բախտին հետ խաղալ. կը հաւաքէ բոլոր այն տղաքը, որոնք ուսման տեղնայ կը վառէին եւ զանոնք Եւրոպա կը զրկէ որ կրթուին: Անիկա իր տան զոնները բաց կը պահէ ամէն սղգի ուսանողներու եւ իր սեղանը կ'առնէ զանոնք:


Ան կ'ընէ աւելին: Կ'ուզէ այս ուսման մշակներուն գործունէութեան դաշտ մը տալ եւ Կարնոյ մէջ կը հիմնէ Սանասարեան վարժարանը:

Այդ մարդը Մկրտիչ Սահապարեանն էր :

Եւ այսպէս կ'իրականանայ Արամեյիք քահանայի  
բաղձանքը : Իր երբեմնի աշակերտը յաւէտ օրհնելի յի-  
շատակ մը թողած էր :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

\*



ԲԱՐԵՐԱՐ ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

(1818 - 1890)

1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ներքեցիլ՝ ազգեւ, սրտին մէջ զգացուցնիրու եւ մտքին մէջ ալ մտածուցնիրու ծնունդ տալ. «եկե՛ք՝ փոփոք իրակա- նանալ՝ իրական դառնալ, գոյութիւն առնել. յաւե՛ս՝ յա- լիտեան, միշտ:

2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Մկրտիչ Սանասարեանի հայրը ի՞նչ կը խնդրէ քահանա- յէն.— Ինչո՞ւ համար կ'ուզէ որ իր զաւակը ստում առնէ.— Ո՞ր դպրոցը կը յաճախէ Մկրտիչ Սանասարեան.— Կը շարու- նակէ՞ ուսումը թէ ուրիշ տապարէզի մը կը հետեւի.— Ինք որ մեծ ուսում մը առած չէր, ի՞նչ փափոքեցաւ.— Ի՞նչպէս կոչուեցաւ Կարին հիմնած իր վարժարանը:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐ

ԵԱՆ.— Թրքահայ նշա- նաւոր հրապարակագիր, գրագէտ եւ ազգային գործիչ: Ծնած է 1852ին Սեւ Ծովու եղերքը գըտ- նուող Սամսոն քաղաքին առջեւ, շուքնոււի մը մէջ: Ծնողքը Ակնցի էին: Ու- սումը ստացած է Վինկ- տիկի Մուրատ - Ռափա- յէլեան Վարժարանը:

Հիմնած է «Արեւելք», յետոյ «Հայրենիք» օրա- թերթերը, եւ խմբագը- րած է «Մատիս» գրական հանդէսը: Աշխատակցած է արտասահմանի շատ մը թերթերուն եւ վարած՝ բազմաթիւ թերթեր ու հանդէսներ: Իր գլուխ- գործոցը կը նկատուի «Կարմիր ժամուց» վե- սը: Սպաննուած է Գա- հրէի մէջ, 1908ին:



ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ  
(1852 - 1908)

## ԱԼԻՇԱՆԻ ՆԿԱՐԻՆ ԱՌՋԵԻ

Իմ սաշտելի Նահապետին  
Ձինապրսւկ ճակտին համբոյր .  
Աստուածաներկ ալիքներին ,  
Մ'ասեաց փոշին ոսկեփրփուր :

Հողին վասուած , աչքեր ճաճանչ ,  
Թուղթը խարոյկ , ինքը վրկայ ,  
Ձոհը կ'այրի լալահատաչ  
Հայաստանի սրտին վրբայ :

Խորհրդաւոր երազի մէջ՝  
Ուր կ'արբենան բանաստեղծներ ,  
Աստուածափառ լապտերն անշէջ  
Կը սլըլպըլայ օր ու գիշեր :

Ժամը մեղմիկ կը չափչըփէ՝  
Իր հոյիին դարկը վափուկ .  
«Շարժէ գրիչ , կեանքը կարճ է ,  
Կ'անցնին ժամերը խուսափուկ» :

Ու խոնարհած լուռ ճրդնաւոր  
Մագաղաթեայ Նարեկին մօտ ,  
Հողին խաղաղ , պատկերն աղսոր  
Կարծես ծաղոյ դէմքն առաւօտ :

Հ . Վ . ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՀԱՅՐ ՎԱՀԱՆ ՅՈՎ-  
 ՀԱՆՆԷՍԵԱՆ.— Ծնած  
 է Կովկաս, Ախլցխա  
 քաղաքին մօտ, գիւղի  
 մը մէջ, 1894ին: 1908-  
 ին Վենետիկ կ'երթալ.  
 Ս. Ղազար, ուր ինը  
 տարի կ'ուսանի: 1916ին  
 կ'անցնի Հռովմ, եւ  
 վարդապետական աստի-  
 ճան կ'աւնէ: 1922էն  
 վերջ Մուրատ-Ռափա-  
 յէլեանի մէջ ուսուց-  
 չութեամբ ղբաղած է:  
 Հրատարակած է «Հայ-  
 րենի կրակը» 1930ին  
 եւ «Սրտերու Երգը —  
 Վանքի Ծաղիկներ»  
 1939ին, երկուքն աւ  
 քերթուածներու հաւա-  
 քածոներ:



\*

### Հ. Վ. ՅՈՎ, ՀԱՆՆԷՍԵԱՆ

#### 1. ԲՍՈՒԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Այի՛ր՝ հոս կը նշանակէ ճերմկած մազ. բուն նշանակու-  
 թիւնը՝ ջուրի ծփանք. խառոյկ՝ վառուած կրակ. անեղջ՝  
 մշտավառ. խուսափուկ՝ փախչող:

2. Արձակի վերածել այս ոտանաւորը, յետոյ ուղղագրել:

ՆԱՀԱՊԵՏ՝ ընտանիքի մը, աղգի մը գլուխը, պետը:  
 Հայր Աեւոնդ Աւիշտն գործածած է այս բառը, իբրեւ գրա-  
 կան ծածկանուն:

ԽԱԳԱՂԱԹ՝ երբ թուղթ գոյուլթիւն չունէր, մարդիկ  
 ոչխարի եւ այծի մորթը կը յղկէին եւ իբրեւ թուղթ կը:

գործածէին: Ամէնէն հին եւ արժէքաւոր ձեռագիրներու քն-  
դորինակութիւնն եղած է մագաղաթի վրայ:

ՆԱՐԵԿ՝ Գրիգոր Նարեկացի վարդապետին գրած աղօթք-  
ներուն հաւաքածոն: Գրիգոր Նարեկացի, տասնհորդ դարու  
մատենագիր, ծնած է 951ին:

### 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Քարդ կը կոչուին այն բառերը որ մէկէ աւելի պարզ  
բառերու միացումով կազմուած են. օրինակ՝ փայտ. ս. լ. և,  
գործավար, ժամագիրք:

(Դոնեւ տասնական բարդ բառեր):

## ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան ամէնէն  
կարկառուն եւ հայ զրականութեան մեծազոյն վառքե-  
րէն մէկը եղած է Հայր Ղեւոնդ Ալիշան, բանասէր,  
պատմարան, բանաստեղծ, բարոյախօս եւ գիտուն:

Հայ զրականութիւնը հարստացուցած է բազմաթիւ  
արժէքաւոր երկերով՝ նուիրուած Հայաստանի պատ-  
մութեան, աշխարհազրութեան ու երկրաբանութեան,  
ինչպէս «Սիսուան», «Սիսական», «Այրարատ», «Հայա-  
պատում», «Նշմարք եւ Նշխարք Հայաստանի», «Հայ -  
բուսակ», «Հին Հաւաք Հայոց», «Հայ Վենետ», «Հա-  
յաստան յատաժ բան զյինելի Հայաստան», «Յուշիկք  
Հայրենեաց Հայոց», «Սոփերք Հայկական», «Շիրակ»,  
«Երկրագործութիւն եւ Աշխարհազրութիւն Հայաս-  
տանի», եւ այլն:

Իր գործերէն կարեւորները թարգմանուած են օտար  
լեզուներու: Անդամ էր բազմաթիւ օտար գիտական ըն-  
կերութիւններու: Իր բանաստեղծութիւնները ամփոփ-  
ուած են հինգ հատորներու մէջ, «Նուսպք» վերնագրի-

րով: Մոլեգփօրէն սիրած է իր չտեսած հայրենիքը, երգած է զայն երազողի մը յափշտակութիւնովն ու կարօտովը: Ճանչնալու այդ հայրենիքը եւ զայն ճանչցնելու համար, ուսումնասիրած է անոր պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, անոր երկրաբանութիւնն ու բուսաբանութիւնը: Երգած է ժողովրդական թրթռումներով հարուստ քնարին վրայ անոր հերոսները, դէպքերը, գետերն ու լիւսները: Շատ աւելի մատչելի եւ դիւրըմբռնելի իր սնով, քան իր նախորդները կամ ժամանակակիցները՝ ան եղած է առաջին ներշնչողը հայրենասիրութեան՝ մանաւանդ Արեւմտահայերու մէջ եւ նախակարապետը հայրենասիրական բանաստեղծութեան:

Այս բոլորին Հայր Դեռնդ Ալիշան կը միացնէ զխոնականի մը եւ բարեխիղճ պրպտողի մը ուղեղն ու հրմտութիւնը:



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅՅՏՐՈՒԹԻՒՆ

**Կարկառուն՝ աչքի վարնող. մօլեգփօրէն՝ խիստ, կատուդի կերպով. մասչելի՝ մօտիկ, հասկնալի. նախակարապետ առաջին ճամբայ բացող, ցուցնող. բարեխիղճ՝ լաւ խղճմըտանք ունեցող. պրպտել՝ քննել, խուզարկել. հմուտիւն՝ տեղեկութիւն, գիտութիւն:**

### 2. ԳԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Ածանցեալ բառերու մէջ մասնիկները կ'ըլլան կամ նախադաս կամ յետադաս. օրինակ՝ դժբախտ, աւուրուտ, ռժգոյն, նախագաս մասնիկով: Մ'ամիկ, գործիչ, յետագաս մասնիկով: (Գտնել ուրիշ օրինակներ):





ԵՐԿԱՆԵՐ ՊԱՏԱՆԵՆԵՐՈՒ ՏՈՂԱՆՑՔԻ ՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋ

## Հ Ա Յ Ց Ե Ղ Ը

Աշխարհի ամէնէն հին եւ ամէնէն ազնիւ ցեղերէն մէկն է հայ ժողովուրդը: Ան կը սերի հնդեւրոպական կոչուած հին ժողովուրդներէն, որոնցմէ սերած են նաև Եւրոպայի ներկայ քաղաքակիրթ ազգերը: Երբ այսօրուան քաղաքակիրթ ազգերէն շատ շատերը չկային, Հայաստան եւ իր ժողովուրդը գոյութիւն ունէին շէն ու բարգաւառ:

Այն երկրամասը որ յետոյ Հայաստան պիտի կոչուէր, Քրիստոսէ 3000 տարի առաջ քաղաքական ամենահին արձանադրութիւններուն մէջ կը յիշուի Կուարի անունով:

Քրիստոսէ 1800 տարի առաջ Խարբի - Մխտանի անունով հզօր պետութիւն մըն է, որ գոյութիւն ունեցած է նոյն այդ հողամասին վրայ:

Քրիստոսէ 1330 տարի առաջ Նայիրի անունով կը յիշուի այդ միւսնոյն երկիրը ասորական արձանադրութիւններուն մէջ: Քրիստոսէ առաջ 860 թուականին, Ուրարտու անունով պետութիւն մըն է, որ կը ծաղկի հոն, իր ուշադրաւ քաղաքակիրթութեամբ:

Վերջապէս Քրիստոսէ 521 տարի առաջ Արմէն անուն ազգն է, որ յիշատակուած է Պարսկաստանի արձանադրութիւններուն մէջ: Եւրոպայէն է որ կու գար այս Արմէն ցեղը, հիւսիսէն Պալքանեան թերակղզին խուժող բարբարոսներուն առջեւէն փախչելով եւ Փոքր-Ասիա ապաստանելով: Ան հետզհետէ առաջ շարժելով, եկաւ զետեղուիլ հայկական բարձրաւանդակին վրայ, եւ խառնուելով դարերու ընթացքին տեղական ժողովուրդին հետ, ստեղծեց նոր, թարմ, քաղաքակիրթութեան ընդունակ ազգ մը, որ մեր հիմակուան հայ ցեղն է:

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Սերի՛ ծնիւ, առաջ գաւ. Ե՛կն՝ լաւ շինուած. կ'ըսուի՛ նաեւ Ե՛կն մարդ՝ ուրախ զուարթ. բարգաւաճ՝ զարգացած. խուժող՝ յարձակող. բարբարոս՝ վայրենի, անկիրթ:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հայ ժողովուրդը ո՞ր ժողովուրդէն ծագում առած է.— Կրնա՞ք յիշել քանի մը ուրիշ ազգեր ալ, որոնք հնդեւրոպական ծագում ունին մեզի պէս.— Մեր հայրենիքը նախ քան Հայերէն բնակուիլը, ինչ անուններով ծանօթ է պատմութեան մէջ.— Կրնա՞ք տալ քանի մը թուականներ.— Ո՞ր թուականին է, որ առաջին անգամ Արմէն անունով մեր նախահայրերուն խօսքը կ'ըլլայ պատմութեան մէջ.— Մինչեւ հայկական բաբձրաւանդակը հասնիլը. Հայերը ո՞ր կողմերէն անցեր են:

### 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐ

Բառերն իրենց կազմութեան նայելով երեք տեսակ են. պարզ, ածանցեալ եւ բարդ: Պարզ կը կոչուին լեզուին նախնական եւ արմատական բառերը, որոնց վրայ մասնիկ կամ բառ աւելցած չէ. օրինակ՝ վարդ, հաց, ցուն:

## Հ Ի Ի Ղ Ը

Դաշտի ճամբու մը վըրան,  
 Կամ ըստօրոտը լերան,  
 Ուղեւորին ժամանման  
 Հսպասող հիւղն ըլլայի:  
 Ու գգուանքիս կանչէի  
 Ես ճամբորդներն անժաման,  
 Ու ճամբուն վրայ մեմաւոր,  
 Ու ճամբուն վրայ ոսկեման,  
 Եկւորներուն դիմաւոր՝  
 Ծխանիս ծուխն ամպէի:

Ու գրգանքիս կանչէի  
Ուղեւորներ պարտասուն,  
Ու բարեւի փոխան  
Հազար բարիք ես տայի:  
Հազար բարիք ես տայի,  
Քովը կրակին մարմատուն,  
Կուրծքը բերրի դաշտերուն,  
Բոլոր միրգերն աշունի  
Ու մեզը ու կաթ ու դինի...

Ու լըսէի ես ցայգուն,  
Քովը կրակին ճարճատուն,  
Երգն իրիկուան եկւորին,  
Ու ջամբէի ես ցայգուն  
Երազներով պարարուն  
Նիւզ՝ իրիկուան եկւորին:  
Ու լըսէի ես այգուն,  
Սրտապարար ու տրտիուն .  
Քովքն իրիկուան եկւորին:  
Ու ձմեռներն ալ համբուն,  
Հըրաւիրակ գըւարթուն,  
Կանդնէի քովը ճամբուն .  
Ու ձիւնապատ հէք մարդուն  
Ես հայրօրէն, լայնարաց  
Երկու թեւերս պարզէի .  
Մի՛շտ քաղցրագին, նիւթացած  
Հըրաւէ՛րն ես ըլլայի:

Ա՛հ, ըլլայի՛, ըլլայի՛,  
Դաշտի ճամբու մը վըրան,  
Կամ ըստորտոր լերան,  
Ուղեւորին ժամանման  
Հսպասող հի՛ւզն ըլլայի:



ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՑ  
(1885 - 1908)

ՄԻՍԱԲ ՄԵ.  
ԾԱՐԵՆՑ. —  
Ծնած է 1885-  
ին, Բինկեան:  
Աշակերտած է  
Պոլսոյ Կեդրո-  
նական վարժա-  
րանին: Տաղան-  
դաւոր բանաս-  
տեղծ, որ Պետ-  
րոս Դուրեանին  
պէս խոստմնա-  
լից տարիքի մը  
մէջ զոհ գնաց  
թողախտին: Իբ-  
քերթուածներն  
ամփոփուած են  
երկու հատորնե-  
րու մէջ, «Ծիա-  
ծան» եւ «Նոր  
Տաղեր»: Ար-  
ձակ էջերը լոյս  
տեսած են «Ոս-  
կի արիշին տակ»

անունով հատորի մը մէջ: Մեռած է 1908ին, ծանր հոգե-  
վարքէ մը վերջ:

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Հիւզ՝ տնակ, զգուսնի՝ փայփայանք, շոյել. անժաման՝  
չհասնող, ուշ մնացող. մեկնուր՝ առանձին, մինակ. ոսկե-  
ման՝ ոսկիով մանուած, հիւսուած, ոսկեգոյն. զրգանի՝ փսփ-  
կուծիւն, հեշտուծիւն. պարտասուն՝ յոգնած. զոյ՝ տաքու-  
ծիւն. նարնասուն՝ կրակին հանած ձայնը. բերրի՝ բարեբեր.  
ցայգուն՝ ամբողջ գիշերը. ջամբել՝ կերակրել, խմցնել.  
պարտաուն՝ լեցուն. նինջ՝ քնանալը. սրտապարտ՝ լիցուն  
սրտով. համբուն՝ ամբողջ. հրաւիրակ՝ հրաւիրող, կանչող.  
գուարբուն՝ հրեշտակ:

## 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ինչո՞ւ համար բանաստեղծը ճամբորդին համար հիւշ  
ըլլաւ կ'ուզէ.— Կրնա՞ք բացատրել յոգնած ճամբորդին  
տրուելիք բարեփոխումն օրհնութիւնը.— Իուք ալ ճամ-  
բորդա՞ծ էք:

## 3. ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՃՈՒԹԻՒՆ

Վստահ եմ որ ձեզմէ ամէն մէկը որեւէ ճամբորդու-  
թիւն ըրած է, երկաթուղիով, շոգեխաւով կամ կառքով: Շա-  
րադուրութեան իբրեւ վարժութիւն, նկարագրեցէք այդպիսի  
ճամբորդութիւն մը, ընտանիքով կամ առանձին, աչքի առ-  
ջեւ ունենալով Միսսք Մեծարեւոյցի այս զգայուն քերթուա-  
ծը եւ հոն յայտնուող միտքերն ու պատկերները:



## ԽԱՉԵՐ ԱՂԲԱՐ

### 1

Չոյի չոր, երկայնահասակ մարդ մըն էր, ճախ աչ-  
քը արդէն աւրուած ու կէս մը փնուք, դէմքը նիհար,  
չատ նիհար, այտոսկրները ցի'ց եւ ճակատն ու երեսներ-  
ը վաղածամ խորշոմներով. քախծալից, ու մրոտ,  
միշտ մրոտ:

Տարիքն առած չէր, բայց արդէն կսկծազին քայ-  
քայումի մը դառն նշանները կային իր ամբողջ անձին  
վրայ: Քիչ անդամ դուրս կ'ելլէր ներքնատունէն՝ որ  
իր աշխատանոցն էր: Կիրակիները միայն, ան ալ՝ եկե-  
ղեցիէն ետքը, երբ հացը կ'ուտէր ու տանիքը կ'ելլէր  
պտըտելու, ցուփքներուն շրջանը կ'ընէր կամաց կամաց.  
Քիչ մը հոս կը կենար՝ դար վար կը նայէր, քիչ մը հոն  
կը կենար՝ առիցին ծայրով գեանէն խախտած մէկ խի-  
ճը կը նետէր, կամ ձեղքերը կը զոցէր՝ ոտքը քսելով,

քթին տակ երզի մը կամ շարականի մը եղանակը կը մոլտար, ու յետոյ ներս կ'երթար կ'երկննար զով տեղ մը կը քնանար: Շատ չէր ուղեր խանութը աշխատիլ, ուր կը մնային միշտ Համբարձումն ու Աւետիսը:

Համբարձումը մեծ տղան էր, չափահաս, երեսունը անցուկ, որմէ վար տակաւին կային երեք մանչեր ալ. եւ եթէ այդ չորս եղբայրներուն վրայ աւելցնէք երկու աղջիկներ ալ՝ կը տեսնէք թէ Խաչեր աղբարը հարուստ էր զաւակներով: Աստըծու տուածը մեր աչքին ու գլխուն վրայ, ո՞վ անօթի մեռեր է, միայն թէ ո՞ղջ մնային, քարէ պղտիկ չէին, մարդէ պղտիկ էին, վաղը միւս օր կը հասնէին կը հասուննային:

2

Հետաքրքիր տղայ, յաճախ կ'երթայի Խաչեր աղբոր աշխատանոցը, ինծի համար դմելի մը ապսպրելու կամ պարզապէս հասարակ պատրուակով մը: Քաղցրաբարոյ, դիւրահաղորդ էր Խաչեր աղբարը ու հայրական աննման փարութիւն մը ունէր. կը դիտէի իր աշխատութիւնը՝ ու կը հետեւէի իր ձեռքերուն: Որքան ալ որ փոքր ըլլայի, բայց վերջապէս օտար հանդիսատես մըն էի հոն, իրեն քով: Անոր համար Խաչեր աղբար վարպետի մը պաշտօնական, դժուարահաս զիրքը կ'առնէր եւ ճարտար շարժումներ կը փորձէր. հրամանները կտրուկ ձեւով մը, լակոնական ու տիրական շեշտով մը կ'ուղղէր Միքայէլին. քիչ մը բարկացող ու խստապահանջ կը դառնար, ցոյց տալով յայտնապէս թէ արհեստը դիւրին չէր, շատ նուրբ պայմաններով շրջապատուած էր ու ինք փորձառու վարպետ դարբին մըն էր:

Խնճ մարդ: Տակաւին իր պատկերը մինչեւ հիմա աչքիս առջեւ է. կէս մէջքով աղեղած սալին վրայ, մէկ աչքը արդէն կոյր, միւսն ալ հիւանդոտ, ո՛չ այնքան

յստակատես , որ միշտ կը թարթուի , որուն թարթիչները օճախէն ելած փոշիներովը ծանրարեւոտեալ էն ու ճերմկած : Կը խարտէ դանակի մը կոթը կամ երկաթի կոտոր մը՝ որուն ձեւ պիտի տայ . բերնին անկիւնը կը ծոկ , լաւ տեսնելու համար աչքը կը մօտեցնէ ձեռքերուն , ու կը մեմախօսէ հարցական բառերով , որոնք կա՛մ աշխատութեան յաջողութիւնը կը հաստատեն կամ լուսազոյն ձեւի մը գործադրութեան պարագաները ճշգրէլ կ'ուզեն :

Ու ահա մէկ կողմ՝ կը դնէ գործիքները , ծխախոտին քսակը կը հանէ ու գլանիկ մը կը փաթթէ , յետոյ բարի ժպիտով մը կը նայի ինծի , բմբռնալսնելու համար իմ մանկական հիացումս իր արհեստին վրայ :

Կ'երեւակայեմ տակաւին այդ ողբալի աշխատանոցը , որ մթնշաղ էր ու քիչ մըն ալ խոնաւ , եւ որ ամառուան տաք օրերուն զով ըլլալու միակ առաւելութիւնն ունէր : Վերը խոշոր երգիք մը կար , ուրկէ լոյսը կ'իջնէր ուղղակի աշխատողներուն գլխուն վրայ եւ կը լուսաւորէր ծխալից պատերուն շուրջը մէկ քանի հատ հին յղաչներ , կոտրտած կնիւններ , անկիւններուն մէջի ու ատաստաղին սարդի ստապնները , փքոցին հանած մոխիրն ու փոշիները , որոնք թաւեր են ամէն կողմ ու Միքայէլին բաց գլխուն , մաղերուն վրայ : Ամէն բան շուրջս , մանաւանդ բոցոյններն ու կճիճները կը հաստատեն թէ մատան մըն է , որ աշխատանոցի վերածուեր է , գատարկ , աղքատ ու գոյութենէ դադրած մատան մը , ուր տանտիկինին ձեռքն ու ստքերը խարխափելու չեն դար . հացալից կարաներուն մօտենալու համար , ուր շատ շատ կատու մը ողբալից մլաւիւնով մը կու գայ կ'անցնի ու անկիւն մը՝ դրացիին տունէն գողցած ոսկորն , ուտելու կը նստի :

ՌՌԻԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ



Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ  
(1874 - 1915)

մը մէջ, 1910ին: Ֆիլիպպէի մէջ «Ռադմիկ» եւ Պոլսոյ մէջ «Աղատամարտ» օրաթերթերը խմբագրած է: Զոհ 1915ի մեծ տարագրութեան:



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Փնօւք՝ արմատը փուճ. կը նշանակէ սլարապ. վաղածամ կանուխէն. քախժալից՝ տխուր. ոսից՝ կօշիկ. պատուակ՝ պատճառ. քաղցրաբարոյ՝ բնաւորութեամբ անուշ, մեղմ.

ՌՈՒԲԷՆ ԶԱՐ-  
ԴԱՐԵԱՆ. — Ա-  
րեւմտահայ գրա-  
կանութեան վար-  
պետ արձակա-  
գիրներէն մէկը,  
ծնած է 1874ին  
Խարբերդի մէջ:  
Նախնական կըր-  
թութիւնը քա-  
ղաքին ազգային  
վարժարանին մէջ  
ստանալէ վերջ,  
ինքնօգնու-  
թեամբ մշակած  
է իր զարգացու-  
մը: Ուսուցչական  
պաշտօններ վա-  
րած է զանազան  
քաղաքներու  
մէջ, աշխատակ-  
ցելով Պոլսոյ  
թերթերուն եւ  
վարբերականնե-  
րուն: Իր արձակ-  
ներն ամփոփուած  
են «Ծայգալոյս»  
անունով հատորի

դիւրահաղորդ՝ ընկերական. յակոնական՝ քիչ խօսքով յայտ-  
նուած. մենախօսել՝ առանձին խօսիլ. մրցեալ՝ կէս մուժ,  
կէս լոյս. բոլոր կամ բոլոր՝ հողէ աման, ջուր կամ ուրիշ  
քան պահելու համար. կնիմ՝ պտուկ, հողէ աման. խաբխա-  
փել՝ շօշափելով քալել:

## 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Կրնա՞ք քանի մը բառերով պատմել հեղինակին ներկա-  
յացուցած այս գաւառացի տիպարը. — Ի՞նչ էր արհեստով. —  
Դուք ալ դիտա՞ծ էք դարբինի մը աշխատութիւնը:

## Հ Ա Յ Ո Ւ Ն Ի Ն

Աչնան մէջ էր, երեկոյ մը  
Վերադարձիս իսկիւտար,  
Օղբ պարզ էր, հողմը մեղմիկ,  
Ծովուն ջուրերն ալ հանդարտիկ:

Շողենաւին սարաւանդը  
Նըստած անկիւն մ'առանձնաւի՛  
Ուշադրութեամբ ես նոյն օրուան  
Լըրադիրներ կը կարդայի:

Մէկ մ'ալ յանկարծ սանդուխէն  
Վեր ելլելու ոտնաձայն մը  
Շըփոթեց զիս եւ աչերըս  
Դարձուցի դէպ այն կողմը:

Հայուհի մ'էր վեր ելլողն,  
Բարձրահասակ եւ զեղազէմ.  
Անցաւ մօտէս նա սիգանեմ,  
Նստաւ անկիւն մ'ինձ դէմ առ զէմ:

Ո՛հ, կարծես թէ նա երկնային  
Ջըւարթուն մ'էր վար իջած՝

Հոյս սփռելու, սէր բուրելու,  
Խրոնովելու սիրտերն այրած:

Այլ չըզիտեմ թէ ինչո՞ւ

Կրկին աչերըս յառած՝

Իմ թերթիկիս վերայ միշտ՝

Սիրտս էր ամբողջ խրոնոված:

Մինչեւ մէկ մ'ալ նաւաստին

Խուզատ ձայնով գալով մօտ

Ըսաւ. Հասանք Իւսկիւտար,

Ալ ի՞նչ նստեր ես դու հոգ:

Վեր վերցուցի աչերըս

Ոչ ոք տեսայ մէջ նաւին.

Մինակ էինք երկուքնիս,

Մէկ մ'ես, մէկ մ'ալ... նաւաստին:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ



### 1.— ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

**Օտարաւանդ՝** դուրս ցցուած սար. հոս՝ շոգեմաւին բարձր տեղը. **օփօքիլ՝** շփոթութեան մատնեւ. **օրգանեմ՝** գլուխը բարձր բռնած քալող. **գուարբուն՝** հրեշտակ. **խոռովի՝** վերդովեւ. տակնուվրայ ընեւ. **յառելի՝** անշարժ նայիւ. **խապօ՝** հաստ, անախորժ:

2. Արձակի վերսօժեւ այս ոտանաւորը:

3. **ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐ**

**Ան, ապ, չ. դժ, օժ** նախադաս մասնիկները ժխտական իմաստ կու տան եւ կը ծառայեն հակամիշ բառեր կազմելու. օրինակ՝ **անմիտ. ապերախտ. չունեւոր, դժբախտ, օժգոյն, բուրն ալ ածականներ:**

(Ուրիշ բազմաթիւ յետադաս եւ նախադաս մասնիկներ ունի հայերէն լեզուն: Ուսուցիչներէն կը խնդրենք օրինականերով բացատրել զանոնք, երբ կը հանդիպին ընթերցումներու պահուին: Այդ մասնիկներն են, որ կը կազմեն գոյականներ, ածականներ, բայեր, եւայլն:)

## ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Պետրոս Դուրեան ծնած է 1851 Մայիս 20ին, Պոլսոյ Իւսկիւտարի Ենի - Մահալլէ թաղին մէջ աղքատ ընտանիքէ :

Տարրական կրթութիւնը ստացած է թաղին Ճեմարանին մէջ և Կանուխէն աշխատակցած է Օ. Խօճասարեանի «Օրաղիր»ին և Յ. Պարոնեանի «Թատրոն»ին :



ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ  
(1851 - 1872)

Դպրոցէն ելլելէն վերջ ատեն մը մտած է սեղանաւորի մը քով, ինչպէս նաեւ մասնաւոր դասեր տուած է տուներու մէջ: Մեռած է Թոքախտէ: 1893ին իր զործերը ամփոփուած են հատորի մը մէջ: Անոնցմէ թարգմանուած են Փրանսերէնի եւ անգլերէնի:

Պետրոս Դուրեան արեւմտահայ գրականութեան փառքերէն մէկն է: Զգայուն եւ մեկամաղձոտ բանաստեղծ, պատանի հասակէն հիւանդ, չա՛տ երկտասարդ տարիքի մէջ մեռած է: Սիրոյ, բնութեան եւ տառայանքի նուիրուած քերթուածներ ունի, ինչպէս նաեւ թատերական գործեր, «Սեւ Հողեր», «Թատրոն» եւ «Վարդ եւ Ծուշան»:

Դպրոցասէր եւ կրօնասէր եղած է իր ամբողջ մանկութեան ատեն: Օր մը չէ դժկամակիւմ դպրոց երթալու, եւ ընթերցումը խանդաղատանքով սիրած է: Իր բարեպաշտութիւնն ալ, զոր իր ընտանիքէն ժառանգած էր, ամուր մնացած է իր մէջ: Դպրոցական եղած միջոցին, յաճախ տեսած են զինքը, որ առտուն դպրոց երթալէ առաջ եկեղեցի հանդիպած, մոմ մը վառած եւ աղօթք մը ըրած է:

Իր նկարագրին դալով, չափազանց զուարթ էր, գուարնաբան, կատակասէր, միշտ շրթունքին վրայ երգ մը, երբեք երեսը կախած: «Նրբ սենեակին գուռը աղմուկով բանալով ներս մտնէր, կ'ըսէր մայրը, ուրախութիւնը հետը կը բերէր. կ'երգէր, կը խնդար, ասոր անոր հետ կ'իյնար. մեր սիրտը կը բացուէր զինքը տեսնելով»:

Դպրոցին մէջ ալ զուարթ էր. կատակաբան, չարածճի աշակերտ մը նկատուած էր, որուն կատակները թունալից չէին սակայն, որուն չարածճիութիւններն անմեղ էին: Իր բոլոր բարեկամները կը հաստատէին

նաեւ իր աննման բարութիւնը, հեղութիւնը եւ շնորհալի վարքը: Մէկը վշտացուցած չէր երբեք: Ատելութիւնը, ոխը, նախանձը, բամբասանքը անծանօթ մնացած էին իրեն, ինչպէս եւ ամբարտաւանութիւնը, յանձնապատանեութիւնը:

Համեստ, խոնարհ, սիրող ու ներող հոգի մըն էր, ոսկի քնար՝ որուն կոյս թելերքուն վրայ մխայն կրնային թրթռալ ա՛յնքան զգայուն երգեր:



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Դժկամակիլ՝ դժուարը դաւ, նեղանաւ. խաճղադասանք՝ սէր, գուրգուրանք՝ գուարհարան՝ կատակախօս. կուակարան՝ կատակ ընող. ամբարտաւանութիւն՝ հպարտութիւն, ինքնահաւանութիւն, մեծամտութիւն. յանձնապատանութիւն՝ մեծամտութիւն, իր անձին վրայ յոյս դնելը:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Պոլսոյ ո՞ր թաղին մէջ ծնած է Պետրոս Դուրեան ու մանկութիւնն ի նչպէս անցուցած է.— Ի՞նչ կը սլատմեն իր մասին.— Նկարագրով ի՞նչպէս էր.— Իրմէն կը յիշէ՞ք քանի մը քերթուածներ, որոնք կ'երգուին:

### 3. Բացատրել հետեւեալ խօսքին իմաստը.—

Աւելի լաւ է խնամել առողջութիւնը, քան քիւսիւնը:

### 4. ԳԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Իկ, ուկ, ալ յետադաս մասնիկները գոյականին նուազական կամ փաղաքշական նշանակութիւն կու տան. օրինակ՝ մանուկ — մանկիկ, դառն — դառնուկ, դեր — գիրուկ:

Ուհի եւ աճոյց յետադաս մասնիկները գոյականին իգականի իմաստ կու տան. օրինակ՝ ընկեր — ընկերուհի, վարդ — վարդակոյց:

(Գտնել ուրիշ օրինակներ):



## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Որքա՛ն կը տառապէին մարդիկ երբ դեռ տպագրութիւն չկար: Գրքերը ընդօրինակուելով է որ կը տարածուէին ձեռքէ ձեռք:

Հայ ժողովուրդը մէկն էր այն ազգերէն, որոնք ուսման եւ լոյսի ծարաւ, մեծ դարկ տուած էին ձեռագիրներու ընդօրինակութեան:

Ընդօրինակողները առհասարակ վանականներ, քահանաներ, դպիրներ էին, եւ կ'աշխատէին մեծ մասամբ վանքերու կամ եկեղեցիներու համեստ խուցերուն մէջ: Ընդհանրապէս անոնք աշխատած են իշխաններու եւ մեծատուններու ապսպրանքով, ընդօրինակելով եկեղեցիներու կամ աղսպրողներու գործածութեանը համար: Յաճախ ալ աշխատողները իրենք յանձն առած են այդ տխուր խնդր՝ մատուցանելու համար վանքի մը:

Ձեռագիրներու ընդօրինակութիւնը գաբիւրելի աշխատանք էր, զոր սիրով կը կատարէին հայ արուեստագէտները: Ամիսներով ու յաճախ տարիներով առանձնացած խուցի մը մէջ, երբեմն մոմի մը լոյսին տակ, անոնք կ'աւարտէին հսկայ հատորներ, ինչպէս «Աստուածաշունչ»ն ու «Յայսմաւուրք»ը:

Բայց ինչ որ ամէնէն մեծ արժանիքն է եղած հայ արուեստագէտներուն, այն սքանչելի զարդերն են, որոնցմով պիտուած են անոնց ընդօրինակած ձեռագիրները եւ որոնց գեղեցիկութեանը առջեւ կը հիանայ ամբողջ աշխարհ: Մեր ձեռքը հասած ամէնէն հին ձեռագիրը 887ին գրուած Աւետարան մըն է, որ ներկայիս կը պահուի Երեւան: Իսկ ամենահին եւ միեւնոյն ատեն ամէնէն գեղեցիկ ձեռագիրը Մլքէ Թադուհիին Աւետարանն է, ընդօրինակուած 902ին, որ այժմ պահուած է Վենետիկի Մխիթարեան վանքին մէջ:

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Խուց՝ սենեակ՝ ռֆնութիւն՝ չքնանալը. արթնութիւն.  
 մատուցանել՝ տալ. ընծայել. զարհուրելի՝ սոսկալի. շատ  
 վախնալիք. առանձնացած՝ մեկուսացած, մինակ մնացած.  
 պնդելի՝ ղարդարուել. հիանալ՝ ղարմանալ.

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Երբ տալագրութիւնը չկար, մարդիկ ինչպէս կը պատ-  
 րաստէին գիրքերը.— Հայերն ալ ղարդացուցե՛ր էին ընդօ-  
 րինակութեան արուեստը.— Դուք ալ տեսա՛ծ էք հարիւրաւոր  
 տարիներ առաջ ընդօրինակուած գիրք մը.— Ընդհանուր բա-  
 ռով ինչ կ'ըսենք գրուած կամ ընդօրինակուած գիրքերուն:

### 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐ

Հայերէնի մէջ ունինք երեք ղարտուղի ձեւեր. որոնք  
 գլխաւորաբար եղակի սեռականի, տրականի եւ բացառականի  
 մէջ կը տարբերին ընդհանուր ձեւէն, իսկ յոգնակիի մէջ կը  
 հետեւին ընդհանուր կանոնին:

Այդ երեք ձեւերն են հետեւեալները.—

	Ա. Ձեռ	Բ. Ձեռ	Գ. Ձեռ
Ո. Հ.	Հայ	Գիտութիւն	Օր
Ս. Տր.	Հայու	Գիտութեան	Օրուան
Բ.	Հայէ	Գիտութեմէ	Օրէ, օրուքնէ
Գ.	Հայով	Գիտութեամբ	Օրով
		Գիտութիւնով	



## ՀՈՒՆՁՔԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ նախնական եւ անխոտով ու բարի առաւօտներու հայ-  
 կական դաշտեր,  
 եւ դուք հրաշէ՛կ արտեր, հարո՛ւստ մրդաստաններ եւ  
 կենսաժալիտ արօտներ,  
 Դուք՝ մարմարաթաւալ ձորեր, բուրաստաններ եւ ազ-  
 նիւ ու պտղալից այգիներ,

Դուք՝ բոյսի, թռչուններու, ծաղիկներու եւ գեղգեղ-  
ներու աննառելի զրախտավայրեր,  
Զձեզ կ'ոգեկոչեմ, դառնօրէն զձեզ կ'ապրիմ եւ յուսա-  
հատօրէն զձեզ կ'արտասուեմ . . . :

Կապոյտ անսահմանէն հրեղէն արշալոյսն իր շուշաննե-  
րը կը բանայ,  
Եւ ահաւասի՛կ հպարտ աքաղաղը իր արծաթեղէն ձայ-  
նը հնչեցուց :

Գիւղէ գիւղ կոչնակները կը հնչէին : Ներդաշնակ սրինդ  
մը հրաւէրներ կը ցնծար . . .

Եւ հօտերը բլուրներէն վեր կը տարածուէին՝ ժիր ու  
դործօն մեղուններու պարերուն հետ :

Եւ խաղաղութիւնը կ'երգէ : Ծաղիկները կը սարսուան :  
Կոկոնները սրբուհիներու նայուածքներ են  
կարծես :

Իմացած էք սպիտակ ձայնը ջրաղացին, բերրիութեան  
եւ աշխատանքի յարաշարժ մարմին .

Որ սանձակարօտ ձորին կոհակներէն իր հլու եւ անխոնջ  
անիւները կը դարձնէ . . .

Ո՞ր ժամանակէն ի վեր, քաղաքներուն եւ գիւղերուն, իր  
ալիւրին օրհնութիւնը ջամբելով . . . :

Եւ բուխերիկներէն, ատրուշաններու հանգոյցն, առա-  
ւօտեան ծուխը իր խունկը կը ծխէ :

Յուռթի հունձքերու երջանիկ եղանակն է որ կը ծնի :  
Անդաստանը պիտի սկսի : Հունձքերու օրհնութեան ար-  
շալոյսն է այսօր :

Աղօթք մը, բնութեան համար, բարերար բնութեան հա-  
մար, շրթունքներէն թո՛ղ թռչի,

Թո՛ղ հողը իր բիւրասպատիկ ցորեանը պարգեւէ մեզ՝ եւ  
աշխարհի չորս ծայրերու մարդկութեան,

Եւ դրացիին եւ բարեկամին եւ թշնամիին եւ չարին եւ անծանօթին...

Ամէն քաղց թո՛ղ յափրախայ եւ ամէն ծարաւ թո՛ղ սլայ՝ ծառ ջուրէն իր սլապակն յաղեցնէ...:

ՍԻԱՄԱՆԹՕ



ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ. —

Գրական ծածկանուէրով Սիւսմանթօ, ծնած է Ակն, 1 Յունուար 1878ին: Պսլսոյ մէջ կ'աշակերտէ Պէրպէրեան Վարժապետներն: 1894ի քաղաքական դէպքերուն հետեւանքով կ'ապաստանի ժընէվ: Կ'աշխատակցի արտասահմանի կարեւոր թերթերուն եւ հանդէսներուն: Հըրատարակած է «Դիւցազնօրէն», «Հայորդիներ»-ու շարքը, «Հագեվարքի եւ յոյսի ջահեր», «Կարմիր լուրեր բարեկամէս», «Հայրենի հրաւեր», «Սուրբ Մեսրոպ», բոլորն ալ քերթըլածներ: Ասոնցմէ մեծագոյն մաս մը ամփոփուած է «Ամբողջական դործ»-ին մէջ, տըպուած Ամերիկա, Զոհուած է մեծ տրապարտեան տարիներուն:



ՍԻԱՄԱՆԹՕ  
(1878 - 1915)



1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Հրաւէկ՝ կրակ. զեղզեղ՝ երգ. աննաւելի՝ տնտեսմեւի. ցնծալ՝ ուրախանալ. հոս՝ կարգալ, տալ. սլար՝ խաւփ. յա-


բաւարժ՝ միշտ շարժող. սանձակարօս՝ սանձուեւելու, բըռ-  
նուեւելու կարօտ. ջամբելի՝ տալ. հանգոյն՝ նման, պէս. աօրու-  
ցան՝ կրակատուն Պարսիկներու. յուռքի՝ սուստ. անդաստան՝  
արտերու օրհնութիւն. յափրանալ՝ կշտանալ:

2. Բացատրել այս արձակ բանաստեղծութեան ամէն մէկ  
տողին իմաստը, եւ ուղղագրել վերջին տասը տողերը:

### 3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Կան կարգ մը անուններ որոնց հօղովումը միայն եղա-  
կի մէջ կը խոտորի ընդհանուր եւ զարտուղի ձեւերէն: Ա-  
սոնք՝ կը կոչուին անկանոն հոլովումներ, որոնք հետեւ-  
եալներն են. —

Ո . Հ .	Հայր	Տէր	Աղջիկ	Աստուած
Ս . Տ .	Հօր	Տիրոջ	Աղջկան	Աստուծոյ
Բ .	Հօրմէ	Տիրոջմէ	Աղջիկէ	Աստուծմէ
Գ .	Հօրմով	Տիրոջմով	Աղջիկով	Աստուծմով



## ՀԱՅԵՐԷՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

Ոսկեղարու ամէնէն չքեղ զործերէն մէկն է Աստուա-  
ծաշունչի հայերէն թարգմանութիւնը:

Հայ տառերու դիւտէն առաջ, Հայաստանի եկեղե-  
ցիներուն մէջ օտար լեզուներով կը կարդացուէին ա-  
ղօթքները: Մտքով ու հոգիով օտարին զերի էր մեր  
ժողովուրդը:

Տառերու դիւտը, որ տեղի ունեցաւ 405-412 տարի-  
ներուն միջեւ, ողբերգութեամբ վարակեց հայ ժողո-  
վուրդը: Ամէն տեղ սկսան դարձոյցներ բացուիլ, հայ այ-  
բուբենով ու հայ լեզուով դաստիարակելու համար հաս-  
նող սերունդը: Վաղարշապատ հաւաքուեցան բաղձա-  
թիւ խոստմնալից պատանիներ՝ որոնք յետոյ պիտի ըլ-  
լային Սահակին ու Մեսրոպին անմիջական աշակերտնե-

րը: Ուրիշներ ղրկուեցան արտասահման՝ յունարէն եւ ասորերէն լեզուներուն հմտանալու, եւ իրենց դարձին պարասելու համար թարգմանութիւններով:

Բայց տառերու գիւտով սկսած խանդավառ շարժման անդրանիկ պտուղը եղաւ Աստուածաշունչի թարգմանութիւնը: Նախ հապնեպով թարգմանուեցան ինչ ինչ մասեր Սուրբ Գիրքէն՝ անմիջական գոհացում տալու համար ժողովուրդի ծարաւին: Աւելի ետքն էր, որ 431ին, Բիւզանդիոնի Մաքսիմոս Բ. պատրիարքին կողմէ ղրկուած յունարէն վաւերական օրինակի մը վրայէն, ամբողջապէս թարգմանուեցաւ Աստուածաշունչը հայերէնի: Այս թարգմանութիւնը որ տեղի ունեցաւ սոսակերպապէս Մահակ Կաթողիկոսի եւ Եղնիկի աշխատակցութեամբ, աւարտեցաւ 434 թուականին: Բնադրին հետ իր հաւատարմութեանը եւ լեզուական գեղեցիկութեանը համար այս թարգմանութիւնը կոչուած է օտար գիտնականներէն «Թարգմանութիւններու Թագուհի»:



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

**Վարակել՝ բռնել, չորս դին սունել.** խանդավառ՝ եւ ռանդուն. **աճորանիկ՝** առաջին. **հապնեպ՝** շտապով. **վաւերական՝** հարազատ, անվիճելի, ընդունելի:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ոսկեդարու մասին կը յիշէ՞ք ինչ որ կարգացինք ԱՐԱՐԱՏԻ Բ. Գրքին մէջ.— Ո՞ր թուականներուն սեղի ունեցաւ հայ տառերուն գիւտը,— Այդ դիւտէն առաջ եկեղեցիներուն մէջ ի՞նչ լեզուով կը կարգացուէին գիրքերը.— Ո՞ր երկու սուրբերուն կը պարտինք մենք Աստուածաշունչի թարգմանութիւնը.— Ո՞ր բնագրին վրայէն կատարուեցաւ.— Օտար գիտնականները ի՞նչ անունով կը կոչեն զայն:


3. Բացատրել հետեւեալ խօսքին իմաստը.—

**Ամէն բանին սկիզբն է դժուարին:**

#### 4. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՆԵՐ

Յաակացուցիչ կը կոչուին այն սեռական հոլոմֆները որոնք որո՞ւն վերաբերիլը ցոյց կու տան. օրինակ՝ **Արաֆսիին** գլխարկը, որո՞ւն գլխարկը.— **Արաֆսիին** (յատկացուցիչ). **գրֆին** կողքը, ի՞նչ բանին կողքը.— **գրֆին** (յատկացուցիչ):

Յաակացեալ կը կոչուին այն անունները, որոնց որո՞ւն վերաբերիլը ցոյց կու տայ յատկացուցիչը: Վերի օրինակներուն մէջ զլխարկը եւ կողքը յատկացեալ են:



### Թ Ա Փ Ա Ռ Ա Կ Ա Ն

Նորից կը թողնեմ քաղաքն աղմկոտ  
Ու ճամբայ կ'ընկնեմ յաւէտ միայնակ.  
Անխօս կը մարի երեկոն աղօտ,  
Կը սլառկեմ դաշտում կանաչ ծառի տակ:

Կը մոռնամ հեռուի աղմուկը ահեղ,  
Կը զգամ համբոյրը ուրիշ օրերի,  
Լոյս երազների գիշերը շքեղ  
Սրտիս անծանօթ վայելք կը բերի...

Հեռաւոր մարդոց ցաւերը կը զգամ,  
Կարկաչող ջրի լացը կը լսեմ,  
Հողը կը գրկեմ, ջերմ կը հեկեկամ,  
Վառ աստղերի հետ անուշ կ'երագեմ:

Անտուն անցորդից կը խնդրեմ ես հաց,  
Պայծառ աղբիւրի ջուրը կը խմեմ,  
Լայն երկնքի տակ հաշտ ու սրտաբաց  
Քնքոյչ ծաղկանց հետ խաղաղ կը քնեմ...

ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ

**ՎԱՀԱՆ ՏԷՐ-**  
**ԵԱՆ.** — Իսկական  
անունով Վահան  
Տէր Գրիգորեան,  
ծնած է Ախալ-  
քալաքի Գաւնձա  
գիւղը, 1885ին:  
Նախնական կըր-  
թութեան հոգը  
կը ստանձնէ հայ-  
րը: Երբ կը մեծ-  
նայ, ղինքը կը  
ղրկեն Մոսկուա-  
յի Հազարեան Ճե-  
մարանը, զոր կա-  
լարտէ 1906ին:  
Յետոյ կը մտնէ  
Մոսկուայի Հա-  
մալսարանը, բար-  
ձրագոյն կրթու-  
թիւն ստանալու  
համար, հետեւե-  
լով պատմու-  
թեան, լեզուա-  
բանութեան եւ  
գրականութեան:  
Վ. Տէրեան շատ  
կանուխէն սկսած



**ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ**  
(1885 - 1920)

է քերթուածներ գրել: Իր բանաստեղծութիւններու առաջին  
ժողովածուն, «Մթնշաղի Անուրջներ» լոյս կը տեսնէ 1908ին:  
Երկրորդ ժողովածուն՝ 1912ին, իսկ ընծայած է «Գարուն»  
պարբերականը: Կը մեռնի 1920ի ձմրան, Օրէնբուրգի մօտ:

\*

1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Ահեղ՝ ահաւոր, վախնալիք. հաւե՞ս խողաղ:

2. Արձակի վերածել այս քերթուածը:

3. Ուսուցիչներէն կը ինդրուի աշակերտներուն բացատրել արեւելահայ բարբառին քերականական քանի մը կանոնները, տրուած ըլլալով որ այս քերթուածին հեղինակը արեւելահայ գրագէտ մըն է:

4. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՆԵՐ

ԱՐԱՐԱՏ Բ. Գրքին մէջ տեսանք գոյականներու հոլովումին կանոնաւոր ձեւը միայն, որ է՝

	Եզակի	Յօգնակի
Ուղ. հյց.	Վարդ	Վարդեր
Սեռ. տրակ.	Վարդի	Վարդերու
Բացառ.	Վարդէ	Վարդերէ
Գործ.	Վարդով	Վարդերով

Ասկէ առաջ մենք տեսանք զարտուղի հոլովման երեք ձեւեր: Ա. ձեւին պէս կը հոլովուին բազմաթիւ միավանկ անուններ, ինչպէս՝ մարդ, կով, հաւ, նաւ, ծով, թի, ձի, գաւ, եւայլն:

Բ. ձեւին պէս կը հոլովուին քիւնով վերջացող բառերը. ինչպէս՝ բարուքիւն, մաքրութիւն, զօրութիւն, եւլն:

Գ. ձեւին պէս կը հոլովուին գրեթէ բոլոր ժամանակ ցոցնող բառերը. ինչպէս՝ ամառ, ձմեռ, ամիս, գիշեր, ցերեկ, առօր, եւայլն:



ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԸ

1

Իւրաքանչիւր անհատ, ընտանիք, դիւղ կամ քաղաք կրնան ունենալ իրենց յատուկ տօները, որոնք միմիայն այս կամ այն քաղաքին յատուկ են: Այսպիսիները կը տօնուին օրուան տիրոջ եւ անոր բարեկամներուն կողմէ:

մէ : Լայն շրջանակները չեն հետաքրքրուիր անոնցմով :  
Ուրիշ բնոյթ ունին ամբողջ ցեղին , ժողովուրդին  
կամ ազգին պատկանող տօները : Ասոր համար ալ նման  
տօները կը կոչուին ընդհանրական , այսինքն ամբողջ  
ժողովուրդին կամ ազգին պատկանող , աւելի կարճ  
խօսքով՝ ազգային տօներ :

Այս կարգի ընդհանրական տօներու նիւթ կը հայ-  
թայթեն ազգի մը պատմութեան մէջ մշտական դեր կա-  
տարած դէպքերն ու դէմքերը : Այսպէս , աշխարհի չորս  
կողմը ցրուած հայութեան հատուածները , քաղաքական  
ի՛նչ միութեան եւ կրօնական ի՛նչ դաւանանքի ալ պատ-  
կանին , երախտադիտութեամբ եւ հպարտութեամբ կը  
տօնեն Վարդանանցը , որուն մասին , կը յիշէք անշուշտ ,  
ԱՐԱՐԱՏԻ երկրորդ գրքին մէջ կարդացիք քանի մը տե-  
ղեկութիւններ :

Տարբեր չէ նաեւ Մշակոյթի Օրը , որ թէեւ մերջին  
տասնամեակին ընդհանրանալ սկսած է , բայց մի՛շտ ալ  
տօնուած է հայ ժողովուրդին կողմէ : Մեր ազգային  
եկեղեցիի տօնացոյցին մէջ յիշատակուող Աւագ եւ  
Կրտսեր Թարգմանիչներուն անուններն ու անոնց վա-  
յելած պաշտամունքը , որոչպէս կը ցուցնեն թէ մեր  
ժողովուրդը ի՛նչպիսի սիրով միացած է Մշակոյթին եւ  
անոր ծառայողներուն :

## 2

Ի՞նչ է սակայն Մշակոյթը :

Ժողովուրդի մը կեանքին բոլոր տեսակի արտայայ-  
տութիւններուն գումարը կը կազմէ այդ ժողովուրդին  
մշակոյթը :

Այն օրէն որ ժողովուրդ մը կը սկսի ունենալ իր  
երգը , առասպելը , հէքեաթը , հող չէ թէ այդ ամէնը  
բերանացի փոխանցուի մէկը միւսին , — այդ օրէն կը

սկսի այդ ժողովուրդին մշակոյթը, որ հետզհետէ կը  
զարգանայ ու կը կատարելագործուի:

Հայ մշակոյթը, ուրեմն, նոյնքան հին է, որքան  
ինքը հայ ժողովուրդը, որ միշտ ալ երբեք կամ պատ-  
մած է իր կեանքի այս կամ այն դրուաւը:

Մեր պատմագիրներէն ոմանց ըրած հարեւանցի յի-  
շատակութիւնները կը ցուցնեն թէ, դեռ Չորրորդ դա-  
րէն առաջ մեր նախահայրերը ունեցեր են բաւական  
բարձր աստիճաններու հասած մշակոյթ:

Իսկ հայ գիրերու գիւտէն յետոյ սկսած եւ գրեթէ  
անընդհատ մինչեւ մեր օրերը շարունակուող մեր մշա-  
կոյթը կրնայ բաղդատութեան դրուիլ որեւէ ազդի մը-  
շակոյթին հետ, անշուշտ նկատի առնելով մեր քաղա-  
քական կեանքի յաճախակի փոթորկումներն ու անկա-  
յուն վիճակը:

Մեր ժողովուրդի նկատ ու կացին աւելի բարձր մա-  
կարդակը, բազդատելով իրեն բնակակից ուրիշ ժողո-  
վուրդներու հետ, մեր ընտանեկան դաստիարակութեան  
եւ ըմբռնումներուն բարձրութիւնը, մեր կրօնական հա-  
ւատալիքներու նրբութիւնը, մեր աւանդութիւններուն  
ոգին, հայ դպրոցներու զարգացումը, հայ նկարչութիւ-  
նը, հայ ճարտարապետութիւնը, հայ ժողովրդական  
երգը, հայ բանահիւսութիւնն ու դրականութիւնը մէկ  
մէկ անհերքելի փաստեր են, թէ մենք ունեցած ենք եւ  
ունինք սեփական մշակոյթ:

Եւ եթէ մենք մինչեւ այսօր կը պահենք մեր ազգա-  
յին գիմադիծը, այդ կը պարտինք հայ մշակոյթին, որ  
յաճախ եղած է ու այժմ ալ է Սփիւռքի հայութեան  
միակ ընդհանրական եւ զօրաւոր կապը:

արժէք մը չէ միայն, այլեւ դեռ շարունակուող եւ վարդացող կենդանի ուժ մը, որ ներկան կը միացնէ անցեալին եւ ապագայի ձգտումներուն ձեւ կու տայ, իր սնունդն առնելով անցեալէն ու ներկայէն:

Հայ մշակոյթի զանազան տեսակի եւ տարբեր ժամանակներու արտայայտութիւնները իրար կը բերէ եւ ամբողջութիւն մը կը կազմէ Հայ Գիրքը, որուն շնորհիւ այդ արժէքները կը վերկուին կորուստէ եւ մատչելի կը դառնան իրարու յաջորդող սերունդներուն:

Ահա թէ ինչո՛ւ շատ բնականօրէն Հայ Մշակոյթի Օրը կը դառնայ նաեւ հայ զիրքի, այսինքն ընթերցասիրութիւնը խթանող օր:

Նոյն պատճառով է նաեւ որ Հայ Մշակոյթի Օրը նոյնացած է Աւագ եւ Կրտսեր Թարգմանչաց տօնին, որ նուիրուած է Հայ Գրականութեան հիմնադիր եւ Ոսկեդարը կերտող Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի, Մովսէս Խորենացիի, Եղնիկ Կողբացիի, Ղազար Փարսեցիի, Եղիշէի, Կորիւնի եւ ուրիշներու գործի պանծացումին:

Սիրենք Հայ Գիրքը եւ անոր միջոցով ծանօթանա՛նք Հայ Մշակոյթի արժէքներուն:

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻԻՆ

Բնոյթ՝ բնաւորութիւն. դրուագ՝ աւանդութիւն, անցուդարձ. հարեալացի՝ վերի վերայ, թեթեւ. մակարդակ՝ երես, մակերես, աստիճան. բնակակից՝ մէկտեղ բնակող. բանահիւսուրիւն՝ բանաստեղծութիւն, հիւսուած բան. սփիւռ՝ չորս կողմը ցրուած. ձգտում՝ փափաք, ցանկութիւն, բանի մը հասնիլ. խրանող՝ քաջաւերու, մղող. պանծացնել՝ մեծցընել. հռչակել, բարձրացնել:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Կրնա՞ք բացատրել թէ ի՞նչ տարբերութիւն կայ անհա-

տական եւ ազգին պատկանող տօներուն միջեւ.— Որո՞նք են  
հայ ազգային մէկ քանի տօները.— Ի՞նչ կը հասկնանք մշա-  
կոյթի օր ըսելով.— Ի՞նչ գիտէք հայ ոսկեգարին մասին.—  
Այս հատուածին մէջ ո՞ր մատենագիրներուն մասին իօսուած է:

## ԵՐԿՈՒ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

### 1

#### ՀՈՒՆՁՔԸ

Հոյսի հունձք կայ այս գիշեր,  
Ծաղիկներէն աստղերուն.

Հուսինը՝ մանդաղ, այս գիշեր,  
Կը քաղէ հունձքն աստղերուն:

Հոյսի հունձք կայ այս գիշեր,  
Ոսկեշառայլ աստղերուն.

Նուրբ մահիկ մը՝ այս գիշեր,  
Կը քաղէ հունձքն աստղերուն:

Բախտին մանդաղն, այս գիշեր,  
Կը քաղէ հունձքն ամէնուն.

Յոյսի հունձք կայ այս գիշեր,  
Տիեզերքին մէջ անհուն:

### 2

#### ՀԻՒԼԷՆ

Տիեզերական, մեծ ու ահաւոր,  
Այս քառսին մէջ՝ հիւլէ մը անտես,

Ի՞մ երազներովս այնքան մեծ եմ որ,  
կարծես թէ հիւլէն ա՛ն է, ո՛չ թէ ես...

Աննշան հիւլէ՛, ես միշտ տարագիր,  
Անդունդին խորը կորսըլած այս գէջ,  
Հողիս լայնատարր ու անպարագիր,  
Կը խտացընէ տիեղերքն իր մէջ:

Բայց ի՛նչ հեղնութիւն. ես՝ անպարտելին,  
Ի՞մ ճղտումներովս հզօր ու անմահ...  
Կը պայթի հովը ճակատադրային,  
Հսկայ Երազը կը քանդէ, կ'երթայ...

## ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

★

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆ

Ոսկեառայլ՝ ոսկիէ ճառագայթ. մահիկ՝ նոր ծնող լուս-  
սին, եղջիւրի ձեւով. քառս՝ անձեւ զանգուած, տակնուվրա-  
յութիւն. հիւլէ՛ նիւթ, անտեսանելի մարմին. քարագիր՝ օ-  
տար. գէջ՝ թաց, խոնաւ. լայնաքարր՝ լայն ու արձակ. ան-  
պարագիր՝ անսոսման, անչափ:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Առաջին ոտանուորին վերջին քառեակին մէջ ի՛նչ բանի  
կ'ակնարկէ քերթողը, երբ կը գրէ «Բախտին մանգաղն այս  
գիշեր, կը քաղէ հունձքն ամէնուն».— Հակառակ մահուան  
ստուերին, ի՛նչ կը գտնէ ան անհուն տիեզերքին մէջ.—  
Մարդը, որ աննշան հիւլէ մըն է, շնորհիւ իր իտէալներուն,  
ի՛նչ բանի հետ կը բաղդատուի երկրորդ քերթուածին մէջ.—  
Ի՛նչ կը նշանակէ «Կը պայթի հովը ճակատադրային, հսկայ  
երազը կը քանդէ, կ'երթայ»:

3.— Արձակի վերածել այս քերթուածները:

★

**ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ.**— Ծնած է 1883ին, Ակնայ Ապշուղա գիւղը: Նախնական կրթութիւնը գիւղին վար-



**ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ**  
(1883 - 1944)

ժարանին մէջ ստանալէ յետոյ, Պոլիս կը մեկնի, անկէ Արմաշ, ուր կը մնայ երեք ու կէս տարի, աշակերտելով Դուրեան, Գուշակեան սըրբազաններուն: Կանուխէն կը սկսի իր գրական գործունէութիւնը, աշխատակցելով սոցսահայ բոլոր թերթերուն եւ պարբերականներուն: 1910ին կը հիմնէ «Շանթ» գրական գեղարուեստական պարբերա-

թերթը: 1904էն սկսեալ լոյս կ'ընծայէ քերթուածներու հետեւեալ հատորները՝ «Անըջանք», «Պատրանքի ծաղիկներ», «Բրիզանթէմ», «Նիրուտին զոհերը», «Բանաստեղծին սիրտը», «Մարմներգութիւն» եւ «Սարգիսիին», ինչպէս նաեւ «Հսկումը» (տոսմ մէկ արարուածով), «Մեր տարեցոյց»ներուն շարքը 1911-1914, եւ «Կեանք եւ Արուեստ» տարեգիրքերը 1931-1935, Յանկարծամահ եղած է 1944 Հոկտեմբեր 16ին:

#### 4. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐ

Սահմանական եղանակը ունի նաեւ իր անկատար ապառնին.—

Պիտի գրէի	Պիտի խօսէի	Պիտի կարդայի
Պիտի գրէիր	Պիտի խօսէիր	Պիտի կարդայիր
Պիտի գրէր	Պիտի խօսէր	Պիտի կարդար
Պիտի գրէինք	Պիտի խօսէինք	Պիտի կարդայինք
Պիտի գրէիք	Պիտի խօսէիք	Պիտի կարդայիք
Պիտի գրէին	Պիտի խօսէին	Պիտի կարդային

Այս երեք լծորդութիւններուն հրամայական եղանակը չտեսեալն է.—

Գրէ՛ - Գրեցէ՛ք, խօսէ՛ - խօսեցէ՛ք, կարդա՛ - կարդացէ՛ք

Հրամայական բայերուն վրայ շեշտ կը դրուի:

---

### ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ

Մինչեւ հինգերորդ դար հայերէն լեզուով դրական աշխատութիւն մը չենք ունեցած, չունենալով մեր սեփական գիրը, որուն միջոցաւ միայն, կարելի էր պատկերացնել լեզուն անսայթաք ուղղութեամբ, իր բովանդակ ճայնական յատկութիւններուն մէջ: Սակայն այդ անգիր ժամանակամիջոցին ծաղկած է մեր մէջ բերանացի դրականութիւն մը այլեւայլ տեսակներով: Անոնց լաւագոյնները, գիցարանական կամ գիւցազնական երգերու պատառիկներ միայն ըլլալով, գեղեցիկ զարգը կը կաղմեն մեր հին քանահիւսութեան: Երկրին ամէն կողմերը երգիչներու կամ գուսաններու նիւթ մատակարարող հայ վիպասանութեան կամ հագներգութեան այդ զրուագները, որոնք սովորաբար քամքիռով կ'երգուէին, հեղինակի անունով ծանօթ չեն մեզի:

Ընդհանրապէս Գողթան Երգեր կը կոչուին անոնք,

թերեւս այն պատճառով, որ Գողթնեցիք երկար ատեն  
հեթանոսութեան մէջ մնալով, ուրիշ հայ բնակչութիւն-  
ներէն աւելի աւանդապահը եղան այդ սիրուած առաս-  
պելներուն:

ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ

★

### 1. — ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

**ԱՆՍԱՅՐԱՒ՝** չսահող, հաստատ, անվտանգ. **բանահիւսու-  
թիւն՝** գրականութիւն. **գոլտան՝** երգող. **մասուկաբարել՝** սաւ,  
բաշխել. **հազներգութիւն՝** երաժիշտէ մը կամ քերթողէ մը  
երգուած դիւցազներգութիւն. **բամբիռ՝** նուագախօսն. **առաս-  
պել՝** շինծու պատմութիւն, առակ:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Մեր գիրերու գիւտէն ու մատենագրութենէն սոսք հա-  
յերէն լեզուով որեւէ գրական աշխատութիւն ունեցած ենք.  
— Ի՞նչ տեսակ գրականութիւն սակայն ծաղկած է. — Ի՞նչ  
կը հասկնանք Գողթան երգեր ըսելով:

(Եղիշէ Արք. Գուրեանի կենսագրականը կարգու էջ 42ին  
վրայ):

### 3. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՆԵՐ

Նախագատութեան մէջ բայը իր տէր բային հետ կը հա-  
մաձայնի թիւով եւ դէմքով. այսինքն բայը եղակի կ'ըլլայ,  
երբ տէր բային եղակի է: Ընդհակառակն եթէ տէր բային  
յոգնակի է, բայն սը յոգնակի կ'ըլլայ. օրինակ՝ **Ծս խօսե-  
ցայ** (եղակի), **մենք խօսեցանք** (յոգնակի):

Եթէ բայը մէկէ աւելի եղակի տէր բայինք ունենայ,  
յոգնակի կը դուրսի. օրինակ՝ **Եզն ու կովը բնեանի կենդա-  
նիքն են:**

(Տաւ հինգական օրինակ, վերը բացատրուած կանոնները  
նկատի ունենալով):

## ԻՆՁ Է ԱՆՏՈՒՆԻՆ

1

Կը կարծուի թէ Անտունի կը նշանակէ «առանց տունի ստանաւոր»։ Այս բացատրութիւնը շատերուն կողմէ արուած է, սակայն ճիշդ չի թուիր ինծի։ Ստեղծագործող ժողովուրդը բանաստեղծութեան մը արտաքին պայմանները նկատի չունենար՝ անոր անունը դնելու կամ զայն որակելու ատեն։ — Ուրիշներ կը բացատրեն, թէ Անտունի կը նշանակէ «տուն չունեցողի, պանդուխտի երգ»։ Այս զաղափարը կը յայտնէ Կոմիտաս վարդապետ։ Սակայն այս բացատրութիւնն ալ ճիշդ չի թուիր, որովհետեւ Անտունին նախ միշտ պանդուխտի երգ չէ, եւ երկրորդ՝ բոլոր պանդուխտի երգերը Անտունի չեն։ Անտունի բառը ունի նաեւ երկու ուրիշ ձեւեր ալ՝ Անտոնի եւ Անտոնիկ, որոնք կը գործածուին Արարիկի զիւղերէն Անջրդիի, Մաշկերտի եւ զեռ ուրիշներու մէջ։ Ամէն պարագայի մէջ, Անտունին անբացատրելի կը մընայ միշտ զրահանութեան մէջ իբրեւ ինքնուրոյն սեռ մը, տեսակ մը հայկական պալլատ։ Հայ ժողովրդական բանահիւսութեամբ զբաղողները գիտեն, թէ զրահան այս սեռը Ակնայ մէջ կը գտնուի։ Անտունին սերտօրէն կապուած է այդ քաղաքին անուան հետ։

Անտունիները անչառ, ու մանր զրահան կտորներ չեն, այլ պատառիկներ են մեծ ու հոյակապ տսիւմիկ սիրավէպի մը, որուն ամբողջութիւնը կտրտուած է, աւա՛ղ։ Չենք կրնար բանասէրներու ուշադրութեան չըրանձնել նաեւ ուրիշ պարագայ մը, որ Անտունիներու ծագումը կրնայ հասցնել ասնուագն մինչեւ հինգերորդ դար, մինչեւ մեր զրահանութեան Ոսկեդարը։

Անտունիներէն ոմանց, ինչպէս նաեւ Ակնայ երգե-

րէն շատերուն մէջ կը տեսնուի յայտնի նմանութիւն մը մեր միջնադարեան հոյակապ երգիչ Նահապետ Քուչակի տաղերուն հետ: Խնդիր է դիտնալ, թէ Ակնցի՞ք է որ Քուչակէն սորված են այդ երգերը եւ բերնէ բերան աւանդաբար հասցուցած մեզի, թէ՞ Քուչակ, որ զանոնք առած է ժողովուրդէն եւ իր անձնական դրոշմն ալ տալով անոնց՝ վերարտադրած է իրբեւ իր սեփական մտքին արդիւնքը: Ահա՛ դարձեալ ուրիշ հարց մը:

2

Բովանդակ հայ ժողովրդական բանաստեղծութեան մէջ, եթէ կայ սեռ մը, որ ամէնէն աւելի հայեցի ըլլայ իր արուեստով, իր լեզուովն ու ոճով, այն ալ ապահովաբար Անտունին է:

Անտունին գերազանցօրէն հայ մտքի ստեղծագործութեան արդիւնքն է: Անոր մէջ կարելի չէ տեսնել ո՛չ օտար ազդեցութիւն, ո՛չ փոխառութիւն, ո՛չ ալ ոեւէ նմանողութիւն:

Անտունիները որոշապէս երգչի մը, այսինքն անհատի մը զգացումներուն անձնական դրոշմը չեն կրեր: Այս երգերը, ինչպէս ժողովուրդի մտքին լոյսը միւս արտադրութիւնները, առաւելապէս իրենց դոյութիւնը կը սարտին հայ ժողովուրդի հաւաքական աշխատանքին:

Ժողովրդական երգերուն ծագումը պէտք է վերադրել անհատի մը, այո՛, սակայն անոնց ընդլայնումը, կատարելագործումը, կրած փոփոխութիւնները ժողովուրդինն են, որ այսպիսով կը ստանձնէ հայրութիւնը իր մէկ գաւիին ստեղծագործութեան: Անտունին կրնայ ըլլալ գերազանցապէս սիրամիտ՝ փափուկ ու խոր միանգամայն, լի կանացի քնքշութիւնով, յուզիչ ու սրտ-

կերաւոր, եւ դարձեալ «օրօր» եւ «լաց» կամ մահերդ: իր դլխաւոր յատկանիչն է, առաջին՝ իր լեզուն, որ պատկանելի հնութեան մը դրոշմը կը կրէ, ողողուած ըլլալով դրարարի յատուկ բառերով, հօլովումներով, ասուքիւններով եւ դարձուածքներով, «ի» նախդիրին յաճախակի դործածութեամբ եւ իր քերականական համաձայնութեան հայկական դրոշմով: Երկրորդ՝ իր չափը, բուն հայկական տաղաչափութիւնը, որ երբեք երեւան եկած ըլլայ այնքան վճիտ ու անվար կերպով, որչափ Անտունիներուն մէջ:

ՎԱՀԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Որակել՝ անունը տալ, յատկութիւնը ճշգրիտ ինքնուրոյն՝ մասնաւոր. առանձին. անջատ՝ զատուած. տեղիկ՝ ազգային. ասուքիւն՝ խօսք, բառ. անվար՝ անարատ, անխառն, անհղծ:

### 2. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Ի՞նչ կը նշանակէ Անտունի.— Ո՞ր քողագին մէջ երգուած է տմէնէն աւելի.— Միջնադարեան ո՞ր երգիչին տաղերուն հետ նմանութեան գիծեր կը բերէ Անտունին.— Որեւէ օտար ազգեցոթիւն կարելի է գտնուիլ գլխաւոր այդ սեռին մէջ.— Որո՞նք են Անտունիի մը գլխաւոր յատկանիչները:

ՎԱՀԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ.— Ծնած է Ակնայ մէջ: Նախնական ուսումնաւորութեամբ է ծննդավայրի վարժարանին մէջ, եւ յետոյ անցած է Կարին եւ աւարտած Ստանապոլեան Վարժարանի շրջանը: Գաւառներու մէջ վարած է ուսուցչական պաշտօններ: Հաւաքած է բազմաթիւ ժողովրդական երգեր, Անտունիներ, որոնք անտպ կը մնան:

### 3. ԲԵՐՍԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՆԵՐ

Խօսքի մը մէջ մէկէ մէկէ աւելի նախադասութիւններ կան, որոնք զիրար կը լրացնեն:

Բացարձակ կամ անկախ կը կոչուի այն նախադասութիւնը որ ինքնին իմաստ մը կը յայտնէ առանց ուրիշ նա-

խաղասութիւններու օգնութեան. օրինակ՝ պատերազմը մարդ-  
կային չարիք մըն է:

Իրարու հետ իմաստի աւնչութիւն ունեցող մէկէ աւելի  
անկախ նախադասութիւններ կը կոչուին համադաս նախա-  
դասութիւններ. օրինակ՝ Փամանակը կ'անցնի, մարդիկ կը  
փոխուին եւ իրարու կը յաջորդեն, բայց աշխարհ  
նոյնը կը մնայ:



## ՀԱՅ ԼԵԶՈՒՆ

Բերդը անառիկ յաւերժութեան մեր,  
Դարերու անեղծ բարձունքին վրայ,  
Հիմերով անխախտ կանգներ է հիմա,  
Ծոցին մէջ զըրկած մեր փառքերն անմեռ . . .

Երազէն ծընած շէնքը այդ սիրուն,  
Ազրիւր մ'է կարծես հէքեաթներու յորդ,  
Ուր մենք ամէն օր շըրթներով կարօտ,  
Կ'երթանք հազորդուիլ անոր հեւքերուն . . . :

Վեհ ու վիթխարի պարիտպէն անդին,  
Ան կը բարձրանայ խոյանքով ադատ,  
Յրուելու պատրաստ շողն իր հարազատ,  
Շունչովը բոցեղ Հայու սաղանդին . . . :

Անցնինք սեմէն ներս զըրան ոսկեատտ,  
Ու դահլիճներէն սիւներով պորփիւր,  
Շրոայլ ջահերու շառայլներով բիւր,  
Դիտելու անցքը աղդին դարէ դար . . . :

Ահա՛ քաջերը Թորգոմի Տունին,  
Վահաններով դորշ կուրծքերը հըսարտ,

Կուսքերուն վըրայ սողսպատին անսարտ,  
Յաղթական հետքը անոնց արիւնին...:

Ասդին՝ ալիւոր ճակատներ հակած,  
Էջերուն վըրայ մաղսղաթէ նուրբ,  
Կը կերտեն անխոնջ տառերը մեր սուրբ,  
Իրենց հողւոյն մէջ ապագան առկայծ...:

Ու հո՛ն, սաշտումի խորանին վըրայ,  
Ալօթքն առաջին մեր հաւատքին նոր,  
Աչքերուն առջեւ Լուսաւորիչ հօր,  
Կը ծըլիայ պայծառ իրրեւ ռահվիրայ...:

Անդին՝ դահլիճը, կոչուած Ոսկեղար,  
Ուր արծիւներու փետուրներով վէս,  
Յրհնուած բառեր կը հիւսեն պէս պէս,  
Միւռոնով օծուն մատներ անդադար...:

Ու մեր քայլերուն շրշուկներուն տակ,  
Այսպէս կ'արթըննայ սըրահներէն ներս,  
Յեղի մը ամբողջ երազը վարդգէս,  
Լոյսի տօնին պէս շող ու շաղ համակ...:

Հայ լեզուն է այդ, թանկազին աւանդ,  
Նախնիքներուն մեր վաստակը արդար,  
Մեր սըրտին մէջ ան սահէնք անվրքար,  
Դաշտի պէս՝ դալար, ծոցը՝ արդաւանդ...:

Դարերու մէջէն ու դէպի դարեր,  
Զերք բերդ անառիկ, տեսքով դիւթական,  
Թո՛ղ ան կանդնի յաղթ, մեր կեանքին վըրկան,  
Ազատ ու հըսարտ, ամէն բանէ վեր...:



ԶԱՐԵՆՆ ԳԱԶԱԶԵԱՆ

ԶԱՐԵՆՆ ԳԱԶԱԶԵԱՆ. —  
 Ծնած է Զմիւռնիա, 1883ին: Աւարտած է քաղաքին Մեսրոպեան Վարժարանը եւ յաճախած նաեւ տեղւոյն Ամբիկեան եւ Փրանսական Վարժարանները: 1904ին շրջանաւարտ Գոնիայի Ճէնանեան Գուէճէն: Ամերիկայի մէջ հետեւած է դրականութեան, հաշուադիտութեան եւ ելեքտրագիտութեան Համալսարաններուն: Հնարած եւ կատարելագործած է ելեքտրական նուրբ եւ ճշդաչափ գործիքներու շարք մը:

1911ին հիմնած եւ խմբադրած է «Հայ Գրականութիւն» անունով գրական ամսաթերթը մինչեւ Օգոստոս 1914: Գրած է բանաստեղծութիւններ, պատմուածքներ եւ դրական վերլուծութիւններ: Աշխատակցած է բազմաթիւ թերթերու: Գիրքով լոյս ընծայած է «Մտնիս կը խօսի» քերթուածը, զարդանկարուած Մ. Կէպապճեանի կողմէն:

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՑՍՏՐՈՒԹԻՒՆ

Յուէրձուրիւն՝ միշտ դիմանալ, մշտնջենաւորութիւն. յորդ՝ առատ. խոյսեմ՝ վեր բարձրանալ, նետուիլ. պորփիր՝ ծիրանաքար. օսոռայլ՝ ճառագայթ. կոււմբ՝ վահանին կեդրոնը. հաւանականաբար զմբէք մառին հոմանիշ է, բարձրութեան իմաստով. ուսեփրայ՝ ճամբայ բացող. վարդգէս՝ վարդագոյն մազ ունեցող. անվարձ՝ անվստ, անտրատ. զերթ՝ ինչպէս, նման, սլէս:

2. Արձակի վերածել այս ոտանաւորը եւ ուղղագրել վերջին չորս տուները.



## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՈՒԵՍԸ

Կան բանաստեղծութիւններ՝ որ պէտք է գրուած ըլլան ժողովրդական լեզուով, բայց անխրատութիւն է ելլել պնդել որ ամէն բանաստեղծութիւն պէտք է նոյն լեզուով գրել: Ժողովրդական երգերուն համար պայման է որ պարզ ու անսեթեւեթ լեզուով մը գրուած լինան անոնք, որովհետեւ այդ երգերը կ'արտայայտեն մարդկային հոգւոյն ամենապարզ զգացումները՝ սէրը, կարօտը, վիշտը, հայրենասիրութիւնը, եւ պէտք է որ ժողովուրդին հոգւոյն մէջ երթան ուղիղ ճամբով, երթան ուղղակի հաղորդակցութեամբ՝ արթնցնելու համար միւսնոյն զգացումները: Այդպէս ըրած են Յովհ. Թումանեան, Ա. Իսահակեան եւ ուրիշ արեւելահայ բանաստեղծներ՝ որ ուզած են քնարերգել ժողովրդական նիւթերու վրայ: Բայց ժողովրդական երգերը բանաստեղծութեան մէկ մասն են միայն, կան անդին ուրիշ քերթուածներ, որոնք մարդկային հոգին պիտի երգեն իր ամէնէն խորին նրբութիւններուն մէջ, եւ կեանքի ու բնութեան պատկերները իրենց ամէնէն նուրբ մանրամասնութիւններով: Հոս արդէն պէտք է գաղբինք պարզ ու ժողովրդական լեզու մը պահանջել, ու պէտք է ազատ ձգենք բանաստեղծը, որ իր նիւթին համաձայն զարդարէ ու բարձրացնէ իր լեզուն, խորացնէ ու նրբացնէ իր ոճը:

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Մարդկային հոգին է որ ինքզինք կը թարգմանէ բանաստեղծութեան մէջ, իր ներքին յուզումներովն ու

դալարումներովը, բնութենէն ստացած իր բազմազան եւ անհուն տպաւորութիւններովը, զինքը պաշարող խորհուրդներուն սարսուռովը, իր վշտերովն ու հըրճուանքովը, իր խանադավառութեամբն ու խոչախներովը: Ահա՛ էութիւնը բանաստեղծութեան:

Բանաստեղծութիւնը նախընթաց է արձակէն որ մտածողութեան լեզուն, մտածողութիւնը թարգմանելու ձեւն է: Նախնական մարդը բազդատելի, արամարանելի եւ եղբակացնելի առաջ, նախ կրցած է զդալ, — այսինքն ունեցած է վիշտ եւ բերկրութիւն, բաղձանք եւ կիրք, որոնք արտայայտած է իբրեւ ճիչ, իբրեւ ձայն եւ իբրեւ երգ: Եւ ծնած է բանաստեղծութիւնը, որ ապա դարձած է արուեստ մը, եւ իբր այդպիսին՝ ունի իր դանազան ձեւերը:

Քերթողական արուեստին ձգտումն է զիմել զգայականութեան՝ ո՛չ թէ մտքին, մտատեսական գիտակցութեան՝ ո՛չ թէ տրամախոհութեան, երեւակայութեան՝ ո՛չ թէ տրամարանութեան: Բանաստեղծութիւնը կը ջանայ ո՛չ թէ ապացուցել, այլ յուզել եւ սրտին մէջ արթնցնել երկարատեւ արձագանդներ:

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

★

### 1. ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Կարելի է պահանջել որ ամէն բանաստեղծութիւն ժողովրդական լեզուով գրուի.— Որեւէ ժողովրդական երգ կրնա՞ք յիշել.— Զեղմէ ո՞վ կրնայ Կոմիտաս Ասրդասլետի երգերէն մէկը երգել.— Ժողովրդական երգերը ի՞նչ տեսակ մարդկային զգացումներ կ'արտայայտեն.— Կրնա՞ք յիշել անունները քանի մը բանաստեղծներու, որոնք առաւելապէս ժողովրդական նիւթեր մշակած են.— Արձակ գրականութեանն առաջ ի՞նչ տեսակ գրականութիւն մշակուած է:

## 2. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

**Իլլսաւոր** կը կոչուի այն նախադասութիւնը, որմէ կախում կ'ունենան ուրիշ նախադասութիւններ. օրինակ՝ **Արեւը կը թափցնէ երկիրը** (ուր կը բնակինք):

**Ասորդաս** կ'ըսուի այն նախադասութեան, որ գլխաւոր նախադասութենէ մը կախում կ'ունենայ եւ զայն լրացնելու կը ծառայէ: Վերի օրինակին մէջ **ուր կը բնակինք** խօսքը սասորդաս նախադասութիւն մըն է:

(Ռուբէն Զարդարեանի կենսագրականը տեսնել էջ 202ին վրայ):



## ՏՈՐՔ-ԱՆԳԵՂ

(ԱԻԱՆԴԱՎԷՊ)

1

Վաղարշակ Հայոց թագաւորին օրով, Տորք - Անգեղ անունով հսկայ մը կ'ապրէր, որուն վիթխարի մարմինը եւ ահարկու դէմքը տեսնողը, սարսափէն սիրտը կը պայթէր: Աչքերը խոր ու սև, երկար ու սև յօնքերը մութ ստուերներու նման քեւարկած էին աչքերը: Ակոսները կարծես մէյմէկ ուրազներ էին: Եղունդները սրածայր թուր: Բազուկները հաստ գերաններու պէս, խի կուրծքը լայն: Հասակը բարձր էր, խի կերպարանքը՝ վայրի մարդոց պէս կոշտ ու կոպիտ:

Հայկի թոռան սերունդէն էր այս հուժկու մարդը, որու մասին անհաւատալի ու զարմանալի բաներ կը պատմեն մեր հին գուսանները, մատնանշելով հայ քաջարի ցեղին անյաղթելի կամքն ու ուժը:

Տորք երբ դեռ պատանի էր, մէկ հարուածով ժայռերը կը կոտրուէր, ձեռքովը կը ճեղքէր զանոնք եւ իր

Թուրի նմանող եզունգներովը կը յարդարէր քարէ տախտակներ ու անոնց վրայ պատկերներ կը փորագրէր :

Այլատ լեռներու մէջ ապրողի մը նման, իր նախասիրած սնունդներն էին կաթը, թանն ու մածուներ :

Անգամ մը, գիւղացիք Տորքը զայրացնելու համար զսչեցին . «Անգե՛ղ, գէչ Անգե՛ղ» :

Թէեւ ինքը հեղ ու խոնարհ էր, սակայն այս անգամ համբերութիւնը հատած էր . զնաց հաստարմատ ծառ մը փրցուց եւ անով աւլեց ամբողջ գիւղը եւ տունները քանդեց : Ո՞վ կրնար Տորքի դէմ ելլել, ամէնքն ալ ճանճերու պէս փախած եւ ծակաքուտ եղած էին : Գիւղացիք անոր բնաւորութիւնը հասկնալով, ուրիշ անգամ այլեւս հետը չիմկան : Մեծ յարգանքով կը վերարերուէին անոր հետ եւ անոր անուան ձօնուած մասնաւոր պարերգներով պար կը բռնէին ու Տորքը կը գովարանէին :

Տորքը անդուծ չէր սակայն : Եւ որովհետեւ արհնատաւոր էր, իրրեւ որմնադիր ու ճարտարապետ, լեռնէն ահագին քարեր բերաւ, տաշեց, յարդարեց եւ իր աւերուած գիւղը վերաշինեց :

Իր աստուածապարզեւ ուժը բարիքի համար կը գործածէր : Իրմէ առաջ գողեր եւ աւազակներ անվախօրէն գիւղերը կը կողոպտէին : Իսկ երբ Տորք երեւցաւ, թէեւ ո՛չ սուր կը գործածէր, ոչ ալ նետ, սակայն կը բաւէր որ իր վիթխարի ու պարթեւ հասակով երեւնար, իսկոյն չարագործներն ու թշնամիները ահ ու սարսափի մատնուած կը փախչէին, որովհետեւ ահագին քարեր վերցնելով, կարկուտի նման անձոնց գլխուն կը տեղացնէր :

Պոնտոսի (Սեւ Ծով) կողմէն, օտար թշնամիներ միշտ կու գային նաւակով եւ գիւղերը թալանի տալով ու սիրուն աղջիկներ առեւանգելով, գերի կը տանէին :

Անդամ մը այդ տեղի ժողովուրդը զխմեց Տորքի, որ օգնութեան հասնի: Հսկան զնաց ցցուեցաւ, բայց արդէն Սեւ Մովի ափէն հեռացած էին նաւերը:



ԾՈՎԱՆԿԱՐ՝ Վ. ՄԱՆՈՒՅԵԱՆԻ

Բուռն գայրոյթը պատեց Տորքը, բլուրի շափ ժայռեր փրցուց եւ փախչող նաւերուն ետեւէն նետեց: Ծովը տակնուվրայ եղաւ, ալեկոծութիւնը սկսաւ, եւ ահա ժայռերը իրարու ետեւէ կը հասնէին: Ծովը կը զզրդէր, նաւերը խաղալիքի պէս կը տատանէին, եւ ահա բլուրի մեծութեամբ ժայռ մը կը հասնի եւ կ'իյնայ ուղղակի նաւերու վըխուն եւ նաւերը կ'ընկզմին ու աւազակներն ալ միասին ծովուն յատակը կ'երթան:

Այս դէպքէն յետոյ, Տորք - Անգեղի անունը մեծ հռչակ ստացաւ եւ բերնէ բերան պտըտելով, Վազարչակ թագաւորին տկանջը հասաւ:

Հայոց թագաւորը, հետաքրքրութեամբ տարուած, փափաք յայտնեց որ Տորքը տեսնէ, որպէսզի մեծ պարգեւներով վարձատրէ զայն:

Տորք դնաց Վաղարշակ Թաղաւորին մօտ, ձեռքն ունենալով իրրեւ նուէր, խոշոր ծառ մը, որուն ճիւղերէն կախուած էին զանազան երէներ եւ եղջիւրաւոր կենդանիներ: Քաղաքացիք տեսնելով այդ ծառը, կը դարմանային, որովհետեւ շարժուն աշտարակի մը կը նմանէր:

Թաղաւորը մեծ պատուով ընդունեց եւ շատ մը գովեստներով խօսեցաւ անոր հետ:

Տորք, օր մը, բլուրի մը մեծութեամբ ժայռ մը առնելով, սկսաւ տաշել, փորել, փորփորել իր թուրի նման եղունգներով եւ ձեւաւորելով գայն Թաղաւորին արձանը շինեց:

Ինչքա՛ն զեղեցիկ նմանութիւն ունէր: Թաղաւորը իր ծիրանիտով եւ բոլոր զարդերովը զարդարուած, փառաւոր մօրուքով, նստած էր գահին վրայ, Թաղը ղլուխը եւ զաւաղանը ձեռքը: Թաղաւորը հիացաւ անոր արուեստին վրայ եւ շատ շատ պարզեւններ տուաւ:

Տորք անկէ յետոյ միշտ Թաղաւորին քովն էր եւ անոր պահապանը: Իր քաջութեան համար, Վաղարշակ զինքը Հայաստանի արեւմտեան մասին վրայ կուսակալ կարգեց, անոր տալով Թանկազին նուէրներ, պատուական քարերով մատանիներ, Թանկարժէք մուշտակներ, օղեր, ապարանջաններ եւ քսակ մըն ալ ոսկի եւ արծաթ գրամ:

Տորք երկար տարիներ խաղաղ կերպով կառավարեց իրեն յանձնուած պաւտը: Ո՛չ զողութիւն կար եւ ո՛չ ալ չարագործութիւն: Ամէն ոք թէ՛ կը սարսափէր անոր ներկայութենէն եւ թէ՛ կը սիրէր ու կը յարգէր զինքը:

Ահա այսպէս, Տորք - Անգեղ, թէեւ Ֆիլիքականով տղեկ էր ու կոպիտ, սակայն սրտի շա՛տ մեծ ազնուութեան հետ ունէր նաեւ քաջ ու անվեհեր հայկական ու

զի, նկարազրի զեղեցկութիւն, ինչպէս նաև ճարտիկութիւն ու արուեստադիտութիւն:

## ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

\*

### 1. ԲԱՌԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Վիքիաւրի՝ հսկայ, խոշոր, մեծ. քեւարկել՝ պաշտպանեւ գուսան՝ երգող. անգեղ՝ ագեղ. հեռը չիյնալ՝ կատակ չընել. գայրոյք՝ բարկութիւն. հոչակ՝ մեծ անուն, համբաւ. երէ՛ որս, վայրի կենդանի. ծիրակի՝ թագաւորական սպիտակ զգեստ. անվեկեր՝ անվար:

### 2. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Տորք-Անդեղ անունով հսկան ի՛նչպէս կը ներկայացնէին. — Որո՛ւ սերունդէն էր. — Երբ պատանի էր՝ ի՛նչ կ'ընէր. — Արհեստով ի՛նչ էր այս հսկան. — Իր ուսն ի՛նչ բանի համար կը գործածէր. — Ի՛նչ կը պտամեն իր մտան. — Իր քաւ ջուրի համար Հայոց Վարդապետի թագաւորն ի՛նչ ըրաւ:



## ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

1911 Յունիս 20ին, Թիֆլիսի մէջ, յանկարծամահ եղած է Ղազարոս Աղայեան, որ հայ իրականութեան մէջ մանկական դրականութիւն մշակողներուն ոահմարան կրնայ կոչուիլ: Ծնած էր 1840ին:

Իր ամբողջ կեանքը նուիրած է հայ նոր սերունդի կրթութեան: Երիտասարդ հասակէն նետուած է ուսուցչական ասպարէզ, զոր սիրած է չափէն աւելի, որովհետեւ դպրոցականներու շրջանակը շատ հարազատ եկած է իր հոգիին:

Ղազարոս Աղայեան եղած է ամենուն բարեկամը: Իրր հաճելի խօսակից եւ զուարթ տրամադրութեան տէր, չափահասներու շրջանակին մէջ միշտ վայելած է յարգանք, իսկ ուրախութիւններու ատեն եղած է սեղանի զուարթ վարիչ:

1908էն սկսած ան եղած է «Հասկեր» մանկական սմ-  
սազրի մշտական ու սիրուած աշխատակիցը:

Գրած է «Արութին եւ Մանուէլ» ինչպէս նաև «Եր-  
կու Քոյր» վէպերը:

Ղ. Աղայեան մշակած է մեր աւանդավէպերէն մէկ  
քանին: Ասոնցմէ մէկն է, օրինակ՝ «Տորք-Անգեղ»ը:

Գրի առած է բաղմաթիւ հէքեաթներ, ինչպէս «Ա-  
քանին»: Ասոնցմէ մէկն է, օրինակ՝ «Տորք - Անգեղը»:  
«Խիզախը», եւայլն:


## ՆԻԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ

(Նկատի առնելով դասագիրքի մը պահանջները,  
հատուածներէն ոմանց մէջ որոշ փոփոխութիւններ մըտ-  
ցուցած ենք, հոգ տանելով որ լեզուական միութիւն  
տիրէ):

Մեր ուսուցիչներուն (Յառաջարան)	52
Ածուխի կտորներ, Լ. Բաշալեան	9
Հանքածուխի պատմութիւնը	11
Վագրը եւ կատուն (նոտանաւոր), Ս. Թաւրատական	14
Շողիկն ու Փայլիկը	18
Տիեզերք	21
Տիեզերական աշխատանքը	23
Լեռները (նոտանաւոր), Լ. Շանթ	25
Ծաղիկ գողցողները, Ա. Մաս	27
Ծաղիկ գողցողները, Բ. Մաս	30
Սոխակի երգը (նոտանաւոր)	33
Սահակ քոչունը, Յովհ. Գաղանճեան	34
Չալօ, Համաստեղ	37
Իդձեր (նոտանաւոր), Ե. Արք. Գուրեան	40
Խօսող ձուկը, Յովհ. Թումանեան, Ա. Մաս	42
Խօսող ձուկը, Բ. Մաս	45
Յովհ. Թումանեան	48

Քաջ ցապատակը, Ս. Թ., (ստանաւոր)	50
Մատթէոս Մամուրեան	53
Մանկական յիշատակներ, Ռ. Յ. Պէրպէրեան	54
Արարատեան Դաշտի առաւօտը, Բաֆֆի	56
Բաֆֆի	59
Գարնան նշաններ	63
Կոյր թռչնիկը (Անտառի հէքեաթ), Վահէ Հայկ	67
Ուրուրն ու Հաւը (ստանաւոր), Ս. Թ.	71
Ռեթէոս Պէրպէրեան	75
Երգիչը, Հրանդ	78
Օրինուրթիւն (ստանաւոր), Լուսթֆի Մինաս	80
Ժայռ - կաթսան (աւանդավէպ)	82
Գիւղի ձայներ, Բենիամին Նուրիկեան	86
Գաղտնի ձայներ (ստանաւոր)	90
Խրիմեան Հայրիկ	91
Հայ եկեղեցիներուն փարտադրապետութիւնը	94
Մոմը (ստանաւոր), Ա. Յարութիւնեան	96
Հայ եկեղեցին	98
Երկու Բերքուածներ (ստանաւոր), Մ. Չարիֆեան	100
Թիթեռնիկը, Ա. Մաս	102
Թիթեռնիկը, Բ. Մաս	103
Հայաստանի բանուորներուն (ստան.), Մ. Իշխան	107
Ս. Էջմիածնայ Թանգարանը	109
Լուսաւորչի կանքեղը (ստ.), Յովհ. Թումանեան	111
Կաղանդը Հայաստանի մէջ, Լ. Բաչալեան	113
Հին օրերու փողորմութիւն	117
Արագած, Ա. Ահարոնեան	120
Առիւծն ու Արջուկը (ստան.), Ն. Պէշիկթաշեան	123
Մայրս, Սրբուհի Տիւտար	127
Հայոց արեւին (ստանաւոր), Ա. Փանոսեան	129
Համբարձում - Վիհակ	133
Գիւղի կարօտ (ստանաւոր), Օ. Չարմառնի	137
Սուրբ շուրջառը, Շ. Նարդուհի	139
Ինչ բանի մէջ է տիովանքը, Ա. Իսահակեան	143
Կախալին գրոյցը (ստանաւոր)	146
Մեծ աղբիւրը, Գր. Մխարեան	151
Գարնանառնուտ. Թ. Աղասեան	154
Միսիքար Սերաստացի	156

Յագնութեան հովանի (նոան.), Վահէ - Վահեան	158
Բարերարը, Գր. Զօհրայ	160
Գրիգոր Զօհրայ, Գ. Մխիթարեան	162
Տաղ հայերէն լեզուին (նոանաւոր), Վ. Թէքէեան	166
Հայաստանի կլիման, բոյսերը, կենդանիները ԼԼ հանգերը	169
Պատմական Հայաստանի ժողովուրդները	172
Ներգաղթ (նոանաւոր), Ա. Սեմա	174
Հայ նահապետական կեանքը, 1.	176
Հայ նահապետական կեանքը, 2.	179
Յան (նոանաւոր), Դ. Վարուժան	181
Հայրենի սովորութիւններ	184
Մկրտիչ Սանասարեան, Ա. Արփիարեան	187
Ալիշանի*նկարին առջև (նո.), Հ. Վ. Յովհաննէսեան	190
Հայր Ղեւոնդ Ալիշան	192
Հայ Յեղը	195
Հիւղը (նոանաւոր), Մ. Մեծարենց	196
Խաչեր աղբար, Ռ. Զարդարեան	199
Հայուհին (նոանաւոր), Պ. Դուրեան	203
Պետրոս Դուրեան	205
Հայ սպագրութիւնը	208
Հունձներու Օրհնութիւն, Սխմանթօ	209
Հայերէն Աստուածաշունչը	212
Թափառական (նոանաւոր), Վ. Տէրեան	214
Մշակոյթի Օրը	216
Հունձք եւ Հիւլէն (նոանաւոր), Մ. Պարսամեան	220
Գողթան Երգեր, Ե. Արք. Դուրեան	223
Ի՞նչ է Անտունին, Վ. Գուլումճեան	225
Հայ լեզուն (նոանաւոր), Զ. Գաղաղեան	228
Ժողովրդական արուեստը, Ռ. Զարդարեան	231
Բանաստեղծութիւնը, Ռ. Զարդարեան	232
Տորք - Անգեղ, Ղ. Աղայեան	233
Ղազարոս Աղայեան	237
Նիւթերու ցանկ	238





491.99-8

7-35

## ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՐԱՐԱՏ, Այբբենարան-Ընթերցարան,  
(Բ. տպ. հիմնովին բարեփոխուած)
2. ԱՐԱՐԱՏ, Ընթերցարան, Բ. Գիրք  
(Տարրական դասընթացքի երկու տարի-  
ներուն համար)
3. ԱՐԱՐԱՏ, Ընթերցարան Գ. Գիրք,  
(Միջին Ա. և Բ. և Բարձրագոյն Ա.  
տարիներուն համար)
4. ԱՐԱՐԱՏ ՆՈՐ յՐԳԱՐԱՆ, Ներածութիւն Շ.  
Նարդունիէ. Կը պարունակէ 240 ընտրը-  
ուած երգեր:

## ՄԵՐ ԳՐԱՏԱՆ ՄԷՁ ԿԸ ՎՍՃԱՌՈՒԻՆ ՆԱԽԵՐ.

5. ՀԱՅ-ՖՐՆՍ. Բառարան Լուսինեան-Բառա-  
ջեան, 840 էջ:
6. ՖՐՆՍ.-ՀԱՅ Բառարան Մ. Նուպարեան  
640 էջ:
7. Բարսէս Պատմական Հայաստանի
8. Բարսէս Արդի Հայաստանի



Կեդրոնատեղի՝

LIBRAIRIE BARSAMIAN

46, Rue Richer - Paris (9<sup>e</sup>)







Ln.

A  $\frac{\pi}{79478}$